ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(1908-1921 թթ.)

ДЛЛХ Бишкек шаарынын
Биринчи кезектегі соттору
анын ичинде Ленинчи,
5.XI.2015 ж.

Ց 002/0 Հ 2(ԵՐՎ.ԵՐ)/ 947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա 009 52

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (1908-1921 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ

Տիգրան Մեծ
2009

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՏԴ 941(479.25):329(479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)+66.6
Ս-259

Սարգսյան Սուրեն
Ս-259 Հայ սահմանադրական ռամկավար
կուսակցություն (1908-1921թթ.).-Եր.:
Տիգրան Մեծ, 2009.- 244 էջ:

ԳՄԴ 63.3 (2 Հ)+66.6

ISBN 978-99941-0-335-5
© Սուրեն Սարգսյան, 2009 թ.

Հեղինակն իր երախտագիտությունն է
հայտնում մեկենասին՝

ԱՐՍԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ
Չիկագո, ԱՄՆ

ով գրքի տպագրությունը հովանավորում է
ի հիշատակ հայրիկի՝ Հաճնի ինքնամսյա
ինքնապաշտպանության հերոսներից, Հայ դատի զինվոր՝

ՌՈՒԲԵՆ ԵՐԿԱԹԻ

Տպագրվում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝ պատմական. գիտությունների դոկտոր
Է. Ա. Կոստանդյան

Մենագրությունը նվիրված է Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմությանը: Արխիվային փաստաթղթերի և պարբերական մամուլի նյութերի (որոնց մեծ մասն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ), ինչպես նաև հուշագրական ու գիտական գրականության հիման վրա աշխատությունում շարադրված է ՀՍՌ կուսակցության ձեւավորման գործընթացը, բացահայտված են նրա սոցիալական արմատները, ներկայացված են նշանավոր գործիչները: Միևնույն ժամանակ, ցույց է տրված ՀՍՌԿ -ի տեղն ու դերը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, հայ հասարակական-քաղաքական ու ազգային ազատագրական պայքարի հիմնահարցերով հետաքրքրվողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 32

1. Արմենական կուսակցություն 32

2. Գաղափարակցական միություն 53

3. Վերակազմյալ հնչակյան կուսակցություն 57

4. Միացյալ հայ հեղափոխական կազմակերպություն 59

5. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 64

ԳԼՈՒԽ 2-ՐԴ

ՀՍՌԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1908-1919 ԹԹ. 77

1. ՀՍՌԿ-ն 1908-1911թթ., Առաջին ընդհանուր պատգամավորական ժողովը 77

2. Երկրորդ պատգամավորական ժողովը: ՀՍՌԿ-ն միասնական պայքարի ջատագով 87

3. ՀՍՌԿ դիրքորոշումը Առաջին աշխարհամարտի, Հայոց եղեռնի և կամավորական շարժման նկատմամբ 103

4. Վանի հերոսամարտը: Արմենակ Եկարյան 108

5. «Վան-Տոսպը», «Արևն» ու «Ազգը» ՀՍՌԿ-ի գաղափարախոսներ 117

6. ՀՍՌԿ-ն եղեռնից հետո 139

7. ՀՍՌԿ, Հայաստանի նորաստեղծ հանրապետության իշխանությունների և Ազգային պատվիրակության առնչությունները 154

ԳԼՈՒԽ 3-ՐԴ

ՀՍՌ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1919-1921 ԹԹ. 167

1. ՀՍՌ - Վերակազմյալ հնչակյան - ՀԺ կուսակցությունների համախմբման սկիզբը: Ազգային ռամկավար կուսակցություն: ՀՍՌԿ Հայաստանի շրջանի Բ համագումարը 167

2. ՀՍՌԿ-ի գործունեությունը Կիլիկիայում 180

3. ՀՍՌԿ Գ ընդհանուր պատգամավորական ժողովը 186
4. 1921թ. Լոնդոնի վեհաժողովը և ռամկավարները: ՀՍՌԿ-ի ջանքերը հայ ժողովրդին սովից փրկելու համար 200
5. Ազգային Ազատական կուսակցություն: Համախմբման ավարտը և ՌԱԿ-ի ծնունդը 206
ՎԵՐՋԱԲԱՆ 212
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 220

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց պետականության վերականգնումից հետո, անհրաժեշտ է վերախմաստավորել ու նորովի շարադրել հայոց պատմության բազմաթիվ հանգուցային հարցեր, անդրադառնալ այն խնդիրներին, որոնք ժամանակի ու հանգամանքների բերումով դուրս են մնացել պատմաբանների տեսադաշտից և կարոտ են լուրջ հետազոտության: Նման խնդիրներից է նաև հայկական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը: Հարցի լուսաբանումն ունի ժամանակակից հնչեղություն առավել ևս անկախ պետականության կայացման շրջանում, երբ կուսակցություններն իրական ուժ են դարձել մեր առօրյա կյանքում և փորձում են վճռորոշ դեր կատարել ապագայի կերտման գործում:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության լուսաբանումը մեր պատմագիտության կողմից երբևէ չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Կուսակցության ձևավորման գործընթացի, նրա բաղկացուցիչ մասերի, ծավալած գործունեության ուսումնասիրությունը, սոցիալական արմատների բացահայտումը, առնչություններն այլ քաղաքական ուժերի հետ, ծրագրային և այլ փաստաթղթերի մանրակրկիտ վերլուծությունը, նշանավոր կուսակցական գործիչներին հնարավորինս ներկայացնելը և, վերջապես, մեր ազատագրական պայքարի պատմության ընդհանուր կտավում նրա ունեցած տեղն ու դերը՝ որպես ազատամարտին զինվորագրվելու և դոյատևման պայքարն առաջնորդելու հավակնող քաղաքական կազմակերպության պատմության լուսաբանման փորձ է սույն աշխատությունը:

Մեզ համար ելակետային է այն դրույթը, որ Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը, լինելով ինքնուրույն քաղաքական կազմակերպություն և ունենալով իր յուրահատուկ խնդիրները, միևնույն ժամանակ, հայ առաջին՝ Արմենական կուսակցության ժառանգորդն է

և վերջինիս գաղափարների ու լավագույն ավանդույթների շարունակողը, այսօր ևս գործող ավանդական կուսակցություններից մեկի՝ Ռամկավար ազատական կուսակցության բաղկացուցիչ հիմնական ուժը:

Մեր նպատակն է ցույց տալ հայ իրականության մեջ (բուն երկրում և գաղթօջախներում) ձևավորված այն հասարակական-քաղաքական ազդաշունչ մթնոլորտը, որում թրծվեց հայրենասեր գործիչների մի փայլուն համաստեղություն: Գործիչներ, որոնք ոչ միայն դարձան առաջին հայկական կուսակցության՝ Արմենականի հիմնադիրներն ու գործիչները, այլև շարունակեցին նրանց սկսած սրբազան պայքարը՝ արդեն Սահմանադրական կամ պարզապես Ռամկավար անուններով: ՀՍՌԿ-ն կարողացավ շատ շուտ դուրս գալ թուրքական ստահոդ սահմանադրության հաշիշաթմբիրից և ոչ միայն վերադառնալ արմենականության ազատախոհական սկզբունքներին, այլև ավելի զարգացնել ու առաջ մղել ազգային ազատագրական գաղափարախոսությունը: Մեր խնդիրն է նաև գնահատել ՀՍՌԿ-ի գործունեությունը միայն պատմական փաստերի հիման վրա, անաչառ ուսումնասիրողի դիրքերից:

Նախապատերազմյան բարդ ու խճճված ժամանակաշրջանում ռամկավարները ճիշտ էին, երբ շեշտում էին ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը: Անկասկած, դրական էին նրանց գործադրած ջանքերը որբահավաքման և հայապահպանման, Ազգային պատվիրականությանը բազմակողմանի օժանդակելու, Հայաստանի անկախությունը ողջունելու, անկախ տիրող վարչակարգից՝ հայրենիքին սատարելու գործում: Միևնույն ժամանակ, ՀՍՌԿ-ն ունեցել է նաև թերի կողմեր: Նրա առաջին ծրագիրը նահանջ էր արմենականության ազատախոհությունից, անտեսվում էր մասնավորապես, տնտեսական բնագավառը և վերջապես որպես քաղաքական խղեալ՝ հռչակվում էր սահմանադրական միապետությունը, որը զարգացած երկրներում արդեն դիտվում էր որպես թանգարանային երևույթ:

Այսուհանդերձ, ՀՍՌԿ-ն իր թերություններով ու բացթողումներով, ինքնուրույն կուսակցություն էր, հայ ազատագրական պայքարին նվիրված մարդկանց գաղափարական ընդհանրություն, որն զգալի դերակատարություն ունեցավ պատմության մեջ և նրա գործունեությունն արժանի է լուրջ ուսումնասիրության և գնահատանքի:

Ուսումնասիրությունն ընդգրկում է 1880-ական թվականներից մինչև 1921 թվականն ընկած ժամանակաշրջանը: Դա պայմանավորված է նրանով, որ ՀՍՌԿ-ի կազմավորման ակունքները, կուսակցության արմատները սնվում էին արմենականների անդաստանում: Աշխատանքի հիմնական շարադրանքն ընդգրկում է 1908-1921 թվականներն ընկած բարդ ու խճճված, հայ ժողովրդի պատմության հուզումնառատ ու ճակատագրական ժամանակաշրջաններից մեկը: Ժամանակահատված, երբ հարյականի տակ դրվեց մեր ժողովրդի ֆիզիկական գոյության խնդիրը՝ իրականացվեց Հայոց մեծ եղեռնը, որից մազապուրծ հայության բեկորները սփռվեցին աշխարհով մեկ, երբ աշխարհի հզորներից ամբողջովին հուսախաբ ժողովրդի մի մասը, ծվարելով Արևելյան Հայաստանում, իր կենսունակությամբ, ամենավսեմ սիրով պիտի կերտեր այսօրվա անկախ Հայաստանի Հանրապետության հիմնաքարը:

ՀՍՌԿ-ի պատմության շարադրման և քննարկման միջոցով հնարավորինս բացահայտվում են նաև կուսակցության գործունեության ժամանակաշրջանի առանձնահատկությունները և ՀՍՌԿ-ի թողած հետքն այդ ժամանակահատվածի պատմության վրա:

Խորհրդահայ պատմագիտությունը չէր խրախուսում ոչ կոմունիստական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը: Եթե այդպիսիք գրվում էին, ապա միայն կոմկուսի գաղափարախոսությանը ձեռնտու շրջանակներում: ՀՍՌԿ-ի ամբողջական պատմությունն ընդհանրապես չեն գրել ո՛չ հայրենական և ո՛չ էլ սփյուռքահայ պատմաբանները: Առաջին անգամ մենք փորձել ենք շարադրել ՀՍՌ կուսակցության ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորման օրերից մինչև 1921 թվականը, երբ ՀՍՌԿ-ն և ազատագրական շարժման այլ գաղափարատոհ հոսանքներ միախառնվելով ձևավորեցին Ռամկավար ազատական կուսակցությունը:

Այս բավական ընդգրկուն ժամանակաշրջանում ՀՍՌԿ-ի բազմաբովանդակ գործունեությունը շարադրվում է հայ ազատագրական շարժ-

ման ընդհանուր տեսապատկերի վրա՝ սերտորեն շաղկապված ազատագրական շարժման ընդհանուր անցուդարձի հետ:

Ի տարբերություն մինչ այժմ եղած տարաբնույթ պատկերացումների, հստակ և վերջնականորեն հաստատվում է, որ ՀՍՌ կուսակցությունը կազմավորվեց 1908թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրիա քաղաքում: ՀՍՌԿ-ի հանդես գալը որպես կուսակցություն՝ օրինաչափ, բնականոն երևույթ էր և հետևանք մի կողմից Թուրքիայում 1894-1896թթ. կոտորածների հետևանքով թուլացած Արմենական կուսակցության ասպարեզից հեռանալուն և մյուս կողմից՝ Իթթիհատական սահմանադրության հռչակած դեմոկրատական լայն ազատություններին, որոնցից ոգևորված հայ հասարակական-քաղաքական շրջանակները հույս ունեին հասնել դարեր շարունակ երազած ազատությանն ու ձեռք բերել պատշաճ ձևով ապրելու հնարավորություն:

Աշխատությունում վերլուծվում են ՀՍՌԿ-ի ծրագրի դրույթները, նրա առաջադիմական և թերի կողմերը, ապագա Հայաստանի շուրջ դրանում ամրագրված պատկերացումները և այլ հարցեր: Ընդգծվում են այն խնդիրները, որոնք անհրաժեշտ էին և լուծման կարոտ (հողային հարց, կանանց իրավունք, իրական երաշխիքներ մարդու նորմալ ապրելու և ստեղծագործելու համար և այլն), սակայն դուրս էին մնացել կուսակցության ծրագրից: Շեշտվում է, որ ՀՍՌԿ-ն աստիճանական բարեփոխումների կողմնակից էր և կոչ էր անում հանդես գալ գործող իշխանությունների նկատմամբ կառուցողական ընդդիմության դիրքերից:

Ներկայացրել ենք ՀՍՌԿ նշանավոր գործիչներին, շեշտելով, որ յուրաքանչյուր նվիրյալ հարկ է, որ գնահատվի ըստ արժանվույն, որ յուրաքանչյուր գործիչ արել է այն ամեն հնարավորը, ինչ կարողացել է, ինչով և նպաստել է ազգային-ազատագրական շարժումներին:

ՀՍՌԿ-ն դարձավ այն կուսակցությունը, որը գաղափարական քարոզչությանը զուգընթաց՝ միշտ մնաց ինքնապաշտպանության ջատագովի դիրքերում, կազմակերպեց զինակուտակման և զինավարժական աշխատանքները:

Խորությամբ լուսաբանել ենք ՀՍՌԿ-ի ջանքերը Հայության բոլոր խավերի շրջանում ազգային ինքնագիտակցության մակարդակը բարձ-

լայնելու, բռնության ու չարի դեմ պայքարելու, հարկ եղած դեպքում զենքով իր ազգային արժանապատվությունը պաշտպանելու և գալիք ինքնապաշտպանական մարտերի անհրաժեշտությունը դիտակցելու գործում:

ՀՍՌԿ-ի ծավալած գործունեության շնորհիվ էր նաև, որ 1915թ. Վանը չենթարկվեց համատարած կոտորածի, ինչպես եղավ արևմտահայ մյուս կենտրոններում: ՀՍՌԿ-ն 1915թ. Վանի ինքնապաշտպանության նախաձեռնողներից ու կազմակերպիչներից էր, ինչը հայության դիմադրական կորովի ու ռազմական ունակության ցայտուն ապացույցն է:

Ուսումնասիրության մեջ աշխատել ենք զերծ մնալ դաղափարական-քաղաքական կաղապարային մտածողությունից, չափանիշ ընդունել միայն պատմական ճշմարտությունը, անաչառությունը և անկողմնակալությունը: Հաճախ դիմել ենք պատմահամեմատական վերլուծությունների: Ազգային-քաղաքական կյանքի բարդ, երբեմն հակասական դեպքերն ու երևույթները ներկայացվել են իրենց առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալներով, զարգացման փուլերով ու ավարտով: Պատմավերլուծական սկզբունքով ներկայացրել ու հաստատել ենք այն տեսակետը, որ հայ ժողովրդի ազգային զարթոնքը և, ազատագրական պայքարն ընդհանրապես՝ Օսմանյան կայսրությունում հակահայկական անմարդկային դրսևորումների և հատկապես Մեծ եղեռնի անմիջական հետևանքներն էին:

ՀՍՌԿ-ի պատմությունը շարադրել ենք ելակետ ունենալով հայ ժողովրդի ազատագրական պայքարի արդարացիությունը: Ռամկավարներին դիտել ենք ազատագրական պայքարի դարավոր շղթայի հերթական ու կարևոր մեկ օղակը: ՀՍՌ կուսակցությունը ազգային շնչի ու նկարագրի կուսակցություն էր և իբրև այդպիսին մնաց մինչև վերջ:

Աշխատության համար հիմք են ծառայել մի շարք սկզբնաղբյուրներ, որոնցից իրենց նշանակությամբ կարևորվում են արխիվային նյութերը: Իսկ ի շարս վերջինների առաջնահերթ նշանակություն ունեն

հատկապես Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահվող «Արտակ Դարբինեան» ֆոնդի[1] նյութերը: Դրանք առանձնահատուկ են քանի որ Արտակ Դարբինյանը եղել է կուսակցության կենտրոնական դեմքերից մեկը, ունեցել է լայն շրջապատ և մշտապես գտնվել է իրադարձությունների կենտրոնում:

Երկար տարիներ խմբագրելով ՀՍՌԿ-ի պաշտոնաթերթերը, Ա. Դարբինյանը կապեր է ունեցել կուսակցության գրեթե բոլոր մասնաճյուղերի հետ, որի հետևանքով նրա անձնական ֆոնդում հավաքված են բազմաթիվ ծրագրային փաստաթղթեր, շրջաբերականներ, նիստերի արձանագրություններ, նամակներ և այլն, որոնք անգնահատելի սկզբնաղբյուրներ են ՀՍՌԿ-ի պատմության համար: Այս իմաստով հատկապես անփոխարինելի են այդ ֆոնդում պահվող Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության 1919 և 1920 թվականների ընդհանուր ժողովների ամբողջական արձանագրությունները:

Ա. Դարբինյանի ֆոնդի փաստաթղթերը ժամանակագրական առումով ընդգրկում են կուսակցության գոյատևման բոլոր տարիները:

Ուսումնասիրության համար արխիվային արժեքավոր վավերագրեր կան նաև Հայաստանի Ազգային արխիվի «Ապահ Պետրոսեան» ֆոնդում: Ապահն, սկզբում Հնչակյան կուսակցության անդամ էր, հետո Վերակազմյալ Հնչակյան, իսկ 1908 թվականին Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության ձևավորումից հետո դարձավ դրա Եգիպտոսի մասնաճյուղի նշանավոր գործիչներից մեկը: Պահպանված նյութերը մասնավորապես վերաբերում են 1915-ին ՀՍՌԿ Եգիպտոսի շրջանակի գործունեությանը և այն քայլերին, որ ձեռնարկել էր կուսակցությունը կիլիկիահայությանն օգնելու ուղղությամբ:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության ամերիկյան մասնաճյուղի, հատկապես 1915-1917թթ. պատմության վերաբերյալ արժեքավոր վավերագրեր կան հին արմենական, հետագայում՝ ռամկավար, ժամանակի անխոնջ նվիրյալներից մեկի՝ Անուշավան Տեր-Մկրտչյանի անձնական ֆոնդում, որի նյութերի ուսումնասիրությունը լույս է սփռում հայ քաղաքական ուժերի վիճակի, Ամերիկայում ծավալած

1. ՀԱԱ, ֆ. 424:

գործունեության, նրանց միջև ծայր առած հակասությունների, մասնավորապես, ամերիկահայ ռամկավարների գրված դիրքի, հնարավորությունների ու կատարածի, առանձնապես ամերիկահայ ռամկավար կամավորների 1915-1916թթ. Կովկասում ծավալած գործունեության և վերջիններիս կազմակերպած նյութական օգնության մասին:

Արժեքավոր տեղեկություններ ենք քաղել նաև հին արմենական, Վանի երկու հերոսական պաշտպանությունների մասնակից, հետագայում նշանավոր գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի անտիպ հուշերից, որոնք գտնվում են Հայաստանի Ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժնում, մեքենագիր վիճակում[2]:

Աշխատության համար անվոխարինելի են նաև տպագիր սկզբնաղբյուրները. կուսակցությունների ծրագրեր, կանոնագրեր՝ տարբեր տարիներին լույս տեսած առաջաբաններով ու մեկնաբանություններով, կուսակցական վավերագրեր, կոչեր, որոշումներ, տարբեր առիթներով զիմումներ ժողովրդին, ինչպես նաև կուսակցությունների տեղական մարմինների կանոնագրեր, հաշվետվություններ[3] և այլն:

Աշխատանքը գրելուն մեծապես նպաստել են նաև արխիվային և ծրագրային փաստաթղթերի, հատկապես Մ.Գ.Ներսիսյանի, Վ.Միքայելյանի, Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ լույս տեսած ժողովածուները[4]:

ՀՍՌԿ-ի պատմության ուսումնասիրությանը մեծապես նպաստում են սիրուքքահայ հետազոտող Վաչե Ղազարյանի և այլ հեղինակների ժողովածուներն ու ուսումնասիրությունները[5]:

---

2. ՀԱՊ, հուշաձեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թղթ. 27:
3. Աշխատանքը չծանրաբեռնելու համար խուսափում ենք դրանց անվանական թվարկումից: Ամբողջական ցուցակը տե՛ս օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում:
4. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբ., Ե.,1991: Геноцид армян в Османской империи, Сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, 2-ое доп. Издание, Е., 1983. Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/. Материалы политического архива МИД кайзерской Германии, сборник под ред. Микаеляна В. А., Е., 1995. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923/, փաստաթղթերի ժողովածու Ջ. Խ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., 1972:
5. «ՌԱԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վավերագրեր», կազմեց դոկտ. Վաչե Ղազարյան, Պեյրութ, 1988: «Ինչ է ռամկավարությունը» մատենաշարը և այլն:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության վերաբերյալ քիչ փաստեր են մեզ հասել, հետևապես մամուլում պահպանված նյութերը ձեռք են բերում սկզբնաղբյուրի նշանակություն: ՀՍՌԿ պատմության ուսումնասիրության խնդրում իրենց նշանակությամբ անփոխարինելի են հատկապես «Ազգ», «Վան-Տոսպ», «Արև» պարբերականները: «Ազգը» սկսեց լույս տեսնել Բոստոնում, 1907թ. ապրիլի 20-ից: Այդ ժամանակ թերթը Վերակազմյալ հնչակյանների չափավոր թևի պաշտոնաթերթն էր: 1908թ. հոկտեմբերին ՀՍՌ կուսակցության ձևավորումից հետո պարբերականը դարձավ կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթը: 1908-ից այն խմբագրում էին Արմենակ Նազարը, Գևորգ Սարաֆյանը, Գաբրիել Փափազյանը: Թերթը, առաջնորդվելով ռամկավարական (դեմոկրատական) գաղափարներով, կարճ ժամանակում դարձավ ռամկավարության դրոշակակիրն Ամերիկայի հայության մեջ: Այն մեծ դեր կատարեց Առաջին համաշխարհային պատերազմին ինչպես նախորդած, այնպես էլ հաջորդած տարիներին՝ դառնալով ամերիկահայությանը համախմբող գործոն, որը մեծապես նպաստեց նրանց ուժերն ու միջոցներն արևմտահայերի օգնության գործին ծառայեցնելուն: Պարբերականը համակողմանիորեն լուսաբանում էր ինչպես միջազգային դրությունը, այնպես էլ Հայկական հարցը:

1912թ. ՀՍՌԿ Վասպուրականի շրջանի պաշտոնաթերթ դարձավ «Վան-Տոսպը»: Մինչ այդ պարբերականը կիսամյա հանդեսի ձևով հրատարակում էր «Երիտասարդ քրիստոնեաներ» ընկերությունը, սակայն այն թևակոխեց իր նոր փուլը և նոր աստիճանի բարձրացավ, երբ «Վան-Տոսպի» հրատարակության իրավունքն անցավ ռամկավարների ձեռքը և այն սկսեց լույս տեսնել որպես շաբաթաթերթ: «Վան-Տոսպը» ինչպես Վանում (մինչև 1915թ.), այնպես էլ եղեռնից հետո՝ Թիֆլիսում հրատարակվելու տարիներին ամբողջությամբ արտահայտում էր արևմտահայության շահերը: Պարբերականը խմբագրում էին Նշան Հակոբյանը, Վարդան Պապիկյանը, Արտակ Դարբինյանը, Հովհաննես Հակոբյանը: «Վան-Տոսպն» այդ տարիներին դարձավ դաշնակցության հիմնական ընդդիմախոսներից մեկը:

1919-1920թթ. «Վան-Տոսպը» հրատարակվում էր Երևանում «Հայաստանի ձայն» խորագրով՝ որպես Հայ ռամկավար (Սահմանադրական

ինքնակոչումից արդեն կուսակցությունը վաղուց հրաժարվել էր) կուսակցության պաշտոնաթերթ՝ Արտակ Դարբինյանի խմբագրությամբ: Թերթը թեև երկար կյանք չունեցավ, սակայն նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում զգալի դեր կատարեց առանձնանալով ստեղծված բարդ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում իր իրատեսական մոտեցումներով:

1907թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում լույս էր տեսնում «Արև» հասարակական-քաղաքական օրաթերթը, հանրահայտ երգիծաբան Երվանդ Օտյանի խմբագրությամբ: 1909թ. «Արևը» միացավ «Լուսաբերին» և սկսեց լույս տեսնել «Լուսաբեր-Արև» անվամբ, որպես ՀՍՌ կուսակցության Եգիպտոսի շրջանակի պաշտոնաթերթ: Հետագայում, արդեն 1915թ., որպես ՀՍՌ կուսակցության պաշտոնական օրգան, «Արևը» սկսեց լույս տեսնել ամենօրյա հաճախականությամբ, եգիպտահայ հասարակական-քաղաքական կյանքում խաղալով զգալի դեր: Թերթը տարբեր տարիներին խմբագրել են արևմտահայ նշանավոր գործիչներ Վ. Թեքեյանը, Լ. Մկրտչյանը, Օ. Մահտեսյանը, Մ. Կյուրճյանը, Հ. Հակոբյանը, Պ. Տեփոյանը, Ա. Յափուճյանը, Հ. Արամյանը և ուրիշներ: Իր էջերում մեծ տեղ հատկացնելով հատկապես եգիպտահայությանը և ընդհանրապես սփյուռքահայության խնդիրներին, «Արևը» մշտապես հետամուտ է եղել հայոց խնդրի լուծմանը, դատապարտել և անարգանքի սյունին գամել արևմտահայոց նախճիրն իրականացնողներին, անդուլ պայքարել հայափրկության յուրաքանչյուր ձեռնարկում հաջողությամբ պսակելու համար, այս ամենով դառնալով հայ ժողովրդի ամենաբախտորոշ մի ժամանակահատվածի տարեգիրն ու հայոց ցավի թարգմանը: Եվ հենց այս իմաստով շատ կարևոր են «Արևում» զետեղված նյութերը:[6]

ՀՍՌ կուսակցության մասին որոշ տեղեկություններ և անդրադարձներ կան 1920 թվականից Փարիզում փոփոխական պարբերականությամբ լույս տեսնող ռամկավար կուսակցության Արևմտյան Եվրոպայի շրջանակի պաշտոնաթերթ «Ապագայում»[7]*: Այնտեղ շատ կան*

---

6. Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980թթ., Երևան, 1986, էջ 70, 77:
7. Նույն տեղում, էջ 130:

պատմաքննական էքսկուրսներ ու վերլուծական բնույթի հոդվածաշարեր, հուշեր հայոց արհավիրք եղեռնի, հայ քաղաքական ուժերի և հատկապես կուսակցությունների ու դրանց ծավալած գործունեության մասին:

Աշխատանքը շարադրելիս հեղինակի համար օգտակար է եղել նաև ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում 1915 թվականից լույս տեսնող «Նոր կեանք» շաբաթաթերթը: 1919 թվականից, այն սկսեց հրատարակվել որպես Ազգային ռամկավար կուսակցության Կալիֆոռնիայի շրջանակի պաշտոնաթերթ: 1920-ից, այն միանալով «Սիսուան» պարբերականին, կոչվեց «Նոր օր» և մեկընդմիշտ մնաց ռամկավարության գաղափարակիրն ու ջատագովը: Այս պարբերականն առանձնանում է նրանով, որ հետեղեռնյան շրջանի ժամանակակիցն էր ու դեպքերի անմիջական արձագանքող բազմաթիվ թղթակցություններ և հոդվածներ էր պարունակում, հատկապես ամերիկահայերի կողմից Հայկական հարցի լուծմանն ուղղված մարդկային ու նյութական ներդրումների տեսակետից:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության ուսումնասիրության համար բավականին նյութեր կան նաև 1914 թվականից Պոլսում Ս. Տյուլկերեանի խմբագրությամբ լույս տեսնող «Ռամկավար» ամսաթերթում: Այն ՀՍՌ կուսակցության պաշտոնաթերթն էր Պոլսում, սակայն լույս տեսավ ընդամենը չորս համար:

Որոշ նյութեր ենք քաղել նաև 1922 թվականից ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում (որոշ ժամանակ այն լույս տեսավ Ուտթերթաունում, ապա կրկին՝ Բոստոնում, իսկ հետագայում կրկին Ուտթերթաունում) «Պայքար» և 1937 թվականից Բեյրութում հրատարակվող «Զարթօնք» օրաթերթերից: Դրանք երկուսն էլ ՌԱ կուսակցության պաշտոնաթերթերն են և մեզ համար՝ կարևորվում են ոչ միայն իրենց էջերում պարունակող տարբեր բնույթի նյութերով, այլև նրանով, որ թերթերի ակունքներում կանգնածներից շատերը ՀՍՌ կուսակցության նշանավոր գործիչներ էին և հաճախ հանդես են եկել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մասին հուշերով և հոդվածներով:

Աշխատանքը գրելիս օգտվել ենք նաև ռամկավարական և այլ քաղաքական ուղղվածություն ունեցող մի շարք այլ պարբերականներից,

որոնք, սակայն, իրենց նշանակությամբ չեն կարևորվում և հարկ չենք համարում դրանց առանձին անդրադառնալ:

Յուրաքանչյուր կուսակցության պատմության համակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն հուշագրությունները, որոնք պարունակում են տվյալ կուսակցության գործունեությանը վերաբերող ուշագրավ տեղեկություններ: Իսկ ՀՍՌ կուսակցության դեպքում, արխիվային և այլ աղբյուրներում պարունակվող նյութերի սղությամբ պայմանավորված, դրանց նշանակությունը ավելի քան կարևոր է: Այս առումով հատկապես անփոխարինելի են նախկին արմենական, հետագայում ՀՍՌ կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Արմենակ Եկարյանի հուշերը[8]:

Եկարյանի հուշերը ժամանակագրական առումով ընդգրկում են 1870-ական թվականներից մինչև 1916 թվականը: Այսինքն՝ հեղինակը բարեխղճորեն տալիս է մեր ազատագրական պայքարի հուզումնառատ շրջանի պատմությունը, մանրամասնորեն նկարագրում, թե ինչպիսի բարձիթողի վիճակում էր հայ ժողովուրդը մինչև «Երեք Մկրտիչների (Խրիմյան, Փորթուգալյան ու Ավետիսյան) շունչը կփչեր Վասպուրական աշխարհում» և, թե ինչպես հայոց ոգին անսալով Բաֆֆու և Ծերենցի կոչ հորդորներին, արթնացավ դարավոր քնից ու փորձեց տեր կանգնել իր տուն ու տեղին: Հուշագիրը մանրամասն է ներկայացրել 1914-1916թթ. ՀՍՌ կուսակցության գործունեությունը Վան-Վասպուրականում և դրա առնչությունները ինչպես թուրքական իշխանությունների, այնպես էլ հայ ազգային կուսակցությունների՝ հատկապես Հայ Յեղափոխական Դաշնակցության հետ: Լինելով Վանի ինքնապաշտպանության գլխավորական մարմնի (շտաբի) պետը, Եկարյանը հանգամանորեն ներկայացնում է 1915թ. Վանի ինքնապաշտպանության ողջ ընթացքը, ռուսական զորքերի ու հայ կամավորների մուտքը Վան, այնուհետև ռուսական զորքերի մի քանի անգամ կրկնվող խորհրդավոր ու անիմաստ նահանջները և այդ ընթացքում ռամկավարների դիրքորոշումներն ու գործունեությունը:

Գտնվելով իրադարձությունների կիզակետում, հեղինակն անմիջա-

8. Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985:

ԳՐՈՏ
ՀԻՄՆԱՐԿԸ ԳՐԱԴԱՐԱՆ

կան մասնակցի և ոչ շարքային կատարողի դիրքերից արձագանքել է բոլոր կարևոր դեպքերին: Այս իմաստով Եկարյանի հուշերը ստանում են սկզբնաղբյուրի նշանակություն: Հուշագրության մեջ առանցքային տեղ է գրավում ռամկավարների և այլ քաղաքական հոսանքների հարաբերության խնդիրը: Եկարյանը ռամկավարության դիրքերից քննադատում է մյուս կուսակցությունների գործելակերպը, կամավորական շարժման նկատմամբ նրանց որդեգրած վերաբերմունքը, միևնույն ժամանակ բարձր գնահատելով այդ կուսակցությունների նշանավոր գործիչներին, ինչպես, օրինակ՝ ՀՅԴ անդամ Արամ Մանուկյանին: Անշուշտ Եկարյանի գնահատականները զերծ չեն կողմնակալությունից, որի նկատմամբ աշխատել ենք ցուցաբերել քննադատական վերաբերմունք և լինել օբյեկտիվ:

Հիմնահարցի հետազոտման համար շատ օգտակար են նաև Հայտնի գործիչ, հայ ժողովրդի փրկության գործի նվիրյալ, անխոնջ ու վեհանձն մարտիկ Միհրան Տամատյանի հուշերը[9]*, որոնք սկսվում են 1870-80-ական թթ. դարավոր նիրհից Հայոց վերազարթնումի օրերի նկարագրությամբ և շարունակվում են մինչև 1920-ական թվականները: Հուշերն ամենայն բարեխղճությամբ ու բազմաթիվ պարզաբանում-ծանոթագրություններով հրատարակել է արմենական-ռամկավարության պատմության խորագիտակ հետազոտող Վաչե Ղազարյանը, դրանք բաղկացած են երկու մասից՝ 1880-ական թթ. մինչև 1896 թվականը և 1916 թվականից մինչև 1920-ական թվականների առաջին կեսը:*

Մեզ համար հատկապես հետաքրքրություն է ներկայացնում հուշերի երկրորդ բաժինը, որն սկսվում է 1916 թվականից, երբ ֆրանսիական և անգլիական զինվորական իշխանությունները կամավորականների հավաքագրման հարցով բանակցություններ էին վարում Եգիպտոսի ազգային կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Նկատենք մի կարևոր և դրվատելի հանգամանք. Տամատյանն իր հուշերում չի կենտրոնանում միմիայն ռամկավարների գործունեության վրա, այլ նրանց պատմության այդ շրջանի իրադարձությունները ներկայացնում

9. Տամատեան Միհրան, Իմ յուշերս, Պէյրութ, 1985:

է ազգային մյուս կուսակցությունների գործունեության ընդհանուր հետևախոսքի վրա:

Հուշագրության վերջին մասը վերաբերում է Կիլիկիայի 1920-1921 թթ.ողբերգական դեպքերին, որտեղ նա բացահայտում է Ֆրանսիական իշխանությունների թրքամետ քաղաքականությունը, որին զոհաբերվեցին ինչպես Կիլիկիան, այնպես էլ ամբողջ հայ ժողովրդի շահերը:

Տամատյանի հուշերը ևս իրենց պարունակած նյութի, փաստերի, իրական պատկերների, ներկայացրած գործիչների գնահատությամբ բարձրանում են սկզբնաղբյուրի մակարդակի:

Աշխատությանը նպաստել են նաև ՀՅԴ նշանավոր գործիչներ, արևմտահայության ազատագրության անմնացորդ նվիրյալներ Ռուբենի (Ռուբեն Տեր-Մինասյան[10]) և Կոմսի (Վահան Փափազյանի[11]), նշանավոր արմենական, 1915 թվականի Վանի հերոսական ինքնապաշտպանության ղեկավար մասնակից, հետագայում հանրահայտ նկարիչ Փանոս Թերլեմեզյանի[12], նախկին արմենական, հետագայում ռամկավար «Համեստ ու մշտապես անաղմուկ» գործիչ Հովհաննես Պողոսյանի[13] և այլոց հուշերը[14], որոնցում կան շատ արժեքավոր տեղեկություններ, փաստեր ու քննական-վերլուծական մտքեր ՀՍՌ կուսակցության գործունեության և ռամկավար գործիչների մասին:

Մինչև 1950-ական թվականների վերջը ազգային կուսակցությունների պատմությունը գրելու ցանկացած փորձ Խորհրդային Հայաստանում ի սկզբանե դատապարտված էր: Խորհրդահայ պատմագրությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով շրջանցում էր բոլոր այն հարցերն ու ժամանակահատվածները, որոնք «արգելված» թեմաներ էին համարվում և, որոնց վերաբերյալ արխիվային և այլ ընույթի փաստաթղթերը գտնվում էին յոթ փակի տակ: Սակայն դա չի նշանակում, թե մեր գոյակռվի ամենահուզումնառատ ժամանակաշրջանին նվիրված աշխատություններ ընդհան-

10. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Երևան, 1990:
11. Փափազեան Վ., Իմ յուշերը, Բոստոն, 1950:
12. Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը (մեքենագիր), Ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28: Տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին:
13. Պողոսեան Հովհ.,Կուսակցական կեանքի յուշերս, Պէյրութ, 1987:
14. Կան նաև ժամանակաշրջանին նվիրված հուշագրություններ, որոնք երկրորդական նշանակություն ունեն մեր խնդրո առարկա հարցի վերաբերյալ և որոնց թվարկումը նպատակահարմար չենք համարում:

բապես չէին գրվում: Ուղղակի այդ շրջանին նվիրված աշխատություններում այս կամ այն չափով անդրադարձներ կան նաև կուսակցությունների պատմությանը: Սակայն, չխորանալով նյութի բուն էության մեջ, շատ հաճախ դրանց հեղինակները արտահայտել են ոչ ճիշտ, կողմնակալ տեսակետներ: Հատկապես ստալինյան շրջանում քաղաքական կոնյունկտուրան պարտադրում էր փառաբանել միայն բոլշևիկյան կուսակցությանը, անպայման չեշտել նրա բացառիկ կարևոր ու աներկբայորեն դրական դերը և ընդհակառակը՝ սևացնել ազգային կուսակցությունները՝ հանիրավի մեղադրելով դրանց ազգայնամոլության ու հետադիմության մեջ: Այսպիսի պայմաններում, բնականաբար, անհնար էր գրել հայ ազգային կուսակցությունների անկողմնակալ, գիտական պատմությունը, իսկ այդ դժվար ու պատվավոր գործն իրենց վրա էին վերցրել սփյուռքահայերը:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության գործունեության լուսաբանմանն առաջինն անդրադարձավ Մանուկ Ճիզմեճյանն իր «Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց»[15] աշխատության մեջ, որտեղ հեղինակը չի անդրադառնում միայն ռամկավարների պատմությանը, այլ այն ներկայացնում է հիմնականում ամերիկահայ քաղաքական կուսակցությունների պատմության ընդհանուր հետնախորքի վրա, հատկապես անդրադառնալով ՀՍՌ կուսակցության ամերիկյան հատվածի գործունեության մանրամասներին: Մ. Ճիզմեճյանը Ռամկավար կուսակցության նշանավոր գործիչներից էր, Վանի 1915թ. ինքնապաշտպանության ամբողջ ընթացքի ականատեսն ու մասնակիցը, կուսակցության շատ կարևոր հանձնարարությունների նախաձեռնողն ու իրականացնողը: Այս տեսանկյունից էլ Ճիզմեճյանի աշխատությունը ձեռք է բերում սկզբնաղբյուրի նշանակություն, եթե անտեսենք նրա կուսակցական լինելու և, բնականորեն, փոքր ինչ կողմնակալ լինելու հանգամանքը:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության ուսումնասիրության համար անգնահատելի արժեք ունի Արտակ Դարբինյանի «Հայ ազատագրական շարժման օրերէն»[16] աշխատու-

---

15. Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնօ, 1930:
16. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947:

թյունը: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1890-1940 թվականները: Այստեղ, հայկական ազգային կուսակցությունների ձևավորման և ազատագրական շարժման այդ վրճռական փուլի պատմության ընդհանուր շարադրանքի մեջ, հեղինակը տալիս է նաև ՀՍՌ կուսակցության պատմությունը: Ընդգծենք, որ Ա.Դարբինյանի աշխատությունն ունի սկզբնաղբյուրի նշանակություն, քանի որ հեղինակը եղել է ռամկավարության գաղափարախոսներից, ՀՍՌ կուսակցության հիմնադիրներից և նրա ամենախոշոր գործիչներից մեկը: Դարբինյանը մասնակցել է կուսակցության բոլոր ընդհանուր ժողովներին և աշխատության մեջ հատկապես մանրամասնորեն է ներկայացրել այդ ժողովների ընթացքը, տալով բավականին պարզաբանումներ ու մեկնաբանություններ: Սակայն հեղինակի ուսումնասիրությունից մասամբ դուրս է մնացել ՀՍՌԿ Ամերիկայի շրջանակի գործունեությունը: Հեղինակը երբեմն չի կարողացել խուսափել որոշ կողմնակալությունից, հատկապես կուսակցություններին տրված գնահատականներում: Այսուհանդերձ, առանց Ա.Դարբինյանի սույն աշխատության, անհնար է պատկերացնել Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության ամբողջական ուսումնասիրությունը:

Հայ ավանդական կուսակցությունների պատմության ուսումնասիրության աշխատանքներն անհամեմատ նոր աստիճանի բարձրացան, երբ հնարավորություն ընձեռվեց ու դրան ձեռնամուխ եղավ խորհրդահայ պատմագիտությունը: Զթերագնահատելով սփյուռքում արվածը, որը հաճախ իրականացվել է ջանքերի գերագույն լարումով և նյութական ամենաստուլ պայմաններում, ասենք նաև, որ նախկին երբեմն թույլ ու պարզունակ, երբեմն սիրողական մակարդակի երկերին փոխարինելու եկան պրոֆեսիոնալ պատմաբանների հիմնարար աշխատությունները:

Այս իմաստով ավանդական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունների բացը լրացնելու խորհրդահայ պատմագիտության հաջողված մենագրություններից է Լ.Ա. Խուրշուդյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում»

ստվարածավալ մենագրությունը:[17] Փոքրիկ պատմական էքսկուրս կատարելով, հեղինակը գրում է, որ արմենականները, հետագայում միանալով տարբեր քաղաքական խմբերի հետ, փոխել էին իրենց անունը «1907թ. կոչվելով Գաղափարակցական միություն, 1908 թվականին՝ Սահմանադրական ռամկավարներ և ի վերջո 1921 թվականին՝ Ռամկավար ազատականներ» ու եզրակացնում. «Այս տարիներին փոխվել է կուսակցության անունը, բայց ոչ դասակարգային էությունը»[18]: Խուրշուդյանն այնուհետև գրում է. «Ռամկավար ազատական կուսակցությունը Արևմտյան Հայաստանում երբեք չկարողացավ գրավել այնպիսի դիրքեր, որպիսին ձեռք էին բերել Դաշնակցությունն ու Հնչակյան կուսակցությունը, այնուամենայնիվ ազատագրական շարժման մեջ որոշակի դեր խաղաց՝ որպես արևմտահայ ազգային բուրժուազիայի կուսակցություն»[19]: Սակայն նկատենք, որ Ռամկավար-ազատական կուսակցությունը ձևավորվել է միայն 1921 թվականին, երբ Արևմտյան Հայաստանը լրիվ հայաթափված էր և այնտեղ «դիրք գրավելու» մասին խոսք չկար, հետևաբար հարգարժան հետազոտողը նկատի ունի ուղղակի սահմանադիր ռամկավարներին: Կարծում ենք նաև, որ չի կարելի համաձայնել Խուրշուդյանի այն մտքին, թե Արևմտյան Հայաստանում ռամկավարները բացարձակ զիջում էին Դաշնակցությանն ու Հնչակյանին, թեկուզև այն պատճառով, որ Վասպուրականի նման հայաշատ ու ռազմավարական առումով խիստ կարևոր նահանգում ռամկավարները բավական հզոր դիրքեր ունեին: Նույնը որոշ վերապահումով կարելի է ասել նաև Կիլիկիայի մասին:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության ուսումնասիրության գործում կարևոր առաջընթաց քայլ է ՀՀ ԳԱԱ թղթակից- անդամ Ազատ Համբարյանի «Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մա-

---

17. Խուրշուդյան Լ.Ա., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964.:
18. Խուրշուդյան Լ.Ա., Նշվ. աշխ., էջ 339:
19. Նույն տեղում, էջ 339:

սին»[20] աշխատությունը: Չնայած հեղինակը չի ներառում կուսակցության պատմության ամբողջ ժամանակաշրջանը և ժամանակագրական առումով հասցնում է մինչև առաջին համաշխարհային պատերազմը, այնուամենայնիվ, Համբարյանը բավականին հանգամանալից ներկայացնում է կուսակցության ձևավորման գործընթացը, ծավալուն և համակողմանի քննարկում է 1908թ. հոկտեմբերին ընդունված ՀՍՌ կուսակցության առաջին ծրագիրը:

Աշխատության մեջ գիտական բարեխղճությամբ և օբյեկտիվորեն հեղինակը լուսաբանում է ռամկավարների տեսակետները արևմտահայության ազատագրության ուղիների վերաբերյալ, ցույց տալիս այդ հարցում նրանց գաղափարական բարեշրջությունը: ՀՍՌ կուսակցության պատմության ուսումնասիրության գործում մեզ համար ուղենիշային (հայեցակարգային) նշանակություն ունեցող այս աշխատությունը գրելիս հեղինակը չի հետապնդել ՀՍՌԿ պատմության ամբողջական ուսումնասիրության նպատակ, այլ միայն ջանացել է ցույց տալ կուսակցության վերաբերմունքն արևմտահայության ազատագրության խնդրի նկատմամբ, ինչն արել է խորագիտակ հետազոտողին վայել բարձր մակարդակով: Սակայն դեռևս շատ են կուսակցության պատմությանն առնչվող և իրենց լուծումը չստացած կամ նորովի մոտեցումներ պահանջող մի շարք հարցեր:

ՀՍՌ կուսակցության պատմությանն անդրադարձել է նաև պրոֆեսոր Կ.Դալլաքյանը «Ռամկավար ազատական կուսակցության պատմություն 1921-1940»[21] աշխատության մեջ:

---

20. Համբարյան Ա.Ս., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990.: Թեև անմիջականորեն ՀՍՌ կուսակցության պատմությանը չի նվիրված, սակայն ժամանակաշրջանի շատ ու շատ կնճռոտ հարցեր ճիշտ ընկալելու խնդրում մեզ համար օգտակար են եղել նաև հեղինակի «Ազգարարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)», Երևան, 1965, «Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914)», Երևան, 1979, աշխատությունները:
21. Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն 1921-1940, գիրք առաջին, Երևան, 1999: ՀՍՌԿ պատմության որոշ կարևոր խնդիրների, Արմենական-ՀՍՌԿ-ՌԱԿ առնչությունների ու գաղափարական էվոլյուցիայի հարցերին է նվիրված նաև Կ.Դալլաքյանի փոքրածավալ, բայց շահեկան «Արմենականություն և Սահմանադրականության հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ» հոդվածը, որը տպագրված է որպես Թեզիսներ Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի 1996թ.), Երևան, 1996:

Հեղինակը ցույց է տալիս ՀՍՌԿ գաղափարական էվոլյուցիան իր ձևավորումից մինչև Ռամկավար ազատական կուսակցության ստեղծումը: Գրքի առաջաբանում նա իրավացիորեն նկատում է, որ ՀՍՌ կուսակցությունը, հրաժարվելով արմենականության ռազմավարությունից ու մարտավարությունից, իր գլխավոր նպատակը հռչակեց պայքարն Օսմանյան Սահմանադրության էլ ավելի դեմոկրատացման համար և այդ հողի վրա հայության ազգային ինքնուրույնության հետագա զարգացումը, մերժելով որևէ անջատողական մտայնություն:[22] *Շարունակելով իր միտքը, Դալլաքյանը նշում է, որ Սահմանադրության պատրանքը շատ շուտով ցրվեց և ՀՍՌԿ-ի համար հստակեցվեց, որ կուսակցության որդեգրած ծրագիրն այլևս ժամանակավրեպ է: Դրա տրամաբանական շարունակությունը պիտի լիներ այն հանգամանքը, որ արդեն տասական թվականների վերջին, հեղինակի բնորոշմամբ, կուսակցության անվան «Սահմանադրական» եզրը գործնականում չէր օգտագործվում և արդեն 1919-1921թթ. Ռամկավար կուսակցության գործունեությունն ամբողջովին սահմանազատված է «Սահմանադրականությունից և իր բովանդակությամբ խիստ մերձենում է ապագա ՌԱԿ-ին»*[23]*: Հեղինակն ընդգծում է, որ նորաստեղծ Ռամկավար ազատական կուսակցությունը, ըստ էության, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության գաղափարական-քաղաքական իրավահաջորդն էր, արմենականության և ռամկավարության լավագույն ավանդույթների կրողն ու շարունակողը: Իր մեկ այլ, ավելի վաղ հրատարակված աշխատության մեջ*[24] *Դալլաքյանը ցույց է տալիս Զոպանյանի սերտ կապը ռամկավարների հետ: Հեղինակը պարզաբանում է 1913թ. Բալկանյան պատերազմի տարիներին ռամկավարների կողմից Կիլիկիայում նախապատրաստվող ապստամբության որոշ մանրամասներ, ցույց տալիս, որ Զոպանյանը Կիլիկիայի ռամկավարների խնդրանքով նախապես օգնել է ապստամբներին դրամի հանգանակության կազմակերպման, եվրոպական տարբեր պետությունների ղեկավարներին դիմումներ հղելու, մամուլում լայն հայանպաստ գործունեություն ծավալելու և*

22. Դալլաքյան Կ., նույն տեղում, էջ 5:
23. Նույն տեղում, էջ 7:
24. Դալլաքյան Կ., Արշակ Չոպանեան, Երևան, 1987:

Ֆրանսիայի հասարակական կարծիքը Հայանպաստ դարձնելու հարցերում: Սակայն շատ չանցած, երբ Զոպանյանը հասկանում է, որ սպասումը բավարար նախապատրաստված չէ, ռամկավարներին սկսում է համոզել հետ կանգնել այդ քայլից, որը կարող էր Կիլիկիայի հայության համար մեծ աղետի պատճառ դառնալ[25]:

Կարևոր է նաև Ալ.Մյասնիկյանի «Կուսակցությունները գաղութահայության մեջ»[26] գրքույկը: Վիճարկելով նշանավոր բոլշևիկի շատ դրույթներ, միևնույն ժամանակ չեշտենք, որ տեղին ու դիպուկ, թեև շատ հակիրճ, բայց տարողունակ մտքերով հարուստ այդ աշխատության մեջ հեղինակը ռամկավարներին բնորոշում է, որպես «գաղութահայ բուրժուազիայի ներկայացուցիչներ», որոնք հիմնականում արտահայտում են արևմտահայության շահերը: Դրա հետ մեկտեղ Մյասնիկյանը ռամկավարներին համարում է իրատես, որոնք, մի կողմ թողնելով բոլշևիկների հետ ունեցած գաղափարական տարաձայնությունները, հասկանում են, որ գաղութահայությունը քաղաքական իմաստով ապագա չունի և այդ ապագան ռամկավարները տեսնում են Հայաստանում, օգնության ձեռք մեկնում վերջինիս: Մյասնիկյանը ռամկավարներին համարում է Խորհրդային Հայաստանի բարեկամներ:

Տարողունակ ու փաստառատ են նաև ավյուռքահայ մերօրյա հետազոտող Վաչե Ղազարյանի ուսումնասիրությունները: Հեղինակը թեև հիմնարար և ծավալուն աշխատություններ չի գրել, սակայն կատարել է հսկայածավալ ու բեղուն աշխատանք: Կարևորվում է հատկապես նրա հավաքած, մեկտեղած և իր իսկ խմբագրությամբ հրատարակած «Հիմնական ծրագրեր, կանոնագրեր, վավերագրեր...»[27] ժողովածուն, որի երկրորդ ենթաբաժինը ներառում է ՀՍՌ կուսակցությանն առնչվող նյութերը. նրա կազմության (1908թ.) ժամանակ ընդունված և 1920 թվականի (սեպտեմբեր-դեկտեմբեր) ՀՍՌԿ Գ ընդհանուր պատգամավորական ժողովում վերանայված ու խմբագրված ծրագիրը և

25. Նույն տեղում, էջ 323-324:
26. Մյասնիկյան Ա., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924:
27. Ռամկավար-Ազատական կուսակցութիւն. հիմնական ծրագրեր, կանոնագրեր, վավերագրեր. կազմեց դոկտոր Վաչէ Ղազարեան, Պեյրութ, 1988:

այլն: Վավերագրերի այս ժողովածուն, իր որոշ թերություններով ու պակասավորությամբ հանդերձ, առայժմ միակն է ու շատ շահեկան՝ ռամկավարությունը որպես երևույթ հայության մեջ (Արմենական-ՀՍՌԿ-ՌԱԿ-ՀՌԱԿ էվոլյուցիայի տեսքով) ուսումնասիրելու գործում:

Հեղինակի «Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի»[28] աշխատությունը ընդհանուր գծերով ներառում է նաև ՀՍՌԿ-ի պատմությունը: Իսկ նրա «Արմենական կուսակցութիւն»[29] փոքրածավալ գրքույկն անփոխարինելի արժեք ունի մեզ համար, որովհետև հնարավորություն է ընձեռում պարզելու, թե ինչ դաղափարական ոլորտում էին սնվում ՀՍՌԿ արմատները:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության պատմության վերաբերյալ ուշագրավ փաստեր կան նաև Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը»[30] աշխատության մեջ: Լուսաբանված են մասնավորապես Փարիզում կայացած Ազգային Համագումարի, Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակության գործունեության, ինչպես նաև Ազգային պատվիրակության և Հայաստանի Հանրապետության պատվիրակության ու կառավարության փոխհարաբերությունների վիճահարույց հարցերը, որտեղ զգալի են եղել ռամկավարների դերն ու ազդեցությունը: Ճիշտ է, հեղինակն աշխատել է խնդիրները լուսաբանել անաչառ ուսումնասիրողի տեսանկյունից, սակայն չի կարողացել խուսափել որոշակի կողմնակալությունից:

ՀՍՌ կուսակցության պատմության որոշ հարցեր է արծարծում նաև Գ. Լազյանն իր «Հայաստանն ու հայ դատը»[31] աշխատության մեջ: Հեղինակը, սակայն վերլուծություններ չի կատարում, այլ բավարարվում է միայն որոշ փաստաթղթեր հրատարակելով: Դա մասնավորապես վերաբերում է 1915 թվականին Ալեքսանդրիա քաղաքում կայացած ՀՍՌ և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունների համաձայնությանը՝ իրենց գործունեությունը կոորդինացնելու ուղղությամբ, ինչպես նաև 1919 թվականի օգոստոսին Կոստանդնուպոլ-

28. Ղազարեան Վ., Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրութ, 1978:
29. Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւն, Պէյրութ, 1985:
30. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993:
31. Լազեան Գ., Հայաստանն ու հայ դատը, Երևան, 1991:

սում կայացած ամերիկյան հանձնախմբի և ռամկավար պատվիրակության բանակցությունները Հայաստանի մանդատի կապակցությամբ և մի շարք այլ հարցեր:

Մեր խնդրո առարկա ժամանակաշրջանն է ընդգրկում նաև Հայկաշեն Ուզունյանի «Արևմտյան ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ և ՌԱԿ-ը իր 60-ամեակին»[32] շահեկան աշխատությունը: Կատարելով փոքրիկ պատմական անդրադարձ, հեղինակը համառոտ ներկայացնում է Արմենականության պատմությունը, խոսում նաև 1908թ. Սահմանադրական ռամկավար կուսակցության ձևավորման մասին: Անդրադառնալով 1915թ. Վանի ապրիլյան հերոսամարտում ռամկավարների դերին, հեղինակն, ըստ էության, նրանց համարում է արմենականների օրգանական շարունակություն բացարձակ իմաստով, որոնք ուղղակի հանդես են գալիս «Ռամկավար հորջորջումին» տակ:[33]

ՀՍՌ կուսակցության գործունեության մի կարճ հատվածի պատմությանն անդրադարձել է նաև Վ.Մելիքյանը «1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը»[34] աշխատության մեջ: Թեև ժամանակագրական առումով այն ընդգրկում է միայն 1917 թվականը, սակայն հեղինակը հայկական կուսակցությունների շարքում համակողմանիորեն ներկայացնում է նաև ՀՍ ռամկավարների վերաբերմունքը փետրվարյան հեղափոխության և դրա առաջ բերած քաղաքական փոփոխությունների նկատմամբ: Մելիքյանն իրավացիորեն ընդգծում է, որ Ռամկավար կուսակցությունն արտահայտում էր բացառապես արևմտահայության շահերը: Այս աշխատությունը հատկապես արժեվորվում է նրանով, որ հեղինակը հիմնվում է ռամկավար պարբերականների համակողմանի ուսումնասիրության, քննության և վերլուծությունների վրա, միևնույն ժամանակ մնալով օբյեկտիվ ու անկողմնակալ հետազոտողի դիրքում:

---

32. Ուզունեան Հայկաշէն, Արևմտեան ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ և ՌԱԿ-ը իր 60-ամեակին, Լոս Անճելըս, 1986:
33. Նույն տեղում, էջ 36:
34. Մելիքյան Վ., 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997:

ՀՍՌ կուսակցության պատմության ուսումնասիրության գործում որոշակի նշանակություն ունի Ռամկավար ազատական կուսակցության նշանավոր գործիչ Գերսամ Ահարոնյանի «Մեծ երազի ճամբուն վրայ»[35] աշխատությունը: Հեղինակի նպատակը չի եղել ՀՍՌ կուսակցության պատմությունը գրելը, այլ հայկական հարցի էության և փուլերի լուսաբանումը կամ, ինչպես ինքն է պատկերավոր գրել՝ «Մեծ երազի անցած ճանապարհի պատմությունը», որի ընթացքում հեղինակը մասամբ անդրադառնում է նաև ռամկավարների գործունեության որոշակի ասպեկտներին: Խոսելով ՀՍՌ կուսակցության մասին, Գ. Ահարոնյանը գրում է. «Այս կազմակերպությունը միաձուլումն էր Արմենական կուսակցութեան, Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան և Գաղափարակցական միութեան: Կազմուած էր 1908թ. հոկտեմբերին, Գահիրէ, գլխաւորութեամբ Տամատեանի, Մալեզեանի, Թէքէեանի, Մկրտիչեանի, Տաղաւարեանի և այլոց, բոլորն ալ փորձառու և իրաւ ղեկավարներ», որոնք շատ շուտ նկատեցին իթթիհատական «դիմակներու ետին պահուըտած բորենիները», հայտնեցին իրենց հիասթափությունը և հայ ժողովրդի փրկությունը որոնեցին «բարեկարգութեան, ինքնավարութեան և ազատագրութեան ուղիներուն վրայ»:[36]

Ներկա ուսումնասիրությունը շարադրելիս զգալիորեն օգտակար է եղել նաև Ա. Յափուճյանի «Համառօտ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան կազմութեան»[37] աշխատությունը: Գրքում հեղինակը համառոտ նկարագրում է ՀՍՌ կուսակցության կազմավորման գործընթացը և փորձում է լուսաբանել վերջինիս աշխարհայացքը, երբեմն տուրք տալով կուսակցական կողմնակալությանը:

Արդեն նշեցինք, որ խորհրդահայ պատմագիտությունը ևս անդրադարձել է հայ ավանդական և մասնավորապես ՀՍՌ կուսակցության պատմության հարցերին: Պատշաճ գնահատելով հայ պատմաբանների կատարած խիստ կարևոր աշխատանքը, միաժամանակ ընդգծենք, որ թեև նրանցից շատերն իրենց ուսումնասիրության օբյեկտը չեն դարձ-

---

35. Ահարոնեան Գ., Մեծ երազի Ճամբուն վրայ, Պէյրութ, 1964:
36. Նույն տեղում, էջ 5:
37. Եափուճեան Աւետիս, Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977:

լել ՀՍՌ կուսակցության պատմությունը, այնուամենայնիվ, մեր խնդրո առարկա ժամանակաշրջանի այս կամ այն պրոբլեմին անդրադառնալով, գրել են հիմնարար աշխատություններ, որոնք, որոշ վերապահումով, մեզ համար ունեցել են ուղենշային նշանակություն: Օրինակ՝ Հր. Ավետիսյանի,[38] Հր. Սիմոնյանի,[39] Գ. Գալոյանի,[40] Մ. Ներսիսյանի,[41] Ջ. Կիրակոսյանի[42] և այլոց հիմնարար և ուսանելի աշխատությունները, որոնցում համոզիչ կերպով ցույց են տրվում այն պայմանները, որոնք նպաստեցին այդ չարագործության իրականացմանը և անհերքելիորեն ապացուցվում է, որ դարի մեծագույն չարիքն իրականացվել է թուրքերի մանրամասն ու նախօրոք ծրագրված, պատրաստված ու իրագործված պետական քաղաքականության արդյունքում: Իսկ պահը երիտթուրքերի կողմից շատ հարմար էր ընտրված. «պատերազմական ծխածածկույթով կարելի էր արդարացնել ամեն ինչ»: Թուրքերը համոզվել էին, որ ընթացիկ պատերազմում հայերը լուրջ ուժ էին հակառակորդի ձեռքում և «անհրաժեշտ էին համարում ոչնչացնել ավելի ուժեղանալու որևէ հնարավորություն»: Իրենց նպատակին քաղաքականության իրականացման մեջ «երիտթուրքերը հանդիպել էին հայերի բոլոր խավերի ու քաղաքական կուսակցությունների դիմադրությանը և նրանց Մեջադեռք տեղափոխելու, հայ ժողովրդի ուժը թուլացնելու մեջ էին տեսնում իրենց հաջողության գրավականը»:

Արևմտահայության մի մասի՝ կիլիկիահայության կոտորածներն ու ամբողջովին հայաթափումը «ասպետական» Ֆրանսիայի օգնությամբ, մանրամասնորեն չարադրված են Ռ. Սահակյանի «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան»[43] շահեկան աշ-

38. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997:
39. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991: Անդրանիկի ժամանակը, գ. 1,2, Երևան, 1996:
40. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999:
41. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Երևան, 1955. և Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 2002:
42. Կիրակոսյան Ջ.,Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983 գիրք 2-րդ, էջ 10:
43. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970:

խատուության մեջ: Անդրադառնալով հայ քաղաքական ուժերի ծավալած գործունեությանը Կիլիկիայում, հետազոտողն իրավացիորեն նշում է, որ կիլիկիահայության համար հատկապես բախտորոշ դարձավ 1920թ. մայիսի 30-ին Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կնքված զինադադարը, որով ֆրանսիական զորքերը նահանջում էին ու Թուրքիայի ողորմածությանը հանձնում Կիլիկիան: Սա էլ նպաստեց ազգայնական ուժերի վերելքին Թուրքիայում, որոնք նոր բռնություններ ձեռնարկեցին կիլիկիահայերի նկատմամբ:[44] Անդրադառնալով հայ քաղաքական ուժերի ու կուսակցությունների գործունեությանը՝ պատմաբանն իրավացիորեն գրում է, թե վերոնշյալ պայմանագրի բովանդակությունն ու նպատակները ծանրագույն պահի պայմաններում՝ նրանք չկարողացան ճիշտ գնահատել և Կիլիկիայի «Ազգային խորհուրդը օգոստոսի 4-ին հռչակեց Կիլիկիայի անկախությունը Ֆրանսիայի հովանավորության ներքո և կազմեց կառավարություն՝ Մ. Տամատյանի գլխավորությամբ, առիթ ծառայեց ֆրանսիական վարչության ու զինվորականության ձեռքին՝ իսպառ վերացնել հայերի աննշան ընդվզումներն իսկ»[45] և վերջնականորեն հայաթափել Կիլիկիան:

Խնդրո առարկա ժամանակաշրջանին նվիրված և ՀՍՌ կուսակցության պատմությանն անդրադարձող աշխատությունների և հուշագրությունների կողքին կան նաև ժամանակաշրջանին նվիրված գեղարվեստական երկեր, որոնք պատկերավոր ու տպավորիչ դրվագներով, երբեմն ամենաիրական գույներով և իրատեսական նկարագրություններով են արտացոլում ժամանակը, տիրող բարքերը, տիպիկ ու կենդանի կերպարների միջոցով ներկայացնում տեղի ունեցածը, դրանք անջնջելի դրոշմվում են մարդու ուղեղում և ուղեկցում նրան ամբողջ կյանքում: Այս իմաստով Վան-Վասպուրականի, կուսակցությունների ու նրանց ծավալած գործունեության մասին շարադրանքով գնահատելի է Գ.Մահարու «Այրվող այգեստաններ»[46] պատմավեպի հատկապես վերամշակված տարբերակը, որում «վաղվա ճանա-

44. Նույն տեղում, էջ 86:
45. Սահակյան Ռ., նույն տեղում, էջ 255:
46. Սահարի Գուրգեն, Այրվող այգեստաններ, Երևան, 1966:

պարհների անցման» ակնկալիքը և պատմականի ու գեղարվեստականի վարպետ միաձուլումը կա:[47]

Ամփոփելով, նշենք, որ ժամանակաշրջանին նվիրված և ՀՍՌ կուսակցության պատմությունն ինչ-ինչ չափերով ներառող շատ ուրիշ պատմագիտական աշխատություններ կան, որոնց թվարկումն այստեղ անիմաստ կլինի: Ահա այս և մի շարք այլ նկատառումներով սույն ուսումնասիրության մեջ մեր խնդիրն է եղել, հենվելով սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի և թեմայի վերաբերյալ նախորդ պատմագիտական գրականության վրա, անաչառ ուսումնասիրողի տեսանկյունից հնարավորինս ամբողջացնել կուսակցության պատմությունը:

47. Նույն տեղում, էջեր 331,332,336,499 և այլն:

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1.Արմենական կուսակցություն

Թուրքական բռնապետության դեմ XIX դարում ծավալված արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները դարավերջ թևակոխեցին աննախընթաց վերելքով:

Եվրոպական հեղափոխությունները և բալկանյան ժողովուրդների ըմբոստացումը թուրքական լծի դեմ ռազմերթի հանեցին միայն մասնակի ընդվզումներով իր գոյությունն աշխարհին ավետող արևմտահայ ժողովրդին: Իսկ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և նրան հաջորդած Բեռլինի վեհաժողովը, վերջինիս ընդունած 61-րդ հոդվածն ու հայկական հարցի միջազգայնացումը, Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփի» քարոզը գաղափարական ու կազմակերպչական նոր ալեբախումներ առաջացրին հայության մեջ: Հայաստանի տարբեր շրջաններում և գաղթօջախներում մինչ այդ ստեղծված գաղտնի ազատագրական խմբակները հիմք ծառայեցին առավել հասուն, մարտական ու գաղափարական կուռ կազմակերպության՝ քաղաքական կուսակցության ստեղծման համար, որն ամբողջովին բնական երևույթ էր, և օրինաչափ պատասխան ընդդեմ սուլթանական օրեցօր անտանելի դարձող ճնշման ու բռնությունների:

19-րդ դարի 70-80-ական թթ. Վան-Վասպուրականում իրենց բեղուն կրթալուսավորական, գաղափարա-քաղաքական ու կազմակերպչական գործունեությամբ փայլատակած երկու Մկրտիչները

(Խրիմյան և Փորթուգալյան), որոնք մեծ գործ էին կատարել Վասպուրականի հայության ազգային ինքնագիտակցության արթնացման գործում, իրենց մասնակցությամբ մեծ թափ հաղորդել Վանում գործող «Սև խաչ» հեղափոխական գաղտնի կազմակերպությանը, դարձան այն սերմնացանները, որոնց ազդեցության ներքո ծլարձակեց ու հասակ առավ մի սերունդ, որն էլ երկնեց հայ իրականության մեջ առաջին կուսակցությունը՝ Արմենական անունով: «Ժամանակակիցների վկայությամբ,- գրում է այս հարցերի խորագիտակ հետազոտող, պ. գ. դ. Է. Կոստանդյանը,- առանց հեղափոխություն բառն արտասանելու, Փորթուգալյանը Վանում ստեղծեց հեղափոխականորեն տրամադրված մի սերունդ, որը երկար տարիներ հայրենասիրական մեծ աշխատանք ծավալեց այնտեղ»:[48]

Կուսակցության հիմնադիր կորիզը դարձան Փորթուգալյանի կողմից հիմնադրված Վանի Վարժապետանոցի և Կեդրոնական վարժարանի մի խումբ շրջանավարտները: Նշանավոր արմենական Գր. Պեսզիկյանն իր հուշերում գրում է, որ 1884թ. ամռանը, երբ խնջույքի սեղանի շուրջ հավաքված էին «Կեդրոնական» վարժարանի առաջին և երկրորդ տարվա շրջանավարտները և Վանի հայ հասարակության ընտրանին, նախագահող Մ. Խրիմյանը դիմելով հավաքվածներին, շեշտում է, որ հավաքական ուժերով պետք է աշխատել ազգի փրկության համար: Այդ պատմական խնջույքից քիչ անց Մ. Փորթուգալյանն իր մոտ հրավիրելով «Կեդրոնականի» մի խումբ շրջանավարտների, համոզում է նրանց ստեղծել մի ընկերություն: Առաջարկն ընդունվում է խանդավառությամբ և հիմնվում է «Գործակցական Միութիւնը», որը բաղկացած էր Մ. Փորթուգալյանից և նրա 12 սաներից՝ Մ. Ավետիսյան, Ռ. Շատվորյան, Գր. Պեսզիկյան, Գր. Թերլեմեզյան (Մ. Ավետիսյանի հարազատ եղբայրը), Գր. Աճեմյան (Գուրգեն Մահարու հայրը), Գար. Բաղեշցյան, Գր. Խանջյանը (Աղասի Խանջյանի հայրը), Եղ. Գոնդակճյան, Մ. Պարութճյան, Գաբ. Նաթանյան, Գր. Թերլեմեզյան, Գր. Օտյան, բժիշկ Գ. Ասլանյան: Միության նպատակն էր արտասահմանից գրականություն հայթայթել և «զարկ տալ

48. Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական - քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 89:

ժողովրդին մտավոր զարգացման»: Հենց «Գործակցական» այս միությունն էլ փաստորեն դարձավ ապագա Արմենական կուսակցության կազմակերպական միջուկը: Միության անդամների համար հրամայական պահանջ կար «ի մի հավաքվելու և պատրաստելու իրենց ապագայ հասարակական գործունեութեան ծրագիր-ուղեգիծը»:[49] Անհրաժեշտ էր մշտական հավաքավայր ունենալ, որը, սակայն, մեծ բարդությունների հետ էր կապված: Վանում գործում էր պարետային ռեժիմ՝ արևմուտից մեկուկես ժամ հետո դադարում էր օրինական երթևեկությունը, իսկ օրինազանցները բանտարկվում էին: Երկար փնտրտուքից հետո ընտրվեց Թերլեմեզյանների այգու հնձանը, ուր կարելի էր հավաքվել և միասին անցկացնել ամբողջ գիշերը և որի միակ «կահավորումն էր չոր գետնի վրա փռված մի հնամաշ խսիր, որի անունով Խսրի տուն կոչվեցավ այդ հավաքավայր-ակումբը»:[50] Այս հավաքավայրին վերոհիշյալ 12-ից չէին անդամակցում տեսչական պաշտոնով Բաղեշ մեկնած Եղիշե Գոնդակճյանը և Պոլսում բժշկագիտության և իրավաբանության բարձրագույն դասընթացների հաճախող Գալուստ Ասլանյանն ու Գաբրիել Նաթանյանը:

Խսրի տունը քաղաքական և ընկերական ակումբ էր, որտեղ էլ որոշվեց վերակազմել ազգային պաշտոնական մարմինները, վերաբացել Փորթուգալյանի ձեռնարկած կիրակնօրյա վարժարանները, որով վերջ կտրվեին Վանում երիտասարդների թաղային կռիվներին, ինչպես նաև Պարսկաստանի վրայով հարաբերություններ հաստատել արտասահմանի հետ և այլն:

Այսպիսով, Արմենական կուսակցությունը հիմնադրվեց 1885թ. աշնանը, Խսրի տան մեջ, Մ. Փորթուգալյանի աշակերտների, բայց ոչ անձամբ Փորթուգալյանի[51] կողմից: Առանց աղմկալի հայտարարությունների ու ցուցադրական գործողությունների, խիստ գաղտնիու-

49. Պեօզիկեան Գ., Խսրի տուն, «Վասպուրական» հանդես, 1941., Բ տարի, թիվ 3:
50. Նույն տեղում:
51. Մինչ այդ՝ ծավալած ազատախոհական գործունեության համար Փորթուգալյանը հայտնվել էր «անհուսալիների» ցուցակում և թուրքական իշխանությունների կողմից Վանից աքսորվել Կ. Պոլիս: Այստեղ էլ նրան հանգիստ չեն տալիս և նա խույս տալով ձերբակալությունից՝ հեռանում է երկրից, հաստատվում Ֆրանսիայի Մարսել քաղաքում և 1885թ. հուլիսի 20-ից սկսում հրատարակել «Արմենիա» թերթը:

թյան պայմաններում ծնվեց Արմենական կուսակցությունը, որը օրինաչափ հակազդեցությունն էր անընդհատ խստացող թուրքական դաժան տիրապետության ու այլևս անտանելի դարձած համիդյան բռնատիրության, հետևանքն ազգային-քաղաքական, կրթական-մշակութային կյանքի բուռն վերելքի, «որ պիտի յանգէր հայ հեղափոխական կուսակցութեան կազմութեան»:[52]

«Արմենականութիւնը ծնունդ առավ Վանի մեջ, ուր օրըստօրե հող գտավ Երկրին մեջ: Վանի ընտիր երիտասարդութիւնը, գործեց նվիրումով, անոր ոգիով ու ծրագրով»,[53] - գրում է Վ. Փափազյանը: Այս կարծիքն է արտահայտում նաև Վ. Ավետիսյանը. «Մ.Ավետիսյանի ղեկավարությամբ արևմտահայության մեջ ծնունդ առած առաջին և վերջին կուսակցությունը,- գրում է հեղինակը,- կյանքի կոչված է Վանի մեջ»:[54]

Սակայն կուսակցության կազմավորումն այսպես չեն ներկայացրել մեր ազատագրական շարժումներին անդրադարձող մի շարք հեղինակներ: Նրանք ուսումնասիրության առարկա չդարձնելով Արմենական կուսակցության պատմությունը,[55] հետևապես, խորամուխ չլինելով այդ հարցում, գրեթե կրկնելով միմյանց, կուսակցության հիմնադրման այլ վայր են նշում և այլ հիմնադիր: Օրինակ՝ «Առաջին քիչ թե շատ կազմակերպված կուսակցությունը՝ 1885-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնված արմենականների կուսակցությունն էր», - գրում է Վ.Պարսամյանը[56], իսկ մի այլ առիթով լրացնում, որ «նրա հիմնադիրն էր արևմտահայ մտավորական Մկրտիչ Փորթուգալյանը»:[57] Իսկ վաստակաշատ Լեոն Փորթուգալյանին սխալմամբ համարելով «Թիֆլիսահայ մանկավարժ ու գրող», գրեթե նույն կարծիքին է. «Նա (Մ.Փորթուգալյանը - Ս.Ս.) 1885-ի երկրորդ կեսից Մարսելում

52. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 114:
53. Փափազեան Վ. (կոմս), Իմ յուշերը, հատոր Ա., Բոստոն, 1950, էջ 211:
54. Ավետիսյան Վ.Ա., Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-Լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 161-162:
55. Դրվատելի բացառություն է, թերևս, Ա.Կարապետյանի «Արմենական կուսակցություն» թեկնածուական ատենախոսությունը:
56. Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1985, էջ 211:
57. Պարսամյան Վ. և այլք, Հայ ժողովրդի պատմություն (դասագիրք ԲՈՒՀ-երի համար), Երևան, 1975, էջ 251:

սկսեց հրատարակել «Արմենիա» անունով փոքրածավալ թերթը, որի պահպանության համար հիմնում է «Հայոց հայրենասիրական միությունը»: Այս կազմակերպված, սեփական ծրագրով շարժումից էլ բխեցնում է Արմենական կուսակցությունը[58]:

Մեր պատմագիտության մեջ այդ հարցի առնչությամբ ձևավորվել է նաև երկրորդ տեսակետը, համաձայն որի, Փորթուգալյանն իր ազգասիրական գործունեությամբ և իր «Արմենիայով» սերմնացանը եղավ, մեծապես նպաստեց այդ խնդրին, հուշեց գաղափարը, այրվեց այդ նպատակի համար, սակայն իրերի բերումով (աքսորը Վանից, ապա ընդհանրապես Թուրքիայից), նա չդարձավ կուսակցության անմիջական հիմնադրողը: Սա, իհարկե, չի նսեմացնում ոչ նրա հիշատակը և ոչ էլ ստվեր է գցում նրա հայրենասիրական ոգու վրա: Չէ որ, ի վերջո, այդ խնդրի իրագործողը նրա սանն էր, նրա գաղափարական դարբնոցում թրծված Մ. Ավետիսյանը:

Իսկ ընդհանրապես տարբեր տեսակետների առկայությունը շփոթի արդյունք է և լուսաբանման կարիք ունի: Բանն այն է, որ ուսումնասիրողների մի զգալի մասը Արմենական կուսակցությունը բխեցնում է Հայոց հայրենասիրական միությունից:[59] Այսպես, «Փորթուգալյանի գաղափարների ու մտահղացումների ազդեցության տակ կազմակերպվեց Հայոց հայրենասիրական միությունը (ՀՀՄ) մի գաղտնի կազմակերպություն, որը սկիզբ դրեց Արմենական կուսակցության գործունեությանը», - գրում է Ջ.Կիրակոսյանը:[60] Իրոք, Արմենական կուսակցության գաղափարական արմատները սնվում են Փորթուգա-

58. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 47-49:
59. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934, էջ 44: Լազեան Գ., Հայաստան և Հայ Դատը (վավերագրեր), Կահիրե, 1956, էջ 105-108: Սերոբեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1937, էջ 98-99 և Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948, էջ 184: Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 124-126: Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և Հայ հասարակական, քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 287: Փափազեան Վ., Իմ յուշերը, հատ. Ա, Բոստոն, 1950, էջ 130: Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 245: Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 255: Գազանճեան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրականի, Բոստոն, 1950, էջ 210 և այլն:
60. Կիրակոսյան Ջ., նշվ. աշխատությունը, էջ 245:

լյանից ու նրա «Արմենիայից», սակայն կուսակցությունը Հայոց հայրենասիրական միությունից սերելը ճիշտ չէ: Նախ միությունն ունեցել է ավելի համեստ խնդիր՝ ապահովել «Արմենիա» թերթի անխափան գործունեությունը՝ նրան նյութապես և բարոյապես օգնություն կազմակերպելով: «Եւ սակայն պատմական ճշմարտութիւնը կը դրդէ յայտարարել,- գրում է Ա.Դարբինյանը,- թե Մ.Փորթուգալեան, որ «Արմենիա» թերթին համընթաց ձեռնարկած է հիմնելու նաև «ՀՀ Միութիւն» անունով մարմին մը, և որ աւելի շատ նպատակ ունէր նպաստելու իր թերթին և օգնելու անոր գաղափարներուն տարածումին, ուղղակի կազմողը և հիմնադիրը չեղաւ Արմենական կուսակցութեան»:[61] Եվ հետո, բոլորը խոսելով ՀՀՄ-ի մասին, չնչին բացառություններով չեն նշում նրա ստեղծման թվականը: Իսկ Վաչե Ղազարյանը գրում է. «Փաստերը ցույց կուտան ընդհանրապէս, որ ան կազմուած է Արմենական կուսակցութենէն ետք»,[62] որին գալիս է լրացնելու հետևյալը. «Արմենիայի» շուրջը համախմբված գործիչները 1889թ. կազմակերպեցին «ՀՀ Միությունը», որի ծրագրային հիմքը Ռ.Պատկանյանի «Վարդապետարան» գրքույկն էր»:[63] Համենայն դեպս, եթե նկատի առնենք, որ մեզ հայտնի բոլոր աղբյուրներում ՀՀ Միության ստեղծման թվականի մասին միայն այս տվյալներն են, կարող ենք վստահորեն ասել, որ 1885թ. ստեղծված կուսակցությունը (սա ընդունում են բոլորը) չէր կարող ծնվել նրանից միայն չորս տարի ուշ կազմակերպված միությունից: Ամենայն հավանականությամբ ամբողջովին անլեգալ գործող արմենականները հետագայում օգտագործել են համեմատաբար ավելի «անմեղ» անվամբ գործող ՀՀՄ-ի պիտակը: «Արմենականները յատկապէս Վասպուրականի և Ատրպատականի մէջ գործած են ՀՀ Միութեան անունով»[64] երկու պարզ պատճառով՝ այդպիսի «անմեղ» անվամբ շատ գործ կարելի էր անել, քան հակապետական, արգելված քաղաքական կուսակցության: Երկրորդ՝ թե՛ Արմենական կուսակցությունը և թե՛ Հայոց հայրենասիրական միությունը սնվել ու հասակ էին առել նույն գաղափարական անդաստանում և

61. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 121:
62. Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը, Պէյրութ, 1985, էջ 10:
63. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, հատ. 6-րդ, Երևան, 1981, էջ 187:
64. Եկարեան Ա., Յուշեր, Պէյրութ, 1885, էջ 40:

բացառված չէր նրանց շփումը: Իսկ նույնացնել կուսակցությունը և ՀՀՄ-ն ճիշտ չէ, ինչպես որ սխալ է «նույնիսկ զայն (ՀՀՄ-ն) նկատել իբրև ծնուցիչ հայ քաղաքական առաջին կազմակերպութեան»[65]: «Ինքը՝ Ավետիսեանը, - վկայում է Ա. Դարբինյանը, - հիմնադիրը եղած էր այդ հեղափոխական կուսակցութեան և նրա գաղափարակիցները հետզհետե ամրացուցին նորաստեղծ հեղափոխական այդ կազմակերպութիւնը»[66]:

Իսկ Փորթուգալյանին «կարելի է նկատել հոգևոր հայր մը արմենականութեան», որը սկզբից նեթ ժխտում էր որևէ կապ Արմենական կուսակցության հետ և «հստակորեն հայտարարած է, թե «Արմենական» անունով հեղափոխական կուսակցութիւն մը ալ երբեք չենք ստեղծած»[67]:

Այսպիսով, Արմենական կուսակցությունը հիմնադրվել է 1885-ին Վանում Մ. Ավետիսյանի կողմից ավելի վաղ, քան Հայոց հայրենասիրական միությունը:

Արմենական կուսակցության հիմնադիրները հավաքվում էին, քննարկում հայ ժողովրդի անտանելի վիճակը, վերլուծում ստեղծված ծանր դրությունը և ելք որոնում այդ դժոխքից դուրս գալու համար: Քննարկումների ու փնտրտուքի արդյունք է դառնում կուսակցության ծրագիրը: Փաստերի համադրումը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ արմենականների առաջին ծրագիրն ընդունել է կուսակցության հիմնադիր խումբը 1885 թվականին, սակայն այն չի պահպանվել և մեզ չի հասել: Եթե նկատի ունենանք, որ 1894-ին ընդունված ծրագիրն առաջինի խմբագրված ու լրացված, գուցե նաև մասամբ փոփոխություններ կրած օրինակն է, ինչպես դա եղել և լինում է բոլոր կուսակցությունների, մասնավորապես ընդհատակում գտնվող կազմակերպությունների ու նրանց ծրագրերի առնչությամբ, ապա կարող ենք եզրակացնել, որ 1894-ին ընդունված ծրագիրն իր մեջ ամբողջու-

65. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 11:
66. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 19:
67. Նույն տեղում, էջ 125-126: Վ. Ղազարեան նշվ. աշխ., էջ14:

թյամբ ներառում է և արտահայտում նաև 1885-ին ընդունված կուսակցության առաջին ծրագիրը: 1894-ին ընդունված ծրագիրն ամբողջական փոփոխություններ այլևս չի կրել. սակայն եղել են մասնակի լրացումներ, հատկապես 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության ազդեցության ներքո, արմենականների այդ շրջանի առաջնորդ Սեպուհի[68] խմբագրությամբ հրատարակվել են շրջաբերականներ՝ «իբրև հավելվածական լուսաբանու-թիւն արմենական ծրագրին»:[69]

Երկար ժամանակ Արմենական կուսակցության ծրագիր է համարվել Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատագրութեան» գրքույկը: Իրականում այն իր հայրենաշունչ պաթոսով ոգեշնչել է Վանի ազատամիտ երիտասարդությանը, բայց ճիշտ չէ այն պնդումը, թե «Արմենականները սկզբում առաջնորդվել են մի ծրագրով, որը կոչվել է «Վարդապետարան Հայաստանի ազատագրութեան»:[70] Նրանք ունեին իրենց ծրագիրը, որը, սակայն, նախնական տեսքով չի պահպանվել և մեզ չի հասել:

Ճնշող մեծամասնությամբ անուս ու անգրաճանաչ արևմտահայության ազատագրությանը ձգտող այդ ծրագիրը նախնական էր ու պարզունակ, զուրկ «տեսաբանական խորքե» և ամբողջովին իր ժամանակի ու միջավայրի պայմանների ծնունդ էր: «Չեք գտներ այնտեղ տող մը, նախադասություն մը, տարբեր ժողովուրդներու հեղափոխական կազմակերպություններու աշխարհայացքներեն կամ լոզունգներեն»: Այդ ծրագիրը պատրաստողները իրապես առաջնորդվել էին «երկրին մեջ տիրող իրական պայմաններու հարկադրանքեն»,[71] այսինքն, այն ազդեցություն չէր կրում ժամանակի քաղաքական-գաղափարական որևէ հոսանքից, այլ ամբողջովին Արևմտահայաստանի բռնատիրական, վայրագ իրականության ծնունդ էր:

68. Սեպուհ (Երվանդ Քեոսեան), Վանի Արմենական կուսակցության նշանավոր գործիչ:
69. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 172-173:
70. Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից, Երևան, 1990, էջ 221:
71. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 125:

Հիմնականում այդ ծրագիրը ժողովրդավարական, ազգային ազատագրական բովանդակություն ուներ: Պակասավորությամբ հանդերձ, այն պարունակում էր նաև ուսանելի շատ կողմեր, տոգորված էր արիության ոգով: Ծրագիրն իր առաջնահերթ խնդիրն էր համարում սուլթանական դաժան ռեժիմից հայ ժողովրդի ազատագրությունը, նրա արդար դատի անկախ ու ազատ գոյատևելու և արարելու բնական իրավունքի պաշտպանությունը: Իր նպատակին հասնելու համար նա աշխատում էր ոտքի հանել ժողովրդին՝ մերժելով դավադրական գործունեության մարտավարությունը:

Արմենականների ծրագիրը սուլթանական բռնատիրության դեմ մղվող ազատագրական պայքարի ընթացքում առաջին հերթին հենվում էր ժողովրդի ուժերի ու հնարավորությունների վրա, ազգի ազատագրության հույսը կապում էր այդ ուժերի անձնուրաց և հերոսական պայքարի հետ: Առանց անձնազոհության չէր կարող լինել ազատություն: «Ինչ պետք է ընել, - հարցին պատասխանում էր, - միակ դարման, միակ պատասխան Սաբեկա ծառեն պետք է կախվի զոհի ոչխարը, պետք է զոհի սեղան կանգնել Հայաստանի լերանց վրա. արյան պետք կա»:[72] Մեր կարծիքով, Արմենական կուսակցության սոցիալական արմատները պետք է փնտրել ոչ միայն թուրքական դաժան տիրապետության դեմ ոտքի ելնող Արևմտյան Հայաստանի ժողովրդական զանգվածների ըմբոստության, այլ նաև գավառահայ ունեստերերի (բուրժուազիա) հեղափոխական տրամադրությունների և գործունեության մեջ: «Կուսակցության անդամների սոցիալական կազմն իրենից ներկայացնում էր նոր զարգացող գավառական մանր բուրժուազիայի ներկայացուցիչները», իսկ կուսակցության ղեկավարների դեմոկրատական ծագումը բնավ չի բացառում նրանց ազգային բուրժուական հեղափոխականներ լինելու փաստը: Այլ խոսքով ասած, արևմտահայ բուրժուազիան այդ տարիներին, նեղվելով իշխող թուրքական միջնադարյան ավատատիրական կապանքներից, ազգային հեղափոխական տրամադրություններ ուներ:

Արմենականությունը ժողովրդի մեջ դաստիարակում էր մարտական եռանդ, հաղթանակի հավատ, սեր դեպի հայրենիքը և անսահման ատելություն թուրքական բռնատիրության նկատմամբ:

72. «Արմենիա», Մարսել, 1888, հ. 24:

Կուսակցության ծրագրի մեզ հասած օրինակը վերաբերում է 1894թ. և ծնվել է տվյալ ժամանակի պահանջներից ու ամբողջովին բխել Արևմտահայաստանում տիրող ընդհանուր վիճակից: Հետագայում այն ենթարկվել է լոկ մասնակի փոփոխությունների: Կուսակցության ծրագիրն ու կանոնագիրը ձեռագիր վիճակում սահմանափակ 7-8 օրինակով պահվում էր Կենտրոնական մարմնի և Մասնաժողովների ղեկավարների տրամադրության ներքո՝ թելադրված գաղտնապահության սկզբունքներից: Չտպագրվելու ու չբազմացնելու նույն պատճառն են շեշտում նաև Վ. Ղազարյանը. «Ծրագիրը կպահվեր ձեռագիր վիճակում թելադրված գաղտնապահութեան մտահոգութիւններեն»[72] և Լ. Աճեմյանը. «Արմենական կուսակցութիւնը իր անդամներին արգիլած էր ամեն մի հրապարակային արտահայտութիւն թշնամիին որևէ փաստ չհայթայթելու կանխահոգութեամբ»:[74]

Արևմտահայության ազատագրությանը ձգտող այդ ծրագիրը նախնական էր ու պարզունակ, զուրկ «տեսաբանական խորքե» և ամբողջովին իր ժամանակի ու միջավայրի պայմանների ծնունդ էր: «Չեք գտներ այնտեղ տող մը, նախադասութիւն մը, տարբեր ժողովուրդներու հեղափոխական կազմակերպութիւններու աշխարհայացքներեն կամ լոզունգներեն»: Այդ ծրագիրը պատրաստողները իրապես առաջնորդվել էին «երկրին մեջ տիրող իրական պայմաններու հարկադրանքեն»,[75] այսինքն, այն չէր կրում ժամանակի քաղաքական-գաղափարական որևէ հոսանքի ազդեցությունը, այլ ամբողջովին Արևմտահայաստանի բռնատիրական, վայրագ իրականության ծնունդ էր:[76]

1890-ական թվականների կեսերին ստեղծված նոր իրավիճակի թելադրանքով քաղաքական պայքարի բովում բավականին հասունացած արմենականների լավագույն ուժերը Մ. Թերլեմեզյան-Ավետիսյանի ղեկավարությամբ խմբագրեցին իրենց ծրագիրը: Այն առաջին

73. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 124:
74. Եկարեան Ա., նշվ. աշխ., Ա տպագրութեան նախաբանը գրեց Լ. Աճեմեանը, էջ 1:
75. Կոստանդյան Է. նշվ. աշխ., էջ, 118:
76. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 125:

անգամ հրատարակվեց 1907 թ. «Երկրի ձայն» պարբերականում:[77]

Երկաթի ու արյան փիլիսոփայությունը որդեգրած Արմենական կուսակցության հիմնադիրները ժամանակի կրթված և առաջադեմ անհատներ էին, որոնք բավականին լավ էին պատկերացնում ժողովրդին հուզող հիմնահարցերը:

Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին քաջատեղյակ, կուսակցության ծրագրի հեղինակները որպես առաջնահերթ նպատակ մատնանշում էին այդ դժոխային կացությունը հեղափոխության միջոցով վերափոխելու անհրաժեշտությունը. «Արմենական կազմակերպութեանս նպատակն է յեղափոխութեամբ Թիւրքիոյ հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինք ազատօրեն կառավարելու»:[78] Կազմակերպությունը կամ կուսակցությունը (ի դեպ՝ ծրագրում գործածվում էր մերթ մեկը, մերթ մյուսը) իր գործունեությունը սահմանափակում էր միայն արևմտահայերով, խտրականություն չդնելով դասերի կամ դասակարգերի մեջ, խուսափում հարևան ժողովուրդների հետ համագործակցելուց, գտնելով, որ եթե կապեր հաստատի նրանց հետ, կցրի իր ուժերը և կբարդացնի գործը: «Հայ ազգի և մյուս ցեղերի մեջ աշխարհայեցողութեան, պահանջների և զարգացման մեծ տարբերութիւններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել և կնճռոտել»:[79] Իսկ թե ինչպես և ինչ միջոցներով կուսակցությունը պիտի հասներ իր նպատակի իրականացմանը, մանրամասն շարադրված է ծրագրի «Միջոցներ» բաժնում:

«Կուսակցութիւնը իւր նպատակն իրագործելու համար իւր կարողութեան չափով կգործադրե ամեն հարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջմանց համեմատ, կաշխատի ներքին ուժ գոյացնել ազգի մեջ, յուր ազատութեան համար հրատարակութիւններ կանե... »,[80] ասված է ծրագրում: Նպատակին հասնելու միջոցներ էին համարվում միևնույն գաղափարին ծառայող հայ հայրենասերներին միավորելն ու հեղափոխությունը նախապատրաստելը: Ներքին ուժ գոյացնելու համար ժողովրդին պրոպագանդել կուսակցության նպա-

77. «Երկրի ձայն», 1907, դեկտեմբերի 29 (թիվ 28):
78. Եկարեան Ա.., Հուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրութ, 1985., էջ 248:
79. Նույն տեղում:
80. ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 66, թ. 7:

տակները, արթնացնել նրա մեջ ազգային գիտակցությունը, ստեղծել զինախմբեր: Հարկավոր էր գրականության, կրթության ու դաստիարակության միջոցով ժողովրդին վարժեցնել նաև զինակրության ու կարգապահության և ցանկացած իրավիճակում պատրաստ լինել ինքնապաշտպանության: Այդ բանին հասնելու համար անհրաժեշտ էր համարվում ոչ միայն «հայի ձեռքը զենք դնելը, այլև կրթել նրա ստրկացած բնավորությունը, զարգացնել անոր մեջ մարդկային արժանապատվությունը»:[81]

Ծրագիրն անհրաժեշտ էր համարում զենք և դրամ հայթայթել, կազմակերպել զինվորական շարժուն խմբեր, պատրաստվել ընդհանուր շարժման, երբ «մանավանդ արտաքին հանգամանքներն ալ-օտար պետութիւններու և շրջակա ցեղերու տրամադրութիւնները - մեզի նպաստավոր համարվին»,[82] «երբ որ մեծամեծ ազգերի մեջ կսկսվի կենաց ու մահվան պատերազմը»:[83] Կամ սեփական ուժերով ու զենքի ճանապարհով, կամ օտարի օգնությամբ հասնել արևմտահայերի ազատագրությանը, այս էր արմենականների ծրագրի էությունը: Իսկ ընդհանուր շարժումը պատրաստելու համար, նրանք անհրաժեշտ էին համարում աշխատել երեք ուղղությամբ.

- ժողովրդի մտավոր զարգացում. «անհրաժեշտ էր նախ զինել միտքը և ապա բազուկը»,[84] *կրթական և քարոզչական շարժում,*

- նրա զինումը, զինվորական շարժում և զինավարժություն,

- միավորել միևնույն գաղափարին ծառայող մարդկանց. «մեկ տեսլականի շուրջ հավատավոր հայորդիներու համախմբումը»:[85]

Ծրագիրը մերժում էր մասնակի ցույցերն ու ելույթները, վնասակար համարելով ընդհանուր գործի համար, քանի որ դրանք ջլատում էին հեղափոխական ուժերը: Սակայն առանձին դեպքերում ընդունում էր դրանք: Այդպիսի տեսակետ էր հռչակվում նաև անհատական ահաբեկումների ու տեռորի նկատմամբ, որոնք «ստիպողական պահանջներու մեջ ներելի էին»[86] համարվում:

---

81. Նույն տեղում:
82. Նույն տեղում:
83. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 137:
84. Նույն տեղում, էջ 22:
85. Նույն տեղը, էջ 137:
86. Նույն տեղում:

Ինչպես տեսնում ենք, արմենականները բավականին զգույշ գործելակերպ էին առաջադրում, որը տիրող պայմանների հետևանք էր: Հարկավոր էր պատրաստվել անաղմուկ, չհարուցել թուրքական իշխանությունների կասկածները և բռնությունների տեղիք չտալ, դրանով անհարկի դժվարացնելով կազմակերպական աշխատանքները: Լինելով տեղացիներ, նրանք գիտակցում էին, որ անժամանակ ելույթները ծանր հետևանքներ կունենային, դիմացինը թուրք էր, որը հաղթելու դեպքում միայն ոչնչացնում էր:

Անժամանակ ելույթները վնասակար էին համարվում նախ, որովհետև հայերը շերտընդմեջ էին ապրում այլ ժողովուրդների հետ և կարող էին հարված ստանալ նաև թիկունքից, երկրորդ, որ «յեղափոխական ուժերը զուր կվատնվեին և մյուս կողմանե հոռետեսութիւն կծավալեն ժողովրդին մեջ»,[87] որը վտանգավոր էր դարավոր ընդհարումից հազիվ-հազիվ արթնացող, ազատագրական ուղին որդեգրող ժողովրդի համար:

Արմենականները գիտակցում էին, որ կրակին պահված վառողը վաղ թե ուշ բռնկվելու է: Բայց դրանից առաջ պետք է առկա լինեին որոշ նպաստավոր պայմաններ, առանց որոնց այդ բռնկումը կլիներ ձախող, կիսակատար և վնասակար: Ամենօրյա տառապանքը, անապահով զուլումը, որ արևմտահայության բաժինն էր եղել դարեր շարունակ, նրա վրա ծանրացող բռունցքի անողորմ դաժանությունը արմենականներին ստիպում էր «հազար չափել և մեկ ձևել»: Խնդիր դնելով մշակութային, կրթական և զենքի ուժով հասնելու բաղձալի նպատակին, արմենականությունը, այսպիսով, «իր մեջ կամփոփեր միաժամանակ և հեղափոխականը և կուլտուրական գործիչը»:[88]

Ծրագրի «Կազմակերպութիւն» բաժնում սահմանվում էր, որ կուսակցությունը պետք է ունենա գործող ու քաջալերող անդամներ: Առաջինները մուծում են անդամավճար, ենթարկվում են որոշումներին և կենսագործում դրանք, իսկ երկրորդները նյութապես և բարոյապես օժանդակում են կազմակերպությանը, առանց նրա որոշումներին են-

87. Նույն տեղում:
88. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Բ, Պեյրութ, 1983, էջ 93:

թարկվելու: Դրանք համարվում են կազմակերպությանը համակրողներ, նրա անդամներին քաջալերողներ:

Անդրադառնալով կազմակերպության կառուցվածքին, ծրագիրը նշում էր, որ այն պետք է ունենար իր ղեկավարությունը կամ կենտրոնը: Այդ կենտրոնը կազմակերպում ու ղեկավարում է հեղափոխական գործը, մասնաժողովների աշխատանքները, բանակցում զանազան կազմակերպությունների հետ, որոշում ընդհանուր շարժումների ժամանակը և եղանակը, հրապարակում իր թերթը, որի միջոցով պրոպագանդում է իր հայացքներն ու գաղափարները և այլն: Կենտրոնն իր գործող անդամներին բաժանում է շրջանակների կամ շրջանների, որոնցից յուրաքանչյուրը պիտի ունենար իր մասնաժողովը: Այդ մասնաժողովը պետք է վարեր տեղական գործերը և հարաբերությունների մեջ մտներ կենտրոնի ու շրջանների հետ: Այն կարող էր բանակցություններ վարել նաև հեղափոխական այլ ուժերի հետ, բայց միայն կենտրոնի թույլտվությամբ: Յուրաքանչյուր շրջան կամ շրջանակ պետք է ունենար տեղական պայմաններից ու պահանջներից ելնող իր կանոնադրությունը, սակայն այն «հակառակելու չէ ծրագրի որևէ մեկ կետին»:[89]

Կուսակցության գործադիր մարմիններից առանձին գործում էր համայնքների ներկայացուցիչներից կազմված «Զինուորական Ատեանը կամ Մարմինը», որի աշխատանքներին մշտապես մասնակցում էին կուսակցության կենտրոնի երկու ներկայացուցիչներ:

Զինվորական մարմինն իր տրամադրության տակ ուներ մի քանի տասնյակ զինվորներից բաղկացած խմբեր, որոնք միշտ պատրաստ էին կատարելու իր հրահանգները: Զինվորական մարմինը հետևում էր նաև զինավարժություններին և, հատկապես, զինատարական աշխատանքներին:

Կուսակցության անդամները կարող են հարց հարուցել ծրագրի մեջ փոփոխություններ մտցնելու մասին: Բայց նրանք առաջարկությունները պետք է ներկայացնեն իրենց մասնաժողովին կամ կենտրոնին: Փոփոխությունների հարցը պետք է լուծվի քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ:

Կազմակերպությունը հայտարարում էր, որ իր թերթը, իր գաղա-

89. Նույն տեղում:

փարական օրգանը ներկայումս կլինի «Արմենիան»: Սակայն ծրագրի այդ կետը պետք է ընդունել վերապահություններով: «Արմենիան» ոչ մի փուլում չի եղել արմենական կուսակցության կենտրոնական օրգանը: Արմենական նշանավոր գործիչ Մ. Նաթանյանը համոզվածությամբ ու հաստատապես նշել է, որ «Արմենական կուսակցութիւնը եղավ և մնաց միշտ «Արմենիայեն» անկախ կազմակերպությիւն մը՝ իր հիմնադիր վարիչներու պատասխանատվութեան տակ»:[90] Արմենականների պատմության խորագիտակ հետազոտող Վաչե Ղազարյանն էլ նշում է, որ «Արմենիան» միայն որոշ, սկզբնական շրջանի համար կարող էր լինել կուսակցության գաղափարատարածիչը:[91] Իսկ արմենական գործիչ Սահակ Չթչյանն անդրադառնալով 1895-ի օրերին, երբ կուսակցությունը բավական զորեղության էր հասել, նշում է, որ առաջարկություններ կային ոչ միայն նոր ծրագրի, այլև «նոր օրգանի մասին»:[92]

Արմենական վաստակաշատ գործիչ Արտակ Դարբինյանն իր հուշագրության մեջ անդրադառնալով այս խնդրին և կուսակցության պարագլուխ Մ. Ավետիսյանին, ամբողջությամբ լուսաբանում է, թե «Փորթուգալեան այժմ հեռու է երկրեն, օտար անկյուն մը ապաստանած՝ զբաղուած է իր «Արմենիա» թերթին հրատարակութեամբ: Կարելի է օգտվիլ այդ թերթին մեջ երևցած այս կամ այն թելադրութիւններեն, բայց մենք արդեն մտած ենք գործնական աշխատանքներու շրջանին մեջ: Մեր լավագույն թելադրութիւնները այժմ երկրին մեջ գործող ուժերեն և անոնց գործունեութեան տված արդյունքներեն կուգան»:[93] 1894թ. ծրագրում էլ նշված է, որ կուսակցության գաղափարի տարածման թերթը «ներկայիս մեջ «Արմենիան» լինելով, նորա ջանքը պիտի լինի բարոյապես և նյութապես օժանդակել այդ թերթին»: Այնուհետև ասվում է, որ «Արմենիա» թերթի խմբագրությունը որևէ «պատասխանատվութիւն չունի կազմակերպութեանս վարչական և ելևմտական գործերին մեջ»:[94] Առհասարակ թե՛ արմենական, թե այլ

90. Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, Գահիրե, 1990., էջ 41:
91. Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւն, Պեյրութ, 1985, էջ 15:
92. Չթչեան Սահակ, Ռ. Ա. կուսակցութեան զինանշանի հիսունհինգ ամեակը, «Պայքար» օրաթերթ, Բոստոն, 1951, մարտի 15:
93. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 84:
94. Նույն տեղում:

հուշագրողներ բազմիցս նշել են, որ Մ. Փորթուգալյանը և իր թերթը արմենական կուսակցության հետ «բարոյականեն զատ ուրիշ կապակցութիւն» չունի:[95]

Ավելին, ինքը՝ Փորթուգալյանն էր հաճախ հայտարարում, որ «Արմենական անունով հեղափոխական կուսակցութիւն մղալ երբեք չենք կազմակերպած»:[96] Որին ի պատասխան արմենականները հանդես եկան հատուկ հայտարարությամբ, ուր ասվում էր. «Արմենական» կազմակերպութիւնը թեև ներշնչված ի միջի այլոց և «Արմենիա» թերթի գաղափարներեն, սակայն ինքնուրույն, անկախ, երկրի իսկական պահանջներեն ծնունդ առած մարմին մը եղած է... »:[97]

Ինչպես տեսնում ենք, արմենական կուսակցությունը հիմնականում կիսում էր «Արմենիայի» սկզբունքները: Կուսակցության նպատակն էր ազատագրել Արևմտյան Հայաստանը օսմանյան լծից և հռչակել նրա անկախությունը: Նրանք ցանկանում էին այդ նպատակին հասնել հեղափոխության միջոցով, մասնակից դարձնելով արևմտահայ բոլոր դասակարգերին: Հիմնական շեշտը դնելով ազգային ուժերի վրա, նրանք երկրորդական նշանակություն էին տալիս եվրոպական միջամտությանը կամ հարևան ժողովուրդների օժանդակությանը: Արմենականները մերժում էին ցուցարարական կռիվները, համարելով դրանք վնասակար արևմտահայության համար: Ծրագիրը ձեռնպահ էր մնում ազատագրված Հայաստանի հասարակական-քաղաքական կարգերի հարցում, համարելով դա ապագայի գործ: Նրանք վերացական պատկերացում ունեին արևմտահայ հեղափոխության մասին, հավատալով, որ երբևէ կարող են ստեղծվել իրենց ցանկացած պայմանները նրա կատարման համար:

Արմենականների ծրագիրը կոնկրետ ժամանակի, երկրում տիրող պայմանների, ցավոտ երկունքի և հանգամանքների ծնունդ էր: Այն հետագայում թեև ենթարկվեց որոշ փոփոխությունների, սակայն հիմնականում պահպանեց իր բովանդակությունը: Այն չէր դնում ընկերվարական-միջազգայնական (սոցիալիստական) նպատակներ, քա-

---

95. Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 355:
96. «Արմենիա», 1906, օգոստոսի 29 (N 44):
97. «Ազգ», 1908, մայիսի 2:

նի որ ճիշտ գնահատելով գավառահայ մարդու դժնդակ պայմանները, սոցիալական հեղափոխության և ստեղծվելիք վարչաձևի հարցը թողնում էր ապագային՝ առաջնահերթ համարելով ամբողջ արևմտահայության ազատագրումը թուրքական բռնատիրությունից:

Դարասկզբին Վասպուրականի արմենականների ղեկավարը Երվանդ Քեռոյանն (Սեպուհ) էր: Նա ծնվել է 1882թ. Արաբկիրում, սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այնուհետև պաշտոնավարել է Ռիմիայի հայկական դպրոցներում: Ճեմարանում սովորելու տարիներին, ծանոթանալով արմենականների ծրագրին ու կանոնագրին, դառնում է համոզված արմենական: Կապեր է հաստատում արմենական գործիչների հետ: Գնահատելով Սեպուհին որպես ազգային գործի նվիրյալ, Սալմաստի արմենական վարիչ մարմինը նրան որպես գործիչ ուղարկում է Վան: Արհամարհելով սաստիկ ցուրտն ու սառնամանիքը, քրդի տարազով Սեպուհը 1906թ. հունվարին մտնում է Վան և ստանձնում Վանի արմենական մասնաճյուղի ղեկավարությունը: Սեպուհի ներկայությունը մեծապես ոգևորում է իր կուսակցական ընկերներին ու համախոհներին: Պարզ կենցաղով, զուսպ ու խոհեմ վարքագծով, լայնախոհությամբ նա դառնում է Վանի հարգված և հեղինակավոր գործիչներից մեկը: Խելացի ու հանդարտ կեցվածքով Սեպուհը փորձեց մեղմել արմենական-դաշնակցական հակասությունները, որոնք առաջացել էին ժողովրդի և, հատկապես, երիտասարդության վրա ազդեցություն ունենալու համար ծավալած գործունեության հետևանքով, սակայն իզուր: 1906թ. հունիսին Վանում կայացած դաշնակցական կազմակերպության շրջանային ժողովը, որին մասնակցում էին ղեկավար գործիչներ Սարգիսը, Ռուբենը, Արամը, Իշխանը, Սալմանը, Մալխասը և ուրիշներ, որոշում կայացրին. «Ի նկատի ունենալով, որ Տաճկաստանում յեղափոխական տարբեր կուսակցությունների գոյութիւնը չարիք է, իսկ ... Արմենականների գոյութիւնը լոկ թիւրիմացութիւն, որոշվեցավ քաղաքում գոյութիւն պահող Արմենականները ժամանակի ընթացքում խաղաղ փրոփականտայով քաշել Դաշնակցութեան մեջ», իսկ եթե դա հնարավոր չլիներ, ապա «իբրև փոքրագույն չարիք, պետք է դիմել բռնի ուժի...»:[98] Չընկրկելով այդ որոշման առաջ, Սեպուհը հա-

98. Ռուբեն, Նշվ. աշխ., էջ 303, 308:

վասարակշռված ու խելացի վարում էր կուսակցական գործչի իր պարտականությունները մինչև եղերական նահատակությունը: Դա տեղի ունեցավ 1908թ. հունվարի 23-ին: Թուրք ոստիկանների հերթական շրջայցի ժամանակ չուզենալով վտանգել այն ընտանիքը, որի տանը պատսպարված էր ինքը, դուրս եկավ տանից և փորձեց անցնել հարևանի այգի ու հենց այդ պահին խոցվեց դարանամուտ թուրք զինվորի գնդակից: Սեպուհի մահով արմենական «անձնուէրներու շարքը գրեթէ կփակվի»:[99]

Սեպուհը կուսակցության Կենտրոնի անունից գրեց մի թռուցիկ շրջաբերական, որը կցվեց ծրագրին իբրև հավելված: Այն զգալիորեն կրում էր ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունը, արմենականների յուրօրինակ արձագանքն էր 20-րդ դարասկզբի հեղափոխական շարժմանը և սոցիալիստական գաղափարախոսության առաջ բերած հարցադրումներին:

Հավելվածում նշվում էր, որ Հայկական հարցը առաջացել է պատմականորեն: Արևմտահայությունը երկար ու համբերատար սպասել է նրա լուծմանը, սակայն ապարդյուն, որովհետև սուլթանական կառավարությունը զանց առավ այն: Այժմ հայը «ամեն իրավունք ունի ապստամբելու»: Միայն հարկավոր է ուժ գոյացնել և սպասել, քանի որ «գաղափարական շենքը իրական հողի վրա պետք է կառուցել և ոչ թե օդի մեջ»:[100]

Հավելվածը հռչակում էր, որ «ընկերային, սոցիալիստական հեղափոխությունը մեր իրականութեան հետ կապ ունեցող հեռավոր գաղափարն է, որին պետք է ձգտինք ապագային, երբ որ քաղաքական կարգերի ու տնտեսական պայմանների շնորհիվ մեր մեջ առաջ կգա նոր հասարակութիւն»:[101] Այս կետը նորություն էր արմենական ծրագրի համեմատ: Հավելվածը փաստում էր, որ Օսմանյան կայսրությունում քրիստոնյա ազգերը միշտ էլ կեղեքված են որպես ռայա, ինչն էլ նրանց ազատագրական պայքարի գլխավոր շարժառիթն է: Դժոխային պայմաններում գոյատևող հայ ժողովուրդը պարտավոր է բոլոր միջոցներով փարել ինքնապաշտպանության գաղափարին,

99. Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 149:
100. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 170:
101. Նույն տեղում:

իր մարդկային իրավունքների դատին՝ տանելի մի վիճակ ձեռք բերելու համար:

Այսպիսով, կարող ենք ասել, որ արմենականների ծրագրի հիմքում թեև ոչ հստակ, մշուշապատ, բայց ընկած էր Հայաստանի ազատության և անկախության գաղափարը: Նրանց նպատակն էր ազատագրել Հայաստանը օտար բռնակալի լծից, ստեղծել ժողովրդավարական վարչակարգ: «Ազատված Հայաստանի մեջ քաղաքացիական հավասարություն պետք է լինի», - շեշտում էին ծրագրի հեղինակները, չժխտելով մասնավոր սեփականությունը և մանր հողատիրությունը:

Հիմնականում այդ ծրագիրը ժողովրդավարական, ազգային ազատագրական բովանդակություն ուներ: Պակասավորությամբ հանդերձ, այն պարունակում էր նաև ուսանելի շատ կողմեր, տոգորված էր արիության ոգով: Ծրագիրն իր առաջնահերթ խնդիրն էր համարում սուլթանական դաժան վարչաձևից հայ ժողովրդի ազատագրությունը, նրա արդար դատի անկախ ու ազատ գոյատևելու և արարելու բնական իրավունքի պաշտպանությունը: Իր նպատակին հասնելու համար նա աշխատում էր ոտքի հանել ժողովրդին՝ մերժելով դավադրական գործունեության մարտավարությունը:

Արմենական կուսակցությունը ծնվեց և արմատներ ձգեց Վանում, սակայն ինչպես վկայում է Վ. Ղազարյանը, կազմակերպության «ծաւալման քարտէզը մեզ Արևմտահայաստանի գաւառներէն կը տանի մինչև Ամերիկայի Միացեալ Նահանգներ»:[102] Արմենականներն ուժեղ կառույցներ ստեղծեցին Պարսկահայքում, հետագայում տարածվելով Մուշի, Բիթլիսի, Տարոնի ու Տրապիզոնի գավառներում: Կուսակցության ուժեղ մասնաճյուղ հիմնադրեց բժիշկ Գալուստ Ասլանյանը Սալոնիկում, Հայրապետ Ճանիկյանը՝ Մուշ-Բիթլիս շրջանում, վիպասան Արմեն Շիտանյանը՝ Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում:[103] Տեղեկություններ կան, որ արմենական խմբեր են գործել նաև Բաքվում, Թիֆլիսում, Ռոստովում, Էջմիածնում, իսկ օժանդակ մաս-

102. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 36:
103. ՀԱԱ. ֆ. 427, ց. 1, գ. 64:

նաճյուղեր՝ ԱՄՆ-ում և Եգիպտոսում: Ուժեղ էր Շահեն Կուժիկյանի ստեղծած Շատախի մասնաճյուղը:

Իրականում, թեև վերոհիշյալ շրջաններում արմենականները որոշակի գործունեություն ծավալեցին, սակայն այնպիսի ուժեղ, կայուն ու մշտապես գործող կառույց, ինչպիսին Վանում էր, երբեք չհաջողվեց կազմակերպել:

Կուսակցությունն զգալի համակիրներ և հետևորդներ ունեցավ նաև կանանց (Սանդուխտյան վարժարանի սանուհիներ Զարուհի Տերոյան, Գոնդակչյան քույրեր, Մարինա Չարուխչյան) և երիտասարդության շրջանում:

1896 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության ու ս. Բարդուղիմեոս վանքի մոտ եղերական կոտորածի ժամանակ Արմենական կուսակցությունը ծանր կորուստներ կրեց: Հատկապես Մ. Ավետիսյանի նահատակությունը շատ ծանր ազդեցություն ունեցավ արմենական շարքերի վրա: Սակայն այդ դժվարին պահին հանդես եկան տոկուն և կարող ուժեր, որոնք կարողացան խոհեմ, համբերատար ու համառ գործունեությամբ վերակառուցել իրենց շարքերը:

1896թ. իրադարձություններից հետո ամբողջ արևմտահայության շրջանում խորը հիասթափություն էր առաջացել հայկական կուսակցություններից: Անհրաժեշտ էր ժողովրդի մեջ տքնաջան ու համբերատար աշխատանք ծավալել կորցրած հեղինակությունն ու հավատը վերականգնելու համար: Այդ կարևոր գործին ձեռնամուխ եղան կենդանի մնացած արմենական գործիչներ՝ Ա. Եկարյանը, Գ. Պեռզիկյանը, Գ. Բաղեշցյանը, Հ. Քանքան-Փանոսյանը, Գ. Արարքցյանը, Ե. Գոնտակճյանը, Գ. Խանջյանը, Ռ. Շատվորյանը և ուրիշներ, որոնց առաքելությունը հերոսամարտում բզկտված արմենական շարքերը վերակազմավորելն ու համախմբելն էր:

Մ. Ավետիսյանից հետո 1897 թ. կուսակցության Կեդրոնի ատենապետ է ընտրվում Եղիշե Գոնտակճյանը, որը համախմբում է վերապրող ուժերը, ձեռնարկում լայն կազմակերպչական աշխատանքներ, վերամշակում «կուսակցութեան գործելակերպի ծրագիրը»:[104] Սակայն Գոնտակճյանը 45 տարեկան հասակում թոքախ-

104. Դարբինեան Ա., Նշվ. աշխ., էջ 102:

տից վախճանվում է: Կուսակցության ղեկն իր ձեռքն է վերցնում Գրիգոր Աճեմյանը, որի ղեկավարությամբ ևս շարունակվում են աշխատանքները տնտեսական, կրթական և գինակուտակման բնագավառներում:

Վանի հայ հասարակությունը կրկին սատար կանգնեց արմենականների ազգանպաստ ձեռնարկներին: Սեղմ ժամկետում վերաբացվեցին բազմաթիվ կրթօջախներ: Դրանցից առանձնապես կարևոր էր Կեդրոնականի վերաբացումը: Իսկ Վարագի Ժառանգավորացի տեսչությունը 1905-ի կուսակցության որոշումով վստահվում է Արտակ Դարբինյանին:

Ուշքի գալով ծանր հարվածներից, արմենականները Վանում աստիճանաբար վերակազմավորեցին կուսակցական կառույցները, իսկ շարժումը ներթափանցեց Վանի հայ հասարակության տարբեր ոլորտներն՝ իր մեջ ներառելով բոլոր խավերին: Կուսակցության հեղինակությունն աննախադեպ աճեց հատկապես Սեպուհի գործունեության տարիներին՝ 1906-1908 թթ.: Սակայն նրա նահատակությունից հետո արմենականների դիրքերը թուլացան և նրանցից շատերը հարեցին ՀՅԴաշնակցությանը: Իսկ արմենականների ղեկավար կորիզն ու հավատարիմ մասնաճյուղերը ցուցաբերելով համերաշխության ձգտող իրենց ոգին, աստիճանաբար միավորվեցին տարբեր կուսակցությունների պառակտված առանձին խմբերի ու քաղաքական կազմակերպությունների հետ: Արմենականները հատկապես խիստ մերձեցան վերակազմյալ հնչակյաններին և իրենց մեջ ներառելով այլ գաղափարապես հոգեհարազատ հոսանքների ներկայացուցիչների, համառ ու լարված ջանքերի շնորհիվ ձևավորեցին Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը:

Հայ անդրանիկ ու միակ երկրածին Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը, գաղափարաբանությունն ու քաղաքական ուղեգիծը նշանավորեցին հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման նոր, վերընթաց աստիճանը և անմիջական պատասխան էին համիդյան օրեցօր սաստկացող բռնություններին ու հայատյաց քաղաքականությանը: «Լինելով բացառապես ազգային շնչի ու նկարագրի կուսակցություն,- իրավացիորեն գրում է

Ա. Կարապետյանը,- արմենականներն էական հետք և լուսավոր հիշատակ թողեցին հայոց պատմության էջերում»:[105]

Ազատագրական պայքարի վերելքի շրջանում կուսակցությունն ուներ կազմակերպական ծավալուն մեխանիզմ. Վանը կենտրոնատեղի ունենալով, մասնաճյուղեր էին առաջացել Շատախում (Շահեն Կուժիկյան), Բաղեշում (Եղիշե Գոնտաքճյան), Մուշում և Բիթլիսում (Հայրապետ Ճանիկյան), Սալմաստում, Խոյում, Թավրիզում, Ուրմիայում, Պոլսում, Տրապիզոնում, Թիֆլիսում, Բաքվում, Սալոնիկում, Պլովդիվում (Արմեն Շիտանյան, Թութունճյան), Ֆրանսիայում և նույնիսկ հեռավոր ԱՄՆ-ում, մեր համեստ հաշվումներով 1894-ին ուներ մոտ 2000 անդամ ու համակիր: Եռանդուն գործունեություն ծավալած շրջանում, սակայն, կուսակցության ղեկավար կորիզն ու ամենամարտունակ ուժերի մեծ մասը զոհ գնացին 1895-1896թթ. կոտորածներին՝ Մ.Ավետիսյանի ղեկավարությամբ նահատակվելով Վասպուրականի հայության փրկության համար: Ջարդերից փրկված փոքրաթիվ արմենականներ 20-րդ դարի սկզբին կարողացան ուշքի գալ, համախմբվել և նորից լծվել ազգանպաստ գործունեության, բայց նախկին հզորությունն այլևս չունեցան և, միանալով համակիր այլ քաղաքական ուժերի հիմնեցին Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունը:

2. Գաղափարակցական միություն

Արմենական կուսակցության հիմնադիրներից դիպվածով ողջ մնացած Գրիգոր Պեռզիկյանը 1898-ին մեկնում է Բուլղարիա: Այստեղ նա իր կուսակից Արմեն Շիտանյանի հետ միասին ՍԴՀ կուսակցության կենտրոնից դժգոհ և «Հեղափոխական Միութիւն» անունը որդեգրած հնչակյաններին միավորում է տեղի արմենական մասնաճյուղին ու հռչակում նոր՝ Գաղափարակցական միությունը:[106]

---

105. Կարապետյան Ա., Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914 թթ.), Երևան, 2003, էջ 25:

106. Ծրագիր կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենո-միութենական միացեալ կազմակերպութիւն), 1907:

Գրիգոր Պեռզիկյանը (Շիկահեր, Ներսես) մեկն էր հայոց ազատամարտի այն նվիրյալներից, որոնք մի ձեռքում մերկացրած սուրն են պահել, մյուսում՝ գրիչը: Ծնվել է 1865թ. հունվարի 5-ին Վանի Այգեստանի Թուխ Մանուկ թաղում: Նախնական կրթությունը ստացել է ս.Հակոբի Ղուկասյան վարժարանում: Շուրջ մեկ տարի սովորել է Քաղաքամիջի Ուսումնատարած վարժարանում:[107] Այնուհետև բախտ է ունեցել ուսումնառությունը խորացնելու Մ.Փորթուգալյանի հանրահայտ Վարժապետանոցում, որն ավարտել է իր այն տասներկու դասընկերների հետ, ովքեր էլ Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյանի գլխավորությամբ 1885-ի աշնանը Վանում հիմնեցին «առաջին ու վերջին երկրածին» Արմենական կուսակցությունը և ծավալեցին լուրջ ու համբերատար, միևնույն ժամանակ վտանգալեցուն գործունեություն: 1895թ. աշնանը արմենական ընկերների հետ զենքը ձեռքին մարտնչել է քուրդ համիդեականների դեմ՝ մեծ աղմուկ հանած Սարայի ու Բողազ Քեսանի կռիվներում:

«Բայց առաւելաբար եղած է կրթական ու քարոզչական գործունէութիւններու մարդը»:[108] 1884-1892 թթ. ուսուցիչ է եղել Վանի Հանկույսների, Արարուց և Երամյան վարժարաններում, 1896-1900 թթ.՝ «Թավրիզի» շրջանում, միաժամանակ լինելով նաև պարսկահայոց ընդհանուր թեմական տեսուչ: 1908-1909 թթ. դասավանդել է Կահիրեի Գալուստյան վարժարանում՝ միաժամանակ լինելով տնօրեն խորհրդի անդամ, իսկ 1910-1913թթ. Ադրիանապոլսի հայկական վարժարանի տեսուչն էր: 1919-1922 թթ. վարել է Պոլսի 22 ազգային որբանոցների խնամակալության գործը: 1923-ին Պեռզիկյանը ուսուցիչ էր Լենինականի (այժմ Գյումրի) Արմենկոպ դպրոցում:

Փոթորկոտ ժամանակներն անհանգիստ գործչին (1931թ.) նետում են Դոնի Ռոստով, իսկ հետո Պարսկաստան, ուր վերջնականապես հաստատվելով՝ նա ծավալում է ազգանպաստ լայնածավալ գործունեություն. հիմնում է ՀԲԸ Միության Պարսկաստանի մասնաճյուղերը, իսկ 1936-ին Արտաշես Նազարյանի հետ՝ «Արուսյակ» թերթը:

---

107. Տէր-Մկրտչեան Ե., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, հատ. 1, 1966.:
108. Հարիւրամեակ Արմենական կուսակցութեան կազմութեան 1885-1985թթ., Փարիզ, 1985., էջակալած չէ:

Գր.Պեոզիկյանը Մ.Ավետիսյանի կուսակցական օգնականը և ամենահավատարիմ, վստահելի բարեկամն էր: Ավետիսյանի հրահանգով մի շարք անգամներ զինատար խմբով Պարսկաստանից Վան զենք է փոխադրել: Գրել է բազմաթիվ հոդվածներ: 1896-ին ս. Բարդուղիմեոս վանքի մոտ տեղի ունեցած ողբերգության ազդեցության ներքո գրել է մի շարք բանաստեղծություններ:

Լինելով արմենականության առաջին հենասյուներից մեկը՝ Գր. Պեոզիկյանը 1907թ. ստեղծեց «Գաղափարակցական միությունը», իսկ 1908թ. նրա անմիջական մասնակցությամբ ու ջանքերով ձևավորվեցին ՀՍՌ, իսկ 1921թ. ՌԱ կուսակցությունները: Նա մեկն է այն անձանցից, որոնք իրենց գործունեությամբ, համեստությամբ ու գործին անմնացորդ նվիրվելու կարողությամբ զարդարում են մեր ազատամարտի նվիրյալների բույլը :

Եթե արմենականների ու վերակազմյալ հնչակյանների պատմությունն այս կամ այն չափով լուսաբանված է, ապա Գաղափարակցական միության, նրա ծրագրի ու կանոնագրի մասին խոսք չկա որևէ պատմագիտական աշխատության մեջ, եթե բացառենք Արտակ Դարբինյանի գրքում գրված և նույնությամբ մյուսների մոտ կրկնվող հետևյալ արտահայտությունը. «Բուլղարիայի արմենականների ու միութենականների միաւորումից ստեղծուեց այն, որը յետագայում դարձաւ Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցութեան գոյացուցիչ մասերից»:[109] Զարմանալի է նաև, որ նույնիսկ Ռամկավար ազատական կուսակցության ծրագրային ու վավերագրական փաստաթղթերի Վ. Ղազարյանի հրատարակած ժողովածուում[110] բացակայում է Գաղափարակցական միության ծրագիրը: Այս բնագավառին քաջատեղյակ Վ. Ղազարյանի վկա-

---

109. Դարբինեան Ա., Նշվ. աշխատությունը, էջ 184, .Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 126, և Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990., էջ 364, Ղազարեան Վ., Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրութ, 1978., էջ 27-28 և այլն:

110. ՌԱԿ, հիմնական ծրագրեր և վավերագրեր, կազմեց դոկտ. Վաչէ Ղազարեան, Պեյրութ, 1988:

յությամբ նույնիսկ ՌԱԿ-ի արխիվում նա չի հանդիպել նման փաստաթղթի:[111]

Նորաստեղծ «Գաղափարակցական միութիւնը» ընդունում է ծրագիր: 1907թ. Լոնդոնում հրատարակված այդ ծրագրի նախաբանում, արևմտահայ դատը սահմանելով որպես քաղաքական խնդիր, նշվում է. «Հայկական դատը պէտք է հասկանալ Տաճկական Հայաստանի ազատութիւնը Տաճկական իշխանութեան լուծէն և զայն դնելը ինքնուրոյն, անկախ, սեփական հայկական իշխանութեան տակ»:[112] Այսինքն, պարզորոշ դրվում է Հայաստանի անկախության նվաճման հարցը՝ կառավարման ձևը թողնելով որպես ապագայում լուծվելիք խնդիր: Ժամանակավրեպ էին համարվում այն քաղաքական կուսակցություններն ու խմբավորումները, որոնք հայկական դատին «միանգամայն օտար» սոցիալիզմ էին քարոզում, ամեն ինչ բացատրում միայն տնտեսական և դասակարգային պատճառներով, որը հենց «սկզբէն խախտեց յեղափոխական շարժումը իր տեղէն և զայն շեղեց ուղիղ գիծէն, որով նա պիտի ընթանար»:[113] Այնուհետև դիտավորություն չունենալով «պատմական քննադատութեան ներկայացնելու յեղափոխական մօտիկ անցեալի գործունէութեան մասին» նշվում է, որ սոցիալիզմի վարդապետության որդեգրումից հետո մյուս սխալը, որ, ցավոք, համընդհանուր էր, օտարի օգնության ակնկալությունն էր. «որուն անկառոյց՝ յեղափոխութիւնը երբեք լրջօրէն խնդիր չարաւ իրեն սեփական ուժ գոյացնելու անհրաժեշտութիւնը»:[114] Ապագայում էլ, չբացառելով սխալները, օգտակար է համարվում ուսումնասիրել նախորդ թույլ տվածները, չկրկնելու համար դրանք: Մերժելով հուսահատությունը և եվրոպական օգնության վրա հույս դնելը, փրկության ուղիներ են համարվում.

«Ա. ամփոփիլ, կենտրոնանալ մեր թէ գաղափարային և թէ բարոյական ու նիւթական ուժերու արտայայտութեանց մէջ,

---

111. Մեզ հաջողվեց գտնել Գաղափարակցական միության ծրագիր-կանոնագրի մեկ օրինակ: Ծրագիր և կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենո-միութենական միացեալ կազմակերպութիւն), Լոնդոն, 1907:
112. Նույն տեղում, էջ Ա:
113. Նույն տեղում, էջ Գ:
114. Նույն տեղում,էջ Դ:

Բ. չխառնենք ազգային ընդհանուր նպատակին որևէ օտար վարդապետութիւն,

Գ. դնենք մեր բոլոր յոյսը մեր սեփական ուժի և միջոցներու վրայ»:[115]

Իսկ բուն ծրագրում արդեն միության նպատակ է սահմանվում «զինու զօրութեամբ ազատել Օսմանեան լուծէն Հայաստանը և կազմել անկէ քաղաքականապէս ինքնուրոյն, անկախ և ազատ Հայկական իշխանութիւն մը» - դրան հասնելու միջոց համարելով «նախօրոք և երկարօրէն պատրաստուած զինեալ ապստամբութիւնը»:[116] Դրա նախապատրաստության համար անհրաժեշտ է ի մի հավաքել բոլոր գործող անհատներին ու խմբակցություններին, գործել գաղտնապահ և կարգապահ, զենք, դրամ հայթայթել, մանրակրկիտ ուսումնասիրել թշնամու ուժերը, դիրքերը, «զգուշանալ վաղաժամ և պրովոկացիոն շարժումներէ», հնարավորին չափ բարեկամանալ շրջապատող ցեղերի հետ՝ եթե ոչ օգնությունը, գոնե նրանց դրական չեզոքությունն ապահովելու համար, գաղտնապահության հնարավոր սահմաններում գրավոր և բանավոր քարոզչությամբ վառ պահել հայրենասիրական «ոգին՝ մահուան դատապարտելով մատնութիւնն ու դավաճանութիւնը»:[117]

Անշուշտ, «Գաղափարակցական միության» այս ծրագիրն իր էությամբ հեղափոխական - ազատագրական էր և համեմատաբար առաջադիմական, սակայն այն ևս բազմաթիվ ծրագրերի նման մնաց լոկ թղթի վրա:

3. Վերակազմյալ հնչակյան կուսակցություն

Թեև «Արմենականութիւնը կը հանդիսանայ մեր կուսակցութեան մայր երակը, սակայն անոր բուն զանգուածը կը հանդիսանան վերակազմեալ հնչակեանները»,[118] այսինքն, արմենականներն արյունն էին, իսկ վերակազմյալները՝ ավիշը, առանց որոնց օրգանիզմը չի գո-

115. Նույն տեղում, էջ Զ և Է:
116. Նույն տեղում, էջ 1:
117. Նույն տեղում, էջ 2 , 3:
118. «Զարթօնք», 1951թ., խմբագրական:

յատկի, քանզի դրանք գտնվում են անմիջական կապի մեջ, փոխպայմանավորում միմյանց՝ ի վերջո դառնալով անտարբերակելի:

1896-ից հիմնականում արևմտահայերից բաղկացած հնչակյան գործիչները ճիշտ չհամարելով Լոնդոնում գտնվող իրենց կուսակցության կենտրոնի գործունեությունը Ավ. Նազարբեկի ղեկավարությամբ, հիմնականում ժամանակավրեպ համարելով սոցիալիզմի տեսության դավանումը՝ ելնելով ժամանակի հայ իրականությանը անհարիր և անիրագործելի լինելուց ու զուր տեղը ուժերը ջլատելուց, առանձնացան և իրենց հռչակեցին Վերակազմյալ հնչակյաններ:[119] Մի շարք անգամներ վերամիավորվելու (օրինակ՝ 1902-ի մարտին «խախուտ հիմերու վրա. քանի որ բուն գժտութեան խնդիրը. ընկերավարութիւնը (սոցիալիզմը), բոլորովին մեջտեղեն վերացված չէր)[120] և կրկին տարանջատվելու դեգերումներից հետո, ի վերջո վերակազմյալները 1904-ին Բոստոնում սկսեցին «Արմենիա» (Armenia) անգլերեն թերթով հանդես գալ Հայ դատի պաշտպանությամբ:

1906 թվականին շարունակվող խմորումների պատճառով վերջիններս ևս տրոհվեցին: Ընդհանրապես Հնչակյան կուսակցության մեջ պառակտումներն այնքան խորացած ու բազմաբնույթ էին, որ ինչպես ասում են «այնտեղ մայրը իր զաւակը չէր ճանչնար»:[121] Խնդիրն այն էր, որ թեև նրանք էլ արմենականների նման դեմ էին արևմտահայ ազատագրական հարցը սոցիալիստական վարդապետությունների հետ առնչելուն և ցուցադրական ու ահաբեկչական գործունեությանը, սակայն նրանցից Վահե Արզվյանը սակավաթիվ համախոհների՝ Սուրեն Սուրենյանի, Երվանդ Չավուշյանի, Լևոն Լարենցի (Քիրիշչյան), Հրաչ Երվանդի, Արշակ Տեր-Մարկոսյանի և ուրիշների հետ, որդեգրում է ահաբեկչության ուղին: Դա դժգոհությունների և նոր պառակտման առիթ է դառնում: Լևոն Մկրտչյանը, Վահան Թեքեյանը, Սուրեն Պարթևյանը, Սարգիս Մալեմեզյանը և ուրիշներ, որոնց միանում է նաև մի որոշ շրջան կուսակցական

119. Հովհաննիսյան Գ., Վերակազմյալ հնչակյան կուսակցություն, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.), էջ 57, Երևան, 2003թ.:
120. Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան 1863-1946թթ., Պէյրութ, 1964., էջ 105:
121. Դարբինեան Ա., նշվ. աշխ, էջ 181-182:

կյանքից մեկուսացած Միհրան Տամատյանը, բաժանվում են կուսակցությունից: Այսպիսով գոյանում են երկու հատվածներ.

ա) չափավոր կամ «Ազգյան»՝ 1907թ. ապրիլի 20-ից Ս.Պարթևյանի խմբագրությամբ լույս տեսած «Ազգ» թերթի անունով,

բ) արմատական կամ «Արզվյանական»:[122]

1908-ի հեղաշրջումից հետո վերջիններս ժամանեցին Կ.Պոլիս՝ բերելով նաև իրենց օրգան «Ձայն Հայրենեաց» շաբաթաթերթը, որի էջերում հայտարարեցին՝ կպաշտպանեն Թուրքիայի խաղաղ զարգացումը, բայց և կկանգնեն ընդդիմադիր տարրերի կողմը, որոնք «փոթորկոտ օրերուն մէջ արդարութեան նախակարապետները եղան և բարեշրջման այս շրջանին՝ խաղաղութեան և փրկութեան աներկիւղ և հաւատարիմ դրօշակակիրները պիտի ըլլան»:[123] Հրաժարվելով զինված ապստամբության ծրագրից նրանք փարվում են ինքնապաշտպանությանը: Աղետաբեր համարելով սոցիալիզմի քարոզները, անգործունեություն և սոփեստություն համարելով այն արևմտահայության համար,[124] քննադատեցին արևմտահայությանը դասակարգերի բաժանողներին ու իրար հակադրողներին: Դա համարեցին ոչ միայն սխալ, այլև վնասակար. «Ընկերավարութեան անունով գործուած չարիքները մեզի պէս ազգի մը հոգին իսկ կը սպաննեն, ազգն իր էութեամբ կը մեռցնեն»:[125] Կարճ ասած, նրանք ևս աստիճանաբար որդեգրեցին չափավոր գաղափարներ, իսկ նրանց ամերիկյան հատվածն արդեն 1919-ին իրեն հռչակեց Ազատական կուսակցություն, որը 1921-ին միավորվեց Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությանը՝ գոյացնելով Ռամկավար ազատական կուսակցությունը:

4. Միացյալ հայ հեղափոխական կազմակերպություն

Այսպիսին էր իրավիճակը, երբ Վերակազմյալ հնչակյան կուսակցության չափավոր (ազգյան) թևը մտածում էր արմենականների և

---

122. Ղազարեան Վ., Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պեյրութ, 1978., էջ 25:
123. ՀԱԱ, ֆ., 408, ց. 1, գ. 162, թ. 1:
124. «Ձայն Հայրենեաց», 1909, հունիսի 11, թիվ 31-32:
125. «Ձայն հայրենեաց», սեպտեմբերի 11, թ. 47:

միութենականների, այսինքն՝ 1907-ին նրանց միաձուլումից առաջացած «Գաղափարակցական միութեան» հետ գաղափարական ընդհանուր պլատֆորմ մշակելու և նրանց հետ միավորվելու հիմքեր ստեղծելու մասին: Արդեն 1908թ. հունվարի 1-ին մի պաշտոնագրով Վերակազմյալ հնչակյան կուսակցության չափավոր (ազգյան) թևը Եգիպտոսի իրենց շրջանակին լիազորություններ էր տվել բանակցություններ վարելու: Եվ վերակազմյալների Եգիպտոսի մարմինը 1907թ. սեպտեմբերի 4-ի թվակիր նամակով «փութաց յանուն կուսակցութեան շնորհաւորել այդ միութիւնը (գաղափարակցականը - Ս.Ս.)՝ ջերմ փափագ յայտնելով, որ վերակազմեալներու իրենց հատուածի հետ ևս մի միութիւն ստեղծելու նպատակով բանակցելու համար ներկայացուցիչներ որոշուին», որովհետև, ըստ Եգիպտոսի մարմնի՝ «տարբերութիւն մը չկար երկու կազմակերպութիւններուն հայեացքներուն միջև»:[126]

Գաղափարակցական միության կենտրոնական վարչությունը 1907-ի նոյեմբերի համար 12 և 15 պաշտոնագրերով պատասխանել էր, թե սիրով «կ'ընդունէր եղած միութեան առաջարկը և թէ որոշուած էր այդ նպատակով բանակցութիւններ վարելու համար լիազօր մը ղրկել Եգիպտոս»:[127] Բանակցություններն սկսում են արմենականներից Գր. Պեռզիկյանը (Շիկահեր), Միք. Նաթանյանը և Հ. Պեյլերյանը, իսկ վերակազմյալներից՝ Մ. Տամատյանը, Շ. Հովիվյանը, Փոքր Հայքի ներկայացուցիչներ Ժ. Վաչեն, դոկտոր Տ. Էնֆիեճյանը և Հ. Փափազյանը:[128]

1908-ի փետրվարի 5-ին սկսված բանակցությունների մասին կազմվեց մանրամասն պաշտոնական արձանագրություն: Բանակ-

126. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 107:

127. Պ.Տեփոյեանի «Միհրան Տամատեան» (Պէյրութ, 1964.) աշխատության մեջ Գաղափարակցական միության կողմից Գ.Պեռզիկյանի և Մ.Նաթանյանի հետ բանակցություններին մասնակից է հիշատակվում «նախկին միութենական պատգամավոր վանեցի Խաչիկ Պուռնաթեանը» (էջ 112), որը, սակայն, չի հիշատակվում արձանագրության բնագրում, դաշնակցությունը ստորագրողների թվում ևս չկա մյուս հուշագրողների մոտ:

128. Այս դեպքում էլ արձանագրության բնագրում վերակազմյալների թվում հիշատակվում է Կ.Գրիգորյանը, իսկ Տեփոյանի նշված աշխատության մեջ՝ ոմն Հ.Փափազյան: Վերջինը ճիշտ չի և իրականում բանակցողների թվում նման մարդ չի եղել:

ցող կողմերը օրինական ճանաչեցին միմյանց լիազորությունները: Գ.Պեզոլիկյանը ներկայացնում է Գաղափարակցական միության կենտրոնական վարչության 1907թ. նոյեմբերի 5-ի թվակիր վկայականը, իսկ վերակազմյալները՝ 1908թ. հունվարի 1-ի թիվ 41 վկայագիրը. երկուսն էլ բանակցություններ վարելու և միություն կազմելու լիազորություններով:[129]

Բնական էր, որ բանակցող կողմերն անկախ ներկայացուցիչների թվից ներկայանում են մեկական հավասար ձայնի իրավունքով: Միևնույն ժամանակ նրանք «կ'առաջնորդուէին այն հաստատ համոզումով, թէ Տաճկահայ ժողովուրդի ներկայ ճգնաժամային դրութեան հանդէպ՝ հայ յեղափոխական գործը կը կարօտէր աւելի քան երբեք մեծ ճիգերու և միահամուռ գործակցութեանց: Անհրաժեշտ էր ուրեմն, որ Տաճկահայ դատի համար կազմուած առանձին կուսակցութիւնները ի մի համախմբուէին: Այս պահանջը աւելի հրամայողական կը դառնար մանաւանդ այն կազմակերպութեանց համար, որոնք գործելով ազգայնական հողի վրայ և չունենալով հայեացքներու զգալի տարբերութիւններ, կարող էին բոլորովին ի մի ձուլուիլ և կազմել միակ յեղափոխական մարմին մը»:[130]

Ուստի պետք էր անպայման կազմավորել ցանկալի այդ միությունը, եթե նույնիսկ փոխադարձ ծանր զիջումներ պահանջեր այն:

Այս զիջումներից առաջինը միացող կազմակերպությունների անուններից հրաժարումն էր և նոր՝ «Միացեալ հայ հեղափոխական կազմակերպութիւն» անունով հանդես գալը, որին կողմերը հոժարակամ համաձայնեցին:

Կազմակերպության նպատակ հռչակվեց.

ա) «ազատել Տաճկահայութիւնը Օսմանեան բռնակալութենէն և հիմնել այնտեղ անկախ ինքնավարութիւն մը, հաստատուած սահմանադրական լայն հիմունքներու վրայ, որ ապահովէր միանգամայն այնտեղ ապրող միւս բոլոր ցեղերու բարօրութիւնը և ազատ ու խաղաղ կուլտուրական զարգացումը՝ համաձայն իրենց առանձնայատուկ ընդունակութեանց:

---

129. ՌԱԿ Վավերագրեր, էջ 187-188, Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 185-186:
130. Նույն տեղում:

բ) Քաղաքական հանգամանքներու համաձայն, վարչական բարենորոգումներ ձեռք բերել Տաճկահայաստանի մէջ, հիմնուելով եւրոպական պետութիւններէն հաստատուած միջազգային դաշնագրութիւններու վրայ»:[131]

Ընդ որում, նկատի էր առնվում, որ հայկական դատը «առաջնապես քաղաքական հանգամանք» ունի, որ ամբողջ արևմտահայությունն է ճնշվում բռնակալ վարչակարգի կողմից և, հետևապես, դասակարգային հակամարտություններն ու տարանջատ շահերը մերժվում էին, որպեսզի ազգային- ազատագրական պայքարի, որը նրանք միշտ հեղափոխություն անվանեցին, շուրջը համախմբվեն հայության կենսունակ բոլոր ուժերը:

Առաջնակարգ ու անհետաձգելի էր համարվում ժողովրդին նախապատրաստելը ինքնապաշտպանության՝ հնարավոր հարձակումներին դիմագրավելու համար:

Վերջապես մերժելով վաղաժամ ցույցերն ու ելույթները, որոնք կարող էին կասեցնել ապստամբական ուժերի կանոնավոր ընթացքը, պատրաստվել ընդհանուր վինված ապստամբության, սպասելով քաղաքական նպաստավոր իրադրության:

Ծրագրում առաջ էր քաշվում օսմանյան լծի տակ տառապող ժողովուրդների համագործակցության գաղափարը, նրանց վերապահելով սեփական ճակատագրի լիարժեք տնօրինումը մի պայմանով, որ այն չխաթարի մյուս ժողովուրդների օրինական իրավունքները: Կազմակերպությունն իր գործելավայրը հռչակեց Արևմտյան Հայաստանը՝ նկատի ունենալով նրա վեց վիլայեթները՝ Էրզրում, Վան, Բաղեշ, Տիգրանակերտ, Խարբերդ, Սեբաստիա և, որ բոլորովին նորություն էր՝ Կիլիկիան, իսկ ապստամբության և ինքնապաշտպանության հարցերը մնացին կենտրոնական վարչության հայեցողությանը:[132]

---

131. Այստեղ կա մի անճշտություն, սկսած Ա.Դարբինյանի հիշյալ աշխատությունից (էջ 188), բոլոր ուսումնասիրողները հետագայում հավանաբար օգտվելով նրա վկայակոչումից, կրկնելով նրան, գրում են. «Ազատել Տաճկահայաստանը և հիմնել այնտեղ անկախ կառավարութիւն», ինչը չի համապատասխանում փաստաթղթի բնագրին և հետագայում զանազան ոչ ճիշտ մեկնությունների ու դատողությունների տեղիք է տվել: Ինչպես օր.՝ Դարբինյան Ա., Համբարյան Ա., նշված աշխատությունը, էջ 127, Օշական Հ., Պողոսյան Հ., Տեփոյան Պ. և այլն:

132. ՌԱԿ, Հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վավերագրեր, Պէյրութ, 1988., էջ 189-192:

Նորածին կազմակերպության այս ծրագիրը շրջանցում էր հողային հարցը և չէր անդրադառնում ապագա հասարակության կառուցվածքին, որոնք կարևոր բացթողումներ էին ու վկայում էր այն մասին, որ ծրագիրը և այն ընդունող կազմակերպությունը դեռևս խարխափում էին ազատագրական պայքարի բավիղներում:

Իսկ ընդհանուր առմամբ այն ազգային դեմոկրատական ծրագիր էր, որտեղ միախառնված հանդես էին գալիս ինքնապաշտպանության ավանդական ջատագով արմենականն ու զինված ընդհանուր ապստամբության քարոզիչ վերակազմյալը, իրենց հետ զուգակցելով նաև ժամանակի մտավորականության սահմանադրական, իրավական պետություն ունենալու ձգտումները: Թերություններով հանդերձ այն իրատեսական ծրագիր էր:

Միացյալ հայ հեղափոխական կազմակերպության ստեղծման բանակցություններն ավարտվեցին 1908-ի սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրիայում: Հիմնարար փաստաթուղթն ստորագրեցին՝ Գաղափարակցական միության կողմից Մ.Նաթանյանն ու Գ.Պեռզիկյանը, իսկ վերակազմյալներից՝ Մ.Տամատյանն ու Շ.Հովիվյանը:[133]

Այս կապակցությամբ Ավետիս Յափուճյանը գրում է, որ 1908թ. օգոստոսի 24-ին Մալեզյանը Կահիրեում խորհրդակցության է հրավիրում իր գաղափարակից բարեկամներին, որի նպատակն էր կազմակերպել ազգային ծրագրով քաղաքական նոր միություն:[134]

Միության նպատակն էր լինելու. «Օրինական միջոցներով երաշխաւորելու Հայոց ցեղային ինքնութիւնը և դաւանական անկախութիւնը, պաշտպանել անոնց ազգային և անհատական իրաւունքները, պահպանել լեզուն, պատմութիւնը և գրականութիւնը, ապահովել անոնց դերն ու դիրքը հանրային ու զինուորական կրթութեան մէջ և հետապնդել անոնց բարօրութիւնը Օսմանեան հայրենիքին ընդհանուր յառաջադիմութեան մէջ»:[135]

---

133. Մեզ ծանոթ բոլոր աշխատություններում փաստաթուղթը ստորագրողների թվում հիշատակվում է վերակազմյալ Կարապետ Գրիգորյանի անունը ևս, որը սակայն չկա փաստաթղթի բնագրում: Մեզ չհաջողվեց պարզել թյուրիմացության պատճառը:
134. Եափուճեան Ա., նշվ. աշխ. էջ 36:
135. Մալեզեան Վ., Ճամբուս ծայրը, Փարիզ, 1955., հատոր Բ, էջ 237:

Հաջորդ խորհրդակցությունը տեղի ունեցավ 1908թ. սեպտեմբերի 11-ին: Այստեղ Մալեզյանը պարզաբանում է իր նպատակը և ներկայացնում իր իսկ կողմից «Առաջադիմասէր և Ազատական Հայոց միութիւն» անվանած ստեղծվելիք կազմակերպության ծրագիրը: Սակայն այս փնտրտուքները երկար չտևեցին, որովհետև երիտթուրքական հեղաշրջումը «հեղաշրջեց» ու այլ հունով տարավ թե՛ հայոց ազգային-ազատագրական պայքարը և թե՛ այն ղեկավարելու առաքելությամբ ասպարեզ իջած քաղաքական կազմակերպությունները:

5. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն

Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությանը վիճակված չէր երկար գոյատևելու: 1908-ի հուլիսի 3-ին երիտթուրքերը զորքի օգնությամբ ապստամբեցին և ներխուժելով մայրաքաղաք, հարկադրեցին սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին վերահրապարակել ու կիրառել Միդհաթի 1876թ. սահմանադրությունը: Բռնակալը հարկադրված կատարեց նրանց կամքը և հուլիսի 24-ին ստորագրեց պառլամենտի գումարման հրամանագիրը: Քաղաքական այդ իրադարձությունը ոմանք համարում են հեղափոխություն, ոմանք էլ հեղաշրջում: Ճշմարիտն այն էր, որ թուրքական բռնապետությունը դառնում էր սահմանադրական միապետություն, սակայն իրականում փոփոխություններ էին կատարվում միայն իշխանության վերնաշերտերում. նշանակվում էին նոր կառավարիչներ և այլ ղեկավար պաշտոնյաներ, իսկ իրականում ոչինչ չէր փոխվում երկրի և, հատկապես, հասարակ ժողովրդի կյանքում:[136]

---

136. Միդհաթյան այդ սահմանադրությունը ազդարարում էր, որ Օսմանյան կայսրությունը մնում է անբաժանելի, իսկ Օսմանյան տիրապետության կազմում ընդգրկված բոլոր ժողովուրդները որպես օսմանցիներ, հավերժ պիտի մնան այդ տերության հպատակներ: Սահմանադրությունը հռչակում էր հավասարություն, խղճի, մամուլի և այլ ազատություններ, որոնք ըստ էության կրում էին զուտ ձևական բնույթ («Ազգ», 1908թ. օգոստոսի 22, թիվ 17): Իրականում այդ սահմանադրությունը պահպանում էր սուլթանական միապետությունը, Օսմանյան կայսրության ամբողջականությունը, նվաճված ժողովուրդների ստրկական վիճակը և նրանում մատնանշված փոփոխությունները խիստ սահմանափակ ու պոչատ էին և չէին կարող փոխել թուրքական բռնապետության էությունը:

Վերահոչակված միդիաթյան սահմանադրությունը, Օսմանյան կայսրության կազմում ապրող ժողովուրդների և, հատկապես, հայ գործիչների պատկերացմամբ՝ ազդարարում էր համիդյան բռնակալության տապալում և խոստանում սահմանադրական կարգեր կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդներին առանց բացառության, հետևապես, իրավունք էր տալիս ստեղծելու քաղաքական լեգալ կազմակերպություններ:

Այս պարագաներում կահիրեաբնակ մտավորական Վահան Մալեզյանը «գաղափարը հղացաւ թէ կարելի է օգտուիլ Օսմանեան Սահմանադրութենեն ու հայերու իրաւունքները Թուրքիոյ մէջ պաշտպանելու և ներկայացնելու համար պէտք էր ունենալ որոշ հայեացքներով և ծրագրերով քաղաքական կուսակցութիւն մը»:[137] Եվ հասարակական գործչի իր խանդավառությամբ նկատի ունենալով Եգիպտոսի պահպանողականների դեմ դեռ 1900-ական թվականներից պայքարող ոչ կուսակցական մտավորականներին, որոնց գլխավոր մտահոգությունն Ազգային սահմանադրության իրագործման հետապնդումն էր, «Լուսաբեր» թերթում առաջարկում է գումարել խորհրդակցություն «սահմանադրական նոր կուսակցութիւն մը» կազմելու նպատակով: «Անիկա. միշտ պայքարող, յամառ պայքար կը մղէ, Գահիրէի Լուսաբերին մէջ... և կը բացատրէ նորակազմ կուսակցութեան անհրաժեշտութիւնը: Շնորհիւ իր տաղանդին, իր համոզելու կարողութեան, շուտով կ'ունենայ ուրախութիւնը իր նախասիրած գաղափարներուն յարած տեսնելու ստուար թիւ մը մտավորականներու և նախկին յեղափոխականներու»:[138]

Խորհրդակցությունը տեղի ունեցավ «Թեաթր Ապպասին» կից լսարան-ընթերցարանում: Դաշնակցության ներկայացուցիչների՝ դոկտոր Նեվրոզի, Ա. Հանըմյանի ու Հ. Ասատրյանի մերժողական պատճառաբանությունը, թե իբր Օսմանյան Սահմանադրությունից հետո մնում էին միայն դասակարգային խնդիրները, որոնց կոչված է լուծում տալու իրենց կուսակցությունը և նոր կուսակցություն կազմե-

137. «Արև», 1928, հոկտեմբերի 29, հ. 2958:
138. Բանաստեղծ Վ.Մալեզեանի ազգային ու գրական 60-ամեայ գործունէութիւնը, յուշամատեան իր 80-ամեակի առթիւ, 1871-1951թթ., հրատարակեց Զարուհի Պահրի, Բարիզ, 1951., էջ 70:

լու հարկ չկա, կարևորություն չի տրվում և քննարկումները ոգևորությամբ շարունակվում են:

Տեղի է ունենում 5 նիստ, որին մասնակցում են Միք.Նաթանյանը, Գ. Պեռզիկյանը, Տ. Քելեկյանը, Թ. Ֆիշենկճյանը, դոկտոր Քեչեճյանը, Հովսեփ և Գևորգ Ազնավուրյանները, Հ. Պերպերյանը, Մ. Բրուտյանը, Հ. Շամլյանը, Տ. Հաճընյանը:[139]

Ի վերջո դրանք տալիս են ցանկալի արդյունք, քանզի մինչ այդ ստեղծվել էր գաղափարական հիմքը: Հոկտեմբերի 2-ի նիստում որոշվում է հրապարակավ հայտարարել նոր միության հիմնադրույթները, սակայն Ալեքսանդրիայից նամակ է ստացվում Տամատյանի ու Էնֆիեճյանի ստորագրությամբ, որ նույնատիպ մի ծրագիր էլ այնտեղ կա:

Խնդիրն այն էր, որ Միացյալ հայ հեղափոխական կազմակերպության ստեղծումից անմիջապես հետո Մ. Տամատյանը, Վ. Թեքեյանը և Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը «կը մտածէին միացեալ կազմակերպութեան վարդապետական խորքին մասին»:[140] Եվ նրանցից հատկապես Տամատյանը, ամբողջովին կլանվելով այդ աշխատանքով, «կը պատրաստէ ռամկավար ծրագրի մը նախագիծը»,[141] որը Ալեքսանդրիայի մասնաճյուղի անունով ուղարկվում է մյուս մասնաճյուղերին, ինչպես նաև ոչ կուսակցական անհատների: Փաստորեն, Կահիրեում և Ալեքսանդրիայում առանձին-առանձին սկսվել էր նոր ազգային կուսակցության ստեղծման գործընթացը: Մալեզյանն ու Պեռզիկյանը մեկնում են Ալեքսանդրիա:

Մ. Տամատյանի ռամկավարական և Վ.Մալեզյանի սահմանադրական գաղափարակից խմբավորումների միջև տեղի են ունենում շփումներ և բանակցություններ, որոնք ավարտվում են բարեհաջող. Տամատյանի նախագիծը հիմք ընդունելով՝ «Մալեզեանի ծրագրին կարգ մը կէտերուն յաւելումովը»:[142] 1908-ի հոկտեմբերի 26-ին[143] Մալեզյանի

---

139. Մալեզեան Վ., նշվ. աշխ., էջ 238:
140. Ղազարեան Վ., Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրութ, 1978., էջ 30:
141. «Արև», 1928, հոկտեմբերի 29, հ. 2958:
142. «Նոր օր», 1965, հունիս 23, հ. 48: Նաև Ա.Դարբինեան, «Վանը հայ ազատագրական շարժման մէջ», հոդված տպված «Նոր օրում»:
143. ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ.1 և 8, թ. 7: Իրականում կուսակցությունը պաշտոնապես հռչակվեց մի փոքր ուշ՝ հոկտեմբերի 31-ին, իսկ այստեղ նախնական համաձայնության մասին է խոսքը: Նաև «Արև», 1928, հոկտեմբեր 27, նաև Եգիպտահայ տարեցոյց, 1925:

տանը գումարված հիմնադիրների համագումարը հռչակում է նոր՝ Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության ծնունդը:

Այսպես, Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության (այսուհետև՝ ՀՍՌԿ) կորիզն ու հիմնական մասը եղավ 1908թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրիայում հռչակված Հայ հեղափոխական միացյալ կազմակերպությունը, որի ստեղծման մասին տեղեկագրում հավելվածի ձևով առկա է 1908թ. հոկտեմբերի 31-ի թվակիր հիշատակությունը՝ ստորագրված միացյալ կազմակերպության հիմնադիր ղեկավարների կողմից, որտեղ կարդում ենք. «Վերակազմեալ հնչակեան կուսակցութեան և Գաղափարակցական միութեան (Արմենո - միութենական) միութեամբ կազմուած» Միացյալ հայ յեղափոխական կազմակերպութիւնը «Օսմանյան Սահմանադրութեան նոր պայմաններու բերմամբ՝ որչափ ատեն մեզմէ անկախ հանգամանքները մեզ չպարտաւորեցնեն՝ դադրած ըլլալով այլևս յեղափոխական կազմակերպութիւն մը ըլլալե, իր ամբողջ կազմով կը միախառնուի «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցութիւն» անունով քաղաքական կուսակցութեան մէջ, որը հիմնուած է միացեալ կուսակցութիւններու լիազօրներուն կողմէ հրաւիրուած լուրջ և գիտակից անձնաւորութիւններէ»:[144]

1908թ. սեպտեմբերի 15-ից հռչակվել էր Վերակազմյալ և Գաղափարակցական կազմակերպությունների միավորումը որպես Միացյալ հայ հեղափոխական միություն, սակայն ըստ էության նրանք մինչև ՀՍՌԿ-ի կազմավորումը, դրանից հետո էլ նույնիսկ որոշ ժամանակ, հանդես էին գալիս որպես գործակցող, բայց առանձին գոյատևող միավորներ: Մի ուրիշ արխիվային փաստաթղթում,[145] որը 1908թ. դեկտեմբերի 10-ին[146] Կահիրեի Վերակազմյալ հնչակյան մասնաճյուղի ժողովարանի մեջ տեղի

144. ՌԱԿ, հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վավերագրեր, էջ 196, նաև Ա.Դարբինեան, նշվ.աշխ., էջ 192-193: Մ. Ճիզմեճեան, Պատմութիւն ամերիկահայ կուսակցութեանց, էջ 669:

145. Ի դեպ, աշխատանքում օգտագործված որոշ արխիվային նյութեր վերցված են ՌԱԿ-ի կենտրոնական արխիվից, որոնք շնորհակալությամբ ստացել եմ ԱՄՆ-ում ապրող և ստեղծագործող ՌԱԿ-յան տեսության և պատմության գիտակ, մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ, մեր լավ բարեկամ դոկտոր Վաչե Ղազարյանից:

146. Ճիշտ է, ՀՍՌԿ-ի պաշտոնական հռչակման օրը 1908 թ-ի հոկտեմբերի 31-ն է, սակայն դա միայն կենտրոնական մարմնի ստեղծման տարեթիվն է, իսկ իրականում կուսակցության վերջնական կազմավորումը տևական գործընթաց էր և պահանջվեց բավականին երկար ժամանակ:

ունեցած միացյալ երկու մարմինների ընկերական ընդհանուր ժողովի ատենագրությունն է, ասվում է այն մասին, որ լսելով միացյալ մարմինների բանավոր և գրավոր տեղեկությունները ու հրահանգները, սրտագին ուրախությամբ ողջունեցին ՀՍՌԿ անունով քաղաքական կազմակերպությունը «Զոր Վերակազմեալ հնչակեան և Գաղափարակցական միութեան լիազօրները ուրիշ անկախ հայրենասէր մտաւորականներուն ջանքերով ու գործակցութեամբ կազմուած էին»:[147] Այն օժտված էր հայ ժողովրդի ներկա պահանջներին և դեմոկրատական սկզբունքներին համապատասխան մի ծրագրով, որի շուրջը հօգուտ ազգային վերածնության հնարավոր պիտի դառնար հեղափոխականների հետ համախմբել ազատագրական պայքարին նվիրված անհատներին ու այլ խմբակցություններին: Եվ որպես հիմնաղիր անդամներ նույն կուսակցության, «այսօրուն իսկ լուծեալ կը համարինք Վերակազմեալ հնչակեան յեղափոխական կուսակցութիւն[148] ու Գաղափարակցական միութիւն անունով ուրոյն կամ միացեալ մասնաճիւղերուն գոյութիւնը և անունները և սիրայօժար որդեգրելով համախմբուէինք ՀՍՌ քաղաքական նոր կազմատրեալ համայնավար Ազգային դրօշի անուան տակ, զայն հաստատուն հիմերու վրայ բարձրացնելու առաջադրութեամբ ու գօտեպնդուած»:[149]

Ի մի բերելով վերը շարադրվածը կարող ենք ասել.

ա) ՀՍՌ կուսակցությունը կազմավորվեց Հայ հեղափոխական միացեալ կազմակերպության հիմքի վրա՝ իր մեջ ներառելով գաղափարակից մտավորականների և նախկին հեղափոխականների:

բ) Այս հարցին անդրադարձող բոլոր աշխատություններում[150]

147. ՌԱԿ, նույն աշխատությունը, էջ 146:
148. Նույն տեղում, էջ 146:
149. Իրականում վերակազմյալների արմատական թևը Արզուեանի ղեկավարությամբ և նույն անվամբ, որդեգրելով տեռորի մարտավարություն, առանձին գոյատևեց մինչև 1918թ., ապա վերանվանվեց Ազատական Ազգայնական կուսակցություն՝ 1921-ին կազմելով ՌԱԿ-ի բաղկացուցիչ մասերից մեկը:
150. Դարբինեան Ա., նշվ. աշխ., Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., Պողոսեան Յ., Կուսակցական կեանքի յուշերէս, Պէյրութ, 1987., Եկարեան Ա., նշվ. աշխ., Տեփոյեան Պ.,նշվ. աշխ., Ասլանեան Ա., նշվ. աշխ.,Կէօքճեան Վ., Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը, Բոստոն, 1978., Ղազարեան Վ., Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրութ, 1978. և Նորագիր ռամկավար ազատականին ուղեցույց, Պէյրութ, 1981., Համբարյան Ա., Երիտթուրքերի Ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979.և այլն:

հիմնադրման վայրեր են նշվում միաժամանակ Կահիրեն և Ալեքսանդրիան, բայց ոչ ոք ոչ մի տեղ չի փորձել բացատրել գործի էությունը: Խնդիրն այն է, որ միավորման գործընթացը սկսվել և տարվում էր միաժամանակ երկու քաղաքներում, բայց իրականում կուսակցության հիմնադրման մասին վերջնական փաստաթուղթը և ծրագիրն ընդունվել են Ալեքսանդրիայում, որն էլ կուսակցության հիմնադրման վայրն է:

գ) Որոշ տարակարծություն կա ժամկետի հարցում: Այսպես, Հայ հեղափոխական միացյալ կազմակերպության ստեղծման համար դեռևս 1908-ի փետրվարի 5-ից սկսված բանակցությունների արդյունքները թեև ամփոփվեցին սեպտեմբերի 15-ի փաստաթղթում, սակայն ըստ էության դրանք շարունակվեցին և ըստ Ա.Անդրեասյանի՝ ավարտվեցին հոկտեմբերի 1-ին,[151] իսկ Ա.Դարբինյանի վկայությամբ 4-ին:[152] Օրինակ, Մ.Ճիզմեջյանը կուսակցության ստեղծման թվական համարում է 1908թ. «Ռամկավար կուսակցութեան վերջնական կազմը կը հռչակուի 1908-ի հոկտեմբերի 26-ին»,[153]- գրում է նա, որը շփոթի արդյունք է միայն: Իրականում խոսքը վերաբերում է կահիրեաբնակների հավաքին, որը լիազորված չէր ընդունելու և չի էլ ընդունել որևէ հիմնարար փաստաթուղթ: Կուսակցության հիմնադրման մասին հայտարարությունը, ինչպես և ծրագիր-կանոնագիրը ընդունվել է 1908-ի հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրիայում՝ Մ. Նաթանյանի, Գ. Պեռզիկյանի, Մ. Տամատյանի, Շ. Հովիվյանի ստորագրությամբ, ովքեր ունեին այդ լիազորությունները Հայ հեղափոխական միացյալ կազմակերպության կողմից:

Հոկտեմբերի 31-ին ընդունված ծրագրում[154] ռամկավարները ոչ-

---

151. Անդրեասեան Ա., Պատմութիւն ՌԱԿ-ի Ամերիկայի արևմտեան շրջանի, Լոս-Անջելես, 1981., էջ 29:
152. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 193:
153. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 189:
154. Տողերիս հեղինակին հաջողվեց ծանոթանալ ծրագրի բոլոր լույս տեսած տարբերակներին. նախ «Բիւզանդիոն» թերթի 1908թ-ի նոյեմբերի 6-11, հ. 3684, 3685, 3688-ում, որը լույս է տեսել1908-ին Կ.Պոլսում, ապա 1909-ին Բոստոնում առանձին գրքույկներով լույս տեսած և Ա.Դարբինյանի մասնակի կրճատումներով մեջբերումներում, Ա.Համբարյանի «Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության մասին» աշխատությունում վերլուծականի ձևով և վերջապես Վ. Ղազարյանի կազմած և որպես ՌԱԿ-ի ու նրան նախորդած կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերի ժողովածուում և մի շարք այլ հրապարակումներում:

ջունելով սահմանադրության հռչակումը՝ նշում էին, որ այն Օսմանյան կայսրության տարածքում ապրող բոլոր ժողովուրդների մղած հերոսական պայքարի արդյունք է և, որ այլևս հեղափոխական կուսակցությունների գոյության անհրաժեշտությունը չկա, գերադասելի է այսուհետև գործել օրինական (legal) սկզբունքով, արտահայտելով ժողովրդի մեծամասնության շահերը, ինչպես ընդունված է դեմոկրատական մյուս երկրներում: Արդ, հայ հեղափոխական նախկին կազմակերպությունները «կը վերածուին նոյնպիսի օրինական, քաղաքական կուսակցութիւններու»,[155] մասնավորապես այնպիսի կուսակցության, որը հեռու է ծայրահեղ և օտար վարդապետություններից և վեր կանգնելով դասակարգային խտրականություններից, կառաջնորդի ժողովրդին: Այդ մտածողության կրողն ու արգասիքը ՀՍՌ կուսակցությունն էր, որի ծրագիրը «պիտի կրնայ նկատուիլ իբր «Ազգային»,[156] պիտի նպաստի թուրք և մյուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը և տեսական անդորր բերի:

Ներշնչված 20-րդ դարի լուսավոր գաղափարներով, կուսակցությունն իր գործունեության գլխավոր նպատակակետ է ընդունում ժողովրդի գերիշխանությունը՝ որդեգրելով «կառավարութիւնը ժողովուրդն է» նշանաբանը: Անդրադառնալով ազգային խնդրին, ծրագրի հեղինակները գրում են. «Ընդունելով երկրին ամբողջութիւնը և քաղաքական անբաժանելիութիւնը, միևնոյն ժամանակ այդ ազգերը պէտք է պահպանեն և երաշխաւորութեան տակ դնեն իրենց ազգային առանձնայատկութիւնները»,[157] փոքր թե մեծ՝ լինեն իրավահավասար և, որ ամենակարևորն է՝ սահմանադրական ռամկավարական սկզբունքները «չեն ժխտեր ազգերու ինքնորոշման իրաւունքը, այլ ընդհակառակը, այս իրաւունքներուն ապահովումն է եղած միակ միջոցը՝ բազմազգ պետութիւններու անդորրութեան և առաջդիմութեան»:[158] Այս տեսությամբ հայությունը ներկայանում է նախ որպես Օսմանյան քաղաքացի և, ապա իբրև հայ ազգություն, որոնք չպիտի հակասեն իրար, այլ ընդհակառակը՝ լրացնեն միմյանց: Բնական է, որ սրանից չի բխում, թե դա պիտի դիտվի որպես անջատողական ձգ-

155. ՌԱԿ, վավերագրեր, էջ 21:
156. Նույն տեղում, էջ 22:
157. ՌԱԿ, վավերագրեր, էջ 23:

տում, այլ համատեղ ու համերաշխ, բայց հավասար իրավունքներ պետք է ունենան բոլոր ազգերը՝ մեծ թե փոքր: Սրանից ելնելով, կուսակցությունը «կը կանգնի ջատագով՝ ազգային իրաւունքներու պահպանման և զուտ վարչային ապակեդրոնացման դրութեան»:[159]

Այնուհետև ինքնակամ առաքելություն է վերցվում կուսակցության դրոշի տակ, համերաշխելով «պարտաճանաչ հայ հարուստը, ժրաջան հայ աշխատաւորը և գիտակից հայ մտաւորականը» և հենվելով մեր ժողովրդի «բնածին ռամկավարական խառնուածքին», հասնել համազգային միակամության:

Մերժելով սոցիալիզմի գաղափարախոսությունը և ընդհանրապես «հեռու մնալով վիճելի վարդապետութիւններէ», խնդիր է դրվում տընտեսական բնագավառում կապիտալի ազատ զարգացման, որը նրանց կարծիքով ինքնըստինքյան կհանգեցնի աշխատավոր ժողովրդի վիճակի բարելավման:

Ծրագրի հեղինակների կարծիքով գործելակերպի լավագույն միջոցներ են համարվում գրավոր (մամուլ, զանազան հրապարակումներ) և բանավոր քարոզչությունը, Սահմանադրության պաշտպանությունը ամեն գնով՝ չբացառելով քաղաքական դաշինքներն այլ կուսակցությունների ու խմբավորումների հետ, բարենորոգումների միջոցով առատության և բարօրության հասնելու սկզբունքի, այսինքն՝ պառլամենտական, բարենորոգչական պայքարի ձևերի որդեգրումը: Ստեղծվում էր տիպիկ բուրժուական կամ որ նույնն է՝ ունևոր ապրանքարտադրողների կուսակցություն, որը մերժում էր հեղափոխական պայքարը և որդեգրում կառուցողական բարենորոգչական վարքագիծ:

Կուսակցության նպատակները բաժանված էին երկու խմբի.

ա) քաղաքական՝ որի տակ հասկացվում էր Օսմանյան Սահմանադրությունը «վերածել ռամկավարական սահմանադրութեան մը», այսինքն՝ ավելի դեմոկրատացնել այն և, պահպանելով հանդերձ օսմանյան կայսրության ամբողջականությունը, լայն ինքնավարական արտոնություններ շնորհել տեղական և ազգային իշխանություններին.

բ) ազգային՝ անխախտ պահպանել հայոց ազգային իրավունք-

158. Նույն տեղում, էջ 24:
159. Նույն տեղում, էջ 26:

ներն ու սովորույթները, որոնք երաշխիք կդառնան «կրոնական ազատութեան և կրթական զարգացման», ազգային սահմանադրությունը վերաքննել՝ հարմարեցնելով այն ժամանակի պահանջներին, աշխատել «զուտ եկեղեցական գործերը անջատել՝ անոնց ազգային վարչական կազմէն»,[160] *ստեղծելով ազգային և կրթական միացյալ վարչություն, ի վերջո պահպանել ու զարգացնել հայոց լեզուն, պատմությունն ու մշակույթը:*

Ծրագրի Գործելակերպ բաժնում հայտարարվում էր, որ ՀՍՌԿ-ն գործում է. «սահմանադրական ռեժիմի տակ, իբրև քաղաքական օրինական կազմակերպութիւն և ոչ իբրև յեղափոխական-ապստամբական գաղտնի մարմին»,[161] որի գործունեության միջոցներն են հայտարարվում մամուլը, հանրահավաքները և հրապարակային ելույթները, ընտրական և խորհրդարանական պայքարը: Նախկին բռնապետական վարչակարգի վերականգնման յուրաքանչյուր փորձի դեմ կուսակցությունը կպայքարի բոլոր միջոցներով: Առաջնահերթ խնդիր էր համարվում ուսումնասիրել հայ ժողովրդի պահանջները, և գործունեություն ծավալել դրանց իրականացման համար՝ ջանալով մյուս «ազգութիւններու հետ մշակել եղբայրակցական ոգի և համերաշխաբար գործակցիլ անոնց հետ»:[162]

Հաջորդ ենթաբաժնում, որն անվանված է «Յատակագիծ», հռչակվում է կուսակցության իդեալը՝ իրավական սահմանադրական պետական համակարգի ստեղծումը, այն վարչահիրավական համակարգը (մոդուլը), որը պետք է գործի ապագա կայսրությունում և, մասնավորապես Հայաստանում: Ծրագրի հեղինակների կարծիքով ապագայում ժողովրդի գերիշխանությունն ապահովելու համար անհրաժեշտ են սահմանադրական այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են ազգերի լիակատար հավասարությունը, բոլոր անհատների հավասարությունը օրենքի և պետության առջև՝ դրանից բխող իրավական պարտականություններով, անձի անձեռնմխելիությունը, խղճի, դավանանքի, ուսման, խոսքի, մամուլի, խմբակցությունների, հանրահավաքների և ցույցերի կազմակերպման, աշխատանքի,

160. ՌԱԿ, վավերագրեր, էջ 25:
161. Նույն տեղում, էջ 25-26:
162. ՌԱԿ, վավերագրեր, էջ 26:

առևտրի, ազատ տեղաշարժման ազատությունը, գրաքննության իսպառ բացառումը և այլն:

Վերջին հաշվով՝ ՀՍՌԿ-ի ծրագիրն առաջարկում էր սահմանադրական միապետություն հետևյալ կառուցվածքով. բուրգի գագաթին էր «կայսր օսմանցիներուն», ով թեև անձեռնմխելի էր ու անպատասխանատու օրենքի առջև, բայց պարտավոր էր հարգել սահմանադրությունը, օրենքները, հետամուտ լինել երկրի անկախությանն ու ամբողջականությանը: Օրենսդրական իշխանությունը պիտի իրականացնեին կայսրն ու երկպալատ պառլամենտը՝ օրենսդրական նախաձեռնություն ընձեռելով նախարարների խորհրդին, իսկ գործադիր իշխանությունը՝ կայսրը, նախարարների հետ միասին:

Խորհրդարանի ստորին պալատը՝ երեսփոխանական ժողովը ընտրվելու էր 25000 ձայնից մեկ պատգամավոր հաշվարկով, ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ, 21 տարին լրացած այր ընտրողների կողմից: Ընտրվել կարող էին 30 տարեկանից: Վերին պալատը՝ ծերակույտը, ընտրվում էր նահանգային ժողովների կողմից՝ 9 տարի ժամկետով, 40 և բարձր տարիք ունեցողների թվից:

Ռամկավարների պատկերացմամբ արդարադատությունը, որպես պետական կարևորագույն գործառույթ (ֆունկցիա), պիտի իրականացվեր հետևյալ սկզբունքով. դատարանի անկախություն օրենսդիր և գործադիր իշխանություններից, դատարանների ընտրովիություն, տեղական լեզվի պարտադիր օգտագործում, դատարանում անհրաժեշտության դեպքում թարգմանչի առկայության ապահովում, անձի ձերբակալությունը միայն դատախազի սանկցիայով, բանտային պայմանների բարելավում, պատճառած վնասների հատուցում:

Ըստ ռամկավարների ծրագրի, կրթական համակարգը նախատեսում էր ազատ ուսուցում, տարրական անվճար և պարտադիր կրթություն, ազգային լեզվով պետական հովանավորությամբ վարժարանների բացում, թուրքերենի դասավանդում միայն բարձր դասարաններում: Կարճ ասած, ենթադրվում էր միասնական կրթական համակարգի ստեղծում՝ հնարավորություն ընձեռելով մայրենի լեզվի, պատմության, մշակույթի և կրոնի դասավանդման համար:

Անհրաժեշտ էր համարվում բոլոր չափահաս տղաների պարտադիր զինվորական ծառայություն բանակում՝ երկու տարի ժամկետով

և ծառայության պայմանների բարելավում:

Ծրագրում հատուկ ուշադրություն էր դարձվում հողային հարցին: Պահանջվում էր բարեփոխել հարկային համակարգը, սահմանել պրոգրեսիվ հարկ, վերացնել մյուլթեզիմությունը կամ կապալառությունը, չեղյալ հայտարարել ապառքները, չքավորներից հարկեր չհավաքել, տրամադրել էժան վարկեր: Հողագործին հող տրամադրել «դիրամատչելի պայմաններով»՝ նկատի ունենալով հատկապես «վերջին բռնապետութեան երեսէն» տուժածներին: Հին վարչակարգից փախածներին կամ բոլոր տարագիրներին «պետական ծախքերով վերադարձնել իրենց բնակավայրերը»: Մոհաջիրներին (նոր մահմեդական գաղթականներ) բնակեցնելիս, հաշվի առնել հնաբնակ տեղացիների կամքը: Բռնագրավված հողատարածքներն անպայման վերադարձնել նախկին տերերին՝ «տեղական քննիչ յանձնաժողովներու միջոցով: Բացարձակ ջնջում պետական և համայնական տարապարհակ աշխատանքներու»:[163] Անհրաժեշտ է հատուկ օրենքներով խրախուսել ընկերությունների և երկրագործական բանկերի ստեղծումն ու զարգացումը:

Մշտական խաղաղության և կայսրությունում ապրող ժողովուրդների եղբայրության ապահովման երաշխիքները ծրագիրը համարում էր զանազան արտոնությունների վերացումը. «Ջնջել պէյերու և աւարառու աւատական ցեղերու իրաւունքները ու կամայական հարկահանութիւնները», թափառաշրջիկ և պարազիտ ապրելաձև ունեցող ցեղերի զինաթափումն ու նստակյաց դարձնելը, բայց մինչ այդ անհրաժեշտ է պաշտպանել նրանցից հարևան խաղաղ բնակիչներին, կամ զենք տալ վերջիններիս՝ ինքնապաշտպանության համար: Բացի վերոհիշյալից պետք է «ջնջել համիդիէ զորագունդերը»:[164]

Ծրագրի վերջում նշվում էր, որ կուսակցության մեջ կարող է մտնել «ամէն մի հայ, առանց դաւանանքի ու դասակարգի խտրութեան», ով նյութապես և բարոյապես կնպաստի այդ ծրագրի կենսագործմանը: Հայտարարվում էր, որ կուսակցության կենտրոնը կգտնվի Կ.Պոլսում, իսկ մասնաճյուղերը՝ հայաշատ բոլոր երկրներում: Դրանք, ենթարկվելով կենտրոնին, տեղերում կլինեն ինքնավար և կգոյատևեն տեղական նյութական միջոցների հաշվին:

---

163. ՌԱԿ, վավերագրեր, էջ 30:
164. Նույն տեղում:

Ռամկավարների այս ծրագիրը, արտահայտելով մանր ու միջին ունետերերի շահերն ու տրամադրությունները, ազգային դեմոկրատական ծրագիր էր՝ սակայն ոչ կատարյալ: Հավակնելով դեմոկրատական վարչակարգի ստեղծմանը, այն ուներ պակասավոր կողմեր, իսպառ բացառում էր կնոջ ընտրական իրավունքը, ազգային հարցում ընդունելով «երկրի ամբողջութիւնը և քաղաքական անբաժանելիութիւնը», ենթարկվելով թուրքական պատիր սահմանադրության խաբկանքներին, հրաժարվում էր Հայաստանի անկախության գաղափարից, ընդհանրապես մշուշապատ էր դնում ազգային հարցի լուծումը, հնարավոր էր համարում պառլամենտական պայքարի միջոցով հասնել ազատությունների, երբեմն մոռանալով թուրքական բռնատիրությունը և այլն:

20-րդ դարի սկզբին, երբ զարգացած երկրներում տեղի էին ունենում սոցիալ-տնտեսական, իրավական, քաղաքական խոշոր տեղաշարժեր, երբ մի շարք ժողովուրդներ միապետներին հայտարարում էին թանգարանային նմուշներ, ռամկավարների կողմից սահմանադրական միապետությունը քաղաքական իդեալ հռչակելը պահպանողականություն էր, նահանջ ՀՍՌԿ-ի բաղկացուցիչ մասեր՝ նախորդ կազմակերպությունների ծրագրերի հեղափոխական դրույթներից, որը, սակայն, անհամեմատ ավելի առաջադիմական էր, քան միդիաթյան սահմանադրությունը, որովհետև մերժելով դրա խիստ սահմանափակությունն ու ազգայնամոլությունը, Թուրքիայի զարգացման համար բացում էր համեմատաբար լայն հեռանկարներ:

Անհրաժեշտ է շեշտել, որ ռամկավար առաջնորդները բացառապես արևմտահայեր էին, քաջածանոթ թուրքական դժնդակ իրականությանը, շատերն իրենց կաշվի վրա զգացել էին բռնատիրության ճնշումը և ծրագիրը կազմելիս, անկասկած, հաշվի էին առել այն բոլոր հնարավորություններն ու խոչընդոտները, որոնք կնպաստեին կամ կարգելակեին իրենց մտադրությունների իրականացմանը: Գտնվելով իրադարձությունների կիզակետում նրանք չէին կարող առաջարկել իրականությունից կտրված, ուտոպիական ու անիրագործելի ծրագիր:

Ինչ վերաբերում է ապադասակարգային ինքնակոչմանը, ապա հարկ է նկատի առնել, որ արևմտահայ ազատագրական շարժումն

ուղղված էր նախ հայ ժողովրդի ֆիզիկական գոյատևման ապահովմանը և հետո օտարի լուծը թոթափելուն, այսինքն՝ ազգային ազատագրական շարժումը կլանեց բոլոր ուժերը՝ տեղ չթողնելով դասակարգային պայքարի համար: Եվ այն պնդմանը, որ ապադասակարգային կուսակցություններ չեն լինում, այստեղ պիտի մոտենալ որոշ վերապահումով, որովհետև այնքան ծանր էր արևմտահայերի վիճակը, թշնամին այնքան նենգ, որ ինքնաբերաբար ազգային-ազատագրական շարժումը համահարթեցում էր արել բոլոր դասակարգերի միջև առժամանակ մոռացության մատնելով միջդասակարգային ամեն մի հակասություն:

Այս ամենով հանդերձ, պետք է արձանագրել, որ անկախ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից, ՀՍՌ կուսակցության վարքագիծը բավական իրատեսական էր:

ԳԼՈՒԽ 2-ՐԴ

ՀՍՌԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1908-1919 ԹԹ.

1. ՀՍՌԿ-Ն 1908-1911թթ. Առաջին ընդհանուր պատգամավորական ժողովը

ՀՍՌ կուսակցության հիմնադիր ժողովի ավարտից հետո, ընդունված որոշման համաձայն՝ կուսակցության ղեկավարներից Մ. Տամատյանը, Գր. Պեռզիկյանը, Լ. Մկրտչյանը, Վ. Մալեզյանը տեղափոխվեցին Կ. Պոլիս, կուսակցության կենտրոնն այնտեղ հաստատելու համար նախապատրաստական աշխատանքներ կատարելու նպատակով: Այդ ժամանակ Թուրքիայի մայրաքաղաքում պայմաններ չկային հայ քաղաքական կազմակերպությունների ազատ գործունեության համար: Գում-Գափուի, Բանկ Օտոմանի ցույցերը, նրանց հաջորդած ջարդերն ու ճնշումները շնչահեղձ էին արել պոլսաբնակ հայությանը: Այդ պատճառով ռամկավար գործիչների շփումները Կ.Պոլսի հայ մտավորականության, հասարակական ազգային գործիչների, պետական պաշտոնյաների հետ ցույց տվեցին, որ առհասարակ բոլորն էին խուսափում առնչվել ոչ միայն հեղափոխական, այլ նաև քաղաքական լեգալ կազմակերպությունների հետ, գերադասելով մնալ «չէզոք գետնի վրայ և անաչառապէս իրենց ազգային պարտականութիւնը կատարել»:[165]

Մեծ ջանքերի գնով հաջողվում է ՀՍՌ կուսակցության կենտրոնն Ալեքսանդրիայից տեղափոխել Կ.Պոլիս և ծավալել ազգանպաստ գործունեություն: Ռամկավարները փորձեցին մեծացնել իրենց կու-

165. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 205:

սակցության անդամների թիվը՝ նրանց հաջողվում է Կ.Պոլսի հայաշատ թաղերում և արվարձաններում երկու տարում մի քանի ակումբ հիմնել:[166] ՀՍՌԿ-ն փորձեց Արևմտյան Հայաստանի, Թուրքիայի ու աշխարհի տարբեր մասերում ապրող հայերին համախմբել իր դրոշի ներքո, սակայն մեծ հաջողությունների չհասավ: Նույնիսկ մի քանի տարի անց, 1912թ. «Աշխատանք» թերթի Հուր ծածկանունով թղթակիցը գրում է, որ բոլոր Ռամկավարների թիվը չի անցնում հազար մարդուց:[167] Այդ պատճառով, ինչպես Արմենականները՝ նրանք ևս գործում էին գլխավորապես Վան-Վասպուրականում, ուր գրեթե բոլոր արմենականները[168] մեխանիկորեն ընդգրկվեցին նրանց շարքերում: ՀՍՌԿ-ի կազմակերպություններ առաջացան նաև Իզմիրում, Խարբերդում, Տիգրանակերտում, Կիլիկիայի առանձին քաղաքներում, Եգիպտոսում և ԱՄՆ-ում:

Ռամկավարներն ամենուրեք ծավալեցին կրթական-մշակութային լայն գործունեություն: 1909թ. Վանում հիմնադրեցին «Մկրտիչ Ավետիսեան» գրադարան-ընթերցարանը: Վանի Կեդրոնական վարժարանի տեսուչի պարտականությունները կատարելու համար, ռամկավարները Կ.Պոլսից հրավիրեցին բազմափորձ Հովսեփ Գույումջյանին, որը մեծ թափ հաղորդեց երիտասարդների կրթական աշխատանքներին: Ապա Հայ բարեգործական ընդհանուր միության աջակցությամբ հիմնեցին Վանի նշանավոր վարժապետանոցը, որի նպատակն էր ուսուցիչներ պատրաստել տեղի դպրոցներում դասավանդելու համար:[169]

---

166. Նույն տեղում:
167. Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 370:
168. Այստեղ նշվում է «գրեթե բոլոր արմենականները», որովհետև չնայած հռչակվել էր Արմենական կուսակցության ՀՍՌԿ-ի մեջ միաձուլման մասին, սակայն մի շարք օբյեկտիվ՝ աշխարհով մեկ սփռված լինելը, Առաջին համաշխարհային պատերազմը, օպերատիվ կապի պակասը և սուբյեկտիվ պատճառներով արմենականները դեռ երկար ժամանակ հոգեհարազատ մնացին արմենական ինքնանվանմանը: Ի դեպ, այս նույնը վերաբերում է նաև Վերակազմյալներին, Ազատականներին, Ժողովրդական կուսակցության որոշ անդամների և այլն: Այս հանգամանքը չի նշվել ոչ հուշագրություններում և ոչ էլ ուսումնասիրողների կողմից և շատ հաճախ շփոթեցնում է հետազոտողներին: Իհարկե, ՌԱԿ-ի կազմավորումից հետո այդ վիճակն աստիճանաբար շտկվեց:
169. Դարբինեան Ա., նշվ. աշխ. էջ 216:

Այդ ընթացքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք թեև Թուրքիայում չլուծեցին և ոչ մի արմատական հարց, սակայն զգալիորեն ազդեցին ռամկավարների աշխարհայացքի և գործունեության վրա: 1908թ. Սահմանադրության հաստատմամբ թեև Թուրքիան հռչակվեց Սահմանադրական միապետություն, սակայն Աբդուլ Համիդը դեռևս պահպանում էր որոշակի իրավունքներ, այդ թվում ռազմական և ծովային նախարարներին նշանակելու արտոնությունը: Բայց 1909թ. սկիզբը դրվեց միդհաթյան սահմանադրության վերաքննության գործընթացի, և, ըստ երիտթուրքերի նոր խմբագրման, սուլթանը զրկվեց նաև այդ արտոնությունից: Չհանդուրժելով այս վերահաս շնորհազրկումը, 1909թ. մարտի 31-ին Համիդն իր կողմնակիցներով խռովություն բարձրացրեց, որը երիտթուրքերին հաջողվեց ճնշել իրենց հավատարիմ զորքերի միջոցով և սուլթանին գահազրկել: Գահի բարձրացած նոր սուլթանը՝ Մեհմեդ-Ռեշադ 5-րդը, մինչև իր գահակալության վերջը (1918թ.), այդպես էլ փոքր-իսկ դեր չխաղաց երկրի քաղաքական կյանքում: 1909թ., երբ դեռ չէր լրացել սահմանադրության հռչակման մեկ տարին, թուրքական իշխանություններն Ադանայում անմեղ հայ բնակչության կոտորած կազմակերպեցին, որին զոհ գնացին շուրջ 30 հազար մարդ: Ջարդից հետո ստեղծված քննիչ հանձնաժողովի անդամ, Օսմանյան պառլամենտի պատգամավոր Հակոբ Պապիկյանի պատրաստած տեղեկագրից պարզ է դառնում, որ ջարդի կազմակերպիչը տեղի իթթիհատական կոմիտեն էր:[170]

Ադանայի ջարդն արդարացնում էր այն զգուշությունն ու վերապահությունը, որով վերաբերվում էր ՀՍՌ կուսակցությունը «ազատություն, եղբայրություն և արդարություն» ազդարարող թուրք հեղափոխականների և քաղաքական այլ գործիչների հանդեպ: Ռամկավարներն ավելի ու ավելի էին համոզվում, որ անհրաժեշտ է նոր թափ հաղորդել ժողովրդի ինքնապաշտպանության գործին: Պատահական չէր, որ Սահմանադրական ռամկավար կուսակցության Ամերիկայի շրջանակը (ՀՍՌԿ-ի ԱՄՆ-ում գործող մասնաճյուղն այդպես էր կոչվում), կուսակցության առաջին ընդհանուր պատգամավորական

170. Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնօ, 1930., էջ 174:

ժողովին մասնակցելու համար ուղարկված պատգամավոր Միքայել Հովհաննիսյանին լիազորել էր, որ ընթացք տա ինքնապաշտպանության գործին:[171]

Ինքնապաշտպանության խնդրին զարկ տալու, ապագայում իրականացվելիք միջոցառումների ծրագրեր մշակելու, Ադանայում տեղի ունեցած ողբերգությանը գնահատական տալու, ՀԲԸՄ-ի հանդեպ վերաբերմունքը հստակեցնելու, գործող մյուս քաղաքական ուժերի հետ հարաբերությունների մարտավարություն մշակելու, ինչպես նաև ՀՍՌ կուսակցության հիմնադիր ժողովի որոշումն իրականացնելու նպատակով հրավիրվեց կուսակցության պատգամավորական ժողով (համագումար): Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ ՀՍՌԿ առաջին համագումարը տեղի ունեցավ 1911թ. հուլիսին, Կ.Պոլսում: Համագումարին մասնակցում էր 25 պատգամավոր. 3-ը՝ Վասպուրականից, 2-ը՝ Ամերիկայից, 1-ը՝ Փոքր Հայքից, 1-ը՝ Կիլիկիայից, 2-ը՝ Եգիպտոսից, 3-ը՝ Կ.Պոլսի արվարձաններից: Կուսակցության Կենտրոնական վարչությունից ներկա էին Տիրան Քելեկյանը, Արշակ Ալպոյաճյանը, Հովհաննես Հակոբյանը, Հակոբ Փափազյանը, Պարույր Քեչյանը, Օնիկ Թաշճյանը և այլք:[172] Տեղի է ունենում պատգամավորական ժողովի ընդամենը 20 նիստ:

Վերջին նիստին մասնակցում է նաև արևելահայ նշանավոր մտավորական, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Կ.Պոլսում: Ելույթ ունենալով համագումարում՝ Հ. Առաքելյանը ՀՍՌԿ-ն համեմատում է Ռուսաստանի կադետական կուսակցության հետ և ընդհանրություններ տեսնում նրանց միջև:[173]

Պատգամավորները միաձայն որոշում են ամեն ինչով թև ու թիկունք դառնալ Հայ բարեգործական ընդհանուր միությանը, որն «իբր իրեն ուղեկից, եթե ոչ քաղաքական, ապա ազգային դրոշի տակ պիտի կրնար ծառայել հայ ժողովրդին»:[174]

Սույն ժողովից զատ, սահմանափակ թվով պատգամավորների մասնակցությամբ գումարվում է գաղտնի ժողով, որտեղ քննարկվում

171. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 212:
172. Նույն տեղում, էջ 225:
173. Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 374:
174. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 234:

է միայն մեկ հարց՝ ինքնապաշտպանության խնդիրը հայաբնակ վիլայեթներում: Նկատի առնելով Իթթիհատի հակահայկական քաղաքականությունը, ժողովականները որոշում են «ամէն հնարաւոր միջոցներ ձեռք առնել ներքին գաւառների հայութիւնը զինելու, ապագայ հաւանական ինքնապաշտպանութեան պէտքին համար»:[175] Ժողովրդին զինելու հարցում Գր.Պեռզիկյանն ու Հ.Կաքավյանն առաջարկում են նախապատվությունը տալ Վասպուրականին, որի աշխարհագրական դիրքը ռազմավարական առավելություն ուներ մյուս շրջանների նկատմամբ: Դա Ռուսաստանին և Պարսկաստանին սահմանակից լինելու հանգամանքն էր, որտեղից զենք տեղափոխելը համեմատաբար հեշտ էր: Այդպիսի փորձ Վասպուրականի հայությունն ուներ դեռևս 1896թ. «Մեծ դեպքի» ժամանակ, որին մասնակցել էին նաև զգալի թվով ՀՍՌԿ-ի ապագա անդամներ, երբ դեռևս արմենականներ էին: Զենքի համար դրամի հայթայթումը միայն գավառական միջոցներով ռամկավարները դժվար գործ համարեցին: Ըստ նրանց՝ նույնքան դժվար էր հույսը դնել Կ.Պոլսի աղաների վրա, քանի որ «անոնք ընդհանրապէս Ատանայի եղեռնէն վերջն ալ. սահմանադրութեան փքացնող հովերէն վերջն ալ տակաւին շատ բան կ'ակնկալէին Իթթիհատ-դաշնակցութիւն եղբայրակցութենեն և այդ պարագային ինքնապաշտպանութեան խօսքն ընելը առնուազն արկածախնդրութիւն պիտի նշանակէր»:[176] Հետևաբար, դրամի հանգանակության համար մնում էր միայն արտասահմանը: Ամերիկայի շրջանակի լիազորը՝ Մ. Հովհաննիսյանը խոստանում է Ամերիկա վերադառնալուց հետո 1000 ոսկի հասցնել այդ գործի համար: Ժողովից հետո Հ. Կաքավյանը մեկնում է Վան, իսկ Մ. Հովհաննիսյանը՝ Խարբերդ, ուր այցելում են ռամկավարների ակումբները: Այնուհետև Մ.Հովհաննիսյանը վերադառնում է Ամերիկա և ներկայացնում ժողովի որոշումը: Ռամկավար կուսակցության Ամերիկայի շրջանակը ողջունում է այս որոշումը և ձեռնարկում դրամի հանգանակություն:[177]

1911թ. Կ.Պոլսում գումարված ընդհանուր ժողովի որոշման համաձայն, կուսակցությունը ձեռնամուխ է լինում զենքի հայթայթման գոր-

175. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 226:
176. Նույն տեղում,էջ 227:
177. Նույն տեղում:

ծին: Նպատակահարմար է համարվում զինամթերք ձեռք բերել Կովկասում: Այդ գործը հանձնարարվում է Մանուկ Ճիզմեճյանին, որն այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարում:[178]

1912թ. Կ.Պոլսում մի խումբ ուսանողներ հիմնադրեցին Սահմանադրական ռամկավար ուսանողական միությունը: Նախաձեռնողը կարնեցի Արամ Շիշեյանն էր: Միության ակտիվ անդամներից էին Լևոն Աճեմյանը, Գասպար Մովսիսյանը, Ասատուր Ասատուրյանը, Հովսեփ Հովսեփյանը, Հարություն Գավուգճյանը, Արմենակ Հայկունին և ուրիշներ: ՀՍ ռամկավար ուսանողական միությունը հրատարակում է «Վերածնունդ» անունով ամսաթերթը: Պարբերականի առաջին համարը լույս է տեսնում 1912թ. մայիսին՝ 32 էջով: Թղթակցում են Տ. Քելեկյանը, Վ. Թեքեյանը: Բայց «Վերածնունդը» երկար չի գոյատևում: Թեև լույս է տեսնում թերթի ընդամենը 4 համար,[179] այնուհանդերձ այն զգալի ներդրում է ունենում երիտասարդության շրջանում ռամկավարական գաղափարախոսության տարածման գործում: ՍՌ ուսանողական միությունը ևս երկար չգոյատևեց, սակայն զգալի հետք թողեց հատկապես երիտասարդության մեջ հայրենիքին ծառայելու պատրաստակամություն սերմանելու գործում: Նրա շատ անդամներ ու համակիրներ՝ հատկապես Կ.Պոլսի ուսանողներից, հետագայում համալրեցին ՀՍՌԿ շարքերը:

1911թ. տեղի է ունենում Սահմանադրական ռամկավար կուսակցության Վանի շրջանի ժողովը: Ընտրվում է Դիվան հետևյալ կազմով. ատենապետ՝ Հովսեփ Գույումջյան, քարտուղար՝ Հարություն Կաքավյան, խորհրդականներ՝ Կիրակոս Սարուխանյան, Նազարեթ Պուռնության, Նշան Հակոբյան, Անուշավան Տեր-Մկրտչյան, Կարապետ Կարախանյան, Արմենակ Տեր-Պողոսյան, Շավարշ Հովիվյան: Վանի շրջանի (կամ Վասպուրականի, երկու ձևով էլ հիշատակվում է աղբյուրներում) այս ժողովում որոշվում է ունենալ թերթ, որը կդառնար կուսակցության գաղափարախոսը:[180]

1912թ. դեկտեմբերին ՀՍՌԿ Վասպուրականի շրջանի պաշտոնաթերթ է դառնում «Վան-Տոսպը»: Թերթի արտոնատերն էր վարչու-

178. Նույն տեղում, էջ 274-275:
179. Պողոսեան Հ., Կուսակցական կեանքի յուշերս, Պէյրութ, 1987., էջ 11:
180. ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 15, էջ 21:

թյան ատենապետ Ռուբեն Հովնանյանը, խմբագիրը՝ Վարդան Պապիկյանը: Թերթի խմբագրականները գրում էր Արտակ Դարբինյանը:[181] «Վան-Տոսպը» հանգամանորեն ներկայացնում է ռամկավարների տեսակետները հասարակական-քաղաքական և ազգային տարբեր խնդիրների նկատմամբ:

Ռամկավարները կողմնակից էին հասարակության աստիճանական զարգացմանը,[182] քննադատում էին բոլոր նրանց, ովքեր Թուրքիայում քարոզում էին սոցիալիզմի գաղափարները, իրավացիորեն գտնելով, որ Թուրքիայում սոցիալիզմի համար հող չկա:[183] Նրանք երկրի տնտեսական զարգացման մեջ մեծ տեղ էին հատկացնում մեքենայական արտադրությանը:[184] Պարբերաբար անդրադառնալով Օսմանյան սահմանադրությանը, ռամկավարները ցույց էին տալիս, որ հայ ժողովրդի վիճակն ամենածանրն էր Օսմանյան կայսրության տարածքում բնակվող բոլոր ժողովուրդների համեմատությամբ և հույս էին հայտնում, որ սահմանադրությունը ազատություն կշնորհի բոլոր ժողովուրդներին:[185] Պետք է նշել սակայն, որ այդ գաղափարին, ռամկավարները մոտենում էին որոշակի վերապահությամբ: Արդեն Բալկանյան պատերազմի տարիներին, երբ վերաբացվել էր հայկական հարցը և Թուրքիան ժամանակ շահելու համար խոստացել էր բարենորոգումներ իրականացնել հայկական վիլայեթներում, հաշվի առնելով անցյալի փորձը, ռամկավարները գրում էին, որ թուրքական կառավարությունը հերթական անգամ խուսափում է, որովհետև բազմիցս բարենորոգումներ է խոստացել, սակայն չի կատարել:[186] «Վան-Տոսպի» խմբագրականում ընդգծվում է, որ ամեն անգամ, երբ բարձրացվում է բարենորոգումների հարցը, թուրքական պաշտոնյաները ու մամուլը հանգստացնում են ժողովրդին՝ ասելով. «Սպասեցէք քիչ մը, պատերազմը անցնի, անգամ մը ինքզինքնիս գտնենք, յետոյ Ձեր մասին բան մը կ'ընենք անպատճառ»:[186] Այս շրջանում ռամկա-

181. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 240:
182. «Վան-Տոսպ», 1912, N 1, էջ 2:
183. Նույն տեղում, N 8, էջ 88:
184. Նույն տեղում, N 1, էջ 2:
185. Նույն տեղում, N 2, էջ 24:
186. «Վան- Տոսպ», 1912, N 18, էջ 39:
187. Նույն տեղում, N 28, էջ 20:

վարները հանդես եկան չափավոր պահանջներով: Դնելով Թուրքիայի ընդհանուր բարեկարգման հարցը, ռամկավարները գտնում էին, որ իրենց պահանջն օգտակար է ոչ միայն հայերի, այլ նաև Օսմանյան պետության բոլոր ժողովուրդների համար:[188] Մեկ այլ առիթով ռամկավարների պարբերականը գրում էր, որ հայ ժողովրդի նպատակը ոչ թե ապստամբության միջոցով կայսրությունից անջատվելն է, այլ նրա ինքնուրույն զարգացումը՝ «նորոգուած և բարեկարգ Օսմանեան պետութեան մէջ»:[189] Ռամկավարները տալիս էին հայկական հարցի լուծման իրենց բանաձևը, որն ամբողջանում էր «կեանքի, գոյքի և պատուի անձեռնմխելիութեան սրբազան իրաւունքի» մեջ:[190]

Պարբերականն արծարծում էր նաև արտագաղթի խնդիրը, ցույց տալիս դրա վնասակար հետևանքները հայության համար:[191]

Ռամկավարներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում կուսակցությունների համերաշխության և համագործակցության խնդիրներին:

1913թ. «Վան-Տոսպը» կոչ է անում կուսակցություններին մի կողմ թողնել ներքին տարաձայնությունները և համախմբվել «տաճկահայութեան հարցին շուրջը»:[192] Պարբերականի Հրազդան ծածկանունով հոդվածագիրը հայկական հարցի վերաբացումը վտանգավոր էր համարում հայության համար: Հենվելով պատմական դառը փորձի վրա, հեղինակն անսքող ակնարկում է, որ դեռ 1890-ական թվականներից սկսած, Հայկական հարցի բուռն քննարկումներին միշտ հաջորդել են հայերի ջարդեր և հիմա էլ՝ 1913 թվականին, հոդվածի հեղինակը գտնում է, որ մարգարե դառնալու կարիք չկա գուշակելու համար «արիւնոտ դէպքերու մեծ հաւանականութիւնը»:[193] «Վան-Տոսպի» մեկ այլ համարում պարբերականի թղթակիցը վկայակոչում է մի թուրք սպայի՝ զինվորական վարժարանում արած հետևյալ հայտարարությունը. «Պատերազմէն յաղթական ելնենք, թէ ոչ, գիտենք ինչ դաս պիտի տանք անհաւատարիմ հայերուն և քիւրտերուն»:[194]

188. Նույն տեղում, N 1, էջ 3:
189. Նույն տեղում, N 2, էջ 14:
190. Նույն տեղում, N 4, էջ 40:
191. Նույն տեղում, N 32, էջ 18:
192. «Վան-Տոսպ», 1913, N 4, էջ 7:
193. Նույն տեղում, N 1, էջ 2:
194. Նույն տեղում, N 2, էջ 35:

Թեև «Վան-Տոսպի» հայտնած այս տեսակետը հեռու չէր ճըշմարտությունից, սակայն, քանի որ Հայկական հարցը վերաբացվում էր Ռուսաստանի նախաձեռնությամբ, դրա համար էլ մեր ազգային շրջանակները չէին կարող դրական հույսեր չփայփայել այս ուղղությամբ: Իսկ ինչ վերաբերում է ցեղասպանությանը, ապա տակավին 1911թ. երիտթուրքերի Սալոնիկի համագումարը ծրագրել էր արևմտահայերի նոր կոտորածները և Հայկական հարցի միջազգայնացումն այստեղ այնքան էլ մեծ նշանակություն չուներ:

«Վան-Տոսպի» 1913թ. թիվ 6-ում զետեղված «Սրտացավ ազգասերի» հոդվածն ուղղված էր Եգիպտոսում լույս տեսնող «Լուսաբեր-Արև» թերթում հրապարակված Սուրեն Պարթևյանի մի հոդվածի քննադատությանը: Այդ հոդվածում ասվում էր, թե իբր ռամկավարները դեմ են կուսակցությունների համերաշխությանը և հանուն այդ համերաշխության չպիտի քննադատեն դաշնակցությանը: Հեղինակը ռամկավարների գործունեությունը համարում է ծառայություն բուրժուազիային և նմանատիպ այլ հերյուրանքներ հնչեցնում նրանց հասցեին:[195] «Վան-Տոսպը» հերքում է «Արևի» մեղադրանքները, գրելով, որ ռամկավարության գործունեությունը հիմնված է ոչ թե աղայական խավի կամ բուրժուաների վրա, այլ բուն արևմտահայ ժողովրդի վրա, իսկ ռամկավարները «ճամբու ծախս չեն ստանում և չեն հովանաւորուիր պուրժուազիէն»:[196]

Իսկ ինչ վերաբերում էր միջկուսակցական համերաշխության խնդրին, ապա ընդդիմախոսների հետ բանավիճելով հանդերձ, ռամկավարները պատրաստակամություն էին հայտնում իրենց գաղափարական հակառակորդների «ձեռքը սեղմելու», եթե հայրենիքի շահը պահանջի և «անոնք բարեհաճէն մեզ հետ գործել այդ ուղղութեամբ»:[197]

«Վան-Տոսպի» 1913թ. թիվ 12-ի խմբագրականում կարդում ենք. «Մենք խորապէս համոզուած ենք, թէ կուսակցութիւնների համաձայնութիւնը Վասպուրականի հայ կեանքը կը դնէ գործունէութեան և յա-

195. Նույն տեղում, N 6 էջ, 21:
196. Նույն տեղում, 1913, N 6 էջ 9:
197. Նույն տեղում, N 12, էջ 10:

ռաջացումի լառագոյն պայմաններու մէջ, և անոր արդիւնքը չպիտի ուշանայ ինքզինք յայտնելու»:[198]

Ռամկավարների այս հայտարարութիւններին հետևում էին գործնական քայլերը: Օրինակ՝ Վանում նրանք մշտապես համերաշխ էին Սոցիալ-դեմոկրատ հնչակյանների հետ, որոնք չնայած փոքրաթիվ էին և լուրջ ուժ չէին ներկայացնում, սակայն զգալի դեր էին խաղում:[199] Կամ օսմանյան խորհրդարանի ընտրությունների ժամանակ ռամկավարները կոչ են անում իրենց կուսակիցներին ու համակիրներին ձայն տալ դաշնակցության թեկնածու Վռամյանի օգտին և այլն:[200]

Այնուամենայնիվ գաղափարական, կուսակցական հակամարտությունը ՀՅԴ-ի հետ մնում էր ռամկավարների գործունեության բնորոշ գծերից մեկը: Մասնավորապես «Վան-Տոսպը» դատապարտում է կուսակցական «տիքթաթորութեան» (բռնատիրություն) երևույթը հայ իրականության մեջ, երբ որևէ կուսակցություն մյուսներին պարտադրում է իր տեսակետները և գործելակերպը: Պարբերականը դա համարում է «Ժողովրդապետական սկզբունքի ոտնահարում և ռամկավարութեան նշանաբանին հակասող դիրք»:[201] Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար ազգային կուսակցությունները ձևավորում են, այսպես կոչված, «Ազգային ինքնապաշտպանության կոմիտե»: Այդ կապակցությամբ ռամկավարները հանդես են գալիս հայտարարությամբ, որտեղ Օսմանյան սահմանադրության հաջորդ 4 տարիները բնորոշելով որպես Հայ ազգային հուսախաբության շրջան, որի բարձրակետը Կիլիկիայի ջարդն էր, ռամկավարները խիստ կարևոր խնդիր են համարում ինքնապաշտպանության գործը, որը սակայն, նրանց կարծիքով, գտնվում է թերի վիճակում:[202] Այդ բացը լրացնելու համար էր կազմվել «Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն»: Կոմիտեի նպատակն էր ազգի ինքնապաշտպանության կազմակերպումը, որը պետք է իրականաց-

198. Նույն տեղում, N 11, էջ 25:
199. Նույն տեղում, N 25, էջ 5:
200. Նույն տեղում, N 11, էջ 25:
201. «Վան-Տոսպ», 1913, N 21, էջ 3:
202. Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988., էջ 129:

վի «Կուսակցական նեղմիտ մտածումներէ բարձր գետնի մը վրայ ամէն խաւերու համերաշխութեան ստեղծումով»:[203] Փաստաթղթում, որը ռամկավարները «Յայտագիր» են անվանում, նշված է, որ հնարավորության դեպքում պետք է աշխատել ձեռք բերել ինքնավարություն, իսկ նվազագույն դեպքում «Հայաստանի և Կիլիկիոյ մէջ բարենորոգումներ գործադրել տալու Եւրոպական մեծ պետութեան կամ անոնցմէ մէկուն հակակշիռին տակ»:[204]

Այնուհետև շեշտվում է, որ ազգային ինքնապաշտպանության գործի նյութական աջակցությունը դրվում է հիմնականում արտասահմանի հայության վրա, քանի որ «Երկրի» հայությունը գտնվում էր նյութական ծայրահեղ ծանր վիճակում: Ազգային ինքնապաշտպանության կոմիտեի կարևոր խնդիրներից մեկն էր ազգի բոլոր խավերի ներգրավումն ինքնապաշտպանության գործի մեջ: Փաստաթղթի վերջում նշվում է, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրն անհետաձգելի նշանակություն ունի և այդ ուղղությամբ աշխատանքները պետք է ծավալվեն անմիջապես, քանի որ, ըստ ռամկավարների՝ Թուրքիայի քաղաքական ծանր կացությունից բոլորից ավելի կարող են տուժել հայերը:[205] «Յայտագիրը» կազմվել է Ալեքսանդրիայում, 1913թ. հունվարին:

2. Երկրորդ պատգամավորական ժողովը: ՀՍՌԿ-ն միասնական պայքարի ջատագով

ՀՍՌ կուսակցության նախորդ պատգամավորական ժողովից անցել էր բավական ժամանակ: Տեղի ունեցող սրընթաց զարգացումներն ըմբռնելու, ամենօրյա կուտակվող հարցերին պատասխանելու, սպասվող արհավիրքին դիմակայելու, ինչպես նաև հայ իրականության մեջ գործող մյուս քաղաքական ուժերի հանդեպ վերաբերմունքը ճշտելու նպատակով խնդիր դրվեց հրավիրել կուսակցության նոր համագումար: Կենտրոնական վարչությունը ծավալեց բեղուն գոր-

203. Նույն տեղում, էջ 129:
204. Նույն տեղում, էջ 132:
205. Նույն տեղում, էջ 134:

ծունեություն: Ի վերջո, հաղթահարելով բազում դժվարություններ, որոնք կապված էին հատկապես աշխարհի օր օրի խորացող բևեռացման հետ, հնարավոր դարձավ ընդհանուր պատգամավորական ժողովի գումարումը:

ՀՍՌԿ երկրորդ (Բ) համագումարը տեղի ունեցավ 1913 թվականի հուլիսին, Կ.Պոլսում:

Օրակարգի հարցերն էին՝

ա) Թուրքիայի ներքին վիճակը և միջազգային դրությունը:

բ) Իթթիհատական կուսակցության դիրքը արդի փուլում:

գ) Իթթիհատ-դաշնակցություն համագործակցությունը:

դ) Հայկական հարցը տվյալ փուլում:

ե) Հայկական կուսակցությունները և նրանց փոխհարաբերությունները:

զ) Ինքնապաշտպանության վիճակը և այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

Ժողովում նախագահում էր ՀՍՌԿ կենտրոնական վարչության ատենապետ Տիրան Քելեկյանը:[206]

Կենտրոնական վարչության տեղեկագրի համաձայն՝ երիտթուրքերի վեցամյա կառավարման շրջանում եվրոպական մեծ տերությունների ազդեցությունը Թուրքիայի վրա ավելի ակնառու էր դարձել: Դա վերաբերում էր հատկապես կայզերական Գերմանիային: Իսկ Բալկանյան պատերազմի հետևանքով նոր տարածքներ էին անջատվել Օսմանյան կայսրությունից: Նշվում էր, որ երիտթուրքերը հույս ունեին, թե Դաշնակցություն-Իթթիհատ համագործակցությունը վերջ կդներ հայերի բողոքներին և ի վերջո իրենց կհաջողվեր Թուրքիայի ազգային մյուս փոքրամասնությունների հետ միասին հայերին ևս ձուլել օսմանցիության մեջ և դրանով վերջ դնել օտար պետությունների միջամտությանը Թուրքիայի ներքին գործերին: Բայց իթթիհատականները հուսախաբ էին եղել:[207]

---

206. Տ.Քելեկյանը Կ.Պոլսում թուրքերեն լեզվով հրատարակվող «Սաբահ» (առավոտ) թերթի խմբագրապետն էր: Քելեկյանը դասավանդել էր օսմանյան համալսարանում, որտեղ նրան աշակերտել էին իթթիհատական շատ ղեկավարներ:

207. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 229:

ՀՍՌ կուսակցությունը չհամագործակցեց ո՛չ իթթիհատականների և ո՛չ իթիլաֆականների հետ: Համաձայն կուսակցության որդեգրած սկզբունքների՝ հայերը մնում էին «օսմանացի», այսինքն՝ հայ ժողովուրդը մնում էր «օսմանյան» ժողովրդի բաղկացուցիչ մասը, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան կայսրության անբաժան մասը, բայց դրա հետ մեկտեղ, մյուս ազգային փոքրամասնությունների հետ հայերը պիտի ունենան հավասար իրավունքներ, իսկ երկիրն իրապես պիտի որդեգրի ռամկավարական կարգեր:[208] Շեշտվեց, որ թեև կուսակցությունը հոռետես չէր, բայց փաստերը ցույց տվեցին, որ երիտթուրքերի նկատմամբ վերապահ դիրքորոշումը ճիշտ էր: Ադանայի եղեռնը և հաջորդ 3-4 տարիների նրանց վարած հայակուլ քաղաքականությունն ապացուցեցին այդ վերապահությունը: Հայտնի փաստ էր, որ 1912 թվականից վերաբացվել էր Հայկական հարցը և միջազգային տարբեր ատյաններում հայոց շահերը ներկայացնում էր կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս Նուբար փաշայի պատվիրակությունը: Հայկական հարցի և այն հետապնդող Պողոս Նուբար փաշայի ղեկավարած պատվիրակության գործունեության մասին զեկուցեց Ա.Ալպոյաճյանը: Մանրամասն ներկայացնելով խնդիրը՝ զեկուցողն ընդգծեց, որ թեև Ազգային պատվիրակության ծավալած գործունեությունը որոշակի հույսեր է ներշնչում, սակայն մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքական մրցակցությունը կարող է ավելի վատթարացնել վիճակը:[209] Դրանից ելնելով կոչ էր արվում բոլորին լինել առավել զգույշ ու խոհեմ:

Տ. Քելեկյանն ակնարկեց մոտալուտ պատերազմի հավանականության մասին և նշեց այն ազդակները, որոնք կարող էին առիթ տալ նոր պատերազմի:

Համագումարում լայն քննարկման առարկա դարձավ մյուս կուսակցությունների հետ փոխադարձ հարաբերությունների և համերաշխության հարցը: Կենտրոնական վարչությունը և շրջանակներից ընտրված պատգամավորները հաստատեցին, թե իրենց բոլոր փորձերը՝ ռամկավար-դաշնակցական համագործակցություն ստեղծելու ուղղությամբ, անցել են ապարդյուն, որովհետև ՀՅԴ-ն համագործակ-

208. Նույն տեղում, էջ 230:
209. Նույն տեղում, էջ 231:

ցություն ասելով պատկերացնում է անվերապահ ենթակայություն:[210] Կուսակցությունների մասին ելույթով հանդես եկավ Վ. Թեքեյանը: Նա նշեց, որ Վերակազմյալ հնչակյանների այն հատվածը, որ 1908թ. չմիացավ ՀՍԴԿ-ին, շարունակում է իր գոյությունը՝ որպես առանձին կուսակցություն: Ինչ վերաբերում է ՍԴ Հնչակյան կուսակցությանը, ապա զեկուցման մեջ նշվեց, որ այն դադարել է հայ կյանքում որևէ «էական դեր կատարելուց»: Կուսակցության «սոցիալ դեմոկրատ» անվանումը պահվում է «գոհացում տալու համար շարքերու կուսակցական պատվախնդիր զգացումին»:[211] Ընդգծվեց նաև, որ աստիճանաբար կուսակցության ղեկավարների շրջանում նկատվում է լրջախոհություն, ինքնաճանաչում ու իրատեսություն, բայց մի քանի «թափառաշրջիկ մակաբույծներ դեռ ինքզինք կը պարտադրեն և արգելք կը դառնան այդ կուսակցութեան ապաքինման»:[212]

Վերակազմյալ հնչակյանների մասին Թեքեյանի զեկուցումից պարզվեց, որ նրանց անդամագրված են հայրենասեր, լուրջ և պարկեշտ գործիչներ, բայց անցյալում նրանց կողմից թույլ տրված մի քանի սխալները դեռևս ստիպում են առժամանակ ռամկավարներից հեռու մնալ: Մասնավորապես Ամերիկայի շրջանակները դեռ թշնամանք ունեն իրար հանդեպ, այլապես Թեքեյանի բնորոշմամբ ոչ միայն համերաշխություն, այլեւ «կարելի պիտի ըլլայ միութիւն ալ ստեղծել մեր (իմա՝ ռամկավարների) և անոնց միջև»:[213]

Երկարատև քննարկումներից ու վիճաբանություններից հետո՝ համագումարն ընդունեց հետևյալ կարևոր որոշումները.

ա) Սպասել մեծ տերությունների Հայկական հարցի վերաբերյալ մոտալուտ հաշտության վեհաժողովի որոշումներին, իսկ մինչ այդ առաջնորդվել կուսակցության ծրագրի և առաջին ընդհանուր պատգամավորական ժողովի ցուցումներով ու պահանջներով:

բ) Շարունակել ընդդիմությունը ՀՅ Դաշնակցության հետ՝ Պատրիարքարանը «աշխարհականացնելու» և «քաց ու գոցի» խնդիրներում: Հայտնի է, որ Դաշնակցությունը և, մասնավորապես, կուսակ-

---

210. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 231:
211. Նույն տեղում:
212. Նույն տեղում, էջ 232:
213. Նույն տեղում, էջ 232:

ցության երիտասարդական հատվածը, փորձում էր Կ. Պոլսի Պատրիարքարանը կրոնականից ամբողջովին վերածել աշխարհական համազգային կառույցի, իսկ եկեղեցիների դռները մշտապես լայն բացել և հնարավորություն տալ հատկապես երիտասարդությանը զանազան, այդ թվում և ոչ կրոնական ժողովներ, երեկույթներ, և այլ միջոցառումներ անցկացնել այնտեղ, դրանք վերածելով վայելքի ակումբների, ինչին դեմ էին ռամկավարները:

Ընդհանուր ժողովի քննարկման առարկա դարձավ նաև կուսակցության վերաբերմունքը Եգիպտոսի Հայ բարեգործական ընդհանուր միության նկատմամբ: Պատգամավորների մեծ մասի խնդրանքով Վ.Թեքեյանը, որպես հարցին լավ գիտակ անձնավորություն, տեղեկություններ հաղորդեց ՀԲԸՄ-ի մասին՝ ասելով, որ այդ կազմակերպությունը հիմնելու միտքը հղացել են Ա.Արփիարյանն ու Վահան Քյուրքչյանը: Վերոհիշյալ անձինք ազգային-հեղափոխական ընդհանուր միություն կազմելու գաղափարի շուրջ, 1905թ. վերջերին մի քանի խորհրդակցություններ են կազմակերպում, որոնք թեև կոնկրետ արդյունքի չեն հանգեցնում, սակայն հիմք են դառնում եգիպտահայ խոշոր ուներեր Պողոս Նուբարի նախաձեռնած քննարկումների: Եվ ահա 1906-ի ապրիլին հիմնվեց «Հայ բարեգործական ընդհանուր միություն» անունով մի կազմակերպություն, որի հիմնադիրները դարձան Պողոս Նուբարը, Յաղուպ Արթին փաշան և էլի մի քանի ուներներ:[214] Նրանք խուսափում էին հեղափոխական գործունեությունից ու զանազան մարդկանց հայ հեղափոխության անվան տակ գումարներ տալուց, փոխարենը ստեղծում են «կազմակերպութիւն մը, որ բարեգործականի անուան տակ պիտի իր աջակցութիւնը տար հայ ժողովուրդին»:[215]

Նույն Եգիպտոսում հիմնված ՀՄՌ- կուսակցության հիմնադիրներն առաջին իսկ օրվանից որոշեցին «թև ու թիկունք դառնալ ՀԲԸՄ-ին, որ իբրև իրեն ուղեկից՝ եթէ ոչ քաղաքական, ապա ազգային դրոշին տակ պիտի կրնար ծառայել հայ ժողովուրդին»:[216]

Այս տեղեկատվությունից հետո համագումարը որոշեց վերահաս-

---

214. Ղազարեան Վ., Ուղեցոյց և համառօտ պատմութիւն, Երևան, 1991., էջ 59:
215. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 234:
216. Նույն տեղում, էջ 235.

տատել առաջին համագումարի որոշումը և հանձնարարեց նոր ընտրվելիք կենտրոնական վարչությանը՝ շրջաբերականով հրահանգել բոլոր շրջանային վարչություններին, աջակցել ՀԲԸՄ-ի ծավալմանն ու հզորացմանը:

Կուսակցության Էրզրումի և Վանի շրջանակների տեղեկագրերը համագումարի ուշադրությունը հրավիրեցին ժողովրդի ինքնապաշտպանության հարցի վրա, ինչպես որ եղել էր առաջին համագումարում:

Նկատի ունենալով Բալկանյան պատերազմը և նոր պատերազմի հավանականությունը, համագումարը որոշեց «մասնաւորապէս Արևելեան նահանգներում զարկ տալ ինքնապաշտպանութեան գործին»:[217] Ռամկավարները ելնում էին 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի դառը փորձից, որի ժամանակ քրդերը պատուհաս էին դարձել հայ ժողովրդի գլխին՝ իրենց կողոպուտներով, սպանություններով, որոնք պատճառ էին դառնում տասնյակ հազարավոր հայերի արտագաղթի:

Չնայած կուսակցության տեղական կազմակերպությունները որոշակի սպասելիքներ ունեին Կենտրոնական վարչությունից նյութական աջակցություն ստանալու ուղղությամբ, սակայն միջոցների սղության պատճառով, որոշվում է այդպիսի աջակցություն ցույց տալ միայն կուսակցության Վանի կազմակերպությանը:[218]

Համագումարի ավարտից հետո պատգամավորները մեկնեցին և տեղերում կազմակերպեցին կուսակցական աշխատանքներ: Մոտեցող արհավիրքի շունչը զգացվում էր ամենուրեք: Հարկավոր էր պատրաստվել: Ռամկավարների շատ համեստ միջոցները (նրանք երբեք չունեցան ՀՅԴ-ի ծավալները) ուղղորդվեցին հատկապես ինքնապաշտպանության գործի կազմակերպմանը: Մասնավորապես Վան-Վասպուրականում, որտեղ նրանք բավական ուժեղ էին, ծավալեցին ինքնապաշտպանությանը զարկ տալու եռանդուն գործունեություն: Իսկ Արևմտյան Հայաստանի մյուս մասերում ռամկավարներն առանձնապես մեծ ուժ չունեին և նշանակալի ոչինչ չարեցին:

---

217. Դարբինեան Ա., նշվ. աշխ.,էջ 235:
218. Նույն.տեղում, էջ 241:

Հետհամագումարյան շրջանում աշխարհի հայաշատ երկրներում ռամկավարները ձեռնարկեցին բացատրական աշխատանքներ. հրատարակեցին մի շարք պարբերականներ, որոնցում լուսաբանվում էին պահի լուրջությունը, Հայկական հարցի վիճակը և օրախնդիր շատ հարցերի վերաբերյալ ՀՍՌ կուսակցության տեսակետները:

Ամերիկայի ռամկավարների գործունեությունը համակողմանիորեն լուսաբանվում էր ՀՍՌԿ Ամերիկայի շրջանի պաշտոնական օրգան «Ազգ» թերթում: Շրջանակի տարբեր ակումբներում տեղի էին ունենում ակտիվ քննարկումներ գրական-քաղաքական ու ազգային հարցերի շուրջ, արևմտահայերին օգնելու համար կազմակերպվում էին հանգանակություններ: Ռամկավարները ստեղծել էին նաև «Անահիտ» անունով թատերախումբ, որը հաճախ բարեգործական ներկայացումներ էր բեմադրում:[219] «Ազգն» ընդարձակ տեղեկություններ էր հաղորդում Արևմտյան Հայաստանի գավառների դրության, արևմտահայության քաղաքական, տնտեսական, կրթական ու մշակութային վիճակի մասին: Թերթի «Միջազգային» բաժնում առաջնահերթ տեղ էին գրավում հայկական բարենորոգումների խնդրի լուսաբանումը, Օսմանյան ազգային ժողովի գործունեությունը և այլն:

Վերլուծելով հայերի վիճակը Թուրքիայում, «Ազգի» հոդվածագիրը ցույց էր տալիս, որ երիտթուրքերի տնտեսական քաղաքականությունը հայերի նկատմամբ նպատակամղված էր ծանր ու բազմաթիվ հարկերի ու տուրքերի միջոցով հայ տարրին ստիպել արտագաղթել Թուրքիայից, այսինքն՝ կիրառվող հետևողական տնտեսական քաղաքականության հետևանքով «բնիկ հայ ժողովուրդը պետք է լքեր իր պատմական երկիրը»:[220]

«Դարձեալ զինվորագրութիւն» հոդվածը շոշափում էր դասալքության խնդիրը: Ընդգծվում էր, որ թուրքական բանակից հայ զինվորների դասալքության պատճառը հայերի նկատմամբ կիրառվող ազգային-կրոնական խտրականությունն է՝ «իսլամի և քրիստոնեի չարաբաստիկ խնդիրը, որ կտանի մինչև զորանոցները», և թուրքերի կիրառած խստություններն արտասահմանից Թուրքիա վերադարձող հայերի նկատմամբ: Վերլուծելով թուրքերի գործադրած բռնություն-

219. «Ազգ», Բոստոն, 1914, փետրվարի 25:
220. Նույն տեղում, փետրվարի 11:

ները հայ զինվորների և զինակոչային տարիքի տղամարդկանց նկատմամբ. հոդվածագիրը գտնում է, որ երիտթուրքերը դիտավորյալ են այդպիսի միջոցների դիմում, որպեսզի ըստ բարենորոգումների ծրագրի՝ երբ եվրոպական պաշտոնյաների հսկողությամբ հայաբնակ նահանգներում մարդահամար անցկացվի, «ապա արդիւնքին մէջ որ չափ կարելի է, հայերը պակաս թիւ մը ներկայացնեն»: Հոդվածագիրը հանգում էր այն եզրակացության, որ իթթիհատականները չեն կարող հաշտվել «հայ գաղութներից դէպի երկիր վերադարձի իրական շարժման հետ... և թերևս պիտի փորձեն արգելքներ յարուցանել: Իրենց քաղաքականութիւնը միշտ պիտի ձգտի քաջալերել արտագաղթը և այս տեսակէտով զինուորագրութիւնն իրենց ձեռքը յարմարագոյն միջոց ու ազդակ մըն է»:[221]

Ամերիկայի ռամկավարները շարժում էին սկսել, որի նպատակն Արևմտյան Հայաստանից հայության արտագաղթի կասեցումն էր: Նրանք մի կողմից կոչ էին անում չլքել երկիրը, որովհետև արտագաղթը մեծ չափերի էր հասել, մյուս կողմից արտասահմանում անգործ ու անտուն մնացած հայ երիտասարդներին կոչ էին անում հետ վերադառնալ:[222]

Անդրադառնալով Օսմանյան սահմանադրությանը և խորհրդարանի ընտրություններին, «Ազգը» գրում էր, որ սահմանադրությունը ոչ միայն Օսմանյան պետության կազմում գտնվող ժողովուրդներին, այլեւ նույնիսկ թուրք աշխատավոր ժողովրդին ոչ մի նոր բան չի բերել. «Սահմանադրական հորջորջված ռեժիմը հին, փտուկ ապականված դրութիւնն է, որ տարբեր անունի և բառերու տակ կշարունակվի»:[223] «Ազգի» հոդվածագիրը գտնում էր, որ ստեղծված դրությունը չի փոխվի, եթե ընտրությունների ժամանակ նույնիսկ 10-20 հայ պատգամավորներ ընտրվեն: Կարո՞ղ են արդյոք նրանք բարելավել գավառահայության վիճակը. կարո՞ղ են դադարեցնել պաշտոնյաների կամայականությունները, ավատատերերի ու ավազակների հարստահարությունները, կարո՞ղ են լուծել հողային խնդիրը և պաշտպանել հայ կնոջ պատիվը. սրանք հարցեր էին, որ բարձրացնում էր հոդ-

221. Նույն տեղում, մայիսի 13:
222. Նույն տեղում, հուլիսի 1:
223. Նույն տեղում, հունվարի 1:

վածագիրը, ինքն էլ տալիս պատասխանը. «Չենք կարծեր, որ գտնվի տարրական ողջամտութեան տէր մէկը, որ այս բոլոր հարցումներուն ժխտականէն տարբեր պատասխան մը տալ մտքէն անցնէ... ընդհակառակը մեպուսարանի (խորհրդարանի) ընտրութիւնն հայկական բարենորոգումներու առջև նոր խութ ու խոչընդոտ մը ստեղծելէ տարբեր նպատակ չունի»:[224]

Ընդհանրապես ռամկավարները թերահավատությամբ էին մոտենում Թուրքիայի բարեփոխումներին: Ինչ վերաբերում է հայկական վիլայեթներում բարենորոգումների խնդրին, ապա ռամկավարներն այդ հարցի շուրջ միասնական տեսակետ չունեին: Ռամկավար գործիչների մի մասն այն համարում էր առաջադիմական, մյուսը՝ հետադիմական: Օրինակ՝ Լևոն Սկրտչյանը (նախկինում վերակազմյալ), որ հաճախ էր հանդես գալիս «Ազգում» իր վերլուծական (խմբագրական) հոդվածներով, բարձր էր գնահատում բարենորոգումների դերը: Ըստ նրա՝ եթե նույնիսկ այդ միջոցառումները լինեն ոչ արմատական, ապա միևնույն է, դրանք դեպի առաջադիմության տանող քայլեր էին և, հավասարապես ծառայելու էին ինչպես հայ, այնպես էլ կայսրության թուրք և քուրդ բնակչության շահերին:[225]

«Ազգի» մեկ այլ համարում կարդում ենք, որ անկախ բարենորոգումների իրագործումից, հայ ժողովրդի ապահովությունը կախված է իրենից: Այստեղ վստահություն չի տածվում նույնիսկ բարենորոգումների անաչառ ու ամբողջական գործադրման դեպքում հայերի կյանքի և գույքի ապահովության համար:[226] Իսկ քաղաքական տվյալ իրադրության մեջ «Ազգի» խմբագրականում արվում է այն հետևությունը, որ հայ ժողովրդի ազգային գոյությունը ոչ միայն ապահովված չէ, այլ նրա գոյության պայքարը նոր պիտի սկսվի «մինչև հիմա եղածէն աւելի բուռն կերպով»:[227] «Մեքսիկական պատերազմի դասերը» հոդվածում առաջ է քաշվում այն միտքը, որ ոչ թե պետք է անշարժ մնալով հույսը կապել այս կամ այն իշխանությունների կամ պետությունների հետ, այլ յուրաքանչյուր հայ, իբրև անհատ, ինքը

224. Նույն տեղում:
225. Նույն տեղում, ապրիլի 22:
226. Նույն տեղում, հունիսի 3:
227. Նույն տեղում:

պետք է նախ բարեփոխվի և դրանից հետո ողջ ազգը իրապես փրկված կլինի: Հոդվածն առաջ է քաշում ուժեղ անհատականություններ կերտելու հարցը, որպեսզի «ներքին ույժ ունենանք և զորավոր ազգ մը ըլլանք»:[228] «Կուսակցութիւններն և կուսակցականները» հոդվածը խիստ քննադատության է ենթարկում Կ.Պոլսի ու արտասահմանի ունևոր և ապահով խավերին. որոնք ավելորդ և վնասակար են համարում հայ քաղաքական կազմակերպությունների գոյությունն ու գործունեությունը և «սոսկ դիւանագիտական ձեռնարկներու և խաղաղ զարգացումի կը հաւատան»:[229] «Խաղաղ զարգացում.. բայց ո՞ր և ինչպէ՞ս»,- հարցնում է հոդվածագիրը: «Հացէդ կտրելով եկեղեցի, դպրոց շինէ, որպէսզի հրոսակ մը գայ գիշեր մը. կրակի տայ, քարուքանդ ընէ և անցնի երթայ: Տարիներով տքնաջան սպասումներով և տաժանքով մարդ կրթէ ու հասցուր, որ օրը մը, աւազակի մը գնդակը կամ դաշոյնը անկենդան գետին փռեն զայն: Մեքենաներ բեր ու զետեղէ, որպէսզի օրին մէկը տգէտ խուժան մը գայ և ջարդ ու փշուր ընէ զանոնք»:[230] Հոդվածում ընդգծվում է այն հանգամանքը, որ հայերի վիճակը ոչ թէ արդյունք է հայկական կուսակցությունների գոյությանն ու գործունեությանը, այլ ծնունդ է «Համիտի հայահալած քաղաքականութեան. ջարդերու. հողային խնդրոյն. արտագաղթի և մինչև այսօր իթթիհատի հետապնդած հակահայ ուղղութեան: Բուն գաղտնիքը հոս է ահա և ոչ թէ հայոց բողոքի ցոյցերուն կամ յեղափոխական գործունէութեան մէջ»:[231] Այստեղից էլ հետևությունը՝ «հայ յեղափոխութիւնը հայահալած քաղաքականութեան ծնունդն է»: Հոդվածագիրն ընդունում է, որ հայկական շարժումները պետք եղած շրջահայեցողությամբ չղեկավարվեցին և հեղափոխության անունով «տեղ-տեղ ոճիրներ գործուեցան». բայց այդ սխալները երբեք չպիտի պատճառ դառնան հայ հասարակության այս կամ այն խավի համար դատապարտելու «Գործը»՝ հայ ազատագրական պայքարը:[232] «Ազգի» 1914թ. հունվարի 7-ի խմբագրականում նշված է, որ քանի դեռ հայ ժողովուրդն իր սեփական ճակատագրի ղեկը չի վերցրել իր ձեռ-

228. Նույն տեղում, ապրիլի 29:
229. Նույն տեղում, մայիսի 6:
230. Նույն տեղում, մայիսի 13:
231. Նույն տեղում, մայիսի 3:
232. Նույն տեղում:

քը, ամբողջ ուժը չի կենտրոնացրել դրա շուրջը, «Հայկական հարցը ամէն ատեն տառապանքի, արիւնի և աւերի գնով երևան պիտի գայ պետութեանց մասնաւոր շահերուն ծառայելու համար: Պէտք է մեկընդմիշտ իմանանք,- ասվում է խմբագրականում,- որ մարդկային ու ազգային բոլոր իրավունքները հիմնված են շահի վրայ ու զանոնք ձեռք ձգելու համար սեփական ուժն է միակ դարմանն ու միջոցը, ուժ խելքի, ուժ՝ սրտի, ուժ՝ շրջահայեցողութեան, ուժ՝ բազուկի ու զէնքի»:[233] Ընդգծենք նաև, որ հոդվածում չի անտեսվում արտաքին օգնության կամ դիվանագիտական աջակցության դերը:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին արևմտահայ իրականության մեջ շարժում ծավալվեց բոլոր ուժերի համատեղման համար: Մինչ այդ էլ նմանատիպ դրսևորումներ մշտապես կային: Սակայն 1908-ի սահմանադրության հռչակած ազատությունները մեծ հարված հասցրին արևմտահայ ազգային ուժերի համախմբման փորձերին: Բայց քիչ անց, երբ Իթթիհատը ցույց տվեց իր հրեշավոր կերպարանքը՝ ոչ թուրք ժողովուրդներին ձուլելու, նրանց սոցիալական հարստահարումներն ու կեղեքումները շարունակելու և ավելի խորացնելու վարքագիծը, արևմտահայ ազգային ուժերի համախմբման գաղափարը կրկին արդիական դարձավ: Նրա կենսագործման օգտին արտահայտվեցին հայ քաղաքական բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև հայ բարձրաստիճան հոգևորականները, որոնք ևս մտահոգ էին կուսակցությունների անհամաձայնության համար, որտեղ յուրաքանչյուր ուժ կամենում էր այդ համախմբումը կատարել իր ղեկավարությամբ:

Կ.Պոլսի հայոց պատրիարքը դատապարտում է միջկուսակցական պայքարը, ցանկանում է վերացնել այն, «կ'ուզէր տեսնել ամէն կուսակցութիւն և կազմակերպութիւն իր սկզբունքին և ուղղութեան բարձրութեան վրայ և համախմբուած ազգին շահին շուրջը»:[234]

Հայ ժողովրդի դաժան ճակատագրի գործում որոշակի դեր խաղացած ներքին երկպառակությունները դատապարտելով հանդերձ, «Մշակ» լրագիրը դրվատեց համախմբման գաղափարը. «Ողջունում

233. Նույն տեղում, հունվարի 7:
234. «Արարատ» ամսագիր, 1914, հունիս, էջ 522:

ենք ազգային համերաշխութեան մեծ գաղափարը»:[235] Իսկ հայ իրականության մեջ զգալի ազդեցություն ունեցող «Արևելքը», անհրաժեշտություն համարելով կուսակցությունների գոյությունը հայ իրականության համար, գտնում էր, որ համախմբման գաղափարը ոչ միայն վերջ կդնի «միջկուսակցական անօգուտ, վրդովեցուցիչ և ջլատիչ պայքարներուն»,[236] այլև կնպաստի այդ կուսակցությունների համագործակցությանը, ուժ կտա «անոնց յարատևմանը և հզօրացմանը»:[237]

Ազգային ուժերի և հայկական կուսակցությունների համախմբման գաղափարը ոգևորեց նաև արևմտահայ նշանավոր գրող ու հրապարակախոս Գր. Զոհրապին: Նա փորձեց ստեղծել հասարակական տարբեր խավերի և կուսակցությունների գործիչներից, իր խոսքերով ասած՝ բլոկ, անխախտ թողնելով յուրաքանչյուրի համոզմունքներն ու սկզբունքները: Բայց նրա ջանքերն, իր իսկ խոստովանությամբ, «որևէ արդիւնքի չյանգեցան»:[238]

Հայկական կուսակցությունները ևս հանդես եկան ազգային ուժերի համախմբման կոչերով: «Բիւզանդիոնը» գրում էր, որ դաշնակցությունը «յորդոր կկ կարդայ հայ քաղաքական կուսակցութիւններուն ձեռք ձեռքի տալու և հանրութեան կենսական շահերուն ի պաշտպանութիւն միաբանութեամբ գործելու, որուն նախաձեռնութիւնն ինքն իր վրայ կ'առնէ...»:[239]

Վերակազմյալ հնչակյանների վարչությունն էլ մի փոքր ուշ դիմեց դաշնակցականներին, նշելով. «Մենք ինչո՞ւ հակառակութիւններ ունենանք իրարու հետ: Չէ՞ որ միևնոյն ազգին զաւակներն ենք, որ իրարու քով կ'ապրինք մայր հայրենիքին մէջ: Մենք, որ իբրև դաշնակցական կամ հնչակեան ու ռամկավար, միասին ապրեցանք տառապած հայրենիքին մէջ, միասին տանջուեցանք, բանտարկուեցանք, ինչպէս նաև միասին կռուեցանք յաճախ, ինչո՞ւ այժմ ալ միասին չգործենք»:[240]

---

235. «Մշակ», 1913, նոյեմբերի 14, N 254:
236. «Արևելք»,1914, դեկտեմբերի 31, N 7220:
237. Նույն տեղում:
238. Ատենագրութիւնք..., 1910, էջ 228:
239. «Բիւզանդիոն», 1909, ապրիլի 9:
240. «Ձայն հայրենեաց», 1909, N 23:

Կուսակցությունների և ազգային ուժերի համախմբման կոչերով բազմիցս հանդես եկավ նաև ՀՍՌԿ-ն: Տարբեր մակարդակների ամբիոններից՝ կենտրոնական վարչություն, տեղական կազմակերպություններ, որոնցից ամենաակտիվը Վանինն էր, առանձին գործիչներ, պարբերականներ, հաճախակի էին հնչեցվում առաջարկներ համախմբվելու, միասնական գործելու անհրաժեշտության մասին: Իսկ 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքումից հետո, «Ազգը» (ՀՍՌԿ պաշտոնաթերթն ԱՄՆ-ում) ավելի հրատապ էր համարում ինքնապաշտպանության և ազգային կուսակցությունների հետ համերաշխության հարցերը, որովհետև լուրջ կասկածներ ուներ, որ ինչպես 1894-1896թթ., այնպես էլ 1914-ի համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ կարող է հանգեցնել «միևնոյն արիւնոտ արդիւնքին»:[241]

Կուսակցությունների կոչերն ու բանակցություններն ավարտվեցին նրանով, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Կ.Պոլսում ՀՅԴ Արևմտյան բյուրոն, Սոց.-դեմ. հնչակյան կուսակցության կենտրոնական վարչական մարմինը, Սահմանադրական ռամկավար կենտրոնական ակումբը և Վերակազմյալ հնչակյանների կենտրոնական վարչությունը հայտարարեցին, որ այսուհետև համերաշխ կգործեն ազգային հարցերում, համատեղ հանդես կգան Օսմանյան պառլամենտի պատգամավորների ընտրության ժամանակ, և, որ ամենակարևորն է, միասնաբար կգործեն հայկական նահանգների բարենորոգումների իրականացման համար ծավալված պայքարում: «Միջկուսակցական այս համերաշխութեան կէտ նպատակն է,- ասվում էր նրանց հայտարարության մեջ,- բոլոր ուժերն ի սպաս դնել հայկական բարենորոգումներուն...»:[242] Միաժամանակ նշվում էր, որ պետք է վերջացնել տարիներ շարունակ ձգձգվող, ազգային ուժերը պառակտող սին ու վնասակար վեճերը:

1914թ. հունվարի 21-ին «Ազգում» հրապարակվում է հայ կուսակցությունների կենտրոնական վարչությունների միջև կայացած համերաշխության մասին հայտարարությունը: Այստեղ ասված է՝ համերաշխության միակ նպատակը կուսակցությունների

241. «Ազգ», 1914, հունվարի 21:
242. «Դրօշակ», 1913, N 112, էջ 188-189:

միջև վեճերի ու ընդհարումների վերացումն է և իրենց բոլոր ուժերը Հայկական հարցի համար ծառայեցնելը:[243] ՀՍՌԿ-ն ողջունում է Համերաշխության հայտարարագիրը, շեշտելով, որ այն «անվերապահօրէն ոյժ պիտի տայ անոր ոգին ծաւալելու հայ ժողովուրդին մէջ»:[244] Պատերազմի նախօրյակին հայ ազգային կուսակցությունների միջև ծավալված համագործակցության շարժումը գնալով խորանում ու նոր թափ է առնում: 1914թ. նոյեմբերի 12-ին ՀՅԴ, ՍԴ հնչակյան, Վերակազմյալ հնչակյան և ՀՍՌ կուսակցությունների Ամերիկայի մասնաճյուղերը Մուշեղ Սերոբյանի տանը գումարում են համատեղ նիստ ու կայացնում հետևյալ որոշումները.

- *«Աջակցիլ հայ ազատագրութեան համար ներկայ պատերազմին առթիւ ըլլալիք համազգային ջանքերուն»:*
- *«Օգնել այժմ իսկ երկրին մէջ կռուող խումբերուն»:*
- *«Ջինեալ շարժում առաջ բերել, երբ կարելի ըլլայ դաշնակից պետութեանց հաւանութիւնը և օժանդակութիւնը ստանալ»:*
- *«Դիւանագիտական հանդիպումներ կատարել»:*[245]

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռամկավարները հանդես են գալիս միասնաբար գործելու, արհավիրքին դիմակայելու, միասնական ճակատ ստեղծելու օգտին: Միևնույն ժամանակ, որպես «երկրացիներ», նրանք այնքան էլ մեծ վստահություն չէին տածում բարեՆորոգումների նկատմամբ, գտնելով, որ մոտեցող ահեղ փորձություններին դիմագրավելու համար[246] առաջին հերթին պետք է առաջ տարվի ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման գործը: 1914թ. հունիսի 24-ի համարում ՀՍՌԿ խոսափող «Ազգը» գրում է. «Մեզի համար բարեՆորոգումները, ընդհանուր քննիչներու և Բարձր Դռան միջև կատարուած բանակցութիւնները քաշկոտելէն շատ աւելի կարևոր է մտահոգուիլ ու պատրաստել այն միջոցները, որոնցով մեր գոյութեան առաջիկայ պայքարին մեջ պիտի դիմագրաւենք ամէն վտանգ ու պատահականու-

243. «Ազգ», 1914, հունվարի 21:
244. Նույն տեղում:
245. «Ազգ», 1914, նոյեմբերի 12:
246. Գանգրունի Հրանտ, Հայ հեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դեմ (1890-1910), Պէյրութ, 1978, էջ 184:

թիւն»:[247] Հետագա դեպքերը հաստատեցին, որ ռամկավարները ճիշտ էին ընկալում իրավիճակը և կանխատեսում արհավիրքը:

Ավելացնենք, որ, չնայած այս ամենին, Առաջին աշխարհամարտին նախորդող տարիներին, ընդհանուր առմամբ, արևմտահայ ազգային ուժերն ու հատկապես կուսակցություններն իրականում այնքան էլ համերաշխ ու միասնական չէին: Մի դիպվածը, մի առիթն էլ բավական էր, որ նրանց միջև հակասությունը վերսկսվեր: Այսպես, թեև նրանց միջև հաճախակի բանակցություններ ու հանդիպումներ էին տեղի ունենում, ստորագրվում էին միջկուսակցական համաձայնագրեր, սակայն դեռ 1914թ. սկզբներից, երբ հրապարակ եկավ օսմանյան պառլամենտի պատգամավորների ընտրության հարցը, հայ կուսակցությունները վերսկսեցին պայքարը միմյանց դեմ: Յուրաքանչյուրը ձգտում էր առաջադրել ու անցկացնել որքան հնարավոր է շատ ներկայացուցիչներ: Իրենց նպատակին հասնելու համար դաշնակցականները դիմեցին նույնիսկ բռնարարքների, իսկ ՀՍՌԿ-ն և հնչակյանները 1914թ. ապրիլին նրանց վերջնագիր ներկայացրին, պահանջելով դադարեցնել այդ ամենը, սպառնալով, որ հակառակ դեպքում 24 ժամ հետո կխզեն բարեկամական հարաբերությունները և չեղյալ կհայտարարեն համագործակցության համաձայնագրերը:[248] Բայց նրանց վերջնագիրը որևէ նշանակություն չունեցավ:

Հայկական կուսակցությունների համախմբման հարցը նոր հնչեղություն ստացավ հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու խնդիրը: Բոլոր կուսակցությունները, այդ թվում և ՀՍՌԿ-ն, տվյալ պահին ավելի կարևոր ու անհրաժեշտ էին համարում համախմբումը, գտնելով, որ այն կնպաստի գոնե ազգի գոյության պաշտպանությանը:

Հայկական կուսակցությունների համախմբումը բարդ ու դժվարին գործ էր: Իհարկե, կային այդ համախմբման համար իրական պայմաններ: Հայ հասարակության բոլոր խավերը և դրանց ներկայացնող կուսակցությունները շահագրգռված էին ժողովրդի ապահովության ու հայրենիքի փրկության հարցերով: Նրանք բոլորն անհաշտ

247. «Ազգ», 1914, հունիսի 24:
248. «Մշակ», 1914, մայիսի 3, N 94:

պայքարում էին թուրքական վայրագ տիրապետության դեմ: Կուսակցությունների ծրագրերն ու գործելակերպերն ունեին մի շարք նույնություններ և ընդհանրություններ:

Բայց, միևնույն ժամանակ, արևմտահայ ազգային ուժերի ու կուսակցությունների համախմբման ճանապարհին կային նաև լուրջ խոչընդոտներ: Նախ և առաջ Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունների կողմից միտումնավոր կերպով նոր վարչական միավորներ ստեղծելու (արվում էր ամեն ինչ, որ հերթական «բարեփոխման» արդյունքում որևէ վարչական միավորի մեջ հայ տարրը մեծամասնություն չկազմեր) միջոցով և վարած հայահալած քաղաքականության հետևանքով «շատ քիչ վայրերում էին հայերը մեծամասնություն կազմում»:[249] Եվ այդ մահմեդական ծովում համախմբմանը, մեր կարծիքով, խանգարում էին թե՛ հայության ցրվածությունն աշխարհով մեկ, թե՛ նրա դասակարգային շերտավորումը, թե՛ տարբեր խավերի իրարամերժ շահերն ու ձգտումները և թե՛ կուսակցությունների ծրագրերի, գործելաեղանակների տարբերությունները: Տարանջատող ու բաժանող գործոններն ավելի հզոր էին, քան միավորողները: Այդ պատճառով էլ հասարակական տարբեր շրջանների ու կուսակցությունների ձգտումներն ազգային ուժերի համախմբման ուղղությամբ ապարդյուն անցան: Իսկ համախմբումը շատ կարևոր էր հայ ժողովրդի համար. այն կնպաստեր արևմտահայ տնտեսական ու մշակութային առաջընթացին, նրա ազատագրական պայքարին կտար կազմակերպված բնույթ, կմեղմեր կուսակցությունների ներհակությունները, կմոբիլիզացներ ժողովրդի կարողությունները, կամրապնդեր նրա դիմադրական ճակատը, որի հետևանքով արհավիրքի օրերին համեմատաբար քիչ կլիներ զոհերի թիվը: Միևնույն ժամանակ, ընդգծենք մի կարևոր հանգամանք ևս. թուրքերի կողմից կազմակերպված տեղահանությունները, համատարած կոտորածները և հատկապես եղեռնը, անակնկալ էին գրեթե բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու գործիչների համար, որոնք մոլորվել էին ու հայտնվել անելանելի իրավիճակում:

---

249. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000., էջ 310:

3. ՀՍՌԿ դիրքորոշումը Առաջին աշխարհամարտի, Հայոց եղեռնի և կամավորական շարժման նկատմամբ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիները փոթորկալի եղան հայ հասարակական-քաղաքական կյանքում: Տասնամյակներ շարունակ հայ տեսաբանների ու քաղաքական կուսակցությունների մեծ մասը, արևմտահայության բախտը պատերազմի ավարտից հետո մեծ տերությունների՝ Թուրքիայի դեմ տարած հաղթանակի հետ կապելով, գտնում էր, որ հասել է բաղձալի ժամը, երբ պատմությունն իր արդար խոսքը պիտի ասի և վերջ դնի օսմանյան վայրագ իշխանությանը, դրանով իսկ հայերին ազատագրելով նրա դժնդակ տիրապետությունից: Բայց ստեղծված բարդ ու խճողված իրավիճակը նրանց հարկադրում էր ընտրել տարբեր գործելակերպ ու մարտավարություն:

Արևմտահայ քաղաքական ուժերը, որոնք գործում էին թուրքական բռնապետության մամլիչի պայմաններում, հարկադրված եղան կանգնել նրա կողմը, քարոզելով հայ բնակչությանը պաշտպանել օսմանյան հայրենիքը: 1914թ. հոկտեմբերի 20-ին Կ.Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը հրավիրեց խորհրդակցություն՝ Վահրամ արք. Մանկունու, Պետրոս Հալաճյանի, Գրիգոր Զոհրապի, Բյուզանդ Քեչյանի, Համբարձում Պոյաճյանի, Վարդգես Սերենկյուլյանի, Տիրան Քելեկյանի, Հարություն Շահրիկյանի, Միհրան Տեր-Մովսիսյանի և այլ գործիչների մասնակցությամբ: Այդ տարբեր հոսանքների ու կուսակցությունների (ՀՍՌԿ-ն ներկայացնում էր Տիրան Քելեկյանը) ներկայացուցիչներն արձանագրեցին ազգի ծանր վիճակը և հանձնարարեցին պատրիարքարանին ու ազգային վարչությանը բարվոք հարաբերություններ մշակել իթթիհատական կառավարության հետ, «շրջաբերական հրահանգ մը դրկել անմիջապէս բոլոր գաւառները և հրաւիրել ժողովուրդը կատարել իր պարտականութիւնը»:[250]

Իրականում արևմտահայ քաղաքական շրջանները միակարծիք չէին: Այսպես, Կ. Պոլսի հայոց պատրիարքը շտապեց այցելել մի

250. Զաւէն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վաւերագրեր և վկայութիւններ, Գահիրէ, 1947., էջ 40-50:

շարք օսմանյան նախարարների (հոկտեմբերի 25-ին ներքին գործերի և արդարադատության),[251] պատվիրակություն ուղարկել Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանին[252] և նրանց հայտնել, թե հայ ազգը նվիրված է օսմանյան հայրենիքին ու նրանցից ժողովրդին չվնասելու կեղծ հավաստիացումներ «պոկել»: «Օսմանյան հայրենիքին» հնազանդության ու նրա պաշտպանության քարոզներով հանդես եկավ արևմտահայ ազատականների գաղափարախոս «Բիւզանդիոնը», գրելով. «պատերազմ է և ամէն ոք ուրիշ բան չի կրնար մտածել, բայց եթէ փութալ պաշտպանել հայրենի երկիրը»:[253] Իսկ նշանավոր գրող հրապարակախոս Գր.Զոհրապը կոչ արեց չեզոք դիրք գրավել պատերազմող կողմերի նկատմամբ և մտածել սեփական անվտանգության մասին:[254]

ՀՅ Դաշնակցությունը 1914թ. հուլիսին Էրզրումում հրավիրեց ութերորդ ընդհանուր ժողովը և որոշում ընդունեց՝ ռուս-թուրքական պատերազմի դեպքում պահպանել չեզոքություն, որին ի դեպ հետամուտ եղավ մինչև ցեղասպանության սանձազերծումը:[255] Հնչակյանները, որոնց նկատմամբ իթթիհատականները ձեռնարկեցին հալածանքներ ու բռնություններ, որովհետև նրանք համագործակցել էին իթիլաֆականների հետ, 1915թ. մայիսի 14-ին, երբ 20 հնչակյանների նկատմամբ մահվան դատավճիռ պիտի ընթերցվեր, հայ ազատագրական շարժման հերոս Փարամազի (Մաթևոս Սարգսյան) շուրթերով հնչեցրին իրենց կարծիքը, որ թուրք տիրակալները հետամուտ եղան «մեր բնաջնջումին, մենք՝ հայերս, անջատողական չենք այս երկրի հանդէպ, ընդհակառակը ինքն է, որ կ'անջատուի մեզմէ, չի կրնալով հաշտուիլ մեզ ոգևորող գաղափարներու հետ»:[256]

---

251. Նույն տեղում, էջ 75:
252. Նույն տեղում, էջ 84:
253. «Բիւզանդիոն», 1914, հոկտեմբերի 25, N 5489:
254. Ալպոյաճեան Ա., Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ (իր կեանքը և գործը), էջ 245-246:
255. Եթե դաշնակցության Արևելյան բյուրոն հետագայում խախտեց կուսակցության 8-րդ համաժողովի որոշումը, ապա Արևմտյան բյուրոն պահպանեց մինչև կոտորածների սկիզբը:
256. Յիսունամեակ..., էջ 300, տես նաև Սիրվարդ, Փարամազ, Փրովիտենս, 1954., էջ 106:

Հստակ գիտակցելով, որ սկսված Առաջին համաշխարհային պատերազմը թուրքերի համար կարող է հարմար առիթ դառնալ հաշվեհարդար տեսնելու հայերի հետ, ՀՍՌ կուսակցությունը ռուս-թուրքական պատերազմի սկզբում կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և կոչ արեց հայերին կատարել իրենց զինվորական պարտքը:[257] Զարգացնելով այդ միտքը, 1914թ. նոյեմբերի 1-ին իր «Փոթորիկ» առաջնորդողում ՀՍՌԿ պաշտոնաթերթ «Վան-Տոսպը» գրում է. «Ամէն օսմանցի միակ նշանաբան մը պէտք է ունենայ - կատարել պարտականութիւնը խղճի մտօք: Մենք հայերս ցարդ ցոյց տուած ենք հաւատարմութիւն և ուղղամտութիւն - այդ կը պահանջուի մեզմէ այժմ ալ: Ոչ ռազմիկներէն ալ կը սպասուի ամենակատարեալ լրջախոհութիւն ու հաստատուն հաւատք դէպի վարիչ շրջանակներու անկեղծութիւնն ու կարողութիւնը»:[258]

Սթափ գնահատելով ստեղծված կացությունը և այլ ելք չտեսնելով, ռամկավարները գտնում էին, որ թուրքերին նոր ջարդի առիթներ չտալու և ժամանակ շահելու համար արևմտահայերը պետք է զերծ մնան «ներքին վրդովեցուցիչ քաղաքականութենէ»:[259]

Պատերազմի սկզբում ռամկավարները դեմ էին նաև կամավորական շարժմանը: Նրանց տեսաբաններից Արտակ Դարբինյանը Վանում Արամ Մանուկյանի հետ հանդիպումների ժամանակ վրդովմունք է հայտնում և ՀՅԴ-ի սխալը համարում կամավորական ջոկատների կազմությունը: Դարբինյանը դա հետևյալ կերպ է հիմնավորում. «Կամաւորական շարժումը էլ աւելի է բորբոքելու թուրքերի մինչև այժմ զսպուած բարբարոսական կիրքը և այս անգամ թուրքահայութիւնը անխնայօրէն պէտք է ջարդվի ամէն տեղ, մանաւանդ, որ ինքնապաշտպանութեան միջոցներէն լրիւ զուրկ է»:[260] Դարբինյանի վկայությամբ՝ իր համար անսպասելի այդ կարծիքն ունեին նաև Արամը և Վռամյանը: Նրա այն հարցին, թե ինչո՞ւ դաշնակցությունը դիմեց այդ քայլին, Արամը պատասխանել է, որ իրենք անտեղյակ են եղել, իսկ որոշումը տրված է եղել Թիֆլիսում ՀՅԴ բյուրոյի կողմից:

---

257. «Վան-Տոսպ», 1914, N 40-89, էջ 435:
258. Նույն տեղում, էջ 435-436:
259. Նույն տեղում, N 43-92, էջ 460:
260. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 254:

Ընդհանուր առմամբ քննադատելով դաշնակցությանը և հատկապես, նրա ղեկավար գործիչներին, Դարբինյանն աշխատում է լինել անկողմնակալ: Օրինակ՝ Արամին մի շարք առիթներով նա քննադատել է, բայց ընդհանրապես նրա մասին դրական կարծիքի է: Ի դեմս Արամի, նա տեսնում է դաշնակցության մի գործչի, որը 10 տարի ապրել է Թուրքիայում, կարողացել ուսումնասիրել հայերի դրությունն այնտեղ, մասնավորապես Վանում, ճիշտ ըմբռնել տեղական պայմանները, գերազանցապես անսխալ գործունեություն է ծավալել և կայացրել հիմնականում պատճառաբանված որոշումներ:[261]

1915թ. գարնանը, ՀՍՌ կուսակցության ղեկավարությունը տեղափոխվեց Անդրկովկաս ու հաստատվեց Թիֆլիսում: Բախվելով երիտթուրքերի կողմից իրագործվող հայկական ցեղասպանության փաստին և անմեղ ու անպաշտպան արևմտահայության բնաջնջմանը, ՀՍՌԿ-ն ևս փոխեց իր տեսակետը կամավորական շարժման նկատմամբ: Պատերազմի սկզբում հիմնականում Վան-Վասպուրականում գործող ՀՍՌԿ-ն, որ կանգնած էր օրինապահ քաղաքացու դիրքերում, մերժում էր հակահթիհատական ելույթները և դատապարտում կամավորական շարժումը, կոչ արեց բոլոր միջոցներով պայքարել հթիհատական վայրագությունների դեմ, փրկել արևմտահայությանը ոչնչացումից: «Վրեժ, - գրում էր արդեն Թիֆլիսում լույս տեսնող «Վան-Տոսպը» 1915-ի հուլիսին: - Այդ է միակ բառը, որ պէտք է ոգևորէ կոտորածէն ազատ մնացող իւրաքանչիւր հայու սիրտը: Վրէժ՝ մեր մորթոտուող եղբայրներուն ու քոյրերուն, մեր աւերակներուն, մեր արիւնի մէջ խեղդուած յուրաքանչիւրին համար: Վրէժ այն վայրենի ոհմակներու հանդէպ, որ այս պահուս դիւային հրճուանքով կը լողան հոսող հայ արեան մէջ... Աչքի տեղ աչքեր և ակռային տեղ ակռաներ»:[262]

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց 1914թ. օգոստոսի 1-ին պետությունների երկու հզոր խմբավորումների՝ Անտանտայի

261. Նույն տեղում:
262. «Վան-Տոսպ», 1915, N14-106, էջ 2:

(Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և գերմանա-ավստրիական բլոկի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա) ու նրանց արբանյակների միջև: Պատերազմի բուն պատճառն աշխարհի վերաբաժանումն էր, որտեղ յուրաքանչյուր պետություն ուներ իր նպատակներն ու խնդիրները: Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակն էր Գերմանիայի օգնությամբ իրագործել պանթուրքական զավթողական ծրագրերն Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի և Միջին Ասիայի նկատմամբ: Իսկ դա նշանակում էր, որ Թուրքիան ոչ միայն պիտի իր ձևով լուծեր «Հայկական հարցը», այլև նվաճեր և յուրացներ Արևելյան Հայաստանը: Ռուսաստանն էլ ուներ իր նվաճողական նկրտումները Թուրքիայի նկատմամբ: Այնպես որ, ռուս-թուրքական բախումն անխուսափելի էր:

1914թ. աշնանը Կովկասյան ռազմաճակատում սկսվեցին ռազմական գործողությունները: Ռազմաճակատն ուներ 720 կմ երկարություն և ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը: 1915թ. սկզբներին ռազմական գործողություններն արդեն ընթանում էին Արևմտյան Հայաստանի տարածքում: Պատերազմի հենց սկզբից թուրքերը ձեռնամուխ եղան հայկական խնդրին վերջնական լուծում տալուն: Թնջուկ, որը ոսկորի նման երկար տարիներ խրվել-մնացել էր նրանց կոկորդում: Արևմտահայության ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագիրը թուրքական բռնակալությունը մշակել էր դեռևս անցյալ դարի վերջերին: Սակայն այդ քաղաքականությունն ավելի լայն չափերով իրագործվեց երիտթուրքերի կառավարման տարիներին: Իսկ աշխարհամարտը թուրքերին ընձեռեց ամբողջովին ազատ գործելու հնարավորություն: 1914թ. աշնանը և 1915թ. սկզբներին թուրքական իշխանություններն սկսեցին զորակոչել երիտասարդ հայերին ու հատվածաբար ոչնչացնել նրանց, ապա նաև «ճանապարհների վրա աշխատեցնելու պատրվակով զորահավաքի ենթարկված 15-20 և 45-60 տարեկան տղամարդկանց»:[263]

Օգտագործելով պատերազմական իրադրությունը, իթթիհատականները 1915թ. սկզբներին կայացած կուսակցության կենտկոմի գաղտնի նիստում որոշեցին արևմտահայության բնաջնջման և տե-

263. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն ութհատորյակ, հատոր 6, Երևան, 1981., էջ 553:

ղահանության կոնկրետ եղանակները: Ղեկավարվելով այդ նիստի որոշմամբ, ապրիլի 15-ին տեղական իշխանություններին Թալեաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց, որտեղ ասված էր, թե օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, անհրաժեշտ է վերջնականապես բնաջնջել հայերին՝ նրանց քշելով Արաբիայի խորքերը: Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում թալեաթ-էնվերական բոլոր հրահանգները: Հայերը զանգվածաբար տեղահան արվեցին բոլոր գավառներից և զանգվածաբար ոչնչացվեցին:

Երիտթուրքերի կողմից կազմակերպված համատարած սպանդի այդ պայմաններում արևմտահայերը, այնուամենայնիվ, երկրի մի շարք շրջաններում անհավասար կռիվ մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ: Նրանց ինքնապաշտպանական մարտերը մղվում էին մեծ մասամբ առանց ծրագրի, տարերայնորեն, մեկը մյուսից անջատ:[264] Այնուամենայնիվ հերոսական պայքարի շնորհիվ տասնյակ հազարավոր կյանքեր փրկվեցին:

4. Վանի հերոսամարտը: Արմենակ Եկարյան

Երիտթուրքական հրոսակների և գազազած խուժանի դեմ հայերի ինքնապաշտպանական մարտերի նշանակալի դրվագներից մեկը Վանի հերոսամարտն էր, որի շնորհիվ փրկվեց Վան-Վասպուրականի հայ բնակչության մեծ մասը:

Դեռևս 1914թ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Վանի կուսակալ Ջևդեթ բեյը հայերից պահանջում է կամավոր զինվորներ տալ թուրքական բանակին: Դարբինյանը հիշում է, որ այդ պահանջը մերժում են Վանի թե դաշնակցական ղեկավարները (Արամ, Իշխան, Վռամյան), թե ռամկավարները:[265] Պատերազմի նախօրեին թուր-

264. Ինքնապաշտպանության մարտերի մասին մանրամասն տես Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան, 1964., էջ 278-289: Նաև Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005:

265. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 309:

քերն ու քրդերը մեծ եռանդով զինավարժություններ էին կատարում. վտանգը մոտենում էր, հարկավոր էր պատրաստ լինել օր օրի մոտեցող անխուսափելի արհավիրքին: 1915թ. ձմռանը ազգային կուսակցությունները Վանում ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության կազմակերպման գործին:

Որոշվում է ստեղծել միջկուսակցական մարմին, որը պետք է կազմակերպեր ժողովրդական հանգանակություն, զենք ու զինամթերք ճարեր, նոր խմբեր կազմեր, հները ուժեղացներ և այլն: Միջկուսակցական մարմնի անդամներ են ընտրվում ռամկավարներից՝ Ռուբեն Հովնանյանը և Հովսեփ Գույումջյանը, դաշնակցականներից՝ Արամ Մանուկյանը և Գարեգին Ճիտեճյանը, հնչակյաններից՝ Հրանտ Գալիկյանը:[266]

Վանի դաշնակցականներն ու ռամկավարները ինքնապաշտպանության տենդագին նախապատրաստությունների մեջ էին: Այգեստանում և Քաղաքամիջում կառուցվում էին պատնեշներ, փորվում խրամատներ:

Ապրիլի սկզբին թուրքական զորամասերն արդեն դիրքավորվել էին Վանի շրջակայքում:[267]

1915թ. ապրիլի 17-ին (Իշխանի սպանությունից հետո) կուսակալ Ջևդեթն իր մոտ խորհրդակցության է կանչում դաշնակցական առաջնորդներ Արամ Մանուկյանին, Վռամյանին, Թերզիբաշյանին, Ճիտեճյանին: Բացի Արամից մյուսները գնում են և այլևս հետ չեն վերադառնում:[268] Ջևդեթը պահանջում է 24 ժամվա ընթացքում հանձնել թուրքական բանակից դասալքված հայ զինվորներին, այլապես սպառնում է քաղաքը քարուքանդ անել և կոտորել բոլորին: Ջևդեթի պահանջը քննարկելու համար գումարվում է խորհրդակցություն, որին մասնակից են լինում Վանի երևելիներ, բոլոր կուսակցություններից ներկայացուցիչներ և հասարակության այլ անդամներ: Հենց այդ ժամանակ ստացվում է Իշխանի մահվան լուրը: Ժողովուրդը պահանջում է չերկնչել թուրքերի առաջ և պատրաստվել ինքնապաշտպանության:[269] Վանի հայությունն այլընտրանք չուներ՝ կամ պետք է կռվեր,

266. Եկարեան Ա., Յուշեր, Պէյրութ, 1985., էջ 155:
267. Դարբինեան Ա., Նշվ. աշխ., էջ 267:
268. Եկարեան Ա., Նշվ. աշխ., էջ 159:
269. Ճիզմեճեան Մ., Նշվ. աշխ., էջ 312:

կամ կռվելով պատվով մեռներ: Հենց այդ խորհրդակցության արդյունքում կազմվում է զինվորական շտաբ ՀՍՌԿ-ի հիմնադիր անդամ Արմենակ Եկարյանի հրամանատարությամբ:

Արմենակ Եկարյանը[270] ծնվել է 1870թ. Վանի Հանկույսների թաղում՝ Գրիգոր հոր և Զարուհի մոր «ջերմ բոյնին մէջ», այն Վանում, որը զգալով 1896-ի մոտեցող չարագուշակ շունչը, հնասպառ պատրաստվում էր, զինվում՝ այլևս ուրիշ ելք չգտնելով, դաս առած արյունարբու բորենու հետ գոյակցության իր երկարամյա փորձից: 1887-ին միջնակարգ դպրոցն ավարտած ազատատենչ պատանին ընդունվում է այդ շրջանում Վանի «ամենքին մտքին և հոգուն տիրող» Արմենական կուսակցության շարքերը, երդվելով մինչև վերջ պայքարել հայրենիքի ազատության համար: Իսկ շատ չանցած՝ 1889-ից, հրաժարվելով դերձակի իր մասնագիտությունից, ամբողջովին նվիրվում է «զինատարական աշխատանքի»: Բայց հենց առաջին ուղևորության ժամանակ, երբ ընկերոջ՝ Տիգրան Մահեյանի հետ ծպտված փորձում են անցնել Պարսկաստան, ձերբակալվում են և բանտարկվում:

Երկամսյա բանտարգելությունից նոր ազատված, Եկարյանն այս անգամ անբաստանվում է հանրահայտ Ավոյի փախուստի կազմակերպման համար և ստիպված անցնում է Պարսկաստան: Այստեղ մյուս ազատամարտիկների հետ վերաշինում են Դերեկի վանքը, ամրացնում այն ու դարձնում իրենց համար ո՛չ միայն բնակատեղի, այլև հենակենտրոն դեպի Վան զենք փոխադրելու ճանապարհին: Առաջին փորձը բարեհաջող է ավարտվում՝ ոգևորում դերեկցիներին, հավատ ներշնչելով սեփական ուժերի նկատմամբ: Բայց շուտով դավադրաբար ավերվում է Դերեկը, և Եկարյանն իր ընկերների հետ հաստատվում են Սալմաստի Հաֆթվանում: Եկարյանի ղեկավարությամբ մի շարք անգամներ Սալմաստից Վան զենքի փոխադրման անցումներ են կազմակերպվում: Ամեն անգամ վտանգներով լեցուն այդ ճանապարհը կտրում-անցնում էին ոտքով, գիշերները, զենքի ծանրության տակ կքած և ամեն րոպե սպասելով թշնամու գնդակին: «Արմենակ Եկարեանը,- գրում է Վ.Գյոքչյանը,- ծնած էր մարտիկ ու

270. Արմենակ Եկարյանի մասին ավելի մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., Մեր սուրբ անտառում նա էլ կաղնի էր, «Հայրենիքի Ձայն», 1991, NN 1853, 1854:

ղեկավար, սրտով քաջ ու կորովի, հոգիով հայրենասէր ու անկեղծ, որոնց աղաղակող ապացոյցը տուած էր 100-անգամներ. կը կտրեր Վան-Թաւրիզ-Սալմաստ 150 կմ ճամբայ, և երկիր կը մտցնէր ռազմանիւթ ու ռազմիկներ, երբ համիտեան բորենիներ ամէն տեղ էին որսեր յափշտակելու համար»:[271]

Հարկաւոր էր պատրաստ լինել ինքնապաշտպանության, վստահել սեփական ուժերին: Իսկ սեփական ուժ ստեղծելու համար հարկաւոր էր զինվել, այսինքն՝ անհրաժեշտ էր զենք ու զինամթերք հայթայթել: Այս նպատակով 1896-ի մայիսի 27-ին Եկարյանը «300 օսմանեան ոսկի հետն առած, 10 ընկերների հետ կը մեկնի Պարսկահայք՝ մեծ քանակութեամբ զինամթերք փոխադրելու Վան, ի նախապատրաստութիւն հաւանական ինքնապաշտպանութեան մը»: Սակայն առեղծվածային պայմաններում ձերբակալվում է և այդպիսով զրկվում «1896-ի Վանի յունիսեան ինքնապաշտպանութեան իր մասնակցութիւնը բերելու հնարաւորութենէն»:

Մեծ դժվարությամբ ազատվում է բանտից և անցնում Էջմիածին, որտեղ բազմաթիվ հանդիպումներ է ունենում ժամանակի հայ առաջադեմ գործիչների հետ, հորդորում նրանց սատարել արևմտահայությանը: Այստեղ էլ նրան Վանից հասնում է Երկիր վերադառնալու խնդիր-պահանջը: Խնդիրն այն էր, որ այդ ժամանակ նախապատրաստվում էր Խանասորի արշավանքը, որի լուրը «հասած ըլլալով Վան՝ ճշմարիտ յուզում մը հառաջացուցած էր հոն բոլոր խաւերու մեջ. երկրացիները այս անժամանակ ձեռնարկին մէջ կը տեսնեին նոր աղէտ մը»:[272]

Եկարյանն իրատեսորեն գնահատելով իրավիճակը՝ հանդիպում է ունենում արշավանքի կազմակերպիչների հետ և փորձում նրանց հետ կանգնեցնել այդ գործողությունից: Ու թեև Նիկոլ Դումանը, Վարդանը և Սեքարեցի Սաքոն «համաձայն գտնուեցան անոր առաջարկներուն, յայտնեցին, թե այնուամենայնիւ, խնդիրը իրենց ձեռքը չէ»: Ճշմարտությունն այն էր, որ սկզբում բոլոր կուսակցություններն էլ ոգևորված էին հիշյալ արշավանքի գաղափարով: Բայց հույների

271. «Նոր օր», Լոս Անջելես, 1965թ.:
272. Հարյուրամեակ Արմենական կուսակցութեան կազմութեան, 1885-1985, Փարիզ, 1985. (էջակալած չէ):

պարտությունից և թուրքերի Լարիսա քաղաք մտնելուց հետո միայն արմենականներն ու հնչակյանները հետ կանգնեցին արշավանքից, իսկ դաշնակցական ղեկավարները, որոնք հայ հարուստներից այդ առիթով գումար էին ստացել և խոստումներ տվել, ինքնաբերաբար շարունակեցին սկսած գործը: Եկարյանը մերժում է միանալ նրանց՝ պատճառաբանելով այդ գործողության անիրատեսությունն ու գնած զենքերը վտանգի ենթարկելու անխոհեմությունը՝ խոստանալով ճանապարհին մազրիկցիներին օգնության եկող ուժերի ճամփան փակել: Այդպես էլ լինում է: Չերկնչելով հակառակորդի թվական գերակշռությունից, խոստմանը հավատարիմ, Եկարյանն իր խմբով կռվում և Սաքալ-Թութանի կիրճում փախուստի է մատնում թշնամուն, դրանով մեծ օգնություն ցույց տալով խանասորցիներին:

Օգտվելով 1908թ. հուլիսի 11-ին հռչակված սահմանադրության ընձեռած հնարավորությունից, երկար դեգերումներից հետո Եկարյանը վերադառնում է Վան և ձեռնամուխ լինում եռանդուն գործունեության՝ կրկին զինվորագրվելով ինքնապաշտպանության գործին: Որովհետև շատ շուտով՝ 1909-ի Ադանայի ջարդը ցրեց 1908-ի սին պատրանքները, ուստի և «յայտնի եղաւ, թե Օսմանեան Սահմանադրութիւնը պատրող միջոց մըն էր միայն և թուրքը, հին թէ նոր նոյն թուրքն էր»:[273]

Շուտով պայթեց Առաջին աշխարհամարտը: Վանում բոլորի համար պարզ էր մի բան՝ թուրքական իշխանություններն ազատվելով եվրոպական զսպաշապիկից կձգտեին օգտվել բարեպատեհ առիթից և մեկընդմիշտ փակել հայկական խնդիրը՝ ազգաջինջ եղեռնի միջոցով:

Վանում ստեղծվեց մի փայլուն համագործակցություն, որպիսին միշտ երազել ու ինչի կարիքը միշտ զգացել է հայը և որի արգասիքը եղավ միջկուսակցական մարմնի ծնունդը՝ ինքնապաշտպանության համընդհանուր ղեկավարությունն իրականացնելու՝ հայտնի դաշնակցական գործիչ, ազգի նվիրյալ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ, և, ինչպես ասացինք, ռազմական գործողությունները ղեկավարելու համար՝ Զինվորական մարմինը ՀՍՌԿ-ի անդամ Արմենակ Եկարյանի ղեկավարությամբ: Առաջ անցնելով նշենք, որ վերջինս

273. «Բիւզանդիոն» օրաթերթ, Պոլիս, 1908:

զինվորական մարմնի մյուս անդամների հետ փայլուն ղեկավարեց Վանի գոյամարտը: 1915թ. մայիսին ռուսական բանակը մտավ Վան: Մեկամսյա հերոսամարտի շնորհիվ բնաջնջումից փրկվել էր Վանի և շրջակա բնակավայրերի 150 հազար հայությունը:

Հետագայում Եկարյանը նշանակվում է Երկրապահ գնդի (ժողովրդական միլիցիա) հրամանատար, որին, սակայն վիճակված չէր երկար գոյատևելու, որովհետև քիչ հետո «տեղի կ'ունենայ ռուսական նահանջի արարուածին բեմադրութիւնը՝ Վանի լքումով»:[274] Հիասթափվելով ցարիզմի կասկածելի քաղաքականությունից, Եկարյանը 1916թ. հուլիսի 30-ին գալիս է Թիֆլիս և շուտով կուսակցական հատուկ հրահանգով մեկնում Կիլիկիա: Այստեղ կուսակցական ընկերների հետ ամեն ինչ անում են Կիլիկիան փրկելու համար, սակայն իզուր: Որովհետև աշխարհի հզորներից այս անգամ էլ Ֆրանսիան դավաճանելով հայ ժողովրդի շահերին 1921թ. Անկարայի դաշնագրով Կիլիկիան նվիրել էր Թուրքիային:

Եկարյանը հուսախաբ ու հոգնած տեղափոխվում է Եգիպտոս: Հայրենիքի ցավով տառապած, հայդուկային կյանքում կրած դառնություններից, հայավեր ցնցումների բովում ծվատված նրա մարմինը շատ էր տկարացել՝ Եգիպտոսում վրա հասած ժանտախտին դիմակայելու համար: 1925թ. հոկտեմբերի 19-ին 55-ամյա հերոսը կնքեց իր մահկանացուն:

Ինչպես արդեն նշեցինք, միջկուսակցական խորհրդակցության արդյունքում կազմվում է Զինվորական շտաբ, որի մեջ բացի Եկարյանից մտան նաև Բուլղարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը (դաշնակցական):[275] Ա.Դարբինյանն այսպես է բնութագրում Զինվորական մարմնի անդամներին. «Ա.Եկարեանը հին արմենական համբաւաւոր ռազմիկ մըն է, հմայք ունի թէ դաշնակցականներու, թէ ամբողջ ժողովրդին մէջ: Կայծակ Առաքել, դաշնակցական ռազմիկ մըն է, Անդրանիկի քաջ զինուոր եղած է Սասունի մէջ: Պուլկարացի Գրիգոր ռազմիկ մը չէ, զինագործ է, կռուին ընթացքին անոր աշխատանքը պիտի կեդրոնանար ռումբերու և զէնքներու կարգաւորման և «թնդա-

274. «Նոր օր», Լոս Անջելես, 1965:
275. Կեօրկիզեան Արսէն, Վասպուրականի հերոսամարտը 1915 ապրիլի 7-մայիսի 7, Պէյրութ, 1965., էջ 16:

նօթի» մը պատրաստութեան շուրջ: Պարկեշտ և գործունեայ ակտիվ դէմք մըն էր»:[276] Զինվորական մարմնին որպես խորհրդականներ են ընտրվում Գաբրիել Սեմերճյանը (ռամկավար), Հ.Գալիկյանը (հնչակյան), Փ.Թերլեմեզյանը (անկուսակցական): Իսկ պաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր «իր ազնուութեամբ ու քաջագործութիւններով յայտնի»[277] Արամ Մանուկյանը: Ընտրվում է նաև Զինվորական հանձնախումբ, որը պետք է ստուգեր զենքերի ու դիրքերի վիճակը և պարզաբաներ յուրաքանչյուրի պարտականությունները: Պարենավորման մարմինը պետք է կազմակերպեր դրամի ու մթերքի հանգանակություն և այն կենտրոնացներ խիստ հսկողության ներքո, որպեսզի ժողովուրդը սովի պատճառով անձնատուր չլիներ: Վանի ամերիկյան միսիոներների ներկայացուցիչ դոկտոր Ըշը-ը հայերին էր հանձնել իր տնօրինության տակ գտնվող ամերիկյան հիվանդանոցն ու այնտեղ եղած դեղորայքը:

Հատուկ հրահանգով հավաքվում են բոլոր 78 խմբապետերը, շտաբի բոլոր անդամները, հասարակ քաղաքացիներ: Հավաքում ելույթ է ունենում Արամը և քաջալերական խոսքեր ասում: Եկարյանը պարզաբանում է ստեղծված կացությունը և իրենց խնդիրներն ինքնապաշտպանության գործում: Նա նույնպես քաջալերում է բոլորին, կոչ անելով չվարանել թշնամու ուժերի առավելությունից, կռվել նրա դեմ նախնիների օրինակով, պատվավոր մահը նախընտրելով անպատիվ գոյությունից:[278] Ըստ Եկարյանի տվյալների՝ ռամկավարներն ունեին 141 հրացան և 145 մաուզեր: Դաշնակցությունը՝ 133 հրացան և 150 մաուզեր (տասնոց), չեզոքները՝ 18 հրացան և 23 մաուզեր, հնչակյանները՝ 8 հրացան, 7 մաուզեր: Բացի այս ժամանակակից զենքերից կային նաև բերդան և այլ տիպի հին հրացաններ, կոլտ և սմիթ տիպի ատրճանակներ: «Այս էր մեր ունեցած ողջ զինական ուժը, ասով պիտի պաշտպանէինք մօտ 4 ժամուան տարածութեան մը վրայ շարուած մեր դիրքերը կանոնաւոր և անկանոն ստուար ուժերու դէմ»:[279]

Կռվի ընթացքում ստեղծվում են փամփուշտի արհեստանոց, կազ-

---

276. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 267:
277. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999., էջ 36:
278. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 321:
279. Եկարեան Ա., Յուշեր, էջ 160:

մակերպվում է վառոդի արտադրություն: Խիստ կարևոր դեր է կատարում, այսպես կոչված, «ամրաշեն ջոկատը», որի ղեկավարն էր ռամկավար Շավարշ Հովիվյանը: Ջոկատը խրամատներ է փորում, պատնեշներ սարքում, գնդակների տարափի տակ վերանորոգում թնդանոթների ռումբերից քանդված դիրքերը և այլն:[280] Կռվում առավել աչքի ընկածներն Արամից ստանում էին հատուկ պատրաստված արծաթե մեդալներ:[281]

Ինքնապաշտպանության հետ մեկտեղ աչքաթող չէին արվում նաև վարչական- կազմակերպչական գործերը: Կազմվել էին ոստիկանական, դատական, թաղապետական վարչություններ իրենց ստորադաս պաշտոնյաներով: Ստեղծվել էր նաև Խնամակալ մարմին, որը հոգալու էր գյուղերից Այգեստան մտնող հայ բնակչության կարիքները: Մ. Ճիզմեճյանի բնութագրմամբ, փաստորեն, Այգեստանում ստեղծվել էր յուրօրինակ մի իշխանություն՝ իր զինվորական, քաղաքական և տնտեսական բաժիններով:[282] Մեր ուսումնասիրության շրջանակների մեջ չի մտնում մանրամասն ներկայացնել ինքնապաշտպանական մարտերն ու դրանց ընթացքը, միայն հավելենք, որ համախմբված ու միասնական ջանքերի շնորհիվ հայերը ցուցադրեցին աննախադեպ կամք, հերոսացան թե՛ մարտերում և թե՛ առօրյա կյանքում և տարան փայլուն հաղթանակ, ապահովելով Վանում կուտակված հայության ֆիզիկական գոյությունը:

1915թ. մայիսի սկզբին ռուսական բանակի առաջխաղացման լուրն առնելով, թուրքերը նահանջում են: Հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ Վանի հայությունը փրկվեց ջարդից: Այդ գործում իր զգալի ներդրումն ունեցավ նաև ՀՍՌ կուսակցությունը: Վերլուծելով Վանի ինքնապաշտպանության ժամանակ հայերի հաջողության պատճառները, Ա. Դարբինյանը գտնում է, որ դրան նպաստեցին լավ կազմակերպվածությունը, ազգային կուսակցությունների համերաշխությունը և ժողովրդի այն համոզմունքը, թե անհավասար կռվի միջոցով էլ կարելի է փրկության հույս ունենալ:[283] Հետագայում

280. Նույն տեղում, էջ 162:
281. Նույն տեղում, էջ 167:
282. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 334:
283. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 271:

անդրադառնալով այս հարցին, Դարբինյանը քննադատում է պատմաբաններ Ադոյին և Օնիկ Մխիթարյանին, այն բանի համար, որ Վանի հերոսամարտի դափնեպսակն ամբողջությամբ վերագրել են դաշնակցությանը և դրանով նսեմացրել ռամկավարների և մյուսների դերը: Դարբինյանն իրավացիորեն գտնում է, որ գնահատումների մեջ պետք է լինել օբյեկտիվ:[284]

Մայիսի 30-ին հայ կամավորական երեք ջոկատները մտան Վան: Հունիսի 19-ին Վան մտավ նաև ռուսական բանակը գեներալ Նիկոլաևի հրամանատարությամբ: Ռուսական իշխանությունները կազմեցին Վանի նահանգային վարչություն, իսկ Արամ Մանուկյանին նշանակեցին Վանի ժամանակավոր նահանգապետ: Նահանգային վարչության անդամներ դարձան նաև ՀՍՌԿ անդամներ, իսկ Ա. Եկարյանը նշանակվում է Վանի միլիցիայի (երկրապահ գունդ) հրամանատար: Վանում կյանքն արագ իր հունի մեջ է մտնում: Սակայն այդ կանոնավոր ընթացքը շուտով խաթարվում է:

1915թ. հուլիսին հանկարծակի ստացվում է ռուսական բանակի նահանջի լուրը: Վանում խորհրդակցության են հավաքվում Արամը, Եկարյանը, Վարդան Մեհրաբյանը և ուրիշներ: Եկարյանը գտնում է, որ հայ կամավորական գնդերը չպետք է նահանջեն ռուսների հետ և, որ վանեցիների միացյալ ուժերի հետ նրանք կարող են պաշտպանել և Վանը, և նրա շրջակայքը, և նույնիսկ օգնության հասնել լեռներում ապաստանած Մուշի և Սասունի հայության բեկորներին:[285] Սրան համամիտ էր Վարդան Մեհրաբյանը: Բայց ի վերջո կամավորները ենթարկվում են ռուսական հրամանատարությանը: 1915թ. հուլիսի 18-ին Վանի հայությունը, իր հետ մեկ շաբաթվա պաշար վերցնելով, բռնեց նահանջի ճանապարհը: Մոտ 120 հազար մարդ պետք է 7-8 օրում անցներ 200 կմ ճամփա Իգդիր հասնելու համար: «Հոգեկան և ֆիզիկական ի՞նչ ահաւոր նոր տառապանք, հերոսամարտով շահած յաղթանակէն յետոյ»,- գրում է Արտակ Դարբինյանը:[286]

---

284. Նույն տեղում, էջ 280:
285. Եկարեան Ա., Հուշեր, էջ 202:
286. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 335:

5. «Վան-Տոսպը», «Արևն» ու «Ազգը» ՀՍՌԿ-ի գաղափարախոսներ

1915թ. աշնանը ռամկավարները Թիֆլիսում ձեռնամուխ են լինում «Վան-Տոսպի» վերահրատարակությանը, սակայն նյութական միջոցների սղությունը թույլ չի տալիս անմիջապես կազմակերպել այդ գործը: Դրա համար էլ նրանք դիմում են կուսակցության Ամերիկայի շրջանակին, որտեղից պատասխան են ստանում միայն 2 ամիս անց: Մինչ Ամերիկայից օգնություն կհասներ, Ռոստովից օգնություն են ուղարկում ռամկավար Տիգրան Թյուրյունճյանը և տեղի ռամկավարները: Պատերազմի պատճառով լույս տեսնելուց դադարած ՀՍՌ կուսակցության պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», 1915թ. նոյեմբերին սկսեց վերահրատարակվել Թիֆլիսում: Թերթի պատասխանատու խմբագիր Արտակ Դարբինյանը[287] առաջին համարի առաջնորդողում գրում է, որ «տաճկահայութեան ողջակիզման ողջ պատասխանատվութիւնն ընկնում է երիտթուրքերի վրայ»[288] և շեշտում պարբերականի նպատակները.

1. «Հրդեհուող հայրենիքի մոխիրների տակից լսուող տառապանքի ճիչը ու բողոքը հասցնել հայութեան և նրա բոլոր բարեկամների ու թշնամիների մտքին ու սրտին»:[289] *«Վան-Տոսպը» պիտի լինի թուրքահայութեան տառապանքների հայելին, նրա տանջանքների արձագանքը, իսկ նրա մտասևեռման կենտրոնն ընդհանրապես մեր ազգային կյանքը և «մասնավորապես տաճկահայ հարցը պիտի լինի»:*[290]

2. Դառնացած և հուսահատված որոշ արևմտահայ ռամկավար գործիչներ տվյալ պահին դեպքերի թարմ տպավորությունների ազդեցության ներքո երբեմն անապացույց մեղադրանքներ էին բարդում քաղաքական մյուս ուժերի և կուսակցությունների վրա: Նմանատիպ դրսևորում էր նաև այն, որ «Վան-Տոսպը» գրում էր. «Կովկասահայութեան առջև պարզել տաճկահայերի ազատագրութեան գործում ռուսահայ բոլոր կուսակցութիւններու և խաւերու ունեցած բացասական

---

287. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 43, էջ 1:
288. «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1915, նոյեմբերի 29:
289. Նույն տեղում:
290. Նույն տեղում:

դերը (հնչակեաններ, դաշնակցականներ, մշակականներ...)».[291] *Դարբինյանն ընդգծում է, որ պատասխանատվությունից զերծ էին մնալու «փոքրաթիվ ընկերվարականները (սոցիալ-դեմոկրաթները և սոցիալ-յեղափոխականները), որոնք սկզբից դէմ էին ռուսահայերու միջամտութեանը թրքահայ շարժման մէջ».*[292]

3. Մասնավորապես պարզել ՀՅԴ պատասխանատվությունը «Կամատրական շարժման թուրքահայութեան գլխուն պայթած անհախընթաց աղէտին մէջ».[293] *Նրանք կարծես մոռանում էին, որ կամավորական շարժումն ունեցավ նաև դրական նշանակություն. Վասպուրականի հայությանը փրկեց բնաջնջումից և շատ անգամներ պաշտպանեց արևմտահայ գաղթական զանգվածներին քրդական հարձակումներից:*

4. «Կովկասում ապաստանած մոտ 250 հազար թուրքահայ գաղթականների ցաւերուն արձագանք դառնալ և դարման փնտռել».[294] *Այսինքն՝ ռամկավարները նպատակ ունեին մամուլի միջոցով կովկասահայության լայն զանգվածներին ներգրավել գաղթականության օգնության գործում:*

Պետք է նշել, որ կամավորական շարժման նկատմամբ Դարբինյանը որոշակիորեն սուբյեկտիվ տեսակետ է արտահայտում, որը հայ պատմագիտության մեջ եզակի դեպք չէ, քանզի մեծ թվով արևմտահայ գործիչներ նույն համոզմունքն ունեին:

Անշուշտ, կամավորական շարժումը չէր կարող անհետևանք անցնել հայերի համար և չբորբոքել թուրքերի կատաղությունն ու մոլեռանդությունը: Այս կապակցությամբ, որպես թուրքական պաշտոնական մտայնության դրսևորում, հատկանշական են Վանի կուսակալ (վալի) Զևդեթ բեյի հետևյալ խոսքերն ուղղված ամերիկյան միսիոներ Ըշլրին և Վանի իտալական հյուպատոս Սպորտոնիին. «Ըսէք հայերուն, թող չկարծեն թէ չենք գիտեր Թուրքիոյ հանդէպ իրենց թշնամական դիրքը գաղտնիք մը չէ մեզ համար: Զինուած խումբեր կը պտտցնեն, զինավարժութիւններ կը կատարեն: Մեր զօրքերը հայերու դէմ է, որ կը կո-

291. Նույն տեղում:
292. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 336:
293. Նույն տեղում, էջ 337:
294. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 337:

ուին աւելի քան ռուսերու, հայ կամաւորներու գնդակներէն է, որ կը սպանուին մեր զօրքերուն մեծ մասը: Ռուսին գնդակը մեր ուրքը կը ծակէ, իսկ հայոց գնդակները մեր սիրտը: Թող լաւ գիտնան հայերը, երբ ջարդ սկսուի հայերու՝ նախորդի նման չպիտի ըլլայ բնաւ: Այս անգամ կիներուն ու երախաներուն ալ չպիտի խնայենք: Այս երկիրը կամ մուսուլմաններուն պիտի ըլլայ բոլորովին, կամ քրիստոնեաներուն»:[295]

Անդրադառնալով այս խնդրին «Վան-Տոսպը» տպագրել է պրոֆ. Մ. Մինասյանի «Անարդար դատողութիւններ» հոդվածաշարը: Հեղինակը քննարկում է կոտորածների շարժառիթները և որոշակիորեն մեղադրում ազգային մյուս կուսակցություններին (ՀՅԴ-ին և ՍԴՀԿ-ին) «թուրքին շարժառիթներ տալու» համար, բայց հայության կոտորածները չի պայմանավորում դրանցով: Հեղինակի մտայնությունը կայանում է նրանում, որ նմանատիպ ցուցադրական ելույթները նպաստել են սոսկ թուրքերի ավելի գրգռվելուն: Այստեղ խոսքը վերաբերում է նաև կամավորական շարժմանը. նկարագրում է, թե ինչպես Սարիղամիշի ճակատում պարտված և նահանջող թուրքերը Կարինում լուրեր են տարածում, որ իրենց դեմ կռվել են միայն թրքահպատակ հայերը՝ թուրքական խորհրդարանի պատգամավոր Գ.Փաստրմաճյանի (Արմեն Գարո) հրամանատարությամբ, որոնք կոտորել են նաև խաղաղ թուրք ու քուրդ բնակչությանը և սրանով արյան վրեժի կոչ արել բոլոր թուրքերին:[296] Վերջիններս էլ օգտագործում են առիթը և սպանում շատ անմեղ ու անպաշտպան հայերի:

Այնուհանդերձ հայկական կոտորածները բացատրել հայ քաղաքական ուժերի տված առիթներով կամ կամավորական շարժմամբ, սխալ է: Այն թուրքական իշխանությունների կողմից պետականորեն նախօրոք ծրագրված և իրականացված քաղաքականություն էր:

1915թ. սեպտեմբերին ռուսական զորքերը կրկին գրավեցին Վանը: Կուսակալ նշանակված գնդապետ Տերմենը որոշում է իր հետ տանել հայկական երկրապահ գունդը, որը պետք է տեղում ապահովեր կարգ ու կանոնը: Նախապես ծանոթանալով Համբարձում Առաքելյանի հետ, նա ցանկություն է հայտնում, որ գնդի հրամանատարը լինի տեղացի, վստահելի ու փորձառու մարդ: Առաքելյանն առաջարկում է Ե-

295. «Վան-Տոսպ», 1916, N 16, էջ 4:
296. «Վան-Տոսպ», 1916, N 16, էջ 4, 5, 12:

կարյանի թեկնածությունը: Եկարյանը Վանի երիտասարդությունից հավաքում է մի քանի հարյուր մարդուց բաղկացած ջոկատ: Սակայն զենքի հարցում դժվարություն է առաջանում: Չնայած ռուսական իշխանությունները խոստացել էին զենք տալ, սակայն այս ձեռնարկը հաջողություն չի ունենում: Ստիպված խումբն արձակվում է և հավաքվում է նորը, որի մեջ կարող էին մտնել միայն սեփական զենք ունեցողները: Պետք է նշել, որ Տերմենը գոհունակությամբ է արտահայտվում երկրապահ գնդի մասին: 1916թ. հունվարի 5-ին «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանին ուղղված նամակում Տերմենը գրում է. «Ահագին օգուտ են բերում ինձ երկրապահ կամավորները, որոնք փոխարինում են պակասող վարչութեան: Նրանց խելացի և նպատակահարմար աշխատութիւնը ինձ տալիս է լիակատար հույս՝ նպաստավոր հետևանքի հասնելու»:[297]

Ինչպես արդեն վերը նշեցինք, կոտորածների սկսվելուն զուգընթաց՝ Սահմանադրական ռամկավարները փոխեցին իրենց վերաբերմունքը, որոշեցին սատարել կամավորական շարժմանը ու ձեռնարկեցին գործնական քայլեր: 1915թ. հունիսին ՀՍՌԿ Ամերիկայի նահանգային վարչությունը կովկասահայության կամավորական շարժմանն աջակցելու նպատակով նամակ-շրջաբերականով դիմում է իր ակումբներին: Այստեղ կոչ է արվում դրամական և այլ հնարավոր միջոցներ հանգանակել, ինչպես նաև հավաքագրել մարտական խումբ և այն ուղարկել Վասպուրական: «Նահանգային վարչությունը,- ասված է շրջաբերականում,- սկզբունքով ընդունեց իր վերջին նիստի մէջ խումբ մը ղրկել Վան, ընկեր Անուշաւան Տէր-Մկրտչեանի ղեկավարությամբ»:[298] 1915թ. օգոստոսի վերջին կամավորների խումբը Նյու Յորքից ռուսական ռազմանավով հասնում է Արխանգելսկ, այնտեղից էլ՝ Թիֆլիս:[299]

Վանի վերագրավումը նոր հույսեր է արթնացնում ռամկավարների մոտ: Նրանց և մշակականների նախաձեռնությամբ 1915թ. սեպտեմբերի վերջին Թիֆլիսում տեղի է ունենում խորհրդակցություն, որին մասնակցում են «Մշակի» կողմից Հ. Առաքելյանը, պրոֆեսոր-

297. «Վան-Տոսպ», 1916թ., N 16, էջ 4, 5, 12:
298. ՀԱԱ, ֆ. 427, ց 1, գ. 46, էջ 1:
299. «Պայքար», Բոստոն, 1958, դեկտեմբերի 23:

ներ Ս. Մալխասյանը, Լ. Եղիկյանը, ռուսական դումայի անդամ Մ.Պապաջանյանը: Ռամկավարներից՝ Ա.Եկարյանը, Հ. Գուլումջյանը, պրոֆեսոր Հ. Մինասյանը, Հ. Կաքավյանը, Ռ. Հովնանյանը և ուրիշներ: Այստեղ որոշվում է կազմել վերագրավված Վանի վարչական և պաշտոնական հատուկ մարմին, որի հսկողությանը պիտի ենթարկվեին նաև Արևմտյան Հայաստանի մյուս գրավված տարածքները: Այն ստանում է «Հայաստանի վերաշինաց յանձնաժողով» անունը:[300]

«Վերաշինաց յանձնաժողովի» նպատակն է,- գրում է «Վան-Տոսպը»,- աջակցել վասպուրականցի և թուրքահայ մտաւորականներին՝ հայրենիքի վերաշինութեան սուրբ գործին»,[301] իսկ սկզբնական շրջանում հանձնաժողովը հայթայթում է «երկրացիներից կազմուած երկրապահ գունդի պահպանման բոլոր անհրաժեշտ միջոցները, մինչև որ կառավարութիւնը իւր վրայ վերցնէ այդ հոգսը»:[302] Իսկ ապագայում,- շեշտում է թերթը,- Վերաշինաց հանձնաժողովի այդ ձեռնարկումը հանդիսանալու է սաղմն ապագա այն մեծ գործի, որ «պիտի պահանջէ մեր աւերակ դարձած հայրենիքը կովկասեան հայ զանգուածից և արտասահմանեան գաղութներից»,[303] ովքեր փորձեցին ղեկավարել արևմտահայ ազգային - ազատագրական շարժումը, սակայն հաջողության չհասան:

Հայաստանի վերաշինաց հանձնաժողովը (այսուհետև՝ ՀՎՀ) ընտրում է գործադիր մարմին հետևյալ կազմով. ատենապետ՝ Մ. Մինասյան (Վանի տեղահանությունից առաջ Վանի Կենտրոնական վարժարանի տեսուչն էր), քարտուղար՝ Ս. Մալխասյան, խորհրդականներ՝ Լ. Եղիկյան, Ա. Տեր-Մկրտչյան (ռամկավար) և վերակազմյալների ներկայացուցիչ Պ. Տեփոյան:

Գործադիր մարմինը վավերացվում է փոխարքայի կողմից: Օրակարգի գլխավոր հարցերն էին Վանի և մյուս գրավված տարածքների վարչական-տնտեսական գործերի վարումը, գաղթականության տեղավորումը և օգնության կազմակերպումը: Կազմվում է միլիցիա-

300. «Պայքար», Բոստոն, 1958., դեկտեմբերի 23: Տես նաև Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 342:
301. «Վան-Տոսպ», 1915., դեկտեմբերի 6:
302. Նույն տեղում:
303. Նույն տեղում:

յի ջոկատ, որի հրամանատարն էր Ա.Եկարյանը, իսկ տեղակալը՝ Ջ. Չանգալյանը (վերակազմյալ): Շուտով Եկարյանը 50 ձիավորներով և Չանգալյանը 45 հոգուց բաղկացած հետևակով մեկնեցին Վան:[304] Այստեղ նրանք իրենց դրսևորում են լավագույն կողմերով և նրանց գործունեությունը բարձր են գնահատում ռուսական իշխանությունները:

ՀՎՀ-ն և Թիֆլիսի ազգային բյուրոն սկզբից եթ հակասությունների մեջ են մտնում: Ա. Տեր-Մկրտչյանի ներկայացմամբ, Թիֆլիսի Բյուրոն պահանջում է, որ ՀՎՀ-ն մտնի իր ենթակայության տակ, ինչը մերժվում է և այդ երկու մարմինների միանալու և համատեղ գործելու նպատակը չի իրականանում:[305]

Այդ օրերին ռամկավարներն ակտիվ շփումների մեջ էին մտել կովկասահայության տարբեր շրջանակների և գործիչների հետ, որի գլխավոր նպատակն էր «թրքահայ փախստականութեան համար օգնութեան միջոցներ փնտրելը»:[306] «Մեր անելիքը և ապագան» վերլուծական առաջնորդողում «Վան-Տոսպը» գրում է, որ ստեղծված պայմաններում հայության բոլոր խավերը պետք է անդուլ աշխատանքով սպիացնեն վերքերը: «Աշխատանք» ասելով, հոդվածագիրը պատկերացնում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին՝ օժանդակել գյուղացիությանը տնտեսության վերականգնման գործում, բացել դպրոցներ և մատաղ սերնդին դաստիարակել հայրենասիրության ոգով, զարգացնել մամուլն ու գրականությունը, վսեմություն և սրբություն ներարկել եկեղեցուն, արծարծել հոգևոր հայրենիքի, այսինքն՝ հայ ժողովրդականության գաղափարը,- ահա մեր անելիքն ու ապագան,- եզրափակում է հեղինակը:[307]

«Վան-Տոսպը» մշտապես իր էջերում բարձրացնում է գաղթականների վիճակի հարցն Արևելյան Հայաստանում, Ռուսաստանի տարբեր վայրերում և ցույց տալիս, որ կատարվում են որոշակի քայլեր. բացվում են դպրոցներ, որբանոցներ, շեշտվում է ամերիկահայության ֆինանսական մեծաքանակ օգնությունը, ընդհանրապես, բոլոր

---

304. «Պայքար», Բոստոն, 1958., դեկտեմբերի 24:
305. «Պայքար», Բոստոն, 1958, դեկտեմբերի 27:
306. Դարբինեան Ա., Նշվ. աշխ., էջ 340:
307. «Վան-Տոսպ», 1915, դեկտեմբերի 6:

նպաստամատույց մարմինների գործունեությունը: Մանրակրկիտ լուսաբանվում է Վանի և շրջակա գյուղերի կյանքը. վերադարձած հայության դրությունը, նրանց կարիքները և այլ հարցեր:

Շնորհակալությամբ ցույց է տրվում ամերիկյան միսիոներների կատարած հիրավի մարդափրկիչ աշխատանքը՝ առանձնապես որբախնամ գործում: Ընդգծվում է հատկապես ամերիկյան նշանավոր դոկտորներ Ռեյնոլդսի, Ուիլսոնի և Մեքքալմի գործունեությունը, նրանց խանդավառությունը հայերի յուրաքանչյուր հաջողության համար, իսկ ժողովրդի օրհասական պահերին՝ նրանց սիրալիր, հոգատար վերաբերմունքը: «Երբ տաճկահայ գաղթականութիւնը Կովկաս թափուեցաւ, Ամերիկայի մարդասէրները չմոռացան զայն իր թշուառութեան մէջ,- գրում է «Վան-Տոսպը»,- իսկոյն հանգանակեցին խոշոր գումարներ և յատուկ պատուիրակութեան մը յանձնելով Կովկաս խրկեցին»:[308] Իսկ երբ սկսվեց գաղթականների վերադարձը հայրենիք, վերոհիշյալ միսիոներներն անմիջապես «Պարսկաստանէն եզներ գնելով երկիրը մտցուցին և սկսան բաժնել գիւղացիութեան, կապելու համար հայ ազգի արմատը իր կենսատու հողի հետ»:[309]

Իհարկե միսիոներների գերխնդիրը բոլորովին այլ էր և այն դուրս է մեր հետաքրքրության շրջանակներից: Բայց որ նրանք հայանպաստ զգալի քայլեր կատարեցին, անվիճելի է և միանգամայն արժանի դրվատանքի:

1915թ. մայիսի 20-ին, երբ ընդլայնվում էին աշխարհամարտի սահմանները և շարունակվում արևմտահայության տեղահանությունն ու կոտորածները, պահի լրջության գիտակցությամբ՝ Սահմանադրական ռամկավար և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունների Եգիպտոսի մասնաճյուղերն Ալեքսանդրիայում կընքեցին համաձայնագիր,[310] որն արդյունք էր դեռևս մինչ պատերազմը սկսված միավորող շարժման: Փաստաթղթի նախաբանում ասվում էր, որ համատեղ համաձայնագիրը չի հակասում և չի խոչընդոտում յուրաքանչյուր կուսակցության ինքնուրույն գոյությանն

308. «Վան-Տոսպ», 1916, հունիսի 12:
309. Նույն տեղում:
310. Լազեան Գ., Հայաստան և հայ դատը, Երևան, 1991, էջ 198: Նաև «Զարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 1950, հունիսի 2:

ու գործունեությունը: Համաձայնության հիմունքները հանգում էին հետևյալ կետերին. «Համաձայնող երկու կողմերու մշտաւոր նպատակն է ինքնավար Հայաստան և Կիլիկիա»:[311] Ընդգծվում է, որ ինքնավար Հայաստանն ու Կիլիկիան պետք է դրվեն Անտանտի կամ Ռուսաստանի հովանավորության (protectorat) ներքո, հաշվի չառնելով, թե քաղաքական իրադրությունն ինչպիսին կլինի: Հայտարարության մեջ նշվում էր, որ կողմերը բացարձակապես դեմ են «Ինքնավար Հայաստանի (Կիլիկիայի հետ միասին) գաղափարի իրականացման՝ թրքական գերիշխանութեան ներքև»:[312] Եթե ստացվի այնպես, որ պետությունների փոխհարաբերությունների արդյունքում ինքնավար Հայաստանը «կցուի Ռուսաստանին, ապա համաձայնող կողմերը այդ բանին չպիտի հակառակին»:[313] Համաձայնագրում չի բացատրվում, թե «կցում» ասելով ինչ են հասկանում, սակայն կարծում ենք, որ այստեղ պետք է ենթադրել Հայաստանի ինքնավարության ստատուս Ռուսական պետության կազմում:

Համաձայնագրի 6-րդ կետում ասվում է, որ եթե իրադարձություններն այնպիսի ընթացք ստանան, որ անհնար լինի Հայաստանի և Կիլիկիայի «միատեղ ինքնավար դարձնելը» և հնարավոր լինի միայն Կիլիկիայի ինքնավարությունը, ապա կողմերը պիտի պաշտպանեն նաև այս դրույթը: ՀԱՌԿ-ն և ՍԴՀԿ-ն ինքնավար Հայաստանի քաղաքական կառուցվածքն ապագայում պատկերացնում են «պառլամենտական ռեժիմով և ռամկավարական հաստատութիւններով»:[314]

Համաձայնագրի «Տակտիկա» բաժնում ասված է, որ համաձայնող կողմերի ընդհանուր գործունեության մարտավարությունը պիտի լինի հեղափոխական-ապստամբական և դիվանագիտական: Շեշտվում է, որ երկու կուսակցությունների Եգիպտոսի շրջանակները, ելնելով իրենց աշխարհագրական դիրքից, գործունեության հիմնական ասպարեզ են հայտարարում Կիլիկիան և «ամէն ջանք պիտի թափեն իրենց արևմտեան բոլոր շրջանակներն ալ (Ամերի-

311. Նույն տեղում:
312. Լազյան Գ., նշվ. աշխ., էջ 199:
313. Նույն տեղում:
314. Նույն տեղում, էջ 200:

կա, Եվրոպա) համախմբել իրենց Կիլիկեան գործունէութեան մէջ»:[315] Իրենց մոտակա նպատակին հասնելու համար կուսակցությունները պարտավոր են գործադրել բոլոր միջոցները, որ անհրաժեշտ կգտնեն: Համաձայնող կողմերը պատրաստվում են զորակցել Պողոս Նուբար փաշայի պատվիրակությանը, իսկ Պողոս Նուբարը հայտարարվում է ապագա միջազգային վեհաժողովում երկու կողմերի թեկնածու, որպես հայկական պատվիրակության լիազոր ներկայացուցիչ:[316]

Համատեղ գործերը վարելու համար երկու կուսակցություններն ընտրում են վեց հոգուց բաղկացած մարմին իր ատենապետով: Նորակազմ այդ մարմինը, որ ստացավ «Գործակցող կուսակցութիւնների Եգիպտոսի վարիչ մարմին»[317] անունը, իրավասություն ստացավ իր կազմում ներգրավել նաև վերոհիշյալ կուսակցություններին ոչ անդամ ցանկացողների: Վարիչ մարմնի նպատակներից մեկը պիտի լիներ երկու կուսակցությունների մյուս շրջանակների, ինչպես նաև Վերակազմյալ հնչակյան կուսակցության համախմբումը համատեղ ծրագրի շուրջ և դրանից կազմելու մի ամբողջություն, որը պիտի գտնվեր Եգիպտոսում, քանի որ վերջինիս աշխարհագրական դիրքը դիտվում էր ամենահարմարը:

Համաձայնագիրը Սահմանադրական ռամկավար կուսակցության Եգիպտոսի ակումբի կողմից ստորագրեցին Ա.Պետրոսյանը, Մ.Տամատյանը, Վ.Թեքեյանը, Լ.Մկրտչյանը, իսկ ՍԴ Հնչակյան կուսակցության Եգիպտոսի պատասխանատու մարմնի կողմից՝ Ստ. Սապահ-Գյուլյանը:

«Գործակցող կուսակցութիւնների վարիչ մարմինը» 1915թ. աշնանը ձեռնամուխ է լինում եգիպտահայերից կամավորական ջոկատների ստեղծման գործին և բավականին լավ կազմակերպում այդ աշխատանքը: Կահիրեում կազմված վարիչ մարմնի նմանօրինակը փորձ է արվում ստեղծել նաև Ալեքսանդրիայում:[318]

---

315. Նույն տեղում:
316. Նույն տեղում, էջ 201:
317. Գրականության մեջ և մամուլում «Գործակցող կուսակցութիւնների վարիչ մարմինը» հայտնի է նաև մեկ ուրիշ՝ «Զինվորական վարիչ մարմին» անունով:
318. ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 198, էջ 3:

1915թ. մայիսին Ապահ Պետրոսյանին ուղղված նամակում Լևոն Մկրտչյանը գրում է. «մեր (այսինքն՝ ռամկավարների - Ս.Ս.) և հնչակեաններու միջև համերաշխութիւն գոյացած է: Համաձայնութիւնը երկուստեք ստորագրեցինք: Որպէսզի սպասուելիք հանդէսը յաջող ու օգտակար ըլլայ, պէտք է, որ ռամկավար ընկերները հրաւիրինք և պարզենք մեր և հնչակեաններու միջև եղած համաձայնութիւնը»:[319] Նույն նամակից պարզ է դառնում նաև, որ այդ օրերին համաձայնություն է կայացվել Եգիպտոսի վերակազմյալների ու ռամկավարների միջև ևս և այդ կապակցությամբ տեղի է ունեցել հանդիսություն:

Իսկ 1916թ. փետրվարի 21-ին նույն Ապահ Պետրոսյանին գրված Լ.Մկրտչյանի մեկ այլ նամակից արդեն երևում է, որ ռամկավարները ձեռնամուխ են եղել ահաբեկիչ խմբերի կազմությանը, որոնք պետք է գործեին թշնամու թիկունքում, կամուրջներ և երկաթգծեր պայթեցնեին և այլ տիպի դիվերսիոն գործողություններ կատարեին: «Հիմա ուրիշ խնդիր մըն ալ կայ,- գրում է Մկրտչյանը,- այս մարդերը առաջիկային պոմպա նետողներու ալ պետք պիտի ունենան, ուստի կը հարցնէին, թէ արդեօք չենք կրնար քանի մը հոգի իրենց տրամադրել, պոմպանետելու բացարձակ կարող: Իրենց գործը պիտի ըլլայ երկաթուղիի գիծեր փճացնել և կամուրջներ օդը հանել ծանօթ երկիրը (իմա Թուրքիան): Հաճէ իմացնել, թէ այս գործին համար մարդեր կա՞ն ի Գահիրէ և որքան մարդ կրնանք տրամադրել այս նպատակով»:[320]

1915թ. սեպտեմբերին Թիֆլիսում ևս գումարվում է միջկուսակցական խորհրդաժողով, որին մասնակցում են ՍԴ Հնչակյաններից Ս. Հովյանը (Տաշիր), Գ. Մնացականյանը, Լազոն, վերակազմյալներից՝ Պ. Տեփոյանը, Ն. Դշխոյանը, ռամկավարներից՝ Ա. Տեր-Մկրտչյանը, Ա.Եկարյանը, Ռ.Հովնանյանը: Այստեղ ժողովի ժամանակ ՍԴ Հնչակյանները մերժում են Վանի ներկայացուցիչներին ընդունել գործադիր մարմնի մեջ հավասար ձայնի իրավունքով: Հնչակյանները համաձայնվում են միայն Ամերիկայի ռամկավարներից Ա.Տեր-Մկրտչյանի և վերակազմյալ Պ. Տեփոյանի թեկնածություններին: Սակայն գործադիր մարմնում հավասար թվով ներկայացուցիչներ ունենալու ռամկավարների ու վերակազմյալների առաջարկը հնչա-

319. Նույն տեղում, գ. 70, էջ 87:
320. Նույն տեղում, ֆ. 453, ց. 1, գ 70, թ. 91:

կյանները մերժում են և դրանից հետո միջկուսակցական խորհրդաժողովն ավարտվում է:[321]

Չնայած այդ անհաջող ձեռնարկին, ռամկավարները երբեք համագործակցության հույսը չեն կորցնում: Ավելին, «Վան-Տոսպը» գրում էր, որ թուրքահայ գաղթականներն իրավունք ունեն Կովկասահայ պատգամավորներից ակնկալել, որ վերջիններս իրենց հարցը պատշաճ կերպով կբարձրացնեն Ռուսաստանի Պետական դումայում:[322] Դա վերաբերում էր Միքայել Պապաջանյանին, որի հետ ռամկավար գործիչների մեծ մասը սերտ հարաբերությունների մեջ էր:

Երբ «Վան-Տոսպը» սկսեց հրատարակվել Թիֆլիսում, իր խնդիրներից մեկը համարեց բողոքել այնպիսի խնամակալության դեմ, որը ռուսահայ մտավորականության մեծ մասը երկար ժամանակ հաստատել է արևմտահայերի վրա, պահելով իր ձեռքում նրանց ազատագրական շարժման ղեկավարության մենատիրությունը:[323] Պարբերականը գրում է, որ երբեմն արևմտահայերի ճակատագիրը տնօրինել են կովկասահայ այնպիսի գործիչներ, որոնք չեն իմացել հայոց պատմությունը, նույնիսկ հայերեն խոսել, գրել ու կարդալ: Եվ բնական է, որ այդպիսիները չպիտի կարողանային հասկանալ օրվա պահանջները և ըմբռնել պատմական հանգամանքները:[324]

«Վան-Տոսպի» քննադատությունն ուղղված էր ՀՅ Դաշնակցության դեմ: Միջկուսակցական անհանդուրժողականությունը ինչպես մյուս կուսակցությունների, այնպես էլ ռամկավարների մոտ ուժեղանում է հատկապես պատերազմի դժվար տարիներին, երբ միմյանց հասցեին անհարգալից պիտակների պակաս չէր զգացվում: Պետք է ընդգծել այն հանգամանքը, որ ռամկավարները քննադատության թիրախ էին դարձրել ոչ թե Դաշնակցությանն ընդհանրապես, այլ նրա գործելակերպի մի շարք դրսևորումներ: Մասնավորապես, քննադատության են ենթարկվում այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են ցուցամոլությունը, փառասիրությունը, ամեն ինչ իրենց վերագ-

---

321. ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 46, թ. 4:
322. «Վան-Տոսպ» 1916, N 10, հունվարի 31:
323. «Նույն տեղում, N 41, սեպտեմբերի 4:
324. Նույն տեղում, N 44, սեպտեմբերի 25:

ռելու մոլուցքը, եկեղեցու նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, անհանդուրժողականությունը մյուս կուսակցությունների նկատմամբ[325] և այլն: «Դուրս եկէք կախարդական շրջանից» հոդվածում Վարդան Պապիկյանը հայության կրած անդուլ տառապանքների համար մեղքի բաժին է հատկացնում նաև հայ կուսակցություններին ու նրանց գործունեությանը: Հեղինակը գտնում է, որ հարկավոր է «օգտուել անցեալի փորձառութիւններից և ձեռք քաշել հին սխալներից՝ ցուցադրական ելոյթներ և անհանդուրժողականութիւն, բայց ոչ գործունէութեան միջոցից»:[326] Այսինքն՝ հեղինակը կողմնակից է ակտիվ պայքարի կուսակցական մարտավարությանը և դեմ է ցուցամոլությանը: Գտնելով, որ «հայ ժողովրդի ճակատագիրը պիտի վարեն կազմակերպուած մարմինները»,[327] հեղինակը ցույց է տալիս, որ նման կազմակերպությունը պիտի լինի դեմոկրատական, լիբերալ բնույթի, որի նպատակը չպիտի լինի հասարակության արդի կառուցվածքի փոփոխությունը, ինչպես այդ արել են հայոց մեջ գործող մի քանի կուսակցություններ, որոնք հավակնություն են ունեցել և դեռ ունեն հայ ժողովրդի ազգային իրավունքները «ձեռք ձգելուց զատ յեղաշրջել նրա սոցիալական կարգերը»:[328] Այսինքն, հեղինակի կարծիքով հայ ժողովրդի անելանելի վիճակում հարկավոր է օգտագործել բոլոր խավերի հնարավորությունները՝ նախ ազգի գոյությունն ապահովելու համար, որ սոցիալական վերափոխությունների կոչերը (որոնցով հանդես էին գալիս ՍԴՀ և ՀՅԴ կուսակցությունները) ժամանակավրեպ են և ապագայի խնդիր: Հոդվածագիրը դատապարտում է նաև նրանց, ովքեր ազգային խնդիրներում որդեգրում են չեզոք դիրքորոշում: Այդպիսիները «արժանի են խորին արհամարհանքի», քանի որ փակում են իրենց աչքերը չարիքի դեմ կռվելու փոխարեն, և «բաւականանում են միայն քննադատելով»:[329]

---

325. Նույն տեղում, N 6 և 8, հունվարի 3 և 17: Ի դեպ, այնքան էլ տեղին չէ այդ քննադատության «մենաշնորհը» յուրացնել, քանի որ հենց ՀՅ Դաշնակցությունն ինքն իր ժողովներում անխնա քննադատում էր յուրաքանչյուր նմանատիպ դրսևորում:
326. «Վան-Տոսպ» 1915, N 1, նոյեմբերի 29:
327. Նույն տեղում:
328. Նույն տեղում:
329. Նույն տեղում:

1916թ., երբ արևմտահայության մեծագույն մասը տարագրվել էր իր հայրենիքից և կոտորվել, անդրադառնալով ազգային միասնության խնդրին, մեծ բանաստեղծ, ՀՍՌԿ նշանավոր գործիչ Վ.Թեքեյանը գրում է. «Ամէն բանէ առաջ... մեր համերաշխութեան նպատակը պիտի ըլլար ժողովուրդին հասկցնել աղէտին մեծութիւնը, ընդհանուր յուզումի, գթութեան և վրէժխնդրութեան այնպիսի ոգի մը առաջ բերել, որ ոչ ոք կարենայ իր պարտականութիւնը կատարելէ փախուստ տալ, որով միացած մարմիններն ալ կարենան ըստ արժանւոյն հայթայթել թէ գթութեան և թէ կռուի գործին իրենց օժանդակութեան մեծագոյն բաժինը»:[330] Հեղինակը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր համազգային նշանակության խնդրի վերաբերյալ իրար շուրջ համախմբվելու, հզոր բռունցք կազմելու փոխարեն անարդյունք վեճերն էլ ավելի են խորացնում պառակտման սեպը կուսակցությունների միջև: Թեքեյանն օրինակ է բերում Եգիպտոսում ազգային կուսակցությունների կողմից ձեռնարկված կամավորական շարժման համար հանգանակության խնդիրը, գրելով. «Այս ոգիով ալ վիճեցան անոնք երկար ու ջերմ, որոշելու համար, թէ կամաւորներու դրամը Ազգային բիւրոյին, թէ կաթողիկոսին միջոցով պիտի հասցուեր նպատակին և համաձայնելու կամ չկրնալ համաձայնելու համար, թէ իրենց մեջէն ո՞ր անդամները պիտի կազմէին այստեղի խառն մարմինը»:[331] Հեղինակը խոր ցավով ու ափսոսանքով է գրում, որ այս աղմկահարույց հանգանակության արդյունքը «ողբալի գումար մըն է բաղդատմամբ պէտքին և եգիպտահայ կարողութեան»:[332] Այստեղ, անշուշտ, հեղինակն իրեն հատուկ անաչառությամբ չի փորձում արդարացնել դամկավարներին, այլ նմանատիպ անարդյունք գզվռտոցի համար իրավացիորեն մեղադրում է բոլոր կուսակցություններին:

Նույն ոգին է թևածում մեկ այլ նշանավոր դամկավարի՝ Վ.Մալեզյանի խոսքում: Նա գրում է. «Եթէ չկրցանք ազգային աննախընթաց դժբախտութեան սա ճգնաժամային շրջանին մրջիւններու պէս քով քովի գալ և իբրև մէկ մարմին ճգնիլ ու տքնիլ, եթէ չի կրցանք գոնէ նպաստի գործը վեր բռնել ամէն կիրքէ և հաշիւէ՝ ի սէր տառապակոծ

330. «Արև», 1916, օգոստոսի 4:
331. Նույն տեղում:
332. Նույն տեղում:

գաղթականներուն և տարագրյալներուն, ո՞ր ժամուն, ո՞ր գործին առթիւ պիտի յաջողինք ինքնզինքնիս ընդունակ ընծայել լաւագոյն համագործակցութեան»:[333] Հեղինակը դրվատանքով է խոսում հասարակ ժողովրդի ծոցից դուրս ելած հայ մարդկանց մասին, որոնցից շատերը «եղբայրական օգնութեան նուիրականութենէն զգացուած, երբեմն գերագոյն զոհողութեանց մէկէ աւելի գեղեցիկ օրինակ պարզեցին»:[334] Մյուս կողմից՝ հոդվածագիրը ցավով է նշում, որ այդ օրինակները բնավ «չի ցնցեցին մեր հարուստներուն անողոք սրտերը: Արդարև, անոնցէ շատ քիչեր երևան բերին պատուաբեր վեհանձնութիւն մը, և սակայն չի գտնուեցաւ մեր մեջ հարուստ մը, որ բառին բուն իմաստովը զոհողութիւն մը ընէր ներկայ դժնդակ պարագաներուն մէջ»:[335] Հեղինակն օրինակ է բերում Ֆրանսիայում հաստատված մի հույն հարուստի, որն իր ամբողջ կարողությունը տրամադրել է իր ժողովրդի պաշտպանության գործին:

Ի դեպ, խոսելով ազգային համագործակցության մեկ այլ կողմի մասին, ՀՍՌԿ հիմնադիրներից Լ.Մկրտչյանը[336] գրում է, թե անհնար է պատկերացնել ազգային միասնություն առանց ներքին կրոնադավանական համերաշխության: Անդրադառնալով հայ կաթոլիկների հարցին հեղինակը ցավով նշում է, որ նրանք ազգությունից վեր են դասել իրենց կրոնական դավանանքը, և այս հանգամանքը խիստ բացասաբար է անդրադարձել հայ ժողովրդի միասնության վրա: Համոզված ռամկավարը հայության համար ամենածանր պահերին դիմում է հայ կաթոլիկներին, մասնավորապես եգիպտահայ, հիշեցնելով նրանց ազգային ծագման և ազգային դրոշի ներքո համախմբման անհրաժեշտության մասին, առժամանակ մոռանալով դավանաբանական վեճերը: Հոդվածագիրը փաստերով ցույց է տալիս, որ կրոնական տարբերությունները նշանակություն չունեցան կոտորածների ու տեղահանության ժամանակ, որ թուրքերը հաշվի առան նախ և առաջ ազգային հանգամանքը՝ նրանց համար կաթոլիկ կամ առաքելական լինելուց զատ, նախ և առաջ կարևոր էր հայ լինելու հանգամանքը:

---

333. Նույն տեղում, հոկտեմբերի 11:
334. Նույն տեղում:
335. «Արև», 1916, հոկտեմբերի 11:
336. Նույն տեղում, 1917, սեպտեմբերի 17:

Ինչևէ, անկախ ամեն ինչից ՀՍՌ կուսակցությունն առաջ է մղում համերաշխության և համագործակցության խնդիրը: «Վան-Տոսպը» հրապարակում է Ա.Չոպանյանի նամակը, որը կոչ է անում բոլոր կուսակցություններին «առժամանակ մոռանալ վեճ ու կռիվ և համերաշխվել դարմանելու վերքերը»:[337]

Հայ ազգային կուսակցությունների միության անհրաժեշտության մասին Կահիրեի «Արև» թերթում հանդես է գալիս Լևոն Մկրտչյանը: Հեղինակը գտնում է, որ անկախ իրենց ազգօգուտ գործունեությունից, հայ ազգային կուսակցությունների անջատ գործելակերպն ազգի համար տվյալ պահին օգտակար չէ: Մկրտչյանն առաջ է քաշում Ազգային Միացյալ կուսակցություն ստեղծելու գաղափարը, ուր բոլորը պետք է համախմբվեն գլխավոր նպատակի արևմտահայության փրկության համար: Սակայն հեղինակը նշում է, որ դա հեշտ լուծվող խնդիր չէ ու կարելի է թերևս կուսակցություններն իրար չձուլել, այլ համախմբել բոլորի ուժերը և մեկ ճակատ կազմել: Հոդվածի վերջում Մկրտչյանը հարցնում է. «Ինչո՞ւ համար մեր կուսակցութիւնները մինչև ցարդ չի համերշխեցան և արդեօք դժուա՞ր կամ անկարելի՞ է այս բանը»:[338] Ինքն էլ տալիս է պատասխանը. «Մեզի իրարմէ բաժնողը, մեր համագործակցութիւնն արգելողը ուրիշ բան չէ, բայց եթէ մեր կուսակցական «ես»-ը»:[339] Ռամկավարները գտնում էին նաև, որ բացի կուսակցություններից իրենց ուժերը պետք է միավորեն նաև բարեգործական մարմինները: Այս առումով «Վան-Տոսպը» գրում էր. «Ունինք բազմաթիւ գաղթական մարմիններ: Եղբայրական օգնութիւնը, Բաքուի կոմիտէները և Կանանց, Օրիորդաց և այլ բազմապիսի միութիւններ, աւելցած դեռ օտար մարմիններ, որոնք բոլորն ալ նույն նպատակի կը ծառայեն»:[340] Կոչ է անում միավորվել և համախմբել իրենց աշխատանքը:

1916թ. որոշ ընդմիջումից հետո լույս է տեսնում Բոստոնի «Ազգի» բացառիկ համարը: Այստեղ «Թէ ի՞նչ կրնանք ընել» վերլուծական հոդվածով հանդես է գալիս Պիտսբուրգի համալսարանի դոկտոր

---

337. «Վան-Տոսպ», 1916, N 13, փետրվարի 7:
338. «Արև», Կահիրե, 1916, հոկտեմբերի 9:
339. Նույն տեղում, հոկտեմբերի 13:
340. «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, N 13, փետրվարի 21:

Ա.Լուսյանը: Հեղինակը ցույց է տալիս հայ իրականության հետևյալ թերի կողմերը, որոնք մեծապես նպաստել են հայոց կոտորածներին՝

ա) Համազգային շահեր արտահայտող և ազգային պաշտպանությունը կազմակերպելու ընդունակ կենտրոնական կազմակերպության բացակայություն:

բ) Ազգային կուսակցություններն իրենց անջատ-անջատ գործունեությամբ. անհրաժեշտ ու սպասված քայլեր չձեռնարկեցին: Հեղինակի բնորոշմամբ «երևան եկաւ ազգային քաղաքագիտական խընդիրներու մէջ մեր սոսկալի տգիտութիւնը»:[341] *Լուսյանը գտնում է, որ արտասահմանի հայերը չպետք է իրենց համակրանքն ու աջակցությունը հայտնեին դաշնակից երկրներին և զինվորագրվեին նրանց բանակներին, որովհետև դրանով «Թուրք և Գերման սև ծրագիրներու գործադրութեանը առիթ մատուցեցինք»:*[342] *Իհարկե, հոդվածագիրն իրավացի է այն հարցում, որ «Տաճկաստանի մեր եղբայրներուն ապահովութեան համար ձեռք առնուած միջոցները» խիստ անբավարար եղան, սակայն արտասահմանի հայության կողմից դաշնակիցներին զորավիգ լինելը չէր այն հիմնականը, որ պատճառ դարձավ հայության մեծ կոտորածին:*

Ի՞նչ միջոցներ, ի՞նչ լուծումներ է առաջարկում հեղինակը.

1. Արևմտահայության կոտորածներից ու գաղթից հետո «Տաճկահայ մարմինը պիտի սկսի կենտրոնանալ Կիլիկիայում և Միջագետքում: Սրանք տնտեսապես և աշխարհագրական տեսակետից ավելի նպաստավոր պայմաններ ունեն, քան Հայաստանը»:

2. «Մեր ազգային ուրույնութիւնը անվնաս պահելու առաջին և էական պայմանն է՝ մշակել և զորացնել մեր ազգային մշակույթը իր երկու արմատական ճյուղերով՝ ազգային դաստիարակութիւն և ազգային եկեղեցի»:[343] *Ազգային դաստիարակության խնդիրը, ըստ հեղինակի՝ դրված է Ամերիկայում և Եվրոպայում կրթված հայ երիտասարդների ուսերին, ինչ վերաբերում է եկեղեցուն, ապա Լուսյանը գտնում է. «Մենք դեռ պատմութեան այն հոլովոյթին մէջ կ'ապրինք, որ եկեղեցին պէտք է ըլլայ մեր ազգութեան հիմնական զօրը»:*[344] *Հե-*

---

341. «Ազգ», Բոստոն, 1915-1916, բացառիկ թիվ, էջ 22:
342. Նույն տեղում:
343. Նույն տեղում:
344. Նույն տեղում:

ղինակը զարգացած և հզոր ազգերի օրինակով ցույց է տալիս, որ պատմության շրջադարձային և բախտորոշ պահերին նրանք ոչ թե եկեղեցուն մեկուսացրել են պետությունից, այլ այն դարձրել ազգային կրոնական դաստիարակության հզոր միջոց և ծառայեցրել իրենց շահերին:

Նմանատիպ վերլուծականով «Վան-Տոսպում» էլ հանդես է գալիս ՀՍՌԿ-ի հին անդամներից Վարդան Պապիկյանը. «Հայկական հարցին շուրջ» հոդվածում հեղինակը հետադարձ հայացք է գցում Հայկական հարցի անցած ուղու վրա և փորձում վերաիմաստավորել այն: Արտահայտելով ռամկավարների տեսակետները այդ հարցում, հոդվածագիրը միանշանակ չի դիտում եվրոպական դիվանագիտության դերը հայկական խնդրում. բացարձակորեն չի արդարացնում և չի դատապարտում նրա միջամտությունը Հայկական հարցում, այլ փորձում է ամեն ինչ տեսնել իր տեղի ու ժամանակի համատեքստում: «Կարելի՞ է քննադատել օտար դիւանագիտութեանը դիմելու հայերի քայլը»,- հարցնում է Պապիկյանը, և ինքն էլ պատասխանում, որ այսօր կարելի է, բայց մինչ եղեռնը հայ ժողովուրդը չէր կարող ունենալ ավելի քաղաքական իմաստնություն և գուշակել հեռավոր ապագան: «Չէ՞ որ ժողովուրդներն էլ ունեն իրենց անփորձութեան շրջանները, որոնց մեջ նրանց գործած արարքները կարելի չէ չափել յետագայ տարիների չափով»,[345]- գրում է հեղինակը:

Հոդվածագիրը ցույց է տալիս, որ հետագա տարիներին հայերն արդեն համոզվեցին, որ Եվրոպան չի փրկելու իրենց, բայց ընդգծում է նաև, որ «նրա (Եվրոպայի - Ս.Ս.) սարսափն էր միայն, որ արգելում էր թուրքին մահացու վերջին հարուածը հասցնելու հայ ժողովրդի գլխին»:[346]

Պապիկյանը չի մեղադրում Պողոս Նուբարին բարենորոգումների խնդրով եվրոպական երկրներին դիմելու համար, գտնելով, որ «այն չէր կարող վնասակար հետևանք ունենալ և կարող էր նոյնիսկ որոշ օգուտ բերել, եթէ չլիներ պատերազմը»:[347] Սակայն հեղինակի այն հոռետեսական հարցին, թե «որ հանճարեղը կարող էր գուշակել, թէ ի-

345. «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, հունվարի 24:
346. Նույն տեղում:
347. Նույն տեղում:

տալական ու բալկանեան պատերազմներից հետո յաջորդ տարին պիտի բռնկէր ցնորք դարձած ընդհանուր պատերազմը և Թուրքիան իր ձեռքերը պիտի գտնէր բոլորովին ազատ»,[348] կարելի է վստահաբար պատասխանել, որ հենց Օսմանյան սահմանադրության շրջանում, հատկապես Ադանայի կոտորածից հետո արևմտահայ հասարակության մեջ արմատավորվում էր այն մտայնությունը, որ հետագա աղետներից փրկվելու համար նախ անհրաժեշտ է զարկ տալ ինքնապաշտպանությանը և ապավինել սեփական ուժերին ու միջոցներին: Հենց ռամկավարների շրջանում (հատկապես վասպուրականցի) զգալի թվով գործիչներ արդեն հանգել էին այդ մտքին և ձեռնամուխ եղել ինքնապաշտպանության գործին: Շարունակելով թեման, հեղինակը ցավով է նշում, որ դիվանագիտական գործունեությամբ տարվելով և «կառավարութիւններուն ռոմանտիկ առաքելութիւններ վերագրելով»՝ մենք մոռացանք «ուժերի իրական յարաբերութիւնը»,[349] և փոխանակ ողջամիտ հաշվարկին ապավինելու և վտանգավոր արկածախնդրությունների մեջ չմտնելու, տուրք տվեցինք զգացմունքներին. կազմակերպեցինք կամավորական խմբեր և փորձեցինք ապստամբություն բարձրացնել: Սա, իհարկե նոր տեսակետ չի և քննություն չի բռնում, որովհետև կամավորական շարժումը որքան էլ ժողովրդի հոգու զգացմունքային ու ռոմանտիկ դրսևորում էր, այնքան էլ խորքային պատճառներ ուներ. նախ այն իսկապես ժողովրդի կամքի արտահայտություն էր և հետո՝ նրանում առկա էր օտարերկրյա պետությունների դավադիր ձեռքը:

Ամփոփելով՝ Պապիկյանը եզրակացնում է. ա) Արևմտյան Հայաստանում ապստամբական շարժումներ հայերի կողմից ամենևին գոյություն չեն ունեցել. դա թուրքական կողմի, նրա դիվանագիտության հրահրածն էր: Հայերը ջանացել են դիմել միայն ինքնապաշտպանության՝ թուրքական հալածանքների ու հարստահարումների դեմ. բ) իսկ ինչ վերաբերում է կամավորական շարժմանն ու հայկական կոտորածներին, ապա հեղինակն իրավացիորեն գտնում է, որ «մեր պարտքն էր խուսափել թշնամուն որևէ առիթ ներկայանալուց և գործել ծայրայեղ աչալրջութեամբ, բայց այդպէս չստացուեց: Աղմու-

348. Նույն տեղում:
349. Նույն տեղում:

կով, ցոյցով, սահմանից այն կողմի վիճակը հաշուի չառնելով, լայն խորհրդակցութեան չենթարկած գործ ձեռնարկուեց և յանգեցրեց կատարված իրողութեանը»:[350]

Սակայն, միևնույն ժամանակ հեղինակը շեշտում է, որ կոտորածները տեղի էին ունենալու նաև անկախ վերոհիշյալ հանգամանքներից, պարզապես «մեր պարտքն էր առաւել զգօն լինել, որը չեղաւ»:[351] Այստեղ պետք է նկատել, որ ռամկավարներն իրենց քննադատության մեջ մոռանում էին, որ հայության ճակատագիրը ոչ թե հայերն ու նրանց կուսակցություններն էին տնօրինում, այլ մեծ տերությունները՝ ելնելով իրենց քաղաքական շահախնդրություններից: Տերություններ, որոնց խղճին է ընկնում մեր ժողովրդին հասած մեծագույն դժբախտությունը: Չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք ևս. ազատագրական պայքարի ողջ ընթացքում արևմտահայերը շարունակաբար դիմում էին արևելահայերին տարաբնույթ օգնություններ կազմակերպելու խնդրանքով:

Վերջում Պապիկյանը, որպես հետագա գործելակերպ, առաջարկում է արևմտահայերին ու արևելահայերին գործել տարբեր ուղղություններով, այսինքն, «Երկրի» գործերի մեջ առաջնությունը թողնել արևմտահայերին, իսկ Կովկասում՝ արևելահայերին. «Տեղացին աւելի լաւ կ'իմանար տեղանքը»:[352] Այսպիսին էր ՀՍՌ կուսակցության տեսակետն այդ ժամանակ:

Ինչպես հայ ազգային մյուս կուսակցություններին, այնպես էլ ռամկավարներին, մտահոգող կարևոր խնդիրներից մեկը՝ Թուրքիայի ապագա քաղաքական կառուցվածքի հարցն էր, որից անմիջականորեն կախված էր արևմտահայության ճակատագիրը: Այս հիմնահարցին է նվիրված Միհրան Տամատյանի «Ասիական Թուրքիոյ ապագան» հոդվածաշարը, որը լույս տեսավ 1916թ. «Արև» թերթում:[353] ՀՍՌԿ տեսաբանը գտնում է, որ Թուրքիայի համար լավագույն քաղաքական կառուցվածքը նրա վերածումն է Շվեյցարիայի տիպի մի պետության: Տամատյանը ցույց է տալիս նաև, որ թուրքական իշխանությունները, ան-

350. Նույն տեղում:
351. Նույն տեղում:
352. Նույն տեղում:
353. Հոդվածաշարը լույս է տեսել «Արևի» 1916 օգոստոսի 4-ի, 7-ի և հոկտեմբերի 16-ի համարներում:

կախ սուլթանական կամ սահմանադրական վարչաձևի առկայությունից, անկարող են գտնվել քիչ թե շատ հանդուրժելի պայմաններ ստեղծել այդ երկրի հպատակ ժողովուրդների կյանքի համար և կառավարությունների վարած քաղաքականությունը «մշտական պատճառ մը դարձաւ ճնշումի և ըմբոստացումի, դժգոհութեան, թշուառութեան, դաւադրութեան և ապստամբութեան»:[354] Տամատյանը ճշմարտացիորեն նկատում է, որ դարերի փորձառությունը մեկ անգամ ևս ապացուցել է, որ թուրքերն ի վիճակի չեն ուրիշ ժողովուրդներին կառավարելու «և ոչ իսկ ինքզինքնին կառավարել»: Այստեղից էլ հետևությունը. թե՛ Թուրքիայի և թե՛ Եվրոպայի ապահովության համար անհրաժեշտ է, որ Թուրքիայում նշանակվեն եվրոպական կառավարիչներ, որն էլ կլինի Թուրքիայում ապրող ժողովուրդների անդորրության ու բարօրության երաշխիքը: Տամատյանը ցույց է տալիս, որ եվրոպացի կառավարիչների նշանակման խնդիրը բախվում է լուրջ դժվարությունների, որովհետև «եւրոպական զանազան պետութիւններ առանձին զօրաւոր շահեր ունէին այդ երկրին մէջ»:[355] Այնուհետև հոդվածի հեղինակը կանգ է առնում յուրաքանչյուր տերության Թուրքիայում ունեցած շահերի հարցի վրա և մեկ առ մեկ լուսաբանում այս խնդիրը: Ռուսաստանը ձգտում է գրավել Կ.Պոլիսն ու նեղուցները, Ֆրանսիան՝ Կիլիկիան և Սիրիան, Իտալիան՝ իր բաժինը ցամաքային Թուրքիայում ու Հոռոս կղզին, Հունաստանը՝ Իզմիրն իր շրջակայքով: Տամատյանը ցույց էր տալիս նաև, որ եվրոպական պետությունների միջև կային լուրջ հակասություններ:[356]

1916թ. «Արև» թերթում Տամատյանը քննարկման առարկա է դարձնում նաև արևմտահայության քաղաքական կողմնորոշման հարցը: Նա ցույց է տալիս, որ հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի կողմն է և մեկ առ մեկ փաստերով պատճառաբանում է այդ իրողությունը: Նա գրում է. «1877-78թթ. արևելեան պատերազմից յետոյ մինչև ներկայ րոպէն եթէ եղել են Թուրքաց Հայաստանի համար ազատարար ձեռնարկներ, դրանց նախաձեռնութեան պատիւը պատկանում է մասնաւորապէս Ռուսաստանին: Թէ՛ Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդուածը, թէ՛ 1912-ի Հայաստանի ավտոնոմիայի ծրագիրը

354. «Արև», Կահիրե, 1916, օգոստոսի 4:
355. Նույն տեղում:
356. Նույն տեղում, օգոստոսի 7:

բոլոր դէպքերում էլ մեզ հետ է եղել Ռուսաստանի նախաձեռնութիւնն ու աջակցութիւնը»:[357] Տամատյանը նշում է, որ անգլիացիների ու ֆրանսիացիների հանդեպ հայ ժողովուրդը նույնպես համակրանք է տածում, որ անգլիացիներն ու ֆրանսիացիները նույնպես անտարբեր չեն հայ ժողովրդի նկատմամբ, բայց նա ընդգծում է այն միտքը, որ հայ ժողովուրդն ավելի համոզված է նրանում, որ առանց Ռուսաստանի բարյացակամության «պլատոնական կդառնա այդ համակրանքը»:[358] «Թուրքահայերը դէպի Ռուսաստան ունեցել են դարաւոր, անայլայլ համակրանք, - գրում է Տամատյանը,- և այսօր նրանք իրենց ակնկալութիւնները իրականացած տեսնելու հավանականութիւնը փնտռում են ամէնից առաջ Ռուսաստանի մօտ»:[359]

ՀՍՌ կուսակցության մյուս պաշտոնաթերթ «Վան-Տոսպն» այս հարցին անդրադառնում է «Թուրքաց Հայաստանի ապագայի մասին» առաջնորդողով, որտեղ ցույց է տրվում, որ արևմտահայությունն իր ազատագրության հույսը կապել է Ռուսաստանի, ոչ թե Անգլիայի կամ Ֆրանսիայի հետ: Իր այս տեսակետը պարբերականը հաստատում է պատմական համառոտ էքսկուրս կատարելով և փաստերի համադրմամբ նկարագրում է հայ-ռուսական հարաբերությունները մինչև 1977-78թթ. ռուս-թուրքական պատերազմը, ապա դրանից հետո և շեշտում Ռուսաստանի հայանպաստ դիրքորոշումը ինչպես Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերում, այնպես էլ 1912թ. ներկայացրած հանրահայտ ինքնավարության ծրագրում: «Թուրքահայերը դէպի Ռուսաստան ունեցել են դարաւոր անայլայլ համակրանք,- գրում է «Վան-Տոսպը»,- և այսօր նրանք իրենց ակնկալութիւններն իրականացած տեսնելու հաւանականութիւնը փնտռում են ամէնից առաջ Ռուսաստանի մօտ, ամէնից առաջ Ռուսաստանի մօտ»:[360]

Որպես հավատարմության գրավական «Վան-Տոսպը» զգուշացնում է հայերի երկարամյա դաշնակից Ռուսաստանին մի հրատապ ու կարևոր խնդրի կապակցությամբ. դա ռուսական բանակի թիկունքում, այն է՝ գրավյալ տարածքներում մնացած քրդերի հարցն է: Հեղինակը «ծոցում պահուած օձերի» հետ է համեմատում նրանց, ովքեր, ձևակա-

357. «Արև», 1916, հոկտեմբերի 16:
358. Նույն տեղում:
359. Նույն տեղում:
360. «Վան-Տոսպ», 1916, օգոստոսի 28:

նորեն հայտնելով իրենց հնազանդությունը Ռուսաստանին, հարմար պահին «նամարդ բորենու նման յարձակում են երեկուայ իր կեանքը բաշխողի վրայ, հոշոտում» նրան, կողոպտում, ջարդում առանց խնայելու և «աւելի մեծ վտանգ են դառնում բանակի համար, քան թէ առջևի թշնամին»:[361] Այդ վտանգը չեզոքացնելու համար խորհուրդ է տրվում կիրառել վճռական միջոցներ. հավաքել քրդերի ձեռքում կուտակված զենքերը, «ոճիրների առթիւ մի քանի ազդեցիկ դասեր տալ»,[362] քանի որ այդ «զազրելի վայրենին» միայն ուժի առջև խոնարհվել գիտի: «Պէտք է անվնաս դարձնել այդ օձերը կամ հակառակ պարագային, ջախջախել նրանց գլուխը»,[363] - առաջարկում է «Վան-Տոսպի» առաջնորդողը և եզրակացնում, որ դա է պահանջում ռուսական բանակի շահը, հավատարիմ ռուսասեր հայի շահը և վերջապես արդարությունը:

Հայ-քրդական հարաբերությունների, հայկական կոտորածներում քրդերի խաղացած բացասական դերի ու քրդական ազգային զարթոնքի հարցերին անդրադարձել է ՀՍՌԿ-ի գաղափարախոսներից Վ.Մալեզյանը: Խոսելով քրդական շարժման և նրա «Քյուրդիստան» կիսամյա թերթի մասին, Մալեզյանը 1917թ. «Վան-Տոսպում» տպագրված հոդվածաշարում գրում է, որ այդ թերթը հրատարակվել է դեռ 20 տարի առաջ Կ.Պոլսում, ապա Շվեյցարիայում, այնուհետև երկար դադարից հետո կրկին վերահրատարակվել է «քիւրտերու դատը պաշտպանելու համար»:[364]

Հեղինակը տարակուսանքով ու միաժամանակ զայրույթով է նշում, որ «ազատութեան ու մարդասիրութեան քարոզիչ» այդ թերթը բացարձակ լռություն է պահպանում հայկական կոտորածների մասին և դա այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհն արձարձում է այդ հարցը: Ավելին, անդրադառնալով «Քյուրդիստանի» քաղաքական ծրագրին, Մալեզյանը գրում է, որ թեև այն տակավին հստակեցված չէ, սակայն թերթի առաջաբանում բացահայտված է «քիւրտ ռահիրաներուն պահանջը», որն է՝ «բնական իրաւունքներ և վարչական ազատութիւն»:[365] Սկզբունքորեն դեմ չլինելով քրդերի ազգային ինքնա-

361. Նույն տեղում, օգոստոսի 7:
362. Նույն տեղում:
363. Նույն տեղում:
364. Նույն տեղում:
365. Նույն տեղում:

վարության ձգտմանը, հեղինակն ուշադրություն է հրավիրում այն հարցին, թե արդյո՞ք քուրդ ժողովուրդն ունի բավականաչափ քաղաքական հասունություն «ինքնավարութեան արժանի նկատելու համար»: Մինչդեռ հայտնի է, որ «քանի մը զարգացած քիւրտերէ, որ մատի վրայ կը համրուին և երկրէն դուրս կ'ապրին, քիւրտ ժողովուրդը կը բաղկանայ մեծ մասամբ վաչկատուն և ասպատակ ցեղերե, որ ցարդ գրեթէ ինքնագլուխ ապրած են, կողոպտելով, կեղեքելով և կոտորելով դրացի անմեղ համայնքներուն, յատկապես՝ հայերուն»:[366] Այստեղից հեղինակը եզրակացնում է, որ որքան գովելի է քրդերի ազատության և ինքնավարության ձգտումը, այնքան գործնականում «ծիծաղելի է Քիւրդիստանի ինքնավարութեան գաղափարը, քանզի ո՞ւր են քիւրտ գործիչները և վարիչները, որ ժամանակի ոգւոյն համաձայն կարող պիտի ըլլային կառավարել երկիրը լաւագոյն պայմաններով»,[367] որ նրանք գործիք չդառնային թուրքի ձեռքին, - հարցնում է Մալեզյանը: Նա չի տարակուսում, հաստատելով այն իրողությունը, որ քուրդ ժողովուրդը բազում մղոններով հեռու է քաղաքակրթությունից, չունի քաղաքական որևէ գիտակցություն, իսկ տգիտությունն աչքի զարնող միակ երևույթն է, որ «կը տարածուի ամբողջ քիւրտ աշխարհին վրայ»:[368] Արտահայտելով ՀՍՌ- կուսակցության տեսակետը, Մալեզյանը եզրակացնում է, որ հայերը պետք է ուշադրություն դարձնեն քրդական շարժմանը, քանզի քրդերը հայ ժողովրդի անմիջական հարևաններն են, շատ հաճախ ապրում են խառը, շերտընդմեջ, և անհրաժեշտ է մշակել ու զարգացնել հայ-քրդական հարաբերությունները հայ ազգային շահերին համապատասխան:

6. ՀՍՌԿ-ն եղեռնից հետո

Շարունակվող աշխարհամարտի պայմաններում 1916թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրում նախատեսվում էր, որ պատերազմի հաղթական ավարտի դեպքում Օսմանյան կայսրությունը տրոհվելու էր և դրա մաս կազմող Կիլիկիան մտնելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ՝ ոչ մի խոսք չկար Կիլիկիայում հայե-

366. Նույն տեղում:
367. «Արև», 1917, սեպտեմբերի 14:
368. Նույն տեղում:

րի ինքնավարության մասին:[369] Ֆրանսիական պաշտոնական թերթերն սկսեցին հրատարակել հոդվածներ, որոնցում ձգտում էին ցույց տալ Ֆրանսիայի «պատմական իրավունքները» Կիլիկիայում: «Իրողութիւնն այն է,- գրում էր այդ ժամանակ հայ ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ ընտրված Մ. Տամատյանը Կ.Պոլսի Զավեն պատրիարքին,- որ ֆրանսիացիք որևէ տրամաղրութիւն չունեն հրաժարվելու այդ հարուստ, արգավանդ ու գեղեցիկ երկրեն»:[370]

Ֆրանսիան իր գաղութատիրական նկրտումները Կիլիկիայի նկատմամբ քողարկում էր տեղի հայերին ինքնավարություն շնորհելու խոստումով, փորձելով աշխարհով մեկ սփռված հայությանը համոզել, որ ամեն ինչով օժանդակի իրեն, որովհետև Մերձավոր Արևելքում ֆրանսիական գործող բանակը «շատ թույլ էր և Ֆրանսիայից էլ որևէ համալրում չէր սպասվում»:[371] Արդյունքում, ֆրանսիական իշխանություններն ընդառաջ գնացին կոտորածներից ազատված հայ տարագիրներից Արևելյան լեգեոն կազմելու մասին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկին: 1916թ. Լոնդոնում Հայկական հարցի կապակցությամբ ընթացող բանակցություններում որոշվեց որ Անգլիան ու Ֆրանսիան երաշխավորում և պաշտպանում են հայերի ինքնորոշման իրավունքը Կիլիկիայում՝ ֆրանսիական հովանավորության ներքո: Ի վերջո, 1916թ. նոյեմբերի 28-ին Ֆրանսիան որոշեց Կիպրոսում հայերից կազմել զորաջոկատ, Արևելյան լեգեոն անունով: Վերջինս պիտի կռվեր Թուրքիայի դեմ, և «յանձն պիտի առնէր իբրև օժանդակ ուժ ծառայել ֆրանսական դրօշին տակ, պատերազմի ընթացքին օգտագործելու համար ասիական Թուրքիոյ մէջ»:[372]

ՀՍՌ- կուսակցությունը, որը ուշի ուշով հետևում էր ու տեղյակ էր այս գործընթացին, ողջունում է «Արևելյան լեգեոնի» ստեղծման գաղափարը: Կուսակցության Եգիպտոսի շրջանակի ղեկավարությունը միացած տեղի հայ ազգային մյուս կուսակցությունների ներկայա-

---

369. Սահակյան Ռ.Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921, Երևան, 1970, էջ 108:
370. ՀԱԱ, ֆ. 190, Բ 507, գ. 129, թ. 245-261:
371. Սահակյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 113:
372. Գարամանուկեան Ա., Հայկական լեգեոնը պատմական, իրաւական և քաղաքական հարցերու լոյսին տակ և վաւերագրեր, Պէյրութ, 1974, էջ 42:

ցուցիչներին հանդիպում են Եգիպտոս ժամանած ֆրանսիական զինվորական ներկայացուցչի հետ: Վերջինս պարզաբանում է լեգեոնի ստեղծման նպատակը, որը բոլորի կողմից ընդունվում է խանդավառությամբ:[373] Եգիպտոսի հայ կուսակցությունները, ներգրավելով նաև ազգային մյուս հաստատություններին, կազմում են Եգիպտոսի «Հայ ազգային միությունը», որի նպատակն էր զորավիգ լինել ֆրանսիական կառավարության նախաձեռնությանը և կազմակերպել կամավորների հավաքագրման գործը:[374] Այդ նպատակով ներկայացուցիչներ են ուղարկվում Ամերիկա՝ ՍԴ հնչակյաններից՝ Ս.Սապահ-Գյուլյանը, դաշնակցությունից՝ Արտավազդ Հանըմյանը, ռամկավարներից՝ Մ. Տամատյանը: Ինչպես ռամկավարներին, այնպես էլ ամբողջ հայությանը ոգևորել էին Անգլիայի և Ֆրանսիայի խոստումներն «Արևելյան լեգեոնի» հայ կամավորներին ֆրանսիական սպաների կողմից մարզելու, ֆրանսիական զինվորների նման վճարելու և պատերազմում հաղթանակից հետո Կիլիկիայում քաղաքապահ զինվորի՝ միլիցիայի դեր կատարելու մասին: Ֆրանսիական կառավարությունը ստանձնում էր նաև վիրավորների բուժման գործը, ինչպես նաև հանձն առնում վճարել Ամերիկայից մեկնող կամավորների ճանապարհածախսը:[375] Սա մեծ ոգևորություն է առաջացնում ամերիկահայության շրջանում. «Երկու հզօր կառավարութեանց կողմէ եղած դրական խոստումները, ո՞ր մէկ հայուն սիրտը անհուն հրճուանքով չի պիտի լցնի, ո՞ր մէկ հայն էր, որ ի տես մէկ միլիոն նահատակներու չի պիտի ուզեր իր վրէժխնդրութիւնը առնել իր դարաւոր թշնամիէն: Վրէժխնդրութեան ժամը հնչած էր, ամերիկահայը մէկ սիրտ ու մէկ հոգի ընդառաջ կ'երթար իր պարտականութիւնը կատարելու»: [376] 1917թ. մարտի 16-26-ը Ամերիկայի չորս հայկական կուսակցությունները՝ ՀՍՌԿ, ՀՅԴ, ՍԴՀ և Վերակազմյալ հնչակյան, բանակցելով և համաձայնության գալով հիմնական սկզբունքների շուրջ, ապրիլի 2-ին հրավիրում են նաև հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներին: Այստեղ որոշվում է կազմել «Ամերիկայի

373. Ճիզմեճեան Մ., Նշվ. աշխ., էջ 345:
374. Նույն տեղում, էջ 346:
375. Նույն տեղում, Նշվ. աշխ., էջ 349:
376. Նույն տեղում:

հայ ազգային միութիւն»: Միությունն ընտրում է գործադիր մարմին հետևյալ կազմով՝

Մ. Սվազլյան - ատենապետ (վերակազմյալ հնչակյան)

Կ. Մանուկյան - փոխատենապետ (հայ ավետարանական)

Մ. Համբարձումյան - Ա ատենադպիր (դաշնակցական)

Ս. Մալեմեզյան - Բ ատենադպիր (սահմ. ռամկավար)

Գ. Կիրակոսյան - գանձապետ (ՀԲԸՄ)

Մ. Տեր-Մանվելյան - հաշվապահ (հայ առաքելական)

Ե. Միրվարդ - ատենադպիր (ՍԴ հնչակյան):[377]

Ազգային միության նպատակ էր հռչակվում կամավորական շարժման կազմակերպումն ու աջակցումը, հայ գաղթականների օգնության կազմակերպումը, հայանպաստ քարոզչությունը և այլն:

Միությունն իր նիստերում քննարկում է Փարիզի ազգային պատվիրակության հիմնական ծրագիրը և միաձայնությամբ ընդունում այն: Նշվում է, որ Ամերիկայի հայ ազգային միությունը պետք է գործակցի և սերտ կապ պահպանի Փարիզի ազգային պատվիրակության հետ:[378] Փաստորեն, Ազգային միությունը դառնում է Ազգային պատվիրակության ներկայացուցիչ մարմինը Ամերիկայում: Միությունը կոչ է անում ամեն կերպ աջակցել կամավորական շարժմանը և ակտիվորեն ձեռնամուխ է լինում ամերիկահայերից կամավորների հավաքագրման գործին: 1917թ. հունիսից մինչև նոյեմբեր կամավորագրվում են 1172 ամերիկահայեր:[379] Այս կապակցությամբ Մ.Ճիզմեճյանը գրում է. «Ամերիկահայ գաղութի համար թերևս այսքանը աննշան թիւ մը նկատուի, սակայն ճշմարիտ է, որ այդ թիւը պիտի մեծնար ու բազմապատկուէր, եթէ առաջին օրերէն իսկ Ֆրանսիայի կողմէն դժուարութիւն չի յարուցանեին կամաւորներու փոխադրութեան համար»:[380] Հայկական լեգեոնը իրեն փայլուն է դրսևորում ռազմական գործողություններում, հատկապես աչքի ընկնելով 1918թ. սեպտեմբերի 19-ին Արարայի ճակատամարտում (Պաղեստին):

---

377. Տամատեան Մ., Իմ յուշերս, Պէյրութ,1985,, էջ 112-113:
348. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 351:
379. Նույն տեղում, էջ 354:
380. Նույն տեղում, էջ 351:

▼▼▼

Հայկական կոտորածների, Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Վասպուրականի հայաթափման հետևանքով, Սահմանադրական ռամկավար կուսակցության Վանի շրջանային վարչությունը կազմալուծվեց: Կուսակցության շատ անդամներ զոհ գնացին ցեղասպանությանը, շատերն էլ, չդիմանալով գաղթի, սովի ու համաճարակների դժնդակ պայմաններին, մահացան: Կուսակցության վետերաններից Հովհաննես Գուլօղլյանը և Կարապետ Աճեմ-Խաչատրյանն իրենց մահկանացուն կնքեցին Երևանում: Հովսեփ Գույումջյանը գնաց Փարիզ, շատերը՝ Եգիպտոս, շարունակելու իրենց ազգանվեր գործունեությունը:[381]

Այսպիսի պայմաններում, 1917թ. ապրիլի 4-ին Երևանի Խրիմյանի անվան դպրոցի դահլիճում գումարվում է ՀՍՌԿ Երևանի ակումբային ժողովը (այն անվանում են նաև ՀՍՌԿ Վասպուրականի շրջանի ժողով): Ներկա էր կուսակցության 180 անդամ: Նախագահում էր Կ.Կարախանյանը: Ժողովն ընտրում է «Հայաստանի ժամանակավոր խորհուրդ» անունով մարմին,[382] որը թեև հանդես եկավ մի շարք գրավիչ առաջարկություններով ու հայտարարություններով, սակայն իրականում առանձնապես որևէ լուրջ գործունեություն չծավալեց: Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո «Վան-Տոսպը» պաշտպանում է փախստականների (գաղթականների) համագումար հրավիրելու կոչը:[383] Ռամկավարներն ակտիվ մասնակցություն ունեցան 1917թ. մայիսին Երևանում գումարված Արևմտահայ առաջին համագումարի աշխատանքներին: Համագումարի կողմից ընտրված Արևմտահայ խորհրդի 15 անդամներից չորսը ռամկավարներ էին (Ա.Դարբինյան, Վ.Պապիկյան, Ա.Թերզիպաշյան, Ն.Հակոբյան):[384] Երևանում վերաբացվում է ռամկավարների «Մ.Ավետիսյան» գրադարանը, որի ֆոնդերը պարունակում էին 1000-ից ավելի գիրք ու պարբերական:

1917թ. ապրիլի 24-ին Թիֆլիսում կայացավ Սահմանադրական ռամկավար կուսակցության Կովկասի և գրավված վայրերի շրջանա-

381. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 383:
382. Նույն տեղում:
383. «Վան-Տոսպ», 1917, մարտի 12:
384. «Ազգ», Բոստոն, 1918, փետրվարի 12:

յին պատգամավորական ժողովը:[385] Երկար քննարկումներից հետո ժողովի մասնակիցները որոշում են այսուհետև հրաժարվել եվրոպական պետությունների օգնության գաղափարից և Հայաստանի ապագայի հարցում հույս դնել միայն դեմոկրատական Ռուսաստանի օգնության վրա: Դրա մասին են վկայում Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը և իշխան Լվովին հասցեագրված հեռագրերը. «Վստահ լինելով, - գրում էին նրանք,- որ մեր դժբախտ հայրենիքի՝ Հայաստանի ապագա բախտաւորութիւնը կախուած է ռուսական յեղափոխութեան բարեյաջող վիճակից, մենք միացնում ենք մեր ձայնն ու ուժը բոլոր նրանց, որոնք տոգորուած են վերածնուող Ռուսաստանի ուժերի ամրապնդման գաղափարով»:[386] «Ռուսական յեղափոխութեան բարեյաջող վախճան» ասելով, ռամկավարները նկատի ունեին արևմտաեվրոպական տիպի սահմանադրական հանրապետության հաստատումը: Ընդհանրապես, փետրվարյան հեղափոխությամբ ոգևորված ՀՍՌԿ-ն, վերոնշյալ ժողովում ևս փառաբանելով փետրվարը և նրա բոլոր նվաճումները, միևնույն ժամանակ, անտեղի հետադիմական ու կործանարար էր համարում դասակարգային կռիվը և սոցիալիզմի քարոզչությունը:[387]

ՀՍՌԿ-ն պաշտպանում էր ապագա ժողովրդավարական Հայաստանի գաղափարը և դասակարգային պայքարից հրաժարվելը հիմնավորում էր նկատի առնելով «Թուրքահայաստանի նահապետական-աւատական կարգերը, ջարդերու հետևանք եղող համատարած ամայութիւնն ու նիւթական ստեղծագործութիւններու ոչնչացումը»:[388] Ի դեպ, դասակարգային պայքարի մերժումն առիթ է հանդիսացել, որ ՀՍՌԿ-ն որակվի «հետադիմական, պահպանողական, բուրժուական» պիտակներով: Ճիշտ է, ՀՍՌԿ-ն փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո սոցիալիստական հեղափոխությունը մերժում էր, սակայն դա հետևանք էր այն բանի, որ նրանք իրատեսներ էին, իրենց մաշկի վրա զգացել էին ռուսական դարասկզբի հեղափոխության հետևանքները, բավականին լավ

385. «Վան-Տոսպ», 1917, ապրիլի 25:
386. Նույն տեղում:
387. Ինչ է ռամկավարութիւնը, ռամկավար մատենաշար, թիվ 2, Պոստոն, 1948, էջ 19:
388. Նույն տեղում:

էին ճանաչում աշխարհի հզորներին, որոնք սեփական շահին կարող էին ստորադասել ամենավսեմ գաղափարներն ու ամենահանդիսավոր երդում-խոստումները: Նրանք սարսափած էին ռուսական բանակի քայքայումից: Ռամկավարների համար պարզապես անընդունելի էր, որ «զօրքի մի մասը թողած իր կարևոր գործը (պատերազմը հաղթական ավարտին հասցնելը - Ս.Ս.), զբաղվում է քաղաքական գործերով, միւս մասը վերադառնում է գիւղերը, որ մասնակցի հողի բաժանմանը... հրապուրւում է բոլշևիկների կոչերով, պատրաստ է տապալել ազատամիտ միասնութիւնը և ստեղծել սոցիալիստական կարգեր»:[389] Այստեղից էր բխում ռամկավարների գաղափարական հարկադրական վերադարձը դեպի նախահեղափոխական օրերը, երբ նրանց կարծիքով «անհրաժեշտ էր որոշել Հայաստանի ապագան»:[390]

Այս հարցերին փորձում է ամփոփիչ պատասխանել Ա.Դարբինյանը. «Ուրեմն մեզ համար ձեռնտու չէր կարող համարուել այդ յեղափոխութիւնը (փետրվարյանը - Ս.Ս.), մենք պիտի ուզէինք, որ դեռ ցարական իշխանութիւնը մնար և ռուս բանակի կողմից գրաւուած Հայաստանի հողերը կցուէին Կովկասյան Հայաստանին՝ Ռուսական տիրապետութեան տակ: Այդպէս կը մտածէինք մենք՝ ռամկավարներս, այդպէս կը մտածէր ողջ թուրքահայութիւնը: Բայց ռուս յեղափոխութիւնը հայերու համար չէր, որ բռնկած էր»:[391]

Ռուսական հեղափոխություններից հուսախաբված Ա.Դարբինյանը ծայրահեղության մեջ է ընկնում, որովհետև փետրվարյան հեղափոխության արդյունքում ստեղծված ժամանակավոր կառավարությունը եթե ինքնավարություն էլ չտար Արևմտյան Հայաստանին, ապա հաստատ կմիացներ այն Ռուսաստանին, որպես գրավյալ տարածք:

Պատմական հեռվից փաստերի համադրումը և թռուցիկ վերլուծությունն իսկ ցույց է տալիս, որ չնայած իրենց պահպանողականությանը, ռամկավարները Հայկական հարցի լուծման տեսանկյունից ճիշտ էին: Պատկերացնենք մի պահ, երբ Ռուսաստանը պատերազմից դուրս գար առանց հոկտեմբերյան հեղաշրջման...

---

389. «Վան-Տոսպ», 1917, Մայիսի 7:
390. Նույն տեղում:
391. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 354:

1917 թ. հուլիսի 1-4-ը Բոստոնում տեղի ունեցավ ՀՍՌ կուսակցության Ամերիկայի շրջանակի ԺԴ պատգամավորական ժողովը: Ներկա էին կուսակցության ակումբների մեծ մասի ներկայացուցիչները, ինչպես նաև նախկին նահանգային վարչության անդամները, (այդ ժողովում ընտրվում է նոր վարչություն). «Ազգի» խմբագրակազմը, կուսակցության ժամանակավոր կենտրոնական վարչության անդամ Մ.Տամատյանը, Վասպուրականի շրջանակի գործիչ Շ. Հովիվյանը: Ժողովում ընտրվում է դիվան հետևյալ կազմով. Ռուբեն Հերյան՝ Ա ատենապետ, Համազասպ Բարունակյան՝ Բ ատենապետ, Զարեհ Թաքարյան և Կարապետ Մուշեղյան ատենադպիրներ:[392] Ժողովը շնորհակալական հեռագրեր է հղում Փարիզի ազգային պատվիրակությանը, Կովկասի նորաստեղծ Հայ ժողովրդական կուսակցությանը և ՀՅԴ պատգամավորական ժողովին: Պատասխան շնորհավորական հեռագրեր են ստացվում Վերակազմյալ հնչակյան կուսակցության Փրովիդենսում (ԱՄՆ) գումարված պատգամավորական և ՀՅԴ պատգամավորական ժողովների կողմից: ՀՍՌԿ Ամերիկայի շրջանակի ԺԴ պատգամավորական ժողովը քննարկեց և ընդունեց կուսակցության առաջիկա գործունեության մասին ծրագիրը՝ բաղկացած յոթ հոդվածից: Ընդունվեց նաև ծրագիր կուսակցության վարչական դրության բարեփոխության մասին:[393] Այս ծրագրի մասին այլ մանրամասներ չեն հաղորդվում: Միայն խոսվում է կուսակցության առաջիկա գործունեության այն անելիքների մասին, որը վերաբերում է ՀՍՌԿ-Հայոց ազգային միության առնչություններին:

Բոստոնի Հայ ազգային միության նպատակի, նրա գործունեության, ինչպես նաև նրանում ՀՍՌ կուսակցության մասնակցության մասին զեկուցումով հանդես է գալիս Միքայել Հովհաննիսյանը:[394]

Ժողովը բարձր է գնահատում Ազգային միության գաղափարը, նրա նպատակն ու գործունեությունը, և դրանք ամբողջովին համապատասխան համարում կուսակցության սկզբունքներին ու ազգային համերաշխության բաղձանքին: Ժողովը որոշում է, որ ՀՍՌ կուսակցության բոլոր ակումբները պետք է սատար կանգնեն Հայ ազգային

392. «Արև», 1917, սեպտեմբերի 24:
393. «Արև», 1917, սեպտեմբերի 24:
394. Նույն տեղում:

միությանը, աջակցելով դրան նյութապես ու բարոյապես: Ընտրվում է նոր նահանգային վարչություն՝ Միքայել Հովհաննիսյանի գլխավորությամբ, որի անդամներն էին Ա. Մինասյանը, Ա. Նազարը, Վ. Գրիգորյանը, Մ. Ճիզմեճյանը և Հ. Բարունակյանը:[395]

1917թ. մայիսին Թիֆլիսում գումարվում է կուսակցության Հայաստանի շրջանային Ա համագումարը, որը Վանի շրջանային ակումբը վերափոխում է ռամկավար կուսակցության Հայաստանի Կենտրոնական խորհրդի:[396]

Ռամկավարները խիստ մտահոգ էին 1917թ. բռնկված ռուսական հեղափոխությամբ, թե որքանով և ինչպես է այն անդրադառնալու Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող փոքր ժողովուրդների, մասնավորապես հայերի վրա:[397] Ռամկավարների ուշադրության կենտրոնում հատկապես արևմտահայության խնդիրն էր: Այս առումով «Ազգը» հույս էր հայտնում, որ կովկասահայ գործիչները «թուրքահայութեան ծանր փորձութիւններից փորձառութիւն առած ըլլան և զգոյշ ու չափաւոր գտնուին»:[398]

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, մարտի 16-ին «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանն ու իր համախոհները հիմնադրեցին Հայ ժողովրդական կուսակցությունը:[399] Նորակազմ կուսակցության ծրագրային դրույթները սերտորեն առնչվում էին դարասկզբին Ռուսաստանում կազմավորված Սահմանադրական ռամկավար (Ռուսերեն՝ Конституционные демократы բառերի սկզբնատառերի հապավմամբ՝ КД - կադետ) կուսակցության ծրագրի ու գաղափարախոսության հետ, որի բնորոշ գիծը չափավորությունն էր: Մի կողմից նրանք դեմ էին բռնապետությանը, մյուս կողմից՝ հեղափոխական փոփոխություններին: Երկրի զարգացումը նրանք տեսնում էին սահմանադրական կարգերի հաստատման և դեմոկրատական լայն բարեփոխումների իրականացման մեջ: Այդ գաղափարախոսությունն իր հետևորդներն ունեցավ նաև հայ իրականության մեջ: Այսպես, 1906թ. հունվարի 3-ին Թիֆլիսում «Մշակի» շուրջը համա-

395. Նույն տեղում:
396. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 4-5:
397. «Ազգ», 1917, մարտի 26:
398. Նույն տեղում, հունիսի 23:
399. Ղազարեան Վ., Համառօտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրութ, 1978, էջ 43:

խմբված մտավորականներ Հ. Առաքելյանը, Ս. Հարությունյանը, Ալ. Քալանթարը և այլք հիմնեցին «Սահմանադրական-դեմոկրատական կուսակցության հայ արմատական ֆրակցիա» անունով կազմակերպություն կամ՝ «Քաղեթի հայկական բաժինը»,[400] որն էլ հետագայում դարձավ Հայ ժողովրդական կուսակցության հիմքը:

Նորաստեղծ ՀԺ կուսակցության ծրագրի հիմնական դրույթներում ասվում էր, որ Անդրկովկասի հայկական տարածքները մնալով որպես Ռուսաստանի անբաժան մաս, պետք է ստանան տեղական լայն ինքնավարություն և ունենան իրենց օրենսդրական մարմնը:

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա ՀԺԿ-ն գտնում էր, որ հանդիսանալով միջազգային դիվանագիտության հարց, այն կարող է լուծում ստանալ միայն միջազգային վեհաժողովում, իսկ կուսակցությունը պետք է աշխատի, որպեսզի հարցը լուծվի «ըստ թուրքահայերի ցանկութեան»:[401] Բացի դրանից ՀԺԿ-ն պաշտպանում էր նաև Պողոս Նուբարի Ազգային պատվիրակության տեսակետները: Ահա այս ընդհանրություններն ու նմանություններն էլ դարձան այն հիմնական պատճառները, որ ՀՍՌ կուսակցությունն անմիջապես ողջունեց ՀԺԿ-ի ծնունդը և հույս հայտնեց, որ «զուտ թուրքահայկական հարցով զբաղուող ՀՍՌ կուսակցութիւնը կը կարողանայ համագործակցել նրա հետ»:[402]

«Վան-Տոսպը» շարունակում էր մերժել դասակարգային պայքարը և հակադրվել դրա կողմնակիցներին: Թերթն ընդգծում էր, որ հայ ժողովրդի պայմաններն առանձնահատուկ են, և չափազանցության մեջ ընկնելով հայտարարում էր, որ ռուսական հեղափոխության խնդիրներն ու նպատակները տարբեր են, խորթ հայկական իրականությանը և հայ ժողովրդի քաղաքական նպատակներին:[403]

Սակայն ռամկավարները որոշակի հույսեր էին կապում ռուսական հեղափոխության հետ: Ապրիլի 24-ին ժամանակավոր կառավարությանը և իշխան Լվովին ուղղված նրանց հեռագրում նշվում էր, որ Հայաս-

---

400. Նույն տեղում:
401. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 45:
402. «Վան-Տոսպ», 1917, մարտի 12:
403. Նույն տեղում, ապրիլի 25:

տանի ապագա բախտը կախված է ռուսական հեղափոխության ելքից, իսկ ՀՍՌԿ-ն իր աջակցությունն ու զորակցությունն է հայտնում «վերածնոտղ Ռուսաստանի ամրապնդման բոլոր կողմնակիցներին»:[404]

Ռամկավարներին լրջորեն անհանգստացնում էին ռուսական սոցիալ-դեմոկրատիայի բոլշևիկյան թևի և նրա առաջնորդ Լենինի հակապատերազմական կոչերը, որոնք, փաստորեն, տանում էին դեպի բանակի քայքայում:[405]

1917թ. աշնանը քաղաքական ու տնտեսական ճգնաժամի խորացումը Ռուսաստանում հանգեցրեց հոկտեմբերի 25-ին բոլշևիկների կողմից ժամանակավոր կառավարության տապալմանը և իշխանության զավթմանը: Առաջին իսկ փաստաթղթում՝ «Դեկրետ հաշտության մասին», Լենինի կառավարությունն առաջ էր քաշում «Անջատ հաշտություն առանց ռազմատուգանքների և բռնագրավումների» կարգախոսը: Բոլշևիկներն սկսեցին Բրեստ-Լիտովսկում անջատ բանակցություններ վարել Գերմանիայի հետ: Բրեստի պայմանագիրը, որը կնքվեց 1918թ. մարտի 3-ին, ծանր հետևանքներ ունեցավ հատկապես հայ ժողովրդի համար: Այդ հաշտությամբ թուրքերը ոչ միայն վերագրավեցին Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի ու Բաթումի շրջանները: Ճիշտ է, 1917թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի Ժողկոմխորհը հրապարակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, բայց Ա. Դարբինյանը դիպուկ նկատել է. «Այդ դեկրետը խմբագրուելէ առաջ արդէն հայ ժողովուրդը ողջակիզուած էր: Եւ իբրև թուղթի կտոր, այդ դեկրետն ալ պիտի դատապարտուէր մտնելու դիւանագէտներուն զբաղում հայթայթող տոքիումաններու տրցակին մէջ, ուր մտած էին Պերլինի 61-րդ յօդուածը, 1895թ-ի և 1914թ-ի հայկական բարեռորոգումներու ծրագիրները, ուր պիտի գար մտնելու նաև Սևրի դաշնագիրը»:[406] Շարունակելով իր միտքը, Ա.Դարբինյանը գրում է, որ այդ դեկրետը հնարավոր կլիներ գործադրել, եթե Անդրկովկասը չխզեր իր կապը «Հոկտեմբերեան Ռուսիոյ հետ, եթե Կովկասեան բանակն ալ ամուր կանգնած մնար իր գրաւած հողերուն վրայ, մինչև հաշտութեան կնքումը»:[407] 1918թ. գարնանը թուրքական բանակի ար-

404. Նույն տեղում:
405. Նույն տեղում, 1917, մայիսի 7:
406. Դարբինեան Ա., Նշվ. աշխ., էջ 355:
407. Նույն տեղում, էջ 374:

շավանքի և Արևմտյան Հայաստանի վերագրավման հետևանքով Հայոց ազգային խորհրդի գործունեությունը կազմալուծվել էր: Դրա համար էլ ռամկավարները ձեռնամուխ են լինում իրենց խնամքի տակ գտնվող որբանոցները Հյուսիսային Կովկաս տեղափոխելու գործին: Այդ նպատակով շտապ Արմավիր և Ռոստով է մեկնում Ա. Դարբինյանը:

Իրենց մամուլի էջերում ռամկավարները հետևողականորեն շարունակում էին քննադատության ենթարկել սոցիալիզմը և բոլշևիկներին: Դա ցայտուն երևում է 1918թ. փետրվար-մարտին «Ազգում» հրատարակված «Ինչու՞ կը հակառակինք հայերու մէջ ընկերվարութեան պրոպագանդին» խմբագրական հոդվածաշարում: Ռամկավարները գրում են, որ իրենք կողմ են աստիճանական բարեփոխումներին և դեմ հեղափոխությանը:[408]

«Անժխտելի ճշմարտութիւն մըն է,- գրում է «Ազգը»,- թէ ընկերվարութեան նիւթապաշտական քարոզութիւնները հակակրօն ոգի մը կը ներշնչեն ժողովրդային զանգվածին, հետևաբար ժողովրդեան կրօնական ու բարոյական կենաց նախանձախնդիր հայրենասէր անձնաւորութիւններ պարտին ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տալ ընկերվարութեան ծաւալման դէմ»:[409] «Ազգը» դատապարտում է բոլշևիկներին, որ իրենց քարոզչությամբ կազմալուծեցին ինչպես գերմանական (արևմտյան), այնպես էլ Կովկասյան ճակատը: Դատապարտում է նաև նրանց առաջ քաշած իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու սկզբունքը: Ռամկավարները համոզված էին, որ Կովկասի բոլշևիկները շարունակում են Ռուսաստանի բոլշևիկների քաղաքականությունը: Պարբերականը դատապարտում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այն համարելով «յուդայական խաղաղութիւն»: «Ազգը» ընդգծում է, որ այդ պայմանագրով բոլշևիկները Գերմանիային հանձնեցին ոչ միայն իրենց հողերը և ազատությունը, այլև հայ ժողովրդին և «պէտք չիկա ըսելու, թէ ինչ պիտի պատահի հայ ժողովուրդին: Տարակոյս չիկայ, որ հայ ազգի բեկորներն ալ սուրէ պիտի անցուին»:[410] Պարբերականը հույս է հայտնում, որ դաշնակիցները և

408. «Ազգ», 1918, փետրվարի 12:
409. Նույն տեղում, մարտի 14:
410. Նույն տեղում, մարտի 9:

ԱՄՆ-ը պիտի հաղթեն «Տևտոնական հրեշին» (Գերմանիային), հաղթանակ, որից մեծապես կախված է նաև հայ ժողովրդի բախտը: Պարբերականը դատապարտում է պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, ընդգծելով, որ այն ժխտում է ռամկավարության սկզբունքը:

ՀՍՌ կուսակցությունը ձեռնամուխ է լինում ամերիկահայության շրջանում «Ազգային տուրքի» հավաքման գործին: 1918թ. հունվարի 31-ի «Ազգի» «Ազգային տուրք» խմբագրականը կոչ է անում ամերիկահայությանը կանոնավոր, ամիս առ ամիս, Ազգային տուրք վճարել ըստ ցանկության, որը գեթ մի փոքր կթեթևացնի Միջագետքում և Կովկասում ապաստանած հայ ազգի բեկորների դրությունը: Այս ուղղությամբ կուսակցությունը լայն քարոզչական և գործնական աշխատանք է ծավալում Ամերիկայում:[411]

1918թ. ընթացքում Ամերիկայի հայաշատ մի շարք քաղաքներում՝ Նյու Յորք, Բոստոն, Փրովիդենս, Լովել, Ֆրեզնո և այլն, անկուսակցականներից կազմակերպվում է «Ժողովրդական կազմակերպութիւն» միությունը: Գաղափարական-ծրագրային առումով այս կազմակերպությունը խիստ մոտ էր ռամկավարներին, այդ պատճառով 1918թ. սեպտեմբերին ՀՍՌԿ Ամերիկայի շրջանակի 15-րդ պատգամավորական ժողովում որոշվում է ընտրել հինգ հոգուց բաղկացած հանձնախումբ, որին լիազորվում էր «ռամկավարական սկզբունքներու համաձայն, մեծ ու զօրաւոր ազգայնական կուսակցութիւն մը կազմելու համար ջանալ և բանակցութիւններ վարել այդ գաղափարին համակիր բոլոր մարմիններուն և անհատներուն հետ»:[412] Միավորման համար շահագրգռված «Ժողովրդական կազմակերպությունն» այդ նպատակով ստեղծում է «Ժողովրդական հանձնախումբը», որը միավորվելու համար դիմում էր վերակազմյալներին և ռամկավարներին: 1918թ. նոյեմբերի 29-ին Բոստոնում տեղի է ունենում ժողով, որին մասնակցում են ռամկավարների, վերակազմյալների և ժողովրդական կազմակերպության ներկայացուցիչները:

1918թ. Մուդրոսի զինադադարից հետո Կ. Պոլսում սկսվել էր հայկական թերթերի վերահրատարակությունը: Ռամկավարների «Ժողովուրդի ձայն» թերթը հրատարակում էին Հովհաննես Պողոսյանը,

411. Նույն տեղում, հունվարի 31 և մարտի 12:
412. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 377:

Վահան Թոթովենցը, Լևոն Թյուրյունճյանը, Սահակ Մեսրոպը: Սահակ Մեսրոպի հեռանալուց հետո, խմբագրապետի պաշտոնը ստանձնեց Կովկասից եկած Հովհաննես Հակոբյանը, իսկ Հովհաննես Պողոսյանը դարձավ խմբագրության քարտուղար: Հովհաննես Հակոբյանը կուսակցության շրջանային վարչության հետ ունեցած տարակարծությունների պատճառավ հեռացավ և խմբագրի պաշտոնը տրվեց Հովհաննես Պողոսյանին, որն այն վարեց մինչև 1920թ. օգոստոսը, երբ մեկնեց Փարիզ սովորելու:[413]

Ֆրեզնոյում (ԱՄՆ) այդ տարիներին լույս էր տեսնում ՀՍՌԿ Կալիֆոռնիայի շրջանի պաշտոնաթերթ «Նոր կեանքը», որի էջերում բազմիցս վերլուծում էին ժամանակակից դեպքերն ու եղելությունները և հանգում իրատեսական եզրահանգումների: «Չինաղաղարէն մէկ տարի անց» խմբագրականում թերթը, նկարագրելով Թուրքիայի կենտրոնական շրջաններում Մուստաֆա Քեմալի գլխավորած թուրք ազգայնականների խժդժությունները, հակված չէ դատապարտելու թուրքերին, ոչ այն բանի համար, որ քեմալականների գործողությունները դատապարտելի չեն, այլ այն բանի համար, որ «թուրքի չարագործութիւնները նորութիւն չեն»:[414] «Նոր Կեանքը» դատապարտում է դաշնակիցներին, որոնք իրենց «յոռի ընթացքով ուղղակի կամ անուղղակի քաջալերեցին զայն ու կը քաջալերեն տակաւին»:[415] Շարունակելով այս միտքը՝ պարբերականը գրում է. «Եթէ օր մը քողը վերցուի Փոքր Ասիոյ գործերուն վրայէն ու հոն կատարուող ողբերգութիւնը իր բովանդակ մերկութեամբ երևան գայ, ապագայ պատմագիրը նողկանքով պիտի լեցուի միջազգային շահախնդրութեանց ու դաւերու պատմութիւնը գրել ստիպուելուն համար»:[416] «Նոր կեանքը» զայրույթով է գրում դաշնակիցների միմյանց դեմ լարած դավերի մասին, փոխանակ համերաշխ գործելու ընդհանուր թշնամու դեմ, շեշտում է թերթը. «իտալացին յոյնի դէմ, անգլիացին ֆրանսացիի դէմ, ու վերջապէս զինակիցը զինակցի դէմ, ի՞նչ ամօթալի պատկեր մը ցուցադրեցին Թուրքիոյ արյունոտ թատերաբեմին վրայ»:[417] Զարգաց-

413. «Նոր կեանք», Ֆրեզնո, 1919, հունվարի 30:
414. Նույն տեղում, նոյեմբերի 12:
415. Նույն տեղում:
416. Նույն տեղում:
417. Նույն տեղում:

նելով թեման, թերթը եզրակացնում է, որ բացի անվանումներից ոչինչ չի փոխվել, որ ամեն ինչ նույն հարթությունում է և, ամենասարսափելին այն է, որ հայության հրաշքով փրկված բեկորներն էլ են դրվում պատմության զոհասեղանին ու զգոնության կոչ անում «հայոց բոլոր մարդերուն»:[418] Հիրավի կանխատեսելու նախանձելի կարողություն:

Կարճատև ընդմիջումից հետո, 1919թ. մարտի 24-ին , ռամկավարների և նրանց համակիրների նյութական աջակցությամբ Երևանում վերահրատարակվում է ՀՍՌ կուսակցության Հայաստանի շրջանակի պաշտոնաթերթ «Վան-Տոսպը»՝ անվանափոխված «Հայաստանի Ձայնի»: Մինչ այդ Թիֆլիսում լույս տեսնող «Վան-Տոսպի» հրատարակությունն ընդհատվել էր հայ-վրացական հարաբերությունների անբարենպաստ զարգացումների հետևանքով: Որպես «Հայաստանի Ձայնի» պատասխանատու խմբագիր, կուսակցության Հայաստանի խորհրդի հրավերով պիտի աշխատեր Արտակ Դարբինյանը, որ մինչ այդ Թիֆլիսում հաջողությամբ վարում էր «Վան-Տոսպի» պատասխանատու խմբագրի պաշտոնը:[419]

Թերթի հրատարակությանն աջակցելու ՀՍՌ կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհրդի կոչին սիրով արձագանքեցին կուսակցության շատ շրջանակներ, որոնք ուղարկեցին իրենց հնարավորությունների ներածին չափով նյութական միջոցներ: Իր պատրաստակամությամբ առանձնացավ կուսակցության Ռոստովի մասնաճյուղը, որի ուղարկած միջոցներով էլ հիմնականում հաջողվեց թերթի հրատարակությունը:[420]

«Հայաստանի Ձայնը» առաջին համարի առաջնորդողում ազդարարում է իր նպատակների մասին.

ա) Զբաղվել արևմտահայության հարցերով:

բ) Պաշտպանել արևմտահայության շրջանում մեծ տարածում գտած տեսակետը, որի համաձայն Միացյալ Հայաստանի «խարիսխը» պետք է ընդունել Արևմտյան Հայաստանը, որպեսզի «Ռուսաստանը և ռուսական հարցը պատճառ չդառնայ դաշնակից պետություններում քով թրքահայ հարցին լուծումը յետաձգելու»:[424]

---

418. «Նոր կեանք», Ֆրեզնո, 1919, նոյեմբերի 12:
419. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 4:
420. Նույն տեղում, էջ 6-7:
421. «Հայաստանի ձայն», 1919, սեպտեմբերի 3:

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա ստեղծած վարչական մյուս մարմինների ու պաշտոնյաների թույլ տված սխալների ու թերությունների բացահայտումն ու քննադատությունը, այլ կերպ ասած. ՀՍՌԿ պաշտոնաթերթը որդեգրում էր կառուցողական ընդդիմության մարտավարություն:[422]

Այս շրջանում ՀՍՌ կուսակցությունը Հայաստանում այնքան էլ բարվոք վիճակում չէր. փոքրաթիվ անդամներով նրանք մեծ ուժ չէին ներկայացնում: «Թուրքահայերէ և քանի մը անհատներէ կազմուած հատուած մը կներկայացնէինք այն կուսակցութեան,- գրում է Ա.Դարբինյանը,- որուն կեդրոնը պատերազմեն առաջ Կ.Պոլիս կ գտնուէր, իսկ պատերազմի ընթացքին անոր դերը առժամապէս փոխադրուած էր Եգիպտոսի շրջանային վարչութիւն»:[423]

1919թ. դրությամբ կուսակցության Հայաստանի մասնաճյուղը փաստորեն առանձին էր գործում, քանի որ Ա.Դարբինյանի և մյուսների վկայությամբ՝ պատերազմի, եղեռնի, գաղթի բազմաթիվ ու բազմապիսի դժվարությունների պատճառով դեռ հնարավոր չէր եղել կապ հաստատել ոչ Կ.Պոլսի, և ոչ էլ Եգիպտոսի ու ԱՄՆ-ի գործող մասնաճյուղերի հետ: Մասնաճյուղն իր գործունեությունը ծավալում էր ուղենիշ ունենալով 1911 և 1913 թվականների ընդհանուր պատգամավորական ժողովների ընդունած որոշումները:

7. ՀՍՌԿ, Հայաստանի նորաստեղծ հանրապետության իշխանությունների և Ազգային պատվիրակության առնչությունները

Ամեն անգամ, երբ թուլանում էին Օսմանյան կայսրության միջազգային դիրքերը, արևմտահայության մոտ արթնանում էին թուրքական լծից ազատագրվելու հույսերը: Այսպիսի իրավիճակ հերթական անգամ առաջացավ 1911 թ., երբ Իտալիան պատերազմ հայտարարեց Թուրքիային և զգալի տարածքներ գրավեց: Այս ընթացքում

422. Նույն տեղում:
423. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 383:

Թուրքիայի և Բալկանյան երկրների միջև ևս պատերազմ բռնկվեց. 1912 թ. հոկտեմբերին Չեռնոգորիան, Սերբիան, Բուլղարիան և Հունաստանը միասնաբար ոտքի ելան ընդմիշտ վերջ դնելու Բալկաններում թուրքական նվաճողական նկրտումներին:

Սկսված պատերազմն ավելի սրեց վիճակը հայկական վիլայեթներում: Ամենուր անիշխանություն էր տիրում: Դրությունը բարդացել էր նաև այն բանի հետևանքով, որ նախ Արևմտյան Հայաստանի արևելյան տարածաշրջաններում տեղակայված թուրքական զորամասերը տեղափոխվել էին Բալկանյան ճակատ, թողնելով արևմտահայությանն անպաշտպան: Պատերազմի արդյունքում Բալկանյան թերակղզուց խուճապահար գաղթող և քրիստոնյա հպատակների հանդեպ կատաղի ատելությամբ լցված մահմեդականները բնակեցվում էին հայկական վիլայեթներում, սրելով առկա հակամարտությունները: Հետո պատերազմում կրած պարտության մեղքն իշխանություններն սկսեցին վերագրել քրիստոնյա, հատկապես հայ բնակչությանը, ինչն ավելի էր սրում իրավիճակը:

Ստեղծված հակահայկական մթնոլորտն անհանգստացնում էր հայ ազգային-քաղաքական ուժերին ու ստիպում նրանց փրկության միջոցներ փնտրել: Բալկանյան ժողովուրդների՝ պատերազմում տարած հաղթանակը ոգևորել ու հույս էր ներշնչել արևմտահայությանը: Ստեղծվել էին Հայկական հարցի վերաբացման անհրաժեշտ նախադրյալներ. Թուրքիան պարտվել էր, մեծ տերությունները լրջորեն հետաքրքրված էին Բալկանյան պատերազմի արդյունքներով, ռուսական դիվանագիտությունն ընդգծված բարյացկամ վերաբերմունք էր դրսևորում Հայկական հարցի նկատմամբ:

Ստեղծված իրավիճակում հայության անունից Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը 1912թ. հոկտեմբերի 15-ին հայերին պաշտպանելու խնդրանքով դիմեց ռուսական իշխանություններին: 1912թ. դեկտեմբերի 24-ին կաթողիկոսը կրկին դիմեց Նիկոլայ 2-րդին, որ Լոնդոնում գումարված դեսպանաժողովում Ռուսաստանը պաշտպանի Հայկական հարցը: Միևնույն ժամանակ, նոյեմբերի 10-ին վեհափառը հատուկ կոնդակով Եգիպտոսի հայ մեծահարուստ, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային (1851-1930) լիազորեց Բեռլինի համաձայնագիրը ստորագրած պե-

տությունների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարեկարգումների անցկացման հարցը: Այդ նպատակով կազմվեց Ազգային պատվիրակություն հետևյալ կազմով. Եվրոպայի հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յուրջյան, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Մինաս Չերազ, հայտնի իրավաբան Հարություն Մոստիճյան և Լոնդոնի գիտական շրջաններում ճանաչված լեզվաբան, հնագետ Արթին Յաղուբ փաշա: Այդ ժամանակից սկսած Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությունը գտնվում էր Փարիզում և արտահայտում հայ ժողովրդի հավաքական շահերը:

Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան 1918թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների հետ կնքած Մուդրոսի զինադադարով կապիտուլյացիայի ենթարկվեց: 1919թ. հունվարին տեղի ունեցավ Փարիզի խաղաղության վեհաժողովում հայ ժողովրդի միասնական կամքն արտահայտելու և քաղաքական շահերը պաշտպանելու նպատակով Ազգային պատվիրակությունը ծրագրում է Փարիզում հրավիրել Ազգային համագումար և այդ մասին հրապարակում է մի հայտարարություն՝ «Ամբողջական Հայաստանի՝ Կիլիկիայի հետ միասին, անկախութեան մասին», որում ասվում էր, որ Հայաստանի անկախությունը պատկերացվում էր «համաձայնական պետութիւններու և Միացեալ Նահանգներու հովանավորութեան տակ կամ Ազգերու Դաշնակցութեան, երբ ան կազմուի»:[424] Հայկական գրեթե բոլոր գաղթօջախները պատգամավորներ ուղարկեցին Ազգային համագումարին մասնակցելու համար: ՀՍՌ կուսակցությունն իր մասնակցությունը համագումարին բերեց մի քանի պատգամավորներով. Եգիպտոսից ընտրվեց Վ. Թեքեյանը, Կ.Պոլսից՝ Գ.Տեր-Հակոբյանը:[425] Ամերիկայի ռամկավարները պաշտպանում էին ամերիկահայության կողմից ընտրված չորս պատգամավորների.

1. Հովհաննես խան Մասեհյան՝ նախկինում եղել է Պարսկաստանի դեսպանը Գերմանիայում, ապա Անգլիայում, գիտեր վեց լեզու:[426]

2. Կարապետ Թումայան՝ նախկինում Մարզվանի քոլեջի ուսուց-

---

424. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993, էջ 283:
425. Նույն տեղում, էջ 284:
426. Մասեհյանը լավագույն և մինչ այժմ Շեքսպիրի անգերազանցելի հայ թարգմանիչն է ու հայերեն է թարգմանել շեքսպիրյան մի շարք գոհարներ:

չապետը, սուլթանի կողմից դատապարտվել է մահվան, հետո անգլիացիների միջամտությամբ ազատ է արձակվել և վտարվել Թուրքիայից:

3. Երվանդ Աղաթոն բեյ՝ ՀԲԸ Միության հիմնադիրներից:

4. Միհրան Տամատյան՝ ՀՍՌԿ հիմնադիրներից: [427]

Բոլորն էլ ամենաակտիվ ձևով մասնակցեցին Ազգային համագումարին և իրենց ներդրումն ունեցան նրա ընդունած որոշումներում:

Ազգային համագումարի նախապատրաստական աշխատանքների շրջանում 1919թ. փետրվարի 4-ին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ ժամանեց Եվրոպա: Այս հանգամանքը սկզբից ևեթ լուրջ դժգոհություն առաջացրեց ինչպես Ազգային պատվիրակության, այնպես էլ, բնականաբար, այն կուսակցությունների մոտ, որոնք պաշտպանում էին Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը: ՀՍՌ կուսակցությունն այդ թվում էր:

Ռամկավարները գտնում էին, որ նորաստեղծ հանրապետությունը «պատերազմի պարագայական քաղաքականութեան հետևանք է, որը չէ կարող իրաւասութիւն ունենալ և նոյնանալ թուրքահայ հարցին հետ»:[428]

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը կամ ինչպես իրենք էին անվանում՝ «Արարատյան Հանրապետությունը» ռամկավարները համարում էին անցումային փուլ հայոց պետականության ստեղծման ճանապարհին, քանի որ այն չէր ներառում Հայաստանի մեծագույն մասը: Սրանից էլ ռամկավարները եզրակացնում էին, որ այդպիսի հանրապետությունն իրավասու չէ առանձին պատվիրակություն ստեղծելու և իր անունից բարձրացնելու ու միջազգային դիվանագիտական ատյաններում պաշտպանելու Հայկական հարցը:

Միևնույն ժամանակ (բոլորովին ոչ անհիմն կերպով) ռամկավարները գտնում էին, որ նորաստեղծ հանրապետությունը, գտնվելով Ռուսաստանի ազդեցության ոլորտում, վաղ թե ուշ պիտի գրավվեր նրա կողմից, հետևաբար այն չէր կարող համարվել ապագա Միացյալ և Ազատ Հայաստանի կորիզը: Այս կապակցությամբ ռամկավար նշանավոր գործիչ Մ. Ճիզմեճյանը գրում է, որ կար նաև մեկ ու-

427. «Նոր կեանք», Ֆրեզնո, 1919, հունվարի 30:
428. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 390:

րիշ հանգամանք ևս, որ դաշնակից պետություններից և ոչ մեկը, այդ թվում և ԱՄՆ-ը, չէին ցանկանում միջամտել «Ռուսիո ներքին գործերուն» և Կովկասյան Հայաստանի կազմությունը համարում էին «Ռուսական ներքին գործ»:[429] Շարունակելով իր միտքը, Ճիզմեճյանը գրում է, որ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը դաշնակից պետություններին ուղղված ապրիլի 20-ի իր ծանուցագրում, խոսելով կովկասյան հանրապետությունների մասին, նախ ողջունում է Հայաստանի անկախությունը, իսկ հետո նշում, որ Հայաստանի Հանրապետության վերջնական սահմանագծումը չի կարող կատարվել «առանց Ռուսիոյ հաւանութեան և աշխատակցութեան»:[430] Առաջնորդվելով այս մտայնությամբ, ռամկավարները պաշտպանում էին Պողոս Նուբարի պատվիրակությանը, հրահանգներ տալիս և զինում նրան անհրաժեշտ փաստաթղթերով:

Պետք է արձանագրենք սակայն, որ ռամկավարների դատողությունները չի կարելի միանշանակորեն համարել իրատեսական: Ինչպես իրավացիորեն գրում է այդ հարցերին քաջատեղյակ Գ. Գալոյանը՝ ռամկավարներն աներկբայորեն պաշտպանելով Պողոս Նուբար փաշային ու նրա պատվիրակության տեսակետները, հանդես էին բերում հատվածական մտածողություն, որն այնքան էլ ճիշտ չէր և չէր նպաստում պատվիրակությունների առաքելությունների իրականացմանը:[431]

Այս հարցերի նկատմամբ այլ տեսակետ ուներ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը: Սիմոն Վրացյանն այդ մասին գրում է, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ելնում էր իրական փաստից, այսինքն, Հայաստանի Հանրապետության գոյությունը իրողություն էր, այնտեղ ապրում էր մեկ միլիոն ժողովուրդ, Երևանում կար խորհրդարան, կառավարություն, բանակ. երկիրը հետզհետե կազմակերպվում էր պետականորեն: Մինչդեռ Թուրքահայաստանն ամայի էր՝ «ոչ ժողովուրդ ուներ, ոչ կառավարություն»: «Հետևաբար,- եզրակացնում էր Վրացյանը,- անհրաժեշտ

429. Նույն տեղը, էջ 397:
430. Նույն տեղում:
431. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 90:

է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև հայկական պետության կորիզի, և Հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով»:[432]

Անհամաձայնություն կար նաև ստեղծվելիք ապագա Հայաստանի սահմանների հարցի շուրջ: Ապագա Միացյալ և Անկախ Հայաստանի կազմում Ազգային պատվիրակության նախագծով պետք է ընդգրկվեին ամբողջ Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան և Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը դա համարում էր անիրատեսական և անհեռանկար:

Այնուամենայնիվ, երկար վիճելուց և բանակցելուց հետո, որի մանրամասն նկարագրությունը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից, 1919թ. ապրիլի 2-ին կազմվում է «Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը» հետևյալ կազմով. նախագահ՝ Պողոս Նուբար, որը ներկայացնում էր Հայ բարեգործական ընդհանուր միությունը, դաշնակցությունից՝ Գարեգին Փաստրմաճյանն ու դոկտոր Նևրոզը, ռամկավարներից՝ Գ. Տեր-Հակոբյանը, Վ. Թեքեյանը և Ա. Չոպանյանը:[433] Սա, ըստ էության, փոփոխված կազմով Ազգային պատվիրակությունն էր, որ միացած Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակության հետ ամբողջ հայության անունից պիտի բանակցեր դաշնակից պետությունների պատվիրակությունների հետ, մինչև ամբողջական Հայաստանի միացյալ կառավարության կազմությունը:

Ճիշտ է, հայկական երկու պատվիրակությունները պայմանավորվեցին միասնաբար հանդես գալ, սակայն, ըստ էության, նրանք «շարունակեցին իրենց չհամաձայնեցված գործունեությունը»,[434] ընդ որում «Նուբար փաշան սերտ կապի մեջ էր ֆրանսիական, իսկ Ահարոնյանը՝ անգլիական»[435] գործիչների հետ: Անկասկած, կային տարաձայնություններ և յուրաքանչյուրը՝ Պողոս Նուբարը և Ավ.Ահարոնյանն իրենց համախոհներով ձգտում էին Հայկական հարցի լուծմանը հասնել իրենց նախանշած ճանապարհով: Բնականաբար կային

432. Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 289:
433. Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրա, Լոս Անջելես, 1986, էջ 122:
434. Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 89:
435. Նույն տեղում:

տեսակետների տարբերություններ ու նաև «հատվածական մտածողութեան դրսևորումներ»: Սակայն, հայտնել այնպիսի տեսակետ՝ ըստ որի «պատմությունը չի կարող չդատապարտել Պողոս Նուբար փաշայի՝ տասնյակ տարիների ընթացքում դրսևորած ձգտումը՝ արևելահայերի և արևմտահայերի միջև պառակտում մտցնելու միջոցով հագուրդ տալու իր մտագար փառամոլությանը»,[436] մեր կարծիքով, հատկապես «մտագարի» առումով, չափազանցություն է:

1919թ. փետրվարի 12-ին Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների կողմից մշակվել ու հաշտության վեհաժողովին էր ներկայացվել հիշատակագիր, որն, ըստ էության, պարունակում էր բոլոր հայերի պահանջները: Դրանք էին.

1. Հայկական անկախ պետության ճանաչումը, որը պիտի ընդգրկեր Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթները, Կիլիկիայի Սիս, Ադանա, Մարաշ և Ալեքսանդրեթ քաղաքները շրջակայքով ու Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:

2. Հայաստանի համար պիտի ապահովվեր մեծ տերություններից մեկի հովանավորությունը (մանդատ) 20 տարվա համար:

3. Մանդատը ստանձնած պետությունը պետք է ստիպեր թուրքերին դատարկել հայկական գյուղերը, քուրդ ու թուրք ջարդարարներին զինաթափեր ու պատժեր:

4. Հայերը պիտի հատուցում ստանային ջարդերի, տարագրության և նյութական կորուստների դիմաց:[437]

Այդ նույն ժամանակ՝ 1919թ. փետրվարի 6-13-ը, Երևանում տեղի ունեցավ արևմտահայերի երկրորդ համագումարը: Օրակարգի հիմնական հարցն Արևմտյան Հայաստանից մազապուրծ գաղթականության խնդիրն էր: Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արևմտահայերը գտնվում էին անասելի ծանր պայմաններում: Սոցիալ-կենցաղային դժվարություններից բացի, առաջացել էին նաև այլ բնույթի բազմաթիվ խնդիրներ: Համագումարի նպատակն էր ուղիներ որոնել գաղթականության վիճակը տանելի դարձնելու համար, ինչպես նաև վերացնել հայության երկու հատվածների միջև առաջա-

436. Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 109:
437. Ահարոնեան Գ., նշվ. աշխ., էջ 122-123:

ցած խորթությունն ու տարաձայնությունները, արևմտահայությանն ավելի մոտեցնել և մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ներքին սոցիալ-տնտեսական կյանքին, կազմակերպել ներգաղթ այլ վայրերից և այլն:

Համագումարին ՀՍՌ կուսակցությունից մասնակցում էին հինգ պատգամավոր, որոնցից Հարություն Վարդանյանը համագումարի քարտուղարներից էր: Փետրվարի 12-ին համագումարի կողմից ընդունվեց քաղաքական բանաձև, որտեղ ողջունվում էր Միացյալ և Ազատ Հայաստանի անկախության գաղափարը: Սակայն այս բանաձևում նկատելի էր որոշակի հակասություն. մի կողմից բանաձևը հայտարարում էր «վիակատար վստահություն Պողոս Նուբարի անդրանիկ դահլիճին»[438] (այստեղ Վրացյանը պարզաբանում է, որ այդ ժամանակ Հայաստանում լուրեր էին շրջում, թե Միացյալ Հայաստանի կառավարությունը կազմվելու է Պողոս Նուբարի կողմից և նրա նախագահությամբ, իսկ մյուս կողմից ընտրված գործադիր մարմնին պարտադրում էր «գործնական քայլեր կատարել Արարատեան Հանրապետութեան և խորհրդարանի հետ Միացեալ և Ազատ Հայաստանի անկախութիւնը հաստատելու համար»:[439] Այստեղ ակնառու էր երկու հակադիր տեսակետների արհեստական համատեղում-միացում: Ռամկավարները, որ պաշտպանում էին Ազգային պատվիրակության տեսակետները, բնականաբար, չէին կարող համաձայնել, որ Միացյալ և Ազատ Հայաստանի անկախության հայտարարությունն աներ Արարատյան Հանրապետությունը, այդ պատճառով համագումարի քաղաքական բանաձևի այս կետի դեմ արտահայտվեցին ռամկավար հինգ պատգամավորներ և, այդ մասին համապատասխան հայտարարություն անելով, հեռացան նիստերի դահլիճից: Փետրվարի 13-ի նիստում գաղտնի քվեարկությամբ ընտրվեց «Արարատյան Հանրապետության մեջ ապրող արևմտահայ հատվածի գործադիր մարմին՝ բաղկացած ինը հոգուց. Ս. Բորոյան, Խ. Բոնապարտյան, Ստ. Սասունի, Գ. Բուլղարացի, Վ. Տերոյան, Ռ. Դրամբյան, Վ. Քրմոյան, Վ. Հոխիկյան, Ա. Կիտուր»:[440] Շատ չանցած արևմտահայ գոր-

438. Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 272:
439. Նույն տեղում:
440. Նույն տեղում, էջ 275:

ծաղիր մարմինը դիմեց հանրապետության կառավարությանը, որով անհրաժեշտ էր համարում հայտարարել Հայաստանի երկու հատվածների միացումը: 1919թ. փետրվարի 25-ին հանրապետության կառավարությունը, քննության առնելով գործաղիր մարմնի դիմումը, միաձայն որոշեց ընդառաջել և բավարարել դիմումը:[441]

1919թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հրապարակվեց «Միացյալ և Անկախ Հայաստանի» հայտարարությունը: Այս ակտը միանշանակ չընդունվեց ազգային բոլոր ուժերի, հետևապես և կուսակցությունների կողմից ու ավելի սրեց հարաբերությունները Ազգային և Հայաստանի Հանրապետության պետական պատվիրակությունների միջև: Վրացյանը գրում է, որ սկզբունքորեն Պողոս Նուբարն ու մյուսները դեմ չէին այդ հայտարարությանը, բայց նրանց զայրացրել էր այն, որ հայտարարություն անողը ոչ թե իրենք էին, այլ Երևանի կառավարությունը:[442] Նշանավոր ռամկավար գործիչ Գերսամ Ահարոնյանն այս կապակցությամբ հայտնում է բոլորովին հակառակ տեսակետ, համաձայն որի՝ այդ ակտը տեղի է ունեցել միակողմանիորեն, առանց արևմտահայերի Ազգային պատվիրակության գիտության ու հավանության: «Այն և անժամանակ էր ու անպատեհ,- եզրակացնում է Ահարոնյանը,- անտեղիօրէն յաւակնոտ ու վիճայարոյց»:[443]

ՀՍՌ կուսակցության Կալիֆոռնիայի շրջանի օրգան «Նոր կեանքը», խոսելով վերոհիշյալ ակտի մասին, մանրամասնում է, որ Ամբողջական Հայաստանի անունից խոսելու իրավունք ունի միայն Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից հաստատված և դաշնակից պետությունների կողմից ճանաչված Ազգային պատվիրակությունը: Միևնույն ժամանակ, ըստ պարբերականի՝ քանի դեռ Մեծ Հայքի ու Կիլիկիայի վիճակն անկայուն է ու քաղաքականապես անորոշ և հստակ էլ չէ, թե ինչ է սպասվում ապագայում, ուստի Ամբողջական Հայաստանի կառավարություն կազմելը ճիշտ չէ և աննպատակահարմար է: Բացի այդ Միացյալ Հայաստանի կազմությունը կախում ունի նաև հովանավոր պետության դիրքից, որը դեռևս որոշված չէ: Հայտ-

441. Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 275:
442. Նույն տեղում, էջ 290:
443. Ահարոնեան Գ., նշվ. աշխ., էջ 126:

նի չէին նաև ապագա Հայաստանի սահմանները: Ահա այս պատճառաբանությամբ Ամերիկայի ռամկավարները «Երևանի կառավարութեան հայտարարութիւնը համարում են անհիմք և արժեզուրկ»:[444] Այս առիթով Ամերիկայի ռամկավարներն արտահայտում են նաև իրենց վերաբերմունքը հայ-ռուս-թուրքական հարաբերությունների նկատմամբ: «Պէտք է միանգամ ընդմիշտ խոստովանիլ, թէ մենք թշնամի ենք միայն ցարական Ռուսիոյ բռնապետական վարչութեան, բայց միշտ բարեկամ եղած ենք ազատական ռուս վարիչներու ծրագրին ու գործունէութեան»,[445] - գրում է «Նոր կեանքը» և երազում է տեսնել Հայաստանի սահմանի հարևանությամբ բարգավաճ ու հզոր Ռուսաստան, որը «միշտ թշնամի եղած է մեր դահիճ թուրքերու հայահալած քաղաքականութեան»:[446]

Իհարկե, պարզ է, որ ռամկավարները ցանկալին ընդունում էին իրականության տեղ, որովհետև ռուս-թուրքական հակամարտությունների պատճառը բնավ էլ պայմանավորված չի եղել թուրքերի հայահալած քաղաքականությամբ, ինչպես նշում է թերթը: Այն ուներ օբյեկտիվ պատճառներ՝ կապված Ռուսաստանի և Օսմանյան կայսրության աշխարհաքաղաքական շահերի հետ: Ռամկավարների այս նախիվ պատկերացմամբ էր պայմանավորված նրանց այն հույսը, թե դեմոկրատական Ռուսաստանի կառավարողներն ի վերջո կգնահատեն Ռուսաստանի հանդեպ հայերի նվիրվածությունը և ոչ միայն չեն արգելի, այլ նույնիսկ կստարեն Միացյալ Հայաստանի կազմությանը: Իսկ Թուրքիայի նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ճանաչման կապակցությամբ ռամկավարները հայտարարում էին, որ չեն հավատում Թուրքիայի այդ խորամանկ ու կեղծ քայլին, ընդհակառակը, գտնում էին, որ Թուրքիան դեմ է հայկական ցանկացած պետության կազմավորմանը, պարզապես «Արարատեան Հանրապետութեան հռչակումը ընդունել են իբրև փոքրագոյն չարիք»,[447] առաջնորդվելով այն մտայնությամբ, որ այդ «սահմանափակ հողամասը թաթարների, վրացիների ու մանաւանդ ռուսների մրցակցութեան

444. «Նոր կեանք», 1919, օգոստոսի 16:
445. Նույն տեղում, հուլիսի 30:
446. Նույն տեղում:
447. Նույն տեղում:

ընդմէջ, բոլորովին անընդունակ է բարգաւաճ երկիր մը լինելու և ազատ ծովերէ զուրկ. այդ երկիրը ուշ կամ կանուխ ենթակայ է թուրք, թաթար կամ բռնապետական ռուս կառավարութեան ճանկին մէջ իյնալու»:[448]

Փաստորեն, ռամկավարներն առաջնորդվում էին այն մտայնությամբ, որ Հայաստանի Հանրապետությունն այդ սահմանների մեջ չէր կարող հեռանկար ունենալ և դատապարտված էր նշված երկրներից որևէ մեկի կողմից կլանվելու: Ահա այդ պատճառով նրանք Արարատյան Հանրապետությունը դիտում էին որպես ապագա Միացյալ Հայաստանի մի մասը միայն, այն Հայաստանի, որը ռամկավարների համոզմամբ պիտի բաղկացած լիներ նաև Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից և ելք ունենար դեպի ծով:

1919թ. մայիսի 28-ի ակտի դեմ բողոքեց նաև Հայ Ժողովրդական կուսակցությունը, որը գաղափարապես Ազգային պատվիրակության համախոհն էր: Ակտի հրապարակումից հետո Հայ Ժողովրդական կուսակցությունը (այսուհետև՝ ՀԺԿ) Հայաստանի Հանրապետության կառավարության կազմից հանեց ՀԺԿ անդամ նախարարներ Ա.Հարությունյանին, Ս. Էնֆիեճյանին, Գ. Մելիք-Ղարագյոզյանին և Ք.Վերմիշյանին, որպես բողոքի և անհամաձայնության նշան: Քիչ հետո, 1919թ. հունիսին նույն կերպ են վարվում հնչակյաններն ու ռամկավարները՝ հրաժարվելով մասնակցել Հայաստանի խորհրդարանի ընտրություններին: Դրանից հետո խորհրդարանի 80 տեղից 72-ում ընտրվեցին ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչները:

Վերոհիշյալ ակտը սրեց առանց այն էլ ոչ բարվոք հարաբերությունները հայկական երկու պատվիրակությունների միջև: Սակայն երկու կողմերն էլ հասկանում էին, որ տարակարծությունների խորացումը մեծապես վնասելու է ընդհանուր գործին, այդ պատճառով նրանք փորձեցին բանակցությունների միջոցով հասնել փոխըմբռնման: Ենթադրվում էր բանակցություններում քննարկել Միացյալ Հայաստանի կառավարության, խորհրդարանի և ընդհանուր պատվիրակության կազմության հարցերը: Բանակցությունները տեղի ունեցան 1919թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 7-ը: Ազգային պատվիրա-

448. «Նոր կեանք», 1919, հուլիսի 30:

կության կողմից Երևան էին ժամանել Թեքեյանը (նախագահ), Ստեփանյանը և ՀԺԿ անդամ Ս.Հարությունյանը:

Այդ օրերին Երևանում տեղի էր ունենում ՀՅԴ 9-րդ համագումարը, որի քննարկմանը հանձնվեց նաև բանակցությունների պայմանների մշակումը: Վերջինիս տված եզրակացության հիման վրա Հայաստանի կառավարությունը նշանակեց պատվիրակություն Ս. Վրացյանի նախագահությամբ:[449] Թեքեյանը ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանին ներկայացրել էր բանակցությունների Ազգային պատվիրակության մշակած պայմանները, որոնց որոշ կետեր ուղղակի անհեթեթ դրույթներ էին պարունակում: Դրանք էին. ա) պիտի կազմվեր միացյալ խորհրդարան, որտեղ պատգամավորական տեղերի կեսը պիտի զբաղեցնեին արևմտահայերը, մյուս կեսը՝ արևելահայերը, բ) արտաքին գործերի և զինվորական նախարարները պիտի լինեին ոչ դաշնակցական, իսկ նախարարական մյուս տեղերը պիտի բաշխվեին փոխադարձ համաձայնությամբ, գ) վարչապետ անպայման պիտի դառնար Պողոս Նուբարը, որն ապրելու էր Փարիզում, իսկ Երևանում պետք է լիներ վարչապետի փոխանորդը, դ) Պողոս Նուբարի նշանակած նախարարները պիտի լինեին անփոխարինելի և նույնիսկ միացյալ կառավարությունը չպիտի կարողանար նրանց փոխարինել ուրիշներով, մինչև Հայկական հարցի լուծումը:[450]

Այս պահանջներից Հայաստանի Հանրապետության պատվիրակությունն ընդունում էր, որ կառավարությունն ու խորհրդարանը կազմվեն երկու կողմից հավասար անդամների սկզբունքով, սակայն շեշտում, որ ՀՀ վարչապետն անպայման պիտի ապրեր Երևանում: Ընդունվում էր նաև, որ միացյալ պատվիրակության ղեկավարը լինի Պողոս Նուբարը, սակայն, միաժամանակ նրանք հավելում էին, որ պատվիրակությունը պետք է անպայման ենթարկվեր ու պատասխանատու լիներ կառավարությանը: Ինչպես երևում է, տեսակետների միջև մեծ տարբերություններ կային, որոնք բանակցությունների ձախողման պատճառ դարձան և Թեքեյանի պատվիրակությունը մեկնեց Կ.Պոլիս:

1920թ. հունվարի 19-ին դաշնակիցների գերագույն խորհուրդը փաստացի ճանաչում է Հայաստանի Հանրապետության գոյությու-

449. Վրացյան Ս., Նշվ. աշխ., էջ 298:
450. Նույն տեղում, էջ 291:

նը: Այս հանգամանքը մեծացնում է Հայաստանի Հանրապետության կշիռը քաղաքական ասպարեզում և նկատելի ազդեցություն ունենում Ազգային պատվիրակության կողմից ՀՀ կառավարության պատվիրակության երևանյան բանակցությունների ժամանակ առաջ քաշած տեսակետների ընդունման վրա: 1920թ. փետրվարին Պ. Նուբարը հեռագիր է ուղարկում ՀՀ կառավարությանը, որով հայտնում էր Թեքեյանի մերժած պայմանները և նոր բանակցությունների համար Երևան է ուղարկում Ս. Հարությունյանին, որը գալիս է Երևան և մարտի 25-ին հանդիպում Ս.Վրացյանի հետ: Այս անգամ էլ Վրացյանն է կոշտ դիրք գրավում պատճառաբանելով, թե ՀՀ-ի ճանաչմամբ դրությունը փոխվել է, թե «կոալիցիայի գաղափարը Հայաստանում բոլորովին վարկաբեկվել է» և որ «Ազգային պատվիրակությունը հակահանրապետական աշխատանքներ է տանում»[451] և այլն: Ի վերջո ՀՀ կառավարությունը կոալիցիան համարեց անհնարին ու բանակցությունների այս փորձը ևս ձախողվեց և բանակցող կողմերը ոչ մի արդյունքի չհանգեցին:

451. Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 307:

ԳԼՈՒԽ Յ-ՐԴ

ՀՍՌ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1919-1921 ԹԹ.

1. ՀՍՌ-Վերակազմյալ հնչակյան - ՀԺ կուսակցությունների համախմբման սկիզբը: Ազգային ռամկավար կուսակցություն: ՀՍՌԿ Հայաստանի շրջանի Բ համագումարը

Դեռևս 1919թ. Փարիզում Ազգային պատվիրակության շուրջը համախմբված մտավորականության մեջ շարժում է սկսվում միավորելու Սահմանադրական ռամկավար և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները: 1919թ. հունիսի 5-ին[452] միավորման գաղափարով տոգորված նշանավոր գործիչներ Արշակ Չոպանյանը, Արշակ Սաֆրաստյանը, Միհրդատ Միհրդատյանցը, Նշան Տեր-Ստեփանյանը, Երվանդ Աղաթոնը, Պողոս Էսմերյանը, Տիգրան Կամսարականը, Գարեգին Ֆնտըգլյանը, Էմիլ Շահինյանը, Նորայր Մարտիրոսյանը և ուրիշներ կազմում են «Հայ Ազգային Ազատական Միությունը»[453] և Փարիզում սկսում են հրատարակել «Հայաստան» պարբերականը:[454] Հայ Ազգային ազատական միության հետ (այսուհետև՝ ՀԱԱՄ) ակտիվորեն գործակցում էին Վ. Թեքեյանն ու Ա. Թերզիպաշյանը:

---

452. Վաչե Ղազարյանի «Ուղեցույց և համառոտ պատմություն ՌԱԿ-ի», Երևան, 1991, գրքում նշված է 1915թ. հունիսի 5-ին, որը ճիշտ չէ, մեր կարծիքով վրիպակ է:
453. Պօղոսեան Հ., Կուսակցական կեանքի յուշերէս, Պեյրութ, 1987, էջ 15:
454. Պողոսյան Յովհաննեսի հուշերում նշվում է, որ «Հայաստանը» շաբաթաթերթ էր, իսկ Վ. Ղազարյանի «Ուղեցույց և համառոտ պատմություն ՌԱԿ-ի» գրքում «Հայաստանը» համարվում է ամսաթերթ:

«Հայաստանի» առաջին համարում Չոպանյանը մի հոդված է հրապարակում, ուր քննադատելով միասնության բացակայությունը հայ ազգի մեջ, ողջունում է Վերակազմյալ հնչակյան, Սահմանադրական ռամկավար և Հայ Ժողովրդական կուսակցությունների միավորման գաղափարը: Համանման տեսակետներով հանդես են գալիս նաև Փարիզում գտնվող ՀԺ կուսակցության «երկու վարիչները»՝ Միքայել Պապաջանյանը[455] և Արտաշես Էնֆիեճյանը: Նախաձեռնող խմբի ջանքերով հրավիրվում է ՀԱԱՄ-ի հիմնադիր ժողով, որտեղ նորաստեղծ միության դերն ու նպատակները լուսաբանում է Մ.Միհրդատյանցը: Խոսելով ՀԱԱՄ-ի դերի մասին, բանախոսը նշում է, որ դա համանման ծրագրեր ունեցող երեք կուսակցությունների (ՀՍՌ, Վերակազմյալ, ՀԺ) միավորումն է «չեզոքների ամենաստվար մեծամասնութեան հետ»:[456] Այնուհետև, ըստ Միհրդատյանցի՝ ստեղծված ազգային-ազատական մեծ մարմնին պիտի միանան մյուս կուսակցությունների բոլոր այն անդամները, որոնք «հակում չպիտի ունենան ծայրայեղ ընկերվարական ձգտումներուն հետևիլ»:[457] Փաստորեն միությունը դեմ էր սոցիալիզմի գաղափարախոսությանը և այդ ուսմունքին դավանողների համար ՀԱԱՄ-ի դռները փակ էին, քանի որ Միհրդատյանցի համոզմամբ «ընկերվարական վարդապետութիւնները մեր հայրենիքի փրկութեան գործին հետ կապ չունին»:[458] Նա նշում է, որ ՀԱԱ միությունը կատարելու է սոսկ միություն գոյացնողի պատմական առաքելություն: Ժողովն ընտրում է գործադիր մարմին, որը պետք է բանակցություններ վարեր նշված երեք կուսակցությունների վարչությունների հետ և, միության համաձայնություն ձեռք բերելուց հետո, գումարեր համաժողով երեք կուսակցություններից ընտրված պատգամավորների մասնակցությամբ: Հենց այս համաժողովը պիտի որոշեր միության վերջնական անունը և կանոնադրություն մշակեր իր համար: Ինչ վերաբերում է միության ծրագրին, ա-

455. Գրականության մեջ և մամուլում օգտագործվում է նաև այս ազգանվան Բաբաջանյան արևելահայ ձևը: Երկուսն էլ ճիշտ են, բայց ավելի շատ հանդիպել ենք Պապաջանեան ձևին:
456. «Զարթօնք», 1983, ապրիլի 9, «Հայ Ազգային Ազատական Միութիւն» հոդված, հեղինակ Վաչէ Ղազարեան:
457. Նույն տեղում:
458. Նույն տեղում:

պա Միհրդատյանցի համոզմամբ՝ դրա հիմնական կետերը գրեթե առանց փոփոխությունների կրկնելու էին միությունը գոյացնող կազմակերպությունների ծրագրային հիմնական դրույթները: Դրանք էին.

«1. Միացեալ Հայաստան Ռամկավար հանրապետական կառավարութիւնով:

2. Ռամկավար սկզբունքներու արմատական կիրառում» և այլն:[459]

Երկար ու բուռն վիճաբանություններից հետո համաձայնությունը կայանում է միայն ՀԱԱՄ-ի և ռամկավարների միջև: Որոշակի կետեր համաձայնեցնելուց ու հղկելուց հետո, 1919թ. օգոստոսի 30-ին, Փարիզում ՀՍՌ կուսակցության և ՀԱԱ միության գումարած համատեղ ժողովում որոշվում է միավորվել և ստեղծել նոր «Ազգային Ռամկավար կուսակցութիւնը», ինչի մասին և ազդարարվում է մամուլում:[460]

Նույն գործընթացը տեղի է ունենում նաև Ամերիկայում: 1919թ. Բոստոնում հրապարակված Ազգային-ռամկավարական կուսակցության ծրագրի նախաբանում նշվում է, որ ազգային քաղաքական ուժեղ կազմակերպություն ստեղծելու ակնկալիքով ամերիկահայ գաղութի ոչ կուսակցական տարրերի և արդեն գոյություն ունեցող երկու ազգայնական կուսակցությունների միջև (նկատի է առնվում Ռամկավար և Վերակազմյալ) տեղի ունեցած բանակցությունների արդյունքում հիմնվեց նոր կազմակերպություն՝ Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության և ոչ կուսակցականների միավորումից:

Վերակազմյալները հրաժարվեցին միանալ, դադարեցրին միության բանակցությունները և հեռացան:

1919թ. հուլիսին Նյու Յորքում գումարված առաջին պատգամավորական համատեղ ժողովում նորաստեղծ միությունն ընդունում է «Ազգային ռամկավար կուսակցություն» անունը և շեշտում, որ նորաստեղծ կուսակցության Ամերիկայի շրջանակի կենտրոնը պիտի լինի Բոստոնը:[461] «Հարկ է նշել, թէ ԱՌԿ-ն ինքզինք կը նկատէր ՀՍՌԿ-ի ամերիկեան մասնաճիւղը և ուղղակի կախեալ էր ՀՍՌԿ-ի Պոլսոյ Կեդրոնական Վարչութենէն», իրավացիորեն եզրակացնում է Վ. Ղազարյանը:[462]

---

459. ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 116, էջ 1-2:
460. «Հայաստան», Փարիզ, 1919, օգոստոսի 30:
461. «Զարթօնք», 1983, ապրիլի 4:
462. Ղազարեան Վ., ՌԱԿ վաւերագրեր, Պէյրութ, 1988, էջ 6:

Նորակազմ կուսակցությունը համագործակցության էր հրավիրում «ազգանուէր բոլոր կազմակերպութիւնները, որոնք անայլայլ կերպով նուիրուած են Հայաստանի ազատութեան և վերաշինութեան գործին»:[463] Կուսակցության ծրագիրը գրքույկի ձևով լույս տեսավ Բոստոնում 1919թ. մայիսին:[464] Ծրագրում կուսակցությունն իր գլխավոր նպատակն էր հռչակում Միացյալ Հայաստանի անկախության ապահովումն ու պահպանումը: Կուսակցության նպատակն էր նաև «անկախ հայրենիքի քաղաքական, տնտեսական ու բարոյական վերականգնումին համար աշխատանքը»:[465] Իբրև պետական կառավարման ձև ընդունվում էր Սահմանադրական հանրապետությունը: Ծրագիրը նախատեսում էր ապահովել դեմոկրատական լայն ազատություններ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի կիրառում: Օրենսդիր մարմնում ազգային փոքրամասնություններին տրվում էր ներկայացուցիչներ ունենալու իրավունքը և այլն: Նորածին կուսակցության անվան բացատրությունը համակողմանիորեն տալիս է Գևորգ Սարաֆյանը, որը ռամկավար նշանավոր գործիչ, ամերիկահայ մամուլի երեց Հայկակ Էկինյանի մահվանից հետո դարձել էր կուսակցության Կալիֆոռնիայի շրջանի պաշտոնաթերթ «Նոր կեանքի» խմբագիրը: «Հայ ռամկավար կուսակցութիւնը» հոդվածում Սարաֆյանը գրում է, որ կուսակցութիւնն ազգայնական է կոչվում, որովհետև «ազգի» գաղափարը, իբրև քաղաքական դավանանք, վեր է դասում ամեն բանից: «Մեզի համար հայ ազգի ուրույն գոյութիւնը ամենասուրբ գաղափարական մընն է, զի հայ ազգի ինքնուրոյն գոյութեան պահպանումը ապահովելու համար էր, որ հայ ժողովուրդը դարերու ընթացքին յանձն առաւ քալել խաչի ճամբայէն»:[466] Ինչ վերաբերում է «ռամկավար» բառին, ապա նշվում է, որ «կուսակցութիւնը կը հավատայ, թէ հայ ժողովուրդը միշտ ձգտած է դէպի ռամկավարութիւն: Անիկա կը հավատայ,- գրում է Սարաֆյանը,- թէ հայ ժողո-

463. Նույն տեղում, էջ 47:
464. Ծրագիրը մինչև պատգամավորական ժողովը որպես ծրագրի նախագիծ լույս ընծայվեց, որպեսզի հնարավոր լիներ մանրամասն քննարկել, և հետո հաստատվեր համաժողովում:
465. Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 48:
466. «Նոր կեանք», 1919, հունիսի 11:

վուրդը Հայաստանի անկախութեան հոյակապ տաճարը պիտի կանգնէ ռամկավարութեան անխորտակելի հիմունքին վրայ, ուր հաստատուած են Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսայի ազատական պետութիւնները»:[467]

Հարկավոր է նշել, որ Մեծ եղեռնից հետո ռամկավարները որդեգրել էին նոր գործելակերպ, որն արդեն ոչ մի կապ չուներ 1908թ. թուրքական սահմանադրության հետ: Այս կապակցությամբ ճիշտ է նկատում Կ.Դալլաքյանը, որ նոր իրադրության պայմաններում Սահմանադրական ռամկավար կուսակցությունն իր վրայից նետեց (ոչ պաշտոնապես) «Սահմանադրական» եզրը և հիմնական նպատակի խնդրում գրեթե ամբողջովին վերադարձավ Արմենական կուսակցության սկզբունքներին:[468]

Այս շրջանում ՀՍՌ կուսակցության կյանքում տեղի ունեցավ կարևոր մի իրադարձություն, որը զգալի հետք թողեց հետագա զարգացումներում: 1919թ. դեկտեմբերի 21-27-ը Երևանում բացվեց Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության Հայաստանի շրջանային Բ համագումարը: Համագումարը բացման օրը ողջույնի հեռագրեր է ուղարկում ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդին, բանակի հրամանատար Թ. Նազարբեկյանին, Փարիզի ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին, զորավար Անդրանիկին:

Համագումարի օրակարգում ընդգրկված հարցերը հետևյալներն էին՝

ա) Գաղթականության խնդիրը,

բ) Ազգային ռամկավար կուսակցությունների միավորման ընթացքը,

գ) Քաղաքական իրավիճակը տվյալ պահին,

դ)Միացյալ Հայաստանի և Միացյալ կառավարության նկատմամբ վերաբերմունքի մշակումը և ընթացիկ հարցեր:

Կուսակցության Երևանի ակումբի կողմից զեկուցում է Հարություն Վարդապետյանը: Նա նշում է, որ Երևանի ակումբը կազմակերպվել է 1917թ. ապրիլի 4-ին: 1918թ. ընթացքում փաստորեն, կազմալուծվել է և

---

467. Նույն տեղում:

468. Դալլաքյան Կ., «Արմենականության» և «Սահմանադրականության» հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի թեզիսներ, Երևան, 1996, էջ 7:

նորից սկսել է գործել միայն 1919թ. սկզբին: Այնուհետև բանախոսը նշում է, որ Երևանի ակումբը մասնակցել է արևմտահայերի Բ համագումարին (1919թ. փետրվար), որի կողմից ընդունված «քաղաքական հարցի բանաձևին դեմ ըլլալով, կը հեռացնէ իւր ներկայացուցիչները, համարելով այդ քայլը վաղաժամ և վտանգաւոր թրքահայ դատի տեսակետէն»[469] (խոսքը վերաբերում է Միացյալ և Անկախ Հայաստանին): Իսկ թե ինչու կուսակցության Հայաստանի շրջանակը Կովկաս փոխադրվելու պահից մինչ նշված համագումարը, թեև գործել է իբրև կուսակցության մի հատված՝ նպատակ ունենալով Հայաստանի ազատագրությունը, սակայն խուսափել է քաղաքական ակտիվ գործունեությունից, զեկուցողը բացատրում է հետևյալ պատճառներով՝

« ա) Հայաստանի խորհուրդը և ջարդերէն ազատուած թրքահայ ժողովրդի բեկորները կ՝ապրին իրենց հայրենիքէն դուրս, օտար հողի վրայ և աննպաստ պայմաններու մէջ:

բ) Հայաստանի խորհուրդը կուսակցութեան մէկ մասն է միայն և մինչև այժմ հնարաւորութիւն չէ ունեցած կապ և յարաբերութիւն պահպանել կուսակցութեան միւս ճիւղերու հետ, ուրեմն և իրաւունք չունէր կուսակցութեան անունից քայլեր ընել»:[470]

Այնուհետև բանախոսը բացատրում է, որ Երևանի մասնաճյուղը 1919թ. ապրիլին կազմավորել է ռամկավար աշակերտական միությունը, գտնելով այն «անհրաժեշտ պահանջ է ներկայ հասարակական կեանքի մէջ»:[471] Զեկուցողը շեշտում է, որ ՀՍՌ կուսակցության Երևանի մասնաճյուղն ակտիվ աշխատանք է ծավալում. մասնակցել է միջկուսակցական երկու խորհրդակցության, որտեղ որոշել են Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների հետ միասին բողոքել 1919թ. մայիսի 28-ի ՀՀ կառավարության հրապարակած «աքթի դէմ»:[472] Զեկույցից պարզվում է, որ ՀՍՌԿ Երևանի մասնաճյուղն ուներ 25 անդամ:

---

469. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 4:
470. Նույն տեղում, էջ 5: Տարբեր վավերագրերում հանդիպում ենք «Կուսակցութեան Հայաստանի շրջանակ» կամ «Կուսակցութեան Հայաստանի խորհուրդ» անվանումներով, որոնք իրականում նույնն են տարբեր անվանաձևերով:
471. Նույն տեղում:
472. Նույն տեղում:

Ապա նմանատիպ հաշվետու-տեղեկատու զեկույցով հանդես է գալիս Աշտարակի նորակազմ ակումբի ներկայացուցիչը և տեղեկացնում, որ իրենց ակումբը շուտով որակական և քաղաքական կտրուկ աճ է ունենալու: ՀՍՌԿ Ռոստովի մասնաճյուղի հանձնարարականով ելույթ է ունենում Ա.Դարբինյանը և նշում, որ կուսակցության Ռոստովի ակումբը հիմնադրվել է 1916թ. ու թեև այնքան էլ բազմամարդ չի, սակայն զգալի աշխատանք է կատարել Ռուսաստանում ապաստանած արևմտահայերին նյութական և բարոյական աջակցություն ցույց տալու, «Վան-Տոսպը» Երևանում վերահիրատարակելու և մի շարք այլ դրական ձեռնարկներում:

ՀՍՌ կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհրդի զեկուցումով հանդես է գալիս Ա.Դարբինյանը, որը խոսում է կուսակցության անցած ուղու մասին, ներկայացնում ՀՍՌԿ սոցիալական կազմը, ըստ որի՝ կուսակցության անդամների 52 տոկոսը արհեստավորներ-գործավորներ են, 18 տոկոսը՝ առևտրականներ, 15-ը՝ ծառայողներ (ուսուցիչ, պաշտոնյա և այլն), 11-ը՝ գյուղացիներ:[473]

Գաղթականության հարցի վերաբերյալ լսված զեկուցումից հետո ընդունված բանաձևում[474] արձանագրվում է, որ գաղթական հայությունը գտնվում է գրեթե իրավազուրկ դրության մեջ (որպես Հայաստանի քաղաքացի), ենթարկվում Հայաստանի զինվորական իշխանությունների կամայականություններին: Բանաձևում ընդգծվում է, քանի որ Հայաստանի կառավարությունն ի վիճակի չի ապահովել գաղթական զինվորների ընտանիքներին, հետևաբար զինծառայությունը նրանց համար պիտի լինի կամավոր սկզբունքով:[475] Բանաձևում ասվում է, որ պետք է շտապ միջոցներ ձեռք առնել մեղմացնելու տարագրության մեջ գտնվող արևմտահայ գաղթականության վիճակը: Հարկավ, բանաձևում արտացոլվում էին պատերազմական ժամանակաշրջանի դժվարությունները, եռլական (տեղացի)-գաղթական հակադրությունները, գաղթականության ծանր դրությունն անտեսելու փաստը, որի մեջ մեղսակցության բաժին էին հատկացնում

473. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 5:
474. Ի դեպ, բանաձևն անսպատակահարմար և ապօրինի է համարում արևմտահայերի պարտադիր զինվորագրությունը:
475. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 18:

արևելահայ գործիչներին: Սակայն պետք է նկատել, որ ռամկավարների նմանատիպ քննադատությունները միակողմանի էին և ոչ միշտ արդարացի:

Համագումարում Ազգային ռամկավար կուսակցությունների միացման հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Արսեն Կեորկիզյանը: Նա խոսում է ռամկավար կուսակցությունների միացման անհրաժեշտության մասին և նշում, որ Ռամկավար, Վերակազմյալ, Հայ Ժողովրդական կուսակցությունների և Փարիզի Ազատական միության միջև բանակցություններ են ընթանում այդ ուղղությամբ: Համագումարը միաձայն ընդունում է Ազատականների և Վերակազմյալ հնչակյանների հետ միանալու սկզբունքը, իսկ ժողովրդականների հետ միավորման հարցում եղան տարաձայնություններ և ձայների մեծամասնությամբ, ըստ Ա.Դարբինյանի՝ 13 դեմ, 5 կողմ, 1 ձեռնպահ.[476] Հայ Ժողովրդական կուսակցության հետ միացման հարցը հետաձգվեց:[477] Համագումարում նշվում է, որ ժողովրդականների հետ միությունը ժամանակավորապես հետաձգվում է և կլուծվի, երբ առկա կլինեն մի շարք պայմաններ, հատկապես.

1. Երբ կը լուծուի Հայկական հարցը Միացեալ Հայաստանի անկախութեամբ:

2. Երբ արևմտահայ ժողովրդի հետ Ռամկավար կուսակցութիւնն էլ երկիր կը մտնի և իր ոտքի տակ հող կ'ունենայ:

«Արևելահայ Ժողովրդական և Արևմտահայ Ռամկավար կուսակցութիւնների միացումը այն ատեն կատարեալ կ'ըլլա և կ'ապահովուի, երբ վերջնականապէս կը պարզուեն Ռուսաստանի և Ռուսական Հայաստանի փոխյարաբերութիւնները»:[478] Համագումարը քննարկելով ազգային կուսակցությունների միավորման հարցը՝ սկզբունքորեն անհրաժեշտ համարեց այդ միացումը, իսկ Ժողովրդական կուսակցության հետ միավորումը հետաձգելով մինչև Հայկական հարցի լուծումը, անհրաժեշտ համարեց շարունակաբար ուժեղացնել սերտ համագործակցությունը երկու կուսակցությունների միջև: Հա-

476. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 395:
477. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 6:
478. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 394-395:

մագումարին մասնակցող Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Հ. Ստեփանյանը շեշտում է, որ իր հերթին Հայ Ժողովրդական կուսակցության համագումարը 1919 թ. սեպտեմբերի 7-ին սկզբունքորեն ընդունել էր ռամկավարների հետ միացման անհրաժեշտությունը: Պաշտպանելով համագումարի փոքրամասնության կարծիքը, Ստեփանյանը նշում է, որ իրենք կողմնակից չեն ռուսական կողմնորոշմանը (նկատի էր առնվում բոլշևիկյան Ռուսաստանը) և առաջինն են առաջադրել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը:[479] Սակայն, ինչպես արդեն նշվեց, Հայ Ժողովրդական կուսակցության հետ միավորման հարցը հետաձգվում է: Փաստորեն, եթե դիտարկում ենք Հայ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Հ.Ստեփանյանի կողմից ռամկավարների համագումարում ռուսական կողմնորոշումից հրապարակայնորեն հրաժարվելու փաստը, ապա այս հանգամանքն անուղղակիորեն վկայում է, որ տվյալ շրջանում ռամկավարներն ունեին արևմտյան կողմնորոշում:

Տվյալ պահին քաղաքական իրավիճակի մասին զեկուցումով հանդես է գալիս Նշան Հակոբյանը: Զեկուցողը, տուրք տալով տարածված այն թյուր տեսակետին, որ Դաշնակցությունն ու Թիֆլիսի Հայոց Ազգային Բյուրոն «Ռուսաստանի քաղաքական ծրագրերի գործիքն են», Սազոնովի և Վորոնցով-Դաշկովի կամակատարը, որոնց մեքենայությունների հետևանքով, իբր թե, արևմտահայությունը ծանր կորուստներ կրեց: Ընդունված բանաձևում հույս է հայտնվում, որ Փարիզում սկսված խաղաղության կոնֆերանսը վերջնականապես կլուծի Հայկական հարցը: Համագումարը վստահություն է հայտնում Փարիզի Ազգային պատվիրակությանը և հորդորում, որ ՀՀ կառավարության և Ազգային պատվիրակության միջև համագործակցությունն ուժեղանա:[480]

Միացյալ Հայաստանի և միացյալ կառավարության հարցի շուրջ զեկուցումով հանդես եկավ Դ. Մալոյանը: Նա ողջունեց միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը: Ինչ վերաբերում է միացյալ կառավարության խնդրին, ապա ողջունելով գաղափարը, զեկուցողը գտնում է, որ «միացեալ կառավարութիւն պետք է կազմել այն ժամա-

479. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 6:
480. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 396:

նակ, երբ վճռուած կը լինի Հայկական հարցը և երկու Հայաստաններ-ը փաստօրէն կը լինեն Միացեալ և Ազատ»:[481]

Ռամկավար կուսակցության Հայաստանի կենտրոնական խոր-հուրդը, Շրջանային պատգամավորական ժողովի որոշման համա-ձայն՝ անհրաժեշտ է համարում հանդես գալ շրջաբերականով, ուր համառոտակի կուրվագծվեն կուսակցության գլխավոր սկզբունք-ները, որոնք պետք է ուղեցույց ծառայեն կուսակցության անդամ-ներին իրենց գործունեության մեջ: Շրջաբերականի «Հայ Ռամկա-վար կուսակցութեան նպատակը» բաժնում նշվում է, որ կուսակ-ցությունը հիմնադրված լինելով 1908թ., Թուրքիայում Սահմանադ-րության վերահաստատումից հետո, իր մոտակա նպատակն էր դարձրել Օսմանյան պետության մեջ թուրքահայերի համար ազ-գային լայն իրավասությունների ձեռք բերումն օրինական միջոց-ներով: Այնուհետև նշվում է. «Յետագայ ողբերգական դէպքերը ցոյց կուտան, որ թուրք պետականութիւնը անկարող է կառավարել այլ ժողովուրդների: Հետևաբար Հայ Ռամկավար կուսակցութիւնը ընդունում է և հետամուտ է լինելու ամբողջական Հայաստանի ան-կախութեանը, դաշնակից պետութիւններէն մէկի ժամանակաւոր հովանաւորութեան տակ»:[482] Այնուհետև բացատրվում է, որ ռամ-կավարությունը գաղափարախոսություն է, որի կրող իրենց կու-սակցությունը էվոլյուցիոն փոփոխությունների ջատագով է և մեր-ժում է բռնի հեղափոխական գործողությունները: Ռամկավարու-թյունն ընդունում է «բովանդակ ազգը» և ոչ թե նրա այս կամ այն դասակարգը: Արտահայտելով ազգի հավաքական շահերը, ռամ-կավարությունը մերժում է ազգայնամոլությունը և չի քարոզում անհանդուրժողականություն մյուս ազգերի նկատմամբ: Ռամկա-վարությունը դատապարտում է սոցիալիզմի ծայրահեղ սկզբունք-ները և նրա քարոզած դասակարգային պայքարը, համոզված լի-նելով, որ անկարելի էր մի կողմից քարոզել դասակարգային ան-հաշտ պայքար, իսկ մյուս կողմից համախմբել «հայ ժողովրդի բո-լոր տարրերը մի նպատակի շուրջ»:[483] Շրջաբերականը վերջում

481. Նույն տեղում, էջ 397:
482. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 6:
483. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 400:

կոչ էր անում հայ ժողովրդի բոլոր խավերին համախմբվել Հայ Ռամկավար կուսակցության դրոշի ներքո:[484]

Դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած վեցերորդ նիստում քննարկման առարկա է դառնում ընդհանուր պատգամավորական ժողովի գումարման ժամանակի հարցը: Զեկուցող Հարություն Վարդապետյանը նշում է, որ մինչ այդ կուսակցությունն ունեցել է երկու համագումար՝ 1911 ու 1913թթ., և նոր համագումարի անհրաժեշտություն կա, ինչի մասին ՀՍՌԿ Հայաստանի շրջանակը հաղորդել է կուսակցության մյուս շրջանակներին, ընդգծելով, որ գերադասելի է այն անցկացնել Երևանում կամ Կիլիկիայում: Պատերազմի պատճառով Պոլսից Եգիպտոս տեղափոխված կուսակցության ժամանակավոր Կենտրոնական վարչությունը 1919թ. նոյեմբերի իր շրջաբերականով հայտնել է, որ ժողովը գումարվելու է Պոլսում: Հայաստանի շրջանակը հայտնում է իր անհամաձայնությունը և դեկտեմբերի 17-ին ստանում է նամակ համագումարի հետաձգման մասին:[485]

Օրակարգի հարցերի սպառումից հետո սկսվում են կենտրոնական խորհրդի ընտրությունները: Առաջարկվում է, որ այն բաղկացած լինի 21 հոգուց, որոնցից 5-ը կամ 7-ը պիտի ընտրվեն Երևանում գտնվող գործադիր մարմնում: Գաղտնի քվեարկությամբ ընտրվում են Մկրտիչ Աճեմյանը, Մկրտիչ Աբգարյանը, Աբրահամ Ավետիսյանը, Ահարոն Բաղդասարյանը, Նշան Գրիգորյանը, Արտակ Դարբինյանը, Արմենակ Եկարյանը, Վահան Թոթովենցը, Տիգրան Թութունճյանը, Արսեն Կեորկիզյանը, Ավետիս Թերզիպաշյանը, Աղաբեկ Համբարյանը, Նշան Հակոբյանը, Միհրան Միրաքյանը, Ռուբեն Հովնանյանը, Կարապետ Սարուխանյանը, Հարություն Վարդապետյանը, Հակոբ Տեր-Զաքարյանը: Խորհուրդը գումարվելու էր տարին չորս անգամ, մասնակցելու էին Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում գտնվող անդամները:[486]

Ուղենիշ ունենալով կուսակցության դեկտեմբերի 21-27-ին Երևանում տեղի ունեցած համաժողովի որոշումները՝ 1920թ. մայիսյան դեպքերի ժամանակ ՀՍՌԿ-ն հանդես եկավ ժողովրդին ուղղված կո-

484. Նույն տեղում, էջ 409:
485. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 45, էջ 19:
486. Նույն տեղում, էջ 20:

չով, որով դատապարտում էր հայ իրականության մեջ գործող, բայց «հայ ոգիին ու զգացմունքներուն խորթ խմբակները», որոնք փոխանակ Հայաստանը պաշտպանեն թուրքական վտանգից, «կողմնակից յայտարարեցին զիրենք այդ հայադաւ շարժման և Ալեքսանդրապոլի ու Կարսի մէջ դիմեցին եղբայրասպան կռուի»:[487] Կոչը խարազանում էր ապստամբ բոլշևիկներին, նրանց շարժումը համարելով «խելագար», քանի որ ըստ ռամկավարների «այդ կերպով վերջին անբուժելի հարուածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող Հայկական հարցին»:[488] Միաժամանակ հայտարարվում էր, որ Ռամկավար կուսակցությունը պատրաստ է իր ուժերը տրամադրել հայրենիքին սպառնացող վտանգը չեզոքացնելու համար: Կոչն ավարտվում էր հետևյալ բառերով. «Կորչի եղբայրադաւ ու հայրենադաւ ոճիրը: Կեցցե՛, Միացեալ և անկախ Հայաստանը»: Կոչը կազմել էր կուսակցության Հայաստանի խորհուրդը 1920թ. մայիսի 14-ին Երևանում և տպագրվել «Յառաջ» թերթում 1920թ. մայիսի 19-ին:[489]

Ի դեպ, 1920թ. մայիսյան ապստամբության մասին նմանատիպ կարծիք հայտնել է նաև նշանավոր պատմաբան Գ. Գալոյանը: Նա ոչ միայն ժամանակավրեպ է համարում այդ ապստամբությունը, այլև գտնում է, որ «Խորհրդային Ռուսաստանն այդ օրերին ո՛չ մտադրություն և ո՛չ էլ հնարավորություն ուներ զորք մտցնելու Հայաստան»:[490]

Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանությունների նկատմամբ ունեցած դիրքորոշմանը, ապա չնայած ռամկավարների կողմից դաշնակցական կառավարության քննադատությանը, այնուամենայնիվ կուսակցությունը չէր անտեսում իր պարտքը հայ ժողովրդի հանդեպ և փորձում էր գործնական օգնություն ցույց տալ Հայաստանի Հանրապետությանը: Կուսակցության Եգիպտոսի շրջանակը ծրագրում է Անգլիայից գնել 20 ինքնաթիռ, «օժտելու համար Հայաստանի բանակը օդային տորմիղով մը»:[491] Անհրաժեշտություն է առաջանում

487. Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 206:
488. Նույն տեղում:
489. «Յառաջ», 1920, մայիսի 19:
490. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 153-154:
491. «Ազգ-Պահակ», Բոստոն, 1922, սեպտեմբերի 30:

պատրաստել օդաչուներ հայկական բանակի համար: Այդ նպատակով դիմումներ են արվում Իզմիրի և Ամերիկայի ռամկավար շրջանակներին, որպեսզի 50 օդաչու պատրաստեն: Օդանավերի համար բանակցությունները ընթանում են անգլիական զինվորական իշխանությունների հետ՝ 1920թ. ապրիլից-օգոստոս: Մինչ հոկտեմբեր գնվում է 10 ինքնաթիռ, իսկ նոյեմբերի 27-ին նաև մնացած 10-ը (յուրաքանչյուր ինքնաթիռ գնահատված էր 100 եգիպտական ոսկի):[492] Բայց մինչև ռամկավար շրջանակները զբաղված էին օտար օդաչուներ գտնելու և հայերից օդաչուներ պատրաստելու գործով, իրադրությունը կտրուկ փոխվում է: Թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի պարտությունից և Հայաստանի խորհրդայնացումից հետո անգլիական իշխանություններն արգելում են ինքնաթիռները Հայաստան ուղարկել:[493]

Հայաստանի Հանրապետությանը 20 օդանավով օժանդակելու չիրականացած մտադրության մասին գրում են գրեթե բոլոր հուշագիրներն ու ժամանակի ռամկավար մամուլը: Ճիշտ է, հակառակն ապացուցող որևէ փաստաթղթի մենք չենք հանդիպել, բայց 1920 թ. ինքնաթիռների գները, և, ընդհանրապես, դրանց ձեռք բերելու հետ կապված դժվարությունները նկատի ունենալով, կարծում ենք, որ ինքնաթիռների քանակն ավելի քան չափազանցված է և նմանատիպ ձեռնարկ գլուխ բերելն այդ պայմաններում՝ ոչ իրական:

Ռամկավարներն այս շրջանում շատ ջանքեր գործադրեցին, որպեսզի ԱՄՆ-ի սենատն ընդունի Հայաստանի մանդատը, սակայն դա չիրականացավ: 1920թ. մայիսի վերջերին ԱՄՆ-ի սենատը քննարկեց այդ հարցը և 23 կողմ 52 դեմ ձայների քանակով մերժեց այն:[494] Դրանում ռամկավարները մեղադրեցին Հայաստանի կառավարությանը և հրաժարվեցին մասնակցել 1920թ. մայիսի 28-ի տոնակատարություններին, իբրև բողոք «ներկայ կուսակցական կառավարութեան և անոր Ամերիկայի ներկայացուցիչներուն աղէտալի քաղաքականութեան դէմ»:[495]

---

492. «Զարթօնք», 1971, դեկտեմբերի 28:
493. Նույն տեղում:
494. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 444:
495. Նույն տեղում:

Ռամկավարների հիմնական բողոքն ու փաստարկն այն էր, որ երբ իրենց կուսակցությունն ամերիկահայության և ազդեցիկ հայասեր ամերիկացիների հետ անդադար աշխատում էր, որ Միացյալ Նահանգներն ընդունեն Հայաստանի մանդատը, այդ նույն ժամանակ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները «մերժելով մենդէյթը, կը պահանջեն Ուաշինկթընի կառավարութենէն միայն զէնք, ռազմամթերք և դրամական օգնութիւն»: Այդ կապակցությամբ «Ազգում» նրանք գրում են, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ավելի հետամուտ եղավ «արտաքին դրամական օգնութեան և «խորհուրդ» միայն ձեռք ձգելու, առանց նկատի առնելու թէ դրամ տուողը ոչ թէ միայն խորհուրդ, այլ հրաման կուտայ, ինչպէս ըսած էր գնդապետ Հասկել Ա. Ահարոնեանին»:[496]

Ընդգծենք, որ իրականում Հայաստանի մանդատի (հովանավորության) ընդունման հարցում հազիվ թե վճռական դեր կարող էին ունենալ ՀՀ կառավարության ու ՀՅԴ ներկայացուցիչների արած որոշ հայտարարությունները: Պարզապես սենատի որոշման համար վճռական նշանակություն ունեցան ամերիկյան հանձնաժողովի Հայաստանում կատարած ուսումնասիրությունների վերջնական արդյունքները:

2. ՀՍՌԿ-ի գործունեությունը Կիլիկիայում

ՀՍՌ կուսակցությունը 1920-ական թթ. ակտիվ պայքար ծավալեց նաև Կիլիկիայում՝ իր ամբողջ ուժերը նվիրաբերելով կիլիկիահայության փրկության գործին: 1918թ. կնքված Մուդրոսի զինադադարից հետո սկսվում է հայության զանգվածային վերադարձը Կիլիկիա: Դեպքերի զարգացումներին ակնդետ հետևող Փարիզի Ազգային պատվիրակությունը հայերի իրավունքները պաշտպանելու համար որպես ներկայացուցիչ Կիլիկիա է ուղարկում Մ. Տամատյանին:[497] Հետզհետե հայ ազգային կուսակցությունները ևս ակտիվացնում են իրենց գործունեությունը Կիլիկիայում: Ռամկավարներն Ադանայում

496. «Նոր կեանք», 1919, նոյեմբերի 26:
497. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 448:

սկսում են հրատարակել «Հայ ձայնը»[498] պաշտոնաթերթը, վերականգնում են տեղի ռամկավար ակումբները: Հին ռամկավարներ Ֆարգճյանի և Եաղուպյանի նախաձեռնությամբ Այնթապում են հավաքվում տեղացի բոլոր կուսակիցներն ու վերականգնում են իրենց ակումբը, որը 1919թ. նոյեմբերի դրությամբ «ունէր մօտ 20 անդամ և բազմաթիւ համակիրներ»:[499] Նրանց օրինակին հետևում են Կիլիկիայի մյուս հայաշատ վայրերի ռամկավարները:

1920թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի Փրովիդենս քաղաքում տեղի է ունենում Ռամկավար կուսակցության Ամերիկայի շրջանակի Բ պատգամավորական ժողովը, որտեղ որոշվում է հատուկ ուշադրություն դարձնել Կիլիկիայի օգնության խնդրին: Դոկտոր Հ. Գույումջյանը հանձն է առնում ձրի հիվանդանոց բացել Կիլիկիայում: Այդ նպատակով «Ազգը» կազմակերպում է հանգանակություն: Շուտով Գույումջյանը մեկնում է Կիլիկիա և առաջին «դարմանատունը» բացում Ադանայում: Ամերիկայի ռամկավար կենտրոնական խորհուրդը ստեղծում է Ամերիկահայ բժշկական միությունը, որի տնօրեն և Կիլիկիայում ռամկավար կուսակցության ներկայացուցիչ է նշանակվում դոկտոր Ս. Քեպապճյանը:[500]

Սակայն աստիճանաբար Կիլիկիայի վրա իրենց ճնշումն են ուժեղացնում Թուրքիայի արևելյան նահանգներում գտնվող թուրք ազգայնականները (քեմալականները): Կիլիկիայում տեղակայված ֆրանսիական զինվորականությունը խուսափում է ակտիվ գործունեությունից՝ դրանով էլ ավելի ոգևորելով թուրքերին: Պատճառն Անգորայում սկսված թուրք-ֆրանսիական բանակցություններն էին, ուր դրված էր Կիլիկիայի հարցը: Ֆրանսիայի թրքանպաստ քաղաքականությունն ավելի է ոգևորում քեմալականներին, որոնք սկսում են զինել կիլիկիաբնակ թուրքերին: Թուրքերի համար իրավիճակը նպաստավոր էր նրանով, որ 1920թ. Կիլիկիայում անգլիացիների տեղը

---

498. «Հայ ձայնը» լույս էր տեսնում Հալեպում 1918-ից որպես անկախ օրաթերթ, 1919-ի կեսերից սկսում է հրատարակվել Ադանայում՝ որպես ՀՍՌԿ Կիլիկիայի շրջանի վարչության պաշտոնաթերթ, Լ.Աճեմյանի, ապա Լ.Քյուրքճյանի խմբագրությամբ: Տե՛ս «Հայ պարբերական մամուլը» մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, Երևան, 1986, էջ 116:
499. «Նոր կեանք», 1919, նոյեմբերի 19:
500. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 13, էջ 1:

գրված ֆրանսիական զինվորական իշխանությունները չեն փոխարինում տեղի թուրք պաշտոնյաներին հայ և ոչ թուրք ազգության պաշտոնյաներով: Իսկ այդ թուրք պաշտոնյաների մեծ մասը մոլի իթթիհատականներ էին, որոնք տեղում կազմակերպում էին «Միություն և Առաջադիմություն» կոմիտեին հարող խմբակներ, ինչպես նաև «Իսլամական միություններ», որոնց գրգռում էին քրիստոնյա ազգաբնակչության դեմ:[501] Քեմալականների հարձակումների հետագա սաստկացումը Կիլիկիայի տարբեր շրջաններում ստիպում է հայերին լրջորեն մտածել ինքնապաշտպանության մասին: Չնայած հայերի բազմաթիվ դիմումներին, այնուամենայնիվ, ֆրանսիական իշխանությունները մերժում են զենք տալ, դրանով կիլիկիահայությանը թողնելով բախտի քմահաճույքին: Նման պայմաններում, 1920թ. հունվարին քեմալականները կազմակերպեցին Մարաշի հայության կոտորածը: Հայերին օգնելու և թուրքերին զսպելու խնդրագրերով Ամերիկայի, Ֆրանսիայի, Անգլիայի կառավարություններին, կաթոլիկ և անգլիկան եկեղեցու պետերին բազմիցս դիմում են Մ. Տամատյանը, հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները, բայց ապարդյուն: Ֆրանսիացիների և քեմալականների միջև խորացող բարեկամական հարաբերություններն ի չիք էին դարձնում հայերի բոլոր հույսերը: Հայերին մնում էր ապավինել միայն սեփական ուժերին և ձեռնամուխ լինել ինքնապաշտպանության, հույսը դնելով գաղթօջախների նյութական աջակցության և կամավորների վրա: Այդ ընթացքում ինքնապաշտպանական կռիվներ էին մղվում Զեյթունում, Հաճընում և Կիլիկիայի այլ վայրերում: Ռամկավար կուսակցության Եգիպտոսի կենտրոնական վարչությունն ամբողջովին գիտակցելով պահի լրջությունը՝ Կիլիկիա է ուղարկում Լևոն Աճեմյանին և Ապահին (Պետրոսյանին), իսկ Կ.Պոլսի ռամկավար վարչությունն այդ նույն նպատակով Երևանից կանչում է ազատագրական պայքարի բովում թրծված Ա. Եկարյանին:[502] Ի նպաստ Կիլիկիայի ինքնապաշտպանության հանգանակություն է կազմակերպում Ամերիկայի ռամկավար նահանգային վարչությունը: Ռամկավարների կամավո-

501. Գանգրունի Հ., Հայաստանը 1920-1921թթ., և միջազգային դիվանագիտությունը. Պեյրութ, 1986, էջ 169:
502. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 449:

բական խմբերը կազմակերպում և առաջնորդում են Ավետիս Չավուշը, Լևոն Աճեմյանը, Ապահը, Սմբատ Կեպենլյանը, Գրիգոր Ղարիպյանը, Մարտիրոս Ոսկյանը, Պետրոս Տեր-Հովհաննէսյանը և ուրիշներ: Պետք է նշել, որ ռամկավարների հետ միասին պայքարը կազմակերպում ու մարտնչում էին նաև հայ ազգային մյուս կուսակցությունների կամավորական ուժերը:[503]

Նույնիսկ այդ ճակատագրական օրերին, սակայն, միջկուսակցական պայքարը չէր դադարում: Այն հատկապես սրվել էր դաշնակցության և ռամկավարների միջև: Երկու կուսակցությունների միջև սկսված պայքարին վերջ տալու նպատակով Կիլիկիայի Ազգային խորհուրդը հրավիրում է ռամկավարների օրգան «Հայ ձայնի» և դաշնակցության օրգան «Կիլիկիայի» խմբագիրներին ու խնդրում, որ հաշվի առնեն դրության ամբողջ բարդությունը, դադարեցնեն պայքարը և համերաշխ գործեն:[504] Կիլիկիայի քաղաքական կացության և ազգային կուսակցությունների հետագա գործողությունների կոորդինացման վերաբերյալ Հայ ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանի նախաձեռնությամբ 1920թ. հունիսի 23-ից հուլիսի 2-ը Տամատյանի բնակարանում տեղի է ունենում խորհրդակցություն:[505] Նիստի արձանագրություններից երևում է, որ խորհրդակցություններին մասնակցել են ՍԴՀԿ, ՀՅԴ, Վերակազմյալ հնչակյան և Ռամկավար կուսակցությունների ներկայացուցիչները: Խորհրդակցության ժամանակ բարձրացվում է ֆրանսիական իշխանությունների բռնած պասսիվ, անորոշ դիրքորոշման հարցը: Խորհրդակցության մասնակիցները քննադատության են ենթարկում ֆրանսիական իշխանությունների որդեգրած քաղաքական գիծը և քննարկում նրանց նկատմամբ հայերի վերաբերմունքի հարցը: Խորհրդակցության ժամանակ քննարկվում է նաև Կիլիկիայի հայ բնակչության գաղթի խնդիրը: Այստեղ, սակայն կարծիքները բաժանվում են, ՍԴՀԿ-ի ներկայացուցիչները դեմ էին գաղթին և կողմնակից էին ակտիվ ինքնապաշտպանության: Իրենց տեսակետներն այս հարցում դեռևս լրիվ չէին ճշգրտել ռամկավարները, վերակազմյալներն ու դաշ-

503. Ճիզմեճեան Մ., Նշվ. աշխ., էջ 468-470:
504. ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 211, էջ 1-2:
505. Նույն տեղում:

նակցականները: Խորհրդակցության ժամանակ ընտրվում է դիվան՝ դաշնակցության ներկայացուցիչ դոկտոր Գրիգորյանի ատենապետությամբ: Քննարկվում են միջկուսակցական հարաբերությունների և պայքարի հետագա մարտավարության մասին հարցերը:[506] Այս պայմաններում 1920թ. օգոստոսի 4-ին Կիլիկիայում գործող հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները տեղի հույն և ասորի քաղաքական ուժերի աջակցությամբ Կիլիկիան հռչակեցին ինքնավար հանրապետություն Ֆրանսիայի հովանավորության ներքո և դա այն դեպքում, երբ Ֆրանսիան դեմ էր դրան: Ստեղծվեց կառավարություն Մ. Տամատյանի գլխավորությամբ: Կիլիկիահայության այս քայլը հեռահար դիվանագիտական նպատակ էր հետապնդում, նրանք փորձում էին կատարված փաստի առջև կանգնեցնել միջազգային հանրությանը, այլևս այլ ելք չկար, և տարիների հեռվից այնքան էլ ճիշտ չի մեղադրանքներ ներկայացնել Մ. Տամատյանին ու մյուս գործիչներին անհեռատեսության և նմանատիպ այլ գործողությունների համար:

«Ասպետական» համարվող Ֆրանսիան, առաջնորդվելով բացարձակապես իմպերիալիստական շահերով, աջակցեց քեմալականներին Կիլիկիան գրավելու և կիլիկիահայությանը կոտորելու գործում: Կիլիկիայում իր ծավալապաշտական շահերը պաշտպանելու համար... Ֆրանսիան այնքան ուժ ու զորություն ունեցավ, որպեսզի շարունակ արգելի ու ձախողի ինչպես իր դաշնակիցների, այնպես էլ հայ քաղաքական ղեկավար շրջանակների ռազմական և դիվանագիտական բնույթի բոլոր և ամեն կարգի հրավերներն ու առաջարկները, որոնց իրականացմամբ արևմտահայությունը կարող էր ապահովաբար խուսափել իրեն բաժին ընկած դժբախտություններից: 1921թ. հոկտեմբերին Անկարայում ստորագրված ֆրանս-թուրքական պայմանագրով Կիլիկիան վերջնականապես հանձնվեց Թուրքիային: Կիլիկիահայության վերջին մնացորդները հեռացան այնտեղից և երկրամասը լրիվ հայաթափվեց, որի մեջ, անկասկած, իրենց մեղքի անթաքույց բաժինն ունեն մեծ տերությունները իրենց դիվանագիտական խարդավանքներով:

---

506. «Նոր կեանք», 1921, սեպտեմբերի 30:

Հետեղեռնյան տարիներին հայ քաղաքական-հասարակական ուժերը ծավալել էին եղեռնից հրաշքով կենդանի մնացած որբերին հավաքագրելու շարժում: Հայ ռամկավար կուսակցությունը զգալի քայլեր կատարեց այդ ուղղությամբ: Ազգանվեր այդ գործում հատկապես աչքի ընկավ Կիլիկիայի ռամկավար գործիչ Ռուբեն Հերյանը: Հերյանը ծնունդով Եվդոկիայից էր: Ծառայել էր հայկական լեգեոնում, կատարել անգլիական կառավարության հատուկ հանձնարարությունները: Պատերազմից հետո Հերյանն անտեսելով անասելի դժվարությունները ու իրական վտանգը, թափառում է Դեր Զորի անապատներում և իրեն նվիրաբերում հայկական որբեր փնտրելու, գտնելու և որբախնամ կազմակերպություններին հանձնելու ծանր առաքելությանը: Ծպտվելով անգլիական պաշտոնյայի կամ ամերիկյան միսիոների հագուստներով՝ ազգանվեր գործիչը հարյուրավոր որբեր է ազատում անապատներից ու թուրքական հարեմներից: Հերյանը հազիվ է փրկվում անապատի կիսավայրենի արաբական ցեղերի բարբարացրած խռովությունից և հեռանում Կիլիկիա: Լինում է Իզմիրում, Կ. Պոլսում, Փարիզում, Ամերիկայում, որտեղ նա կազմակերպում է հանգանակություն ի նպաստ որբերի ազատագրության:

Մեզ է հասել Հերյանի 1919թ. մայիսի 10-ի կոչը, ուր նա հորդորում էր ամերիկահայությանն այդ գործի համար իրեն գումարներ տրամադրել, որ նա կարողանար արաբ շեյխերին կաշառելով գլուխ բերել որբափրկիչ գործը: Հերյանը նույն խնդրանքով դիմում է նաև Եգիպտոսի ազգային միությանը, բայց առանձնապես մեծ հույս չէր կապել դրա հետ, որովհետև, ըստ նրա, «դանդաղկոտ եգիպտահայութեանը կը պակսի ամերիկահայութեան զոհողութեան ոգին»:[507]

Մի կերպ հաջողելով որոշակի գումար հայթայթել, Հերյանը ծրագրում էր կրկին մեկնել անապատներ: Այս մտադրությամբ նա ժամանում է Կահիրե, որտեղ հանկարծամահ է լինում 1921թ. հուլիսի 7-ին: Անգնահատելի է Հերյանի ծառայությունն իր ժողովրդին: Բացի որբահավաքության ազգանվեր գործից, Հերյանը մասնակցել է կիլիկիահայության ինքնապաշտպանությանը, կռվելով Ավետիս Չավուշի ջոկատում:[508] Տեղին կլիներ, անկասկած, որ հայ

507. «Նոր կեանք», 1919, սեպտեմբերի 3:
508. «Ազգ», 1921, հուլիսի 16: Տե՛ս նաև «Ապագայ», 1921, հուլիսի 16:

ժողովուրդն արժանին մատուցեր այս նշանավոր ռամկավարի հիշատակին:

3. ՀՍՌԿ Գ ընդհանուր պատգամավորական ժողովը

1913 թ. հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցած ՀՍՌ կուսակցության նախորդ՝ Բ համագումարից հետո անցել էր բավականին երկար ժամանակ: Այդ ընթացքում տեղի էին ունեցել աննախադեպ իրադարձություններ աշխարհամարտ, եղեռն, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայաթափում, աշխարհով մեկ հայերի սփռում և սփյուռքի առաջացում, հայկական պետականության վերականգնում և, վերջապես, զգալի տեղաշարժեր էին եղել նաև ՀՍՌ կուսակցության կյանքում:[509] Կատարվածն ամփոփելու, բացթողումներն ու սխալները վեր հանելու, վրիպումներն ու անճշտությունները շտկելու, ինչպես նաև աշխարհաքաղաքական նոր պայմաններում կուսակցության ռազմավարությունն ու մարտավարությունը ճշտելու նպատակով ռամկավար կուսակցության Եգիպտոսում գտնվող ժամանակավոր կենտրոնական վարչությունը ձեռնարկեց նախապատրաստական աշխատանք կուսակցության Գ համագումար հրավիրելու համար: Այդ նպատակով հրահանգներ ուղարկվեցին բոլոր մասնաճյուղերին: Համագումարի անցկացման վայրի հարցում տարաձայնություն էր առաջացել. Հայաստանի մասնաճյուղը ձգտում էր, որ այն տեղի ունենա Երևանում, սակայն Կ.Պոլսի և Եգիպտոսի մասնաճյուղերի պնդմամբ որոշվեց Գ ընդհանուր պատգամավորական ժողովն անցկացնել Կ.Պոլսում:

Հայ ռամկավար կուսակցության Գ ընդհանուր պատգամավորական ժողովը տեղի ունեցավ 1920թ. սեպտեմբերի 26-ից դեկտեմբերի 3-ը Կ. Պոլսում: Մասնակցում էին 31 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին կուսակցության բոլոր շրջանակները՝ Ամերիկա, Կիլիկիա, Կ.Պոլիս, Եգիպտոս, Բուլղարիա, Արևմտյան Եվրոպա, Սի-

509. 1919թ. հունիսի 5-ից պաշտոնապես կուսակցությունը կոչվեց Ազգային ռամկավարական, իսկ փոքր ավելի ուշ՝ Հայաստանի ռամկավար կուսակցություն, որոնք երկուսն էլ որակական փոփոխությունների արդյունք էին:

րիա, Իզմիր, Հայաստան:[510] Հայաստանի շրջանային խորհրդի կողմից պատգամավոր էր ընտրվել կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհրդի նախագահ «Հայաստանի ձայն» օրաթերթի պատասխանատու խմբագիր Արտակ Դարբինյանը:[511]

Պատգամավորական ժողովի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

ա) Կուսակցության տարբեր շրջանակների կազմակերպական միության իրագործումը:

բ) Կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականության որոշումը:

գ) Գաղափարակից կուսակցությունների հանդեպ վերաբերմունքի ճշգրտումը:

դ) Բյուջե:

Կուսակցության Գ ընդհանուր պատգամավորական ժողովում որոշվում է ՀՍՌԿ անունը պաշտոնապես փոխել և դարձնել Հայ ռամկավար կուսակցություն,[512] այսուհետև՝ ՀՌԿ: Մանրամասն քննարկելուց հետո համագումարի 51-րդ նիստում հաստատվում է ՀՌ կուսակցության ծրագիրը, որը կուսակցության նպատակ է հայտարարում. «Ապահովել և պահպանել Միացյալ Հայաստանի անկախությունը. աշխատել Հայաստանի քաղաքական, տնտեսական և հոգևոր զարգացման համար, ամրապնդել կապերը Հայաստանի և արտասահմանի հայութեան միջև, քաջալերել ներգաղթը դեպի Հայաստան»:[513]

Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության կառավարման իդեալական ձև է հռչակում դեմոկրատական հանրապետությունը, որում սահմանադրորեն ապահովված կլինեն՝

- օրենքի առջև բոլորի հավասարության,

- ընտրելու և ընտրվելու,

- զինվորական պարտադիր ծառայության,

---

510. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 1:

511. Նույն տեղում, էջ 2:

512. Նախապես որոշված էր կոչել Հայաստանի ռամկավար կուսակցություն, սակայն Հայաստանի խորհրդայնացման պատճառով վերջնական անվանում են Հայ ռամկավար կուսակցություն:

513. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 1:

- ընդհանուր ձրի և պարտադիր տարրական և ձրի, բայց ոչ պարտադիր միջնակարգ ու բարձրագույն կրթության,

- խոսքի, մամուլի, խղճի ազատության,

- սեփականության իրավունքի,

- հրապարակային և արդար դատավարության սկզբունքները:[514]

ՀՌԿ ծրագրի մեջ խրախուսվում է շուկայական տնտեսությունը, միևնույն ժամանակ, պետական մենաշնորհ են համարվում ընդերքը, փոստը, բանկը, երկաթուղին: Խրախուսվում է հողի մասնավոր սեփականությունը՝ մշակելու պարտադիր պայմանով:[515]

Համագումարը հաստատեց նաև կուսակցության կանոնադրությունը, որով կիրառելի էր համարվում կազմակերպական հետևյալ կառուցվածքը.

կուսակցության բարձրագույն մարմինը համագումարն էր, իսկ համագումարների միջև ընկած ժամանակահատվածում այդ իրավասությունը ստանձնում էր համագումարում ընտրված կենտրոնական վարչությունը: Այնուհետև համապատասխանաբար շրջանային պատգամավորական ժողով, շրջանակներ և շրջանային վարչություն, ենթաշրջանակներ և ենթաշրջանային վարչություն և վերջապես կուսակցության սկզբնական կազմակերպություններ՝ տեղական ակումբներ և նրանց վարչությունները:[516]

Ըստ նոր կանոնադրության՝ կուսակցության շրջանակները օժտվում էին ներքին ինքնավարությամբ և ունեին իրենց կանոնադրությունը, որը պիտի համաձայնեցվեր կուսակցության հիմնական կանոնադրության հետ:

Հայ Ռամկավար կուսակցության Գ ընդհանուր պատգամավորական ժողովն ընթացավ Հայաստանի վրա թուրքական նոր արշավանքի ընթացքում: Նոյեմբերին, համագումարի աշխատանքների եռուն շրջանում, հայկական բանակն արդեն պարտվել էր: Ահա այսպիսի իրադարձության պայմաններում քննարկվեցին կուսակցության ներքին և արտաքին քաղաքականության հարցերը և նոյեմբերի 25-ի նիստում պատգամավորական ժողովը որոշեց. «Նկատելով, որ հայ

514. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 2-3:
515. Նույն տեղում:
516. Ղազարեան Վ., ՌԱԿ վավերագրեր, էջ 38-39:

ազգը վերջին ջարդերու և տարագրութեանց հետևանքով ֆիզիկապէս և տնտեսապես ուժասպառ վիճակ մը կը ներկայացնէ և նկատելով, որ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան խնդիրը մեր գոյութեան մտահոգութեան առարկայ պէտք է ըլլայ մանաւանդ քաղաքականապէս ներկայ վտանգաւոր շրջանին, կուսակցութիւնը կդատապարտէ վտանգաւոր գոգռումներ առաջ բերող արտայայտութիւններ և հրապարակութիւններ և թուրք բարբարոսութեան պատրուակ հայթայթող որևէ գործելակերպ և հարկ կզգայ շեշտել զգուշաւոր և շրջահայեաց քաղաքականութեան մը կարևորութիւնն և պէտքը ընդհանրապէս իր գործելակերպին և մասնաւորապէս հարևան ազգերու հետ ունենալիք փոխադարձ յարաբերութիւններու մէջ»:[517]

Քննարկվում է նաև Ազգային պատվիրակության նկատմամբ վերաբերմունքի հարցը: Նշվում է, որ Սևրի դաշնագրի՝ Հայաստանին վերաբերող մասի անորոշ տրամադրությունները և Հայաստանի Հանրապետության ու ամբողջ Արևելքի քաղաքական խառնաշփոթ դրությունը նկատի ունենալով, անհրաժեշտ է հանուն «թրքահայ ժողովրդի և ի մասնաւորի յանուն չազատագրուած Հայաստանի, հետապնդել անոնց դրութեան խնդիրը և կենսական շահերը, նկատի ունենալով Կիլիկիոյ առանձնայատուկ կարևորութիւնը, որ անհրաժեշտ կ՚ընծայէ դաշնակից պետութեանց և մասնաւորապէս ֆրանսական կառավարութեան հետ մօտիկ յարաբերութեանց և բանակցութեանց մշակումը: Պատգամաւորական ժողովը հարկ կտեսնէ, որ Ազգային պատուիրակութիւնը շարունակէ պահել իր գործունէութիւնը մինչև վերոյիշեալ պէտքերուն գոհացումը, զօրացնելով, սակայն, իր կազմը ներկայ պահանջներու համապատասխան կերպով»:[518]

<u>Եկեղեցու հանդեպ որդեգրված քաղաքականությունը:</u> Ժողովը որոշեց, որ կուսակցությունը հետամուտ է լինելու հայ եկեղեցու բարեկարգությանը, նրա ազդեցության զորացմանը, լիովին հարգելով հայ ժողովրդի մեջ գոյություն ունեցող տարբեր դավանանքները:[519]

<u>Կուսակցության քաղաքականությունը Կիլիկիայում:</u> Հայ ռամկավար կուսակցության Գ. ընդհանուր պատգամավորական ժողովը լսե-

517. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 9:
518. Նույն տեղում:
519. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 9:

լով Կիլիկիայի պատգամավորների ներկայացրած մանրամասն տեղեկագիրը, հանգեց հետևյալ եզրակացության՝

ա) Հզորացնել Կիլիկիայի հայության ինքնապաշտպանության գործը:

բ) «Հետևելով Ֆրանսայի հանդէպ բարեկամական քաղաքականութեան մը, ջանադիր ըլլալ միս ազգաբնակչութեանց հետ համաձայնութեամբ Կիլիկիա ինքնավարութիւն մը ստեղծելու»:[520]

Թուրքիայի հանդեպ վերաբերմունքը. նշվում է, որ կուսակցությունը պաշտպանելու է Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավունքները: Առաջ է մղելու ազգային փոքրամասնությունների համագործակցության խնդիրը: Պաշտպանելու է Թուրքիայում գոյություն ունեցող հայ ազգային իշխանությունների իրավասությունները:[521]

Կուսակցության քաղաքականությունը Հայաստանում. Ժողովը որոշում է. «Նկատելով, որ ՀՀ կգտնուի ճգնաժամային դրութեան մէջ իր հողամասերուն մեծամասնութիւնը գտնուելով թշնամիի գրաւման ներքոյ և մնացեալ հողամասերը նոր սպառնալիքին տակ, պատգամաւորական ժողովը որոշեց յանձնարարել կենտրոնական վարչութեանը, որ հետամուտ ըլլայ օգտագործելու այն բոլոր արտաքին ու ներքին քաղաքական յեղաշրջումները, որոնք կրնան ծառայել հայ ժողովրդին ֆիզիքական գոյութեան պահպանման և Հայաստանի անկախութեան ապահովման»:[522]

Պատգամավորական ժողովը դեկտեմբերի 1-ի նիստում ընդունեց հետևյալ բանաձևը: Կենտրոնական վարչության բոլոր շրջանակներին հանձնարարել քարոզչության զանազան միջոցները ծառայեցնել կուսակցության սկզբունքները և քաղաքականությունը տարածելու համար: Նշված են նաև միջոցները՝ մամուլ, հրատարակչություն, բեմ, գործիչ, դպրոց:

Պատգամավորական ժողովում քննարկվեց նաև այլ կուսակցությունների հետ միության խնդիրը: Սկզբունքորեն ընդունվեց Հայ ժողովրդական և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունների

520. Նույն տեղում, էջ 15:
521. Նույն տեղում, էջ 16:
522. Նույն տեղում, էջ 17:

հետ միավորման գաղափարը: Պետք է ընդգծել, որ այդ ժամանակ արդեն սկսվել էին բանակցությունները միության վերաբերյալ, որը և արտացոլված է ժողովի արձանագրություններում:[523] Պատգամավորական ժողովում շեշտվում է հետևյալ հանգամանքը: «Բանակցութիւնների ժամանակ կուսակցութեանց համաձայնութեան պարագային աշխատել «Հայ Ռամկավար կուսակցութիւն» անունը պահել և պահանջել հարկին «Ռամկավար» բառին կցել ուրիշ բառ մը, բայց ոչ մէկ պարագայի մէջ չընդունել «Ռամկավար» բառից հրաժարումը: Աշխատել, որպէսզի Ռամկավար կուսակցութեան ծրագրային բոլոր կէտերը ընդունեն միւս կուսակցութիւնների ներկայացուցիչները: Բանակցութիւնների ժամանակ ամէն հարց վճռել ոչ թէ ձայների մեծամասնութեամբ, այլ կողմերի համաձայնութեամբ, իսկ եթէ «լիազօրների համաժողովը չկարենայ համաձայնիլ ծրագրին վերաբերյալ որևէ կէտի շուրջ, ապա վերջնական որոշումը յետաձգել միացեալ կուսակցութեանց ընդհանուր պատգամաւորական ժողովին»:[524] Պատգամավորական ժողովն իբրև լիազորներ է ընտրում Ա. Թերզիպաշյանին, Ա. Ինճիճյանին, իսկ Կ. Փափազյանին՝ իբրև փոխլիազոր:[525]

Կուսակցության բյուջեի քննարկումն ու հաստատումը: Պարզաբանվեց, որ կուսակցության բյուջեն կազմում է 47 հազար դոլար և այդ գումարը տրամադրվում է միայն կուսակցության սովորական ծախսերի համար, այսինքն՝ կենտրոնական վարչության հինգ անդամների, գործիչների և պաշտոնյաների թոշակների, գրասենյակի, հրատարակության, մամուլի համար: Պատվիրվում է բոլորին լինել խիստ խնայող, կատարել միայն առավել անհրաժեշտ ծախսերը:[526]

Սովորական բյուջեից բացի ժողովը որոշում է առաջիկա տարում գոյացնել 150 հազար դոլարի գումար, իբրև մասնավոր բյուջե: Դրա մի մասը պիտի գործածվեր Հայաստանում, իսկ մեծագույն մասը տրամադրվելու էր Կիլիկիայի ինքնապաշտպանության գործին: Նըշ-

---

523. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 21:
524. Նույն տեղում:
525. Նույն տեղում:
526. Նույն տեղում, էջ 24:

վում էր, որ կուսակցությունն ունի 133 ակումբ, իսկ կուսակցականների ընդհանուր թիվը կազմում է 7600 մարդ:[527]

Պատգամավորական ժողովը դիմումներ է հղում տարբեր երկրների կառավարություններին, առանձին գործիչների և Ազգերի Լիգային, խնդրելով Հայաստանի համար «հոգատար պետութիւն մը կարգել», քանի որ, ըստ ժողովի որոշման, «Հայաստանի համար հոգատար պետութիւն մը - անհրաժեշտութիւն է»:[528] Հարցին ընթացք տալու համար համագումարը ներկայացուցիչ է նշանակում Լևոն Մկրտչյանին:[529]

Վերջինս անմիջապես ձեռնամուխ է լինում իր պարտականությունների կատարմանը: Հավաքում և խմբագրում է հրապարակի վրա եղած տեղեկատվությունը, վերլուծում է այն և կատարում համապատասխան եզրահանգումներ: Դիմումներ է հղում միջազգային հեղինակավոր կազմակերպություններին, ներկայացնում Հայկական խնդիրը և կոչ անում նրանց օժանդակել Հայ Դատի իրավացի լուծմանը:

Լևոն Մկրտչյանի կողմից Ազգերի լիգային ներկայացված դեկտեմբերի 15-ի հիշատակագրում համառոտ տրված է Հայկական հարցի ծագումն ու էությունը: Հիշատակագրում Հայ Ռամկավար կուսակցությունը հույս է հայտնում, որ Հայաստանը շտապ կերպով պետք է ենթարկվի որևէ պետության պաշտպանության «համաձայն Ազգերու ընկերակցութեան կանոնագրին 22 յօդուածին տրամադրութեանց և ոգիին»:[530] Այնուհետև, անդրադառնալով Հայաստանի խորհրդայնացման խնդրին, հիշատակագրում հայտնվում է այն համոզմունքը, որ Հայաստանում հաստատված կոմունիստական գաղափարախոսությունը խորթ է հայ ժողովրդի ավանդույթներին, նրա կրոնական ու ընտանեկան ըմբռնումներին: Նշվում է նաև, որ հայ ժողովրդի նշանավոր մտավորականների մեծագույն մասը բացարձակապես մերժել է կոմունիզմը, որպես «տիեզերական օրենքներին հակառակ», և չափազանցելով, հիշատակագրի հեղինակները գրում

527. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 25:
528. Նույն տեղում, էջ 26:
529. «Ազգ», 1921թ., հունվարի 27:
530. Նույն տեղում:

էին, թե իբր հայ ժողովուրդը բացարկ է հայտարարել հաստատված խորհրդային կարգերին, որը հայ ժողովրդին պարտադրել է Մոսկվայի կառավարությունը քեմալականների օժանդակությամբ: Ընդգծվում է այն միտքը, որ Հայ Ռամկավար կուսակցությունը ոչ թե Երևանի հանրապետության համար է հոգատարություն խնդրում, այլ այն «հողամասերուն համար, որոնք Սևրի դաշնագրին տրամադրութեանց և Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահին իրաւարարական վճռին համաձայն պիտի անջատուին թրքական նախկին պետութենէն, կազմելու համար հայ պետութիւնը»:[531] Հիշատակագիրը համոզմունք է հայտնում, որ ուշ թե շուտ Ռուսաստանում հաստատվելու են դեմոկրատական-սահմանադրական կարգեր և կառավարություն, որը կհարգի նախկին ռուսական կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների իրավունքները և «Երևանի հանրապետութեան հողամասերը օր մը պիտի կցուին Սևրի դաշնագրով ստեղծուած Հայաստանին, որուն կորիզը կկազմեն թուրք կայսրութեան հայ գաւառները: Ահա այս ոգով է, որ Ազգերու ընկերակցութիւնը Հայաստանի օգնութեան պարտի հասնիլ»:[532] 1920թ. դեկտեմբերի 30-ին Լ.Մկրտչյանը Ազգերի լիգայի ժողովի նախագահի անունից ստանում է պատասխան հեռագիր, որտեղ հայտնվում է, որ ժողովը լիգայի խորհրդին խնդրել է կազմել հանձնաժողով, որը պիտի շարունակի Հայկական հարցի հանձնախմբի կողմից սկսված աշխատանքը և որ հանձնախմբի իրավասությունը պիտի տարածվի ոչ միայն նախկին Արևելյան Հայաստանի, այլև ողջ հայկական հողերի վրա:[533]

Վերջում պատգամավորական ժողովն ընտրում է Կենտրոնական վարչություն՝ բաղկացած հինգ հոգուց՝

1. Վ. Թեքեյան՝ ատենապետ,

2. Ս. Փափազյան՝ ատենադպիր,

3. Ա. Թերզիպաշյան՝ գանձապահ,

4. Ա. Դարբինյան,

5. Ս. Կեպենլյան:[534]

---

531. «Ազգ», 1921թ., հունվարի 27:
532. Նույն տեղում:
533. Նույն տեղում:
534. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 6:

Համաձայն պատգամավորական ժողովի որոշման, Կենտրոնական վարչությունը պիտի գտնվեր Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում, բայց ընդգծվում էր նաև, որ «ներկայիս Հայաստանի քաղաքական անորոշ կացութեան բերումով առժամապէս կմնայ Պոլիս»:[535] Կենտրոնական վարչության փոխանդամներ են ընտրվում Մ. Տամատյանը, Վ. Գրիգորյանը, Ռ. Հերյանը:[536]

Երկարատև համագումարն ավարտվեց, երբ Հայաստանի և հայ ժողովրդի համար ստեղծվել էր խառնաշփոթ կացություն, որին էլ իբրև վերաբերմունք համագումարը հաստատեց հետևյալ բանաձևը. «Հայ Ռամկավար կուսակցութեան Գ ընդհանուր Պատգամաւորական Ժողովը քննութեան ենթարկելով Հայաստանի ներկայ քաղաքական ճգնաժամային և անստոյգ կացութիւնը՝ որոշեց յանձնարարել Կեդրոնական Վարչութեան, որ հետամուտ ըլլայ օգտագործելու այն բոլոր ներքին ու արտաքին պատեհութիւնները և քաղաքական յեղաշրջումները, որոնք կրնան ծառայել հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան պահպանման և Հայաստանի անկախութեան ապահովման»:[537]

Համագումարի ավարտից անմիջապես հետո Ռամկավար կուսակցության Կենտրոնական վարչությունը 1920թ. դեկտեմբերի 13-ին շրջանակներին դիմեց թիվ 3 շրջաբերականով, որում ասվում էր. «Դժբախտաբար Հայաստանի աղէտաբեր դէպքերը աւելի կնճռոտեցին կացութիւնը և չենք գիտեր, թէ ինչ արդիւնք պիտի ունենան կատարուած աշխատութիւնները թէ հայասէրներու լիգային և թէ Ազգաց ընկերակցութեան մէջ: Հաճընի անկման և Կարսի գրաման առթիւ ժողովը դիմումներ յղեց Ազգերու լիգային Պոլսոյ բարձր կոմիսերներուն, որոնցմէ ստացաւ պատշաճ պատասխաններ»:[538] Սույն շրջաբերականում նշվում է նաև, որ Թուրքիան օգտագործում է Ռուսաստանի և Անտանտի միջև գոյություն ունեցող հակասությունները իր քաղաքական նպատակների օգտին: Միևնույն ժամանակ, շրջաբերականում վերլուծելով ստեղծված բարդ կացությունը, ՌԱ կենտրոնական վարչությունը հայտնում է, որ այս պայմաններում նույնիսկ

535. Նույն տեղում:
536. Նույն տեղում:
537. Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 462:
538. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 26:

հայերը գործնական օգնություն կարող են ակնկալել միայն Ռուսաստանից: Ընդգծելով, որ ՀՌԿ-ն ստեղծված ճգնաժամային կացության մեջ իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է «հայ ժողովրդի ֆիզիքական և անոր քաղաքական իրաւունքներու պաշտպանութեան շուրջ», կենտրոնական վարչությունը հրահանգում է բոլոր շրջանային վարչություններին երկրորդական նշանակություն տալ «Խորհրդային Ռուսաստանի յեղափոխութեան, Հայաստանի ներքին ընկերային կարգերու վրայ առաջ բերած ազդեցութիւններուն»:[539]

Կենտրոնական վարչությունը հանձնարարում էր նաև կուսակցության տպագիր օրգաններին, որպեսզի զգուշանան «անխոհեմ արտայայտութիւններէ ռուսական օգնութիւն ենթադրող որևէ փաստի կամ երևոյթի դէմ»:[540] Սակայն դա չէր նշանակում, թե խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում ռամկավարները միաժամանակ, դրական երևույթ էին համարում: Ճիշտ և սթափ գնահատելով կատարված իրողությունը, 1920թ. դեկտեմբերի 26-ին Հայ Ռամկավար կուսակցության Արևմտյան Եվրոպայի շրջանային վարչությանն ուղղված շրջաբերականում (թիվ 4) ուղղակիորեն նշված էր. «Հայաստանը իր արտաքին քաղաքականութեան վարչութիւնը Ռուսաստանին կյանձնէ»:[541] Որպես ապացույց վկայակոչվում է Խորհրդային Ադրբեջանի վիճակը, Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ծրագրերը և «Հայաստանի անկախութեան մասին որևէ ակնարկ չբովանդակող նոր կառավարութեան ողջոյնի հեռագրերը»:[542] Շրջաբերականում նշվում էր, որ նախկին Ռուսական կայսրության սահմաններում ստեղծված Հայաստանի Հանրապետությունը փաստորեն զրկված է իրական անկախությունից: Այնուհետև շեշտվում էին, որ եթե նույնիսկ «Ռուսահայաստանը կորցուած համարենք, ապա պէտք է շարունակենք առաջ տանել Հայկական հարցի վերաբերմամբ մեր ջանքերը»:[543] Ապա կենտրոնական վարչությունը առաջադրում է այն գլխավոր հարցերը, որոնց լուծմանը պետք է հետամուտ լիներ և ըստ

539. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 33:
540. Նույն տեղում, էջ 34:
541. Նույն տեղում, էջ 36:
542. Նույն տեղում:
543. Նույն տեղում:

այդմ մշակեր իր քաղաքականությունը: Դրանք էին.

1. ՀՀ ներքին դրությունը.

2. Հայ-թուրքական նոր բանակցությունները.

3. Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի, Թուրքիայի և նրա դաշնակիցների նկատմամբ.

4. Անտանտի պետությունների կողմից Ռուսաստանի նկատմամբ տարվող քաղաքականությունը Մերձավոր Արևելքում.

5. Վիլսոնի իրավարարական ձեռնարկները և Ազգերի լիգայում ստեղծված տրամադրությունը:[544]

Ելնելով ՀՌԿ 3-րդ համագումարի որոշումներից, Կենտրոնական վարչությունը Հայկական հարցին իր վերաբերմունքը բանաձևեց հետևյալ կերպ. «Հայ Ռամկավար կուսակցութեան իտէալը Միացեալ և Անկախ Հայաստանն է: Սակայն յեղափոխական Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի ապագայի հանդէպ լի է անորոշութեամբ և անակնկալներով: Ներկայիս ՀՀ ղեկը իր ձեռքն ունեցող հայ խորհրդային կառավարութիւնը նոյնպես ճշտած չէ իր վերաբերմունքը Սևրի դաշնագրի վերաբերեալ կամ միացեալ և անկախ Հայաստանի մը իրականացման մասին»:[545] Եվ քանի որ կուսակցությունը չէր հրաժարվում միացյալ և անկախ Հայաստանի պահանջից, հետևաբար նրա շրջանային վարչություններն իրենց մամուլով պետք է պաշտպանեին այդ գիծը: Կենտրոնական վարչության այս որոշումը 1921թ. հունվարի 24-ին թիվ 7 շրջաբերականով հաղորդվում է բոլոր շրջանային վարչություններին: Միաժամանակ նշվում էր, որ ընդունված բանաձևը հրատարակության համար չէ:[546]

1921թ. հունվարի 14-ին Կ.Պոլսից Արտակ Դարբինյանը նամակ է ուղարկում Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդին՝ արևմտահայերի վիճակի և կուսակցության Հայաստանի խորհրդի բռնելիք քաղաքական գծի մասին: Այստեղ խոսելով արևմտահայերի մասին, Դարբինյանն ընդգծում էր այն հանգամանքը, որ նրանք (արևմտահայերը) չեն հրաժարվել հայրենիք վերադառնալու իրենց իրավունքից, որը ձեռք են բերել միլիոնավոր զոհերի գնով: Նշվում է,

544. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 37:
545. Նույն տեղում, ց. 1, գ. 49, էջ 8-9:
546. Նույն տեղում, ց. 1, գ. 47, էջ 37:

որ արևմտահայությունն անհրաժեշտ է համարում դաշնակիցների կողմից ճանաչված Ազգային պատվիրակության միջոցով հետապնդել Արևմտահայաստանի խնդիրը: Իսկ Հայաստանի նոր կառավարության վարած քաղաքական կուրսի մասին, Ա.Դարբինյանը գրում էր. «Հայաստանի նոր կառավարութեան ընկերային ծրագիրները մենք համարած ենք անմարսելի մեր ժողովրդի համար և անիրագործելի մեր հայրենիքի նման միջավայրի մը մէջ, բայց քանի որ դէպքերի ընթացքում այսօր Հայաստանի մեջ կտիրէ խորհրդային վարչաձև և ատոր ջատագով կուսակցութիւնը՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնը իր ձեռքն է առել կառավարութեան ղեկը, պէտք է թողով, որ նա առանց ներքին ցուցումներու գործադրէ այն, ինչ որ Հայաստանի տուեալ պայմանները հնարաւորութիւն կտան»:[547] Դարբինյանը ցույց էր տալիս, որ նոր դժվարություն ստեղծողները պիտի պատճառ դառնային անիշխանության շարունակմանը և քաղաքացիական կռիվներին, որոնց այլևս չէր կարող դիմանալ մեծ տառապանքներ տեսած հայ ժողովուրդը:

Ընդգծենք, որ ռամկավարները Հայաստանում փետրվարյան դեպքերի նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորեցին: 1921թ. փետրվարյան հուզումներն ու ելույթները համարեցին ավելորդ եղբայրասպան կռիվներ, որոնք նրանց կարծիքով միայն նոր աղետներ բերեցին բազմաչարչար հայ ժողովրդին: Հատկանշական է, որ ռամկավարների պաշտոնաթերթ «Ապագան», խոսելով փետրվարյան ելույթի պատճառների մասին, կարողանում էր վեր կանգնել նեղ կուսակցականությունից և չէր բավարարվում միայն կողմերից որևէ մեկին քննադատելով, այլ փաստերով ցույց էր տալիս, որ նորահաստատ բոլշևիկյան իշխանությունն իր վարած քաղաքականությամբ փաստորեն պատճառ դարձավ ժողովրդական նոր հուզումի: Մասնավորապես մատնանշվում էին հայ բոլշևիկների, ինչպես, օրինակ՝ Աթարբեկյանի, գործադրած բռնություններն Էջմիածնի շրջանում բնակություն հաստատած սասունցիների նկատմամբ, պարենամթերքի համատարած հափշտակություններն ու բռնագրավումները, 1500 հայ սպաների աքսորը, թուրքերին Հայաստանից չհեռացնելը և այլն:

547. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 5, էջ 1-2:

Միաժամանակ քննադատում է ՀՅ Դաշնակցությանը, որը փորձեց օգտվել առիթից և նորից գրավել իշխանությունը:[548]

Հիմնականում արտահայտելով ՌԱ կուսակցության դիրքորոշումը և զարգացնելով այդ դրույթները Դարբինյանը վերոնշյալ նամակում գրում էր, որ Հայաստանի նոր կառավարությունը չէր կարող զենքի ուժով լուծել Արևմտահայաստանի հարցը, իսկ իրենք էլ չէին հավատում, թե Ռուսաստանը կլուծեր այն, որովհետև «վերջին իրադարձութիւնները ցույց կուտան, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը չի հետևելու Միացեալ և Անկախ Հայաստանի խնդրի իրականացմանը»:[549] Դրա հետ մեկտեղ Դարբինյանը ցույց էր տալիս, որ քեմալականներն իրենց հերթին ոչ միայն «Տաճկահայաստանէն հրաժարուելու մտադիր չեն, այլ նոյնիսկ դեկտեմբերի 2-ի դաշնագրէն ալ ձեռք քաշելու միտք չունեն»:[550] Ինչ վերաբերում է Թուրքիայի հարցում անգլո-ռուսական հարաբերություններին, ապա Դարբինյանը ճիշտ է նկատում, որ քանի դեռ Անգլիայի և Ռուսաստանի միջև համաձայնություն չի ստորագրվել, ապա վերջինս «իր շահերուն համապատասխան անհրաժեշտ չպէտք է գտնէ քեմալականներու դէմ թշնամական ընթացքի մը հետևել»:[551] Նամակի վերջում Դարբինյանը հանգում է հետևյալ եզրակացության. «Այս ծանրակշիռ հանգամանքները նոյնպես կթելադրեն մեզ Տաճկահայաստանի ազատագրութեան յոյսը չկապել միայն Հայաստանի նոր կառավարութեան բարոյական ջանքերու հետ և հարկադրել նրան, որ ճգմուի իր ուժերէն վեր եղող բեռան տակ: Այս տեսակէտն է, որ կթելադրէ արտասահմանի հայութեանը չհրաժարուել Սևրի դաշնագրով կամ անկէ դուրս Վերսալի դաշնագրի տուած սկզբունքով պահանջել Տաճկահայաստանի ստեղծում»:[552]

1921թ. սկզբից կուսակցությունը նոր թափով ձեռնամուխ է լինում իր տեղական մասնաճյուղերի ամրապնդման գործին, այսինքն՝ մեծ ուշադրություն է դարձնում կուսակցական շինարարությանը: 1921թ.

---

548. «Ապագայ», 1921թ., մարտի 12:
549. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 5, էջ 2:
550. Նույն տեղում:
551. Նույն տեղում:
552. Նույն տեղում, էջ 3:

հունվարին ՀՌ կուսակցության երկու ակումբներ են հիմնվում Բելգիայում՝ Բրյուսելում և Անտվերպենում:[553] Բրյուսելի ակումբի բացման առթիվ, ակումբի հիմնադիր Եսայի Կարիկյանը ծավալուն ճառ է արտասանում, որում ամփոփելով վերջին շրջանի հայության կրած դժբախտությունները՝ եզրակացնում է, որ առանց օտարի վրա հույս դնելու աշխարհասփյուռ հայության և Հայաստանի միջոցներով կարելի կլիներ պաշտպանել Արևմտյան Հայաստանը և վերջին հայթուրքական պատերազմում հաղթող դուրս գալ: Սակայն այդպես չեղավ, որովհետև Հայաստանի իշխանությունները միշտ ապավինեցին օտարի օգնությանը, իսկ «հայութեան ներսում էլ բազմաթիվ էին անտարբերներն ու չեզոքները»[554] և որ արտասահմանից ստացված ռազմական օգնությունը ամբողջովին չծառայեց իր նպատակին: Ավարտելով խոսքը, Կարիկյանը կոչ է անում բոլորին այսուհետև վերջ տալ անտարբերությանը, ձերբազատվել այդ ախտից և լծվել հայրենիքի հզորացման գործին:[555]

1921թ. հունվարի 8-ին տեղի է ունենում ՀՌ կուսակցության Եգիպտոսի շրջանային պատգամավորական ժողովը: Պատգամավորներից 13-ը Կահիրեի ակումբից էին, 5-ը՝ Ալեքսանդրիայի, 4-ը՝ Թանթայի և 3-ը՝ Զանկազիկի, հինգն էլ մինչ այդ ստեղծված ՀՌԿ Եգիպտոսի շրջանային ժամանակավոր կենտրոնական ակումբից:[556] Ժողովում շեշտվում է կուսակցական ամրակուռ կառույցներ ունենալու անհրաժեշտությունը, ինչը կմեծացնի ազգանպաստ գործունեություն ծավալելու հնարավորությունը:

1921թ. ապրիլի 12-13-ը ՀՌ կուսակցության Բուլղարիայի տարբեր քաղաքներում գործող հինգ ակումբների մասնակցությամբ տեղի է ունենում պատգամավորական ժողով, արդյունքում Բուլղարիայի ռամկավար ակումբները միանալով կազմում են մեկ շրջանային մասնաճյուղ, որի կենտրոնատեղին դառնում է Ֆիլիպպե քաղաքը: Այս մասնաճյուղի պատգամավորական ժողովի մասնակիցները ևս աներկբայորեն քվեարկեցին ՀՌԿ ամուր կառույցների օգտին և ծավալեցին

553. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 21:
554. «Ապագայ», 1921թ., փետրվարի 5:
555. Նույն տեղում:
556. Նույն տեղում, փետրվարի 12:

որոշման իրականացմանը նպաստող ազգօգուտ գործունեություն:[557]

1921թ. ՀՌ կուսակցության մասնաճյուղ է հիմնադրվում նաև Հունաստանում: Մասնաճյուղն սկզբում ուներ 28 անդամ: Ա.Դարբինյանի ջանքերով Ռումինիայում ևս 1921թ. սկզբին ձևավորվում են երեք ռամկավար ակումբներ, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմում էր 70 հոգի:[558] Մի փոքր անց ՀՌԿ ակումբ է հիմնվում նույնիսկ Հաբեշստանում (Եթովպիա), որի անդամները թեև մեծաքանակ չէին՝ 14 հոգի ընդամենը, սակայն վճռական էին և միշտ ակտիվ մասնակցություն էին ունենում հայանպաստ ձեռնարկումներին:[559]

Հետհամագումարյան շրջանում ծավալված կուսակցական շինարարությունը զգալի արդյունք տվեց. ստեղծվեցին ՀՌԿ մի շարք նոր ակումբներ, ամրապնդվեցին մինչ այդ գործողները, ընդլայնվեց կուսակցության տարածման աշխարհագրությունը, իսկ ամենակարևորը՝ վերլուծվում էին թույլ տրված սխալները, հետագայում դրանցից զերծ մնալու նպատակով:

4. 1921թ. Լոնդոնի վեհաժողովը և ռամկավարները: ՀՍՌԿ-ի ջանքերը հայ ժողովրդին սովից փրկելու համար

1921թ. փետրվար-մարտ ամիսներին, երբ Հայաստանում նախկին իշխանության կողմնակիցներն ու նոր հաստատված բոլշևիկյան-խորհրդային ուժերը հակամարտության մեջ էին, Մոսկվայում տեղի ունեցավ ռուս-թուրքական կոնֆերանս: Կոնֆերանսում անտեսելով հայ ժողովրդի շահերը, առանց նրա ներկայացուցիչների մասնակցության, քննարկվեց և ստորագրվեց պայմանագիր հայկական տարածքների վերաբերյալ և Հայաստանին պարտադրվեց իրավական առումով ճանաչել սեփական տարածքների զգալի մասի կորստի փաստը:

557. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 30:
558. ՀԱԱ. ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 49:
559. «Ապագայ», 1921թ., հուլիսի 9:

Ռամկավարները 1921թ. փետրվարյան ապստամբության ժամանակ դատապարտեցին դաշնակցությանը: Քննադատություններն ավելի խստացան, երբ հայտնի դարձավ, որ դաշնակցականներն օգնություն էին խնդրել թուրքերից: Ռամկավարները գտնում էին, որ 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի հակահայկական որոշումների պատճառը «դաշնակների ավանտյուրան էր»:[560] Իրականությունը, սակայն այլ էր, և պայմանագրի հակահայկական որոշումների պատճառը ոչ թե դաշնակների վարած քաղաքականությունն էր, այլ խորհրդա - քեմալական մերձեցումը, բոլշևիկների այն ունայն երազանքն ու հույսը, ըստ որի՝ Թուրքիան կարող էր դառնալ Արևելքում հեղափոխության օջախը, որի վրա հենվելով հնարավոր կդառնար հեղափոխությունն արտահանել Արևելքի երկրներ:

Փաստորեն, Մոսկվայի պայմանագրով խորհրդային իշխանությունը խաչ քաշեց Հայկական հարցի վրա:[561] Սակայն իրենց դիվանագիտական գործունեությունը շարունակում էին Ազգային պատվիրակությունը Պողոս Նուբարի և Հայաստանի նախկին հանրապետության նախկին պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ: Ռամկավարները, որոնք պաշտպանում էին Պողոս Նուբարի ղեկավարած պատվիրակությանը, չնայած օտարի վրա հույս չդնելու իրենց հայտարարություններին, իրականում Եվրոպայից օգնության հույսեր էին փայփայում: Եվ պատահական չէ, որ 1921թ. փետրվարի 19-ի «Ապագայի» «Հայկական հարցը և Լոնդոնի խորհրդաժողովը» խորագրով խմբագրականում ռամկավարները համոզմունք էին հայտնում, որ Լոնդոնում բացվելիք կոնֆերանսում կքննարկվի նաև Հայկական հարցը: «Լոնդոնի ժողովէն,- գրված է խմբագրականում, - մենք կսպասենք, որ Հայկական հարցին տայ այն նշանակութիւնը, որուն արժանի կ'ընէ Դաշնակիցներուն դատին համար հայ ժողովրդին անհուն զոհաբերութիւնը»:[562] Այնուհետև պարզորոշ ասվում է, որ Լոնդոնի կոնֆերանսից ակնկալում են Արևմտյան Հայաստանի չորս նահանգների ազատագրումը թուրքերից, որտեղ կկարողանային

560. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 36:
561. Զոհրաբյան Է.Ա., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 115:
562. «Ապագայ», 1921, փետրվարի 19:

պատսպարվել հայ գաղթականները: Միևնույն ժամանակ, ռամկավարները հույս ունեին, որ Լոնդոնի խորհրդաժողովը չի անտեսի նաև Կիլիկիահայությանը, իսկ ֆրանսիական կողմը «խղճի պարտք մը պիտի համարէ կարելի բոլոր ապահովութիւնները ձեռք բերել Կիլիկիոյ հայ ժողովրդին գոյութեան համար»:[563]

Հայկական պատվիրակությունները մասնակցեցին մեծ տերությունների կոնֆերանսին, որը տեղի ունեցավ Լոնդոնում 1921թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը: Կոնֆերանսի նկատմամբ իրենց դիրքորոշումը ճշտելու նպատակով ռամկավարները Պոլսում խորհրդակցություն են անցկացնում, որին հրավիրում են նաև Ազատական կուսակցության կենտրոնական վարչությանը: Մեծ Եղեռնից սթափված Վերակազմյալ հնչակյան կուսակցության Ամերիկայի հատվածը դեռ 1918թ. նոյեմբերին ինքնավերանվանվել էր «Հայ Ազատական կուսակցութիւն» կամ «Վերակազմեալ Հնչակեան (Ազատական-Ազգայնական) կուսակցութիւն», իսկ հետո պարզապես, «Ազատական կուսակցութիւն»: Հայ ժողովրդական կուսակցության կողմից միության բանակցություններին մասնակցեց լիազորված ներկայացուցիչ պրոֆ. Ա. Աղաջանյանը: Խորհրդակցության արդյունքում մասնակիցները հանգում են այն հետևության, որ Պ. Նուբարի պատվիրակությունը պետք է պաշտպանի Սևրի դաշնագրով ճանաչված Հայաստանի քաղաքական իրավունքները: Այնուհետև, փետրվարի 24-ին հեռագիր են ուղարկում Լոնդոն՝ Պ.Նուբարին, ուր շեշտում են, որ իրենք Հայաստանի գոյությունն անհնարին են համարում առանց սևծովյան եզերքի Տրապիզոն նավահանգստով և ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունման: Ռամկավարները պահանջում էին Նուբարից, որպեսզի հետամուտ լինի Հայաստանի սահմանների մեջ անպայման պահելու Էրզրումն ու Տրապիզոնը: Միաժամանակ խնդրում էին առաջ մղել նաև Կիլիկիայի հարցը:[564] Դեռ կոնֆերանսի նախօրյակին Ամերիկայի ռամկավարներն «Ազգում» գրում էին, որ Անկախ Հայաստանի կորիզը պետք է «ըլլայ ոչ թե Ռուսական Հայաստանը, այլ Թուրքահայաստանը»:[565] Այդ

563. Նույն տեղում, փետրվարի 26:
564. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 23:
565. «Ազգ», 1921թ., հունվարի 21:

նույն ոգով Լոնդոնում Պ. Նուբարը պնդում էր, որ պետք է իրագործվի Սևրի պայմանագրով Հայկական հարցի մասին տրված որոշումը, շեշտելով, որ Կովկասյան Հայաստանի անցումը ռուսական տիրապետության տակ չի կարող արգելք լինել Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Սևրի դաշնագրի որոշումների իրագործմանը:[566] Թուրքական պատվիրակությունը Լոնդոնում նույնպես դրեց առավելագույն պահանջներ, որոնց թվում Կիլիկիայի վերադարձը և Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումը: Ինչևէ, Լոնդոնի կոնֆերանսը որևէ համաձայնության չհանգեց Հայկական հարցի կապակցությամբ: Դաշնակիցները տարբեր պատճառաբանություններով հրաժարվեցին Հայկական հարցին դրական լուծում տալուց, փաստորեն հրաժարվելով Սևրի պայմանագրից: Կոնֆերանսում նրանք առաջարկեցին Թուրքիայի արևելյան նահանգներում Հայկական «Ազգային օջախի» ստեղծման մշուշապատ և ոչինչ չասող ու ոչ մեկին ոչինչ չպարտադրող գաղափարը, որից շուտով քեմալականները պիտի հրաժարվեին: 1921թ. հունիսի 10-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի նախկին հանրապետությունների ներկայացուցիչները ստորագրում են «դաշինք համագործակցության վերաբերյալ»: Այն ընդհանրապես ուղղված էր Խորհրդային Ռուսաստանի դեմ: Ռամկավարներին անհանգստացնում էր հատկապես այդ դաշինքի 7-րդ կետը, որով ՀՀ նախկին կառավարության ներկայացուցիչ Ավ. Ահարոնյանն ընդունում էր, որ միացյալ Հայաստանի սահմանը պետք է լիներ ռուս-թուրքական 1914թ. սահմանագիծը և դրանով փաստորեն հրաժարվում էր Արևմտյան Հայաստանից:[567] Ռամկավարները վրդովմունքով հանդես եկան այդ համաձայնագրի դեմ, որով «նոր տիպի հարաբերություններ էին հաստատվում» ինչպես միմյանց, այնպես էլ հարևան երկրների՝ Պարսկաստանի, Թուրքիայի ու Ռուսաստանի հետ: Ա.Դարբինյանը, խոսելով այդ համաձայնագրի մասին, գրում է, որ Խորհրդային Ռուսաստանի համար այն կարևորություն չուներ, քանի որ արդեն նա ամրապնդել էր իր դիրքերն այդ հանրապետություններում, սակայն «մեզ՝ ռամկավարներիս, շատ էր մտահոգել

566. Դարբինեան Ա., Նշվ.աշխ., էջ 447:
567. Նույն տեղը, էջ 492:

համաձայնագրի 7-րդ կէտը, որով Ահարոնեանը հրաժարած էր թըրքական Հայաստանէն»:[568]

Ռամկավար կենտրոնը Փարիզի շրջանային իր վարչության անունով 1921թ. հուլիսի 21-ին ընդարձակ բողոքագիր ներկայացրեց Ազգային պատվիրակությանը, կոչ անելով նրան չհամագործակցել Ա.Ահարոնյանի հետ: Բողոքագրում նշվում էր, որ «տաճկահայերը իրենց քաղաքական շահերուն պաշտպանութեան մէջ ոչ մէկ պատճառ ունէին Երևանի արդի սովիեթական կառավարութեան կամքին դէմ գործելու»:[569]

Նշվում է, որ նրանք շատ բան կարող են կորցնել, միանալով նախկին ՀՀ պատվիրակությանը: Բողոքագրում ընդգծվում է, որ ներկա Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, որի իշխանության տակ է «Ռուսական Հայաստանը», պետք է չեզոք, նույնիսկ բարյացակամ վերաբերմունք ունենալ: Ինչ վերաբերում է Ավ. Ահարոնյանի պատվիրակությանը, ապա գտնում են, որ այն առհասարակ ոչ մի իրավունք չունի զբաղվելու Հայկական հարցով:

1921թ. ապրիլի 2-ին Հայ Ռամկավար կուսակցությունը մի ընդարձակ գրություն է ուղարկում Մերձավոր Արևելքին օգնող նպաստամատույց կոմիտեին, ուր համակողմանիորեն նկարագրում է Հայաստանի տնտեսական ծանր կացությունը և խնդրում շուտափույթ օգնություն ցույց տալ հայ ժողովրդին, որին սպառնում է սովամահության վտանգը:[570]

Կուսակցության կենտրոնական վարչությունը 1921թ. հունիսի 25-ի իր շրջաբերականով հայտնում է շրջանային վարչություններին հետևյալ տեսակետը. «Անկախ ընկերային հարցերէ, որոնք ինչքան ալ ժամանակաւոր բնոյթ ունենան, հայերու նախաձեռնութեամբ չէ, որ պիտի լուծուի, ամէն հայի պարտքն է օգնել Հայաստանի տնտեսական վերականգնումին և ամոքել անոր ներկայիս անսահմանափակ թշվառութեանը»:[571]

Սովյալ Հայաստանին օգնելու համար ռամկավարները ծավալում են լայն քարոզչական գործունեություն: Դիմում են ՀԲԸՄ-ին՝ հայտ-

---

568. Նույն տեղում, էջ 402:
569. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 55, էջ 3-4:
570. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 55, էջ 1-4:
571. Նույն տեղում, գ. 50, էջ 36:

նելով իրենց պատրաստակամությունը նյութապես ու բարոյապես սատար կանգնելու սովյալ Հայաստանին:[572]

Ռամկավարները կոչ են անում Եվրոպայի հայությանն օգնության ձեռք մեկնել սովահար Հայաստանի ժողովրդին: «Միայն Փարիզի մեջ գտնուող հարուստ հայերը կրնան գէթ մէկ ամիս ապրեցնել ամբողջ Հայաստանի ժողովուրդը, եթէ անոնցմէ ոմանք իրենց հաճոյքին, խաղին և իրենց ձիերուն համար ծախսած դրամին 1/10-ը յատկացնեն սովահար Հայաստանին»,- գրում է «Ապագան» իր «Սովահար Հայաստանը և արտասահմանի հայութիւնը» խմբագրականում և կոչ անում «պատճառ չդարձնել» Երևանի բոլշևիկյան կառավարությանը ու մատնացույց անում Ամերիկյան նպաստամատույց հանձնաժողովին, որը հաշվի չառնելով թե ում իշխանությունն է Հայաստանում, պատրաստ է իրեն տված մինչև «հետին սանթիմը հասցնել իր բուն նպատակին՝ սովահար հայերին»:[573] «Արտասահմանի բախտաւոր հայութիւնը պէտք է պատրաստուի մեծ զոհողութիւններու,- գրում է թերթը,- եթէ անիկա չուզեր լուռ ականատեսը ըլլալ իր եղբայրներուն ու քոյրերուն անխուսափելի սովամահութեան»:[574] Ռամկավարների պաշտոնաթերթը մի այլ առիթով կոչ է անում անտեսել Հայաստանի քաղաքական կարգերը և օգնել Հայաստանի սովյալներին. «Ինչ որ ալ ըլլան Հայաստանի նոր վարիչներուն հետապնդած սկզբունքները, սա անժխտելի է, որ անիկա հայ կառավարութիւն մըն է վերջապէս»,[575]- գրում է «Ապագան» և եզրակացնում, որ Հայաստանում վարչակարգի փոփոխությունը երբեք չի կարող պատճառ դառնալ, որ մոռացության մատնվի հայ ժողովուրդը: Մերժելով կոմունիստական գաղափարախոսությունը և բոլշևիզմը, այն անհարիր համարելով հայությանը, ռամկավարներն առաջնային էին համարում «Երևանի սահմաններուն մէջ ապաստանած հայութեան ֆիզիքական գոյութեան փրկութիւնը»,[576] որով էլ պայմանավորված էր Խորհրդային Հայաստանին օգնելու այն հզոր քարոզչությունը, որ ծավալել էին ռամկավարներն իրենց մամուլի էջերում:

572. Նույն տեղում, էջ 39:
573. «Ապագայ», 1921թ., սեպտեմբերի 17:
574. Նույն տեղում:
575. Նույն տեղում:
576. Նույն տեղում:

Արձագանքելով Հայ բարեգործական ընդհանուր միության կոչին, ռամկավարները մասնակցում են Արևմտահայոց մեջ գործող չորս քաղաքական կուսակցությունների (ՀՌԿ, ՀՅԴ, Ազատական (Վերակազմյալ), Հնչակյան) ներկայացուցիչների Խորհրդային Հայաստանի հայ ժողովրդին օգնելու խնդրով Կ.Պոլսում գումարված ներկայացուցչական ժողովին, «ուր միաձայնութեամբ որոշած են լծուիլ գործին»:[577]

Չորս կուսակցությունների կողմից ստորագրված համատեղ շրջաբերականում նշվում էր, որ «սոյն կուսակցութիւնների կեդրոնական մարմինների ներկայացուցչական ժողովը միաձայնութեամբ որոշած է լծուիլ հայրենիքի օգնութեան գործին և այս գրութիւնով կպահանջուի բոլոր շրջանային մարմիններէն, որպէսզի անմիջապէս նախաձեռնեն համազգային օգնութեան մարմիններու կազմութեան՝ իրենց մասնակցութեամբ կամ արդէն գոյութիւն ունեցող մարմիններու միջոցով իրենց բոլոր ուժովը նուիրուին օգնութեան գործին»:[578] Այնուհետև թվարկվում են այն առաջին անհրաժեշտության ապրանքները, որոնք պետք են Հայաստանին՝ դեղորայք, սնունդ, հագուստ, գյուղատնտեսական գործիքներ: Շեշտվում էր նաև, որ շրջաբերականը ստորագրած կուսակցություններն իրենց պարբերականներով, տեղական կազմակերպությունների և գործիչների միջոցով պետք է ընդունեն, քարոզեն և իրականացնեն միջկուսակցական մարմնի այս որոշումը:

Կուսակցությունների տեղական կազմակերպություններն աշխարհի շատ երկրներում արձագանքեցին այս կոչին և ձեռնամուխ եղան օգնության գործի կազմակերպմանը, որը զգալի արդյունք տվեց. սովի ու համաճարակների մահակուլ ճիրաններից հնարավոր եղավ փրկել մեր ժողովրդի որոշ մասին:

5. Ազգային Ազատական կուսակցություն: Համախմբման ավարտը և ՌԱԿ-ի ծնունդը

1921թ. Հայ Ռամկավար և Վերակազմյալ հնչակյան (Ազատական) կուսակցությունների միջև շարունակվեցին միավորման բանակցությունները: Այդ գործընթացն սկսվել էր դեռևս 1913 թվականին

577. Նույն տեղում, սեպտեմբերի 24:
578. «Ապագայ», 1921թ., սեպտեմբերի 24:

և գիտակցված անհրաժեշտություն էր երկու կուսակցությունների համար, նոր պայմանների անմիջական արգասիք: 1908թ. տեղի ունեցած «հեղափոխության խաբկանքի» ծնունդ ՀՍՌ- կուսակցությունը բավականին շուտ հասկացավ թուրքական «հեղափոխական» իշխանության վարած հարազատ տարածքներից հայ ժողովրդի բռնավտարման և բնաջնջման քաղաքականության էությունը, որը «պարտադրեց սահմանադրականներին սթափվել»[579] և հասկանալ, որ «կուսակցության որդեգրած ծրագիրն էլ այլևս ժամանակավրեպ է»: Արդյունքում նրանք «հազվադեպ... կամ բնավ չէին օգտագործում սահմանադրական եզրը»:[580] Եվ պատահական չէր, որ 1919 թ. ի վեր որոշ շրջանակների «ռամկավար» ինքնանվանումը դարձավ 1920թ. սեպտեմբերին գումարված ՀՍՌ-Կ Գ- ընդհանուր պատգամավորական ժողովի ընդունած ու վավերացված առաջին որոշումը. «Կուսակցութեանս անունն է՝ Հայ Ռամկավար կուսակցութիւն»:[581]

Այդ նույն ժամանակահատվածում Վերակազմյալ հնչակյանների 1908 թվականից ինքնուրույն գոյատևող ոչ բազմանդամ կուսակցությունը, որը ևս որդեգրել էր աստիճանական բարեփոխումների ուղին, պահանջում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի կազմում՝ եվրոպական վերահսկումով: Նրանք չունեին ագրարային ծրագիր, չէին խոսում Արևմտյան Հայաստանում հողային բարդ ու կնճռոտ հարցի լուծման մասին, սքողում էին արևմտահայության տարբեր խավերի ու դասակարգերի միջև գոյություն ունեցող ներհակությունները, աշխատում էին այն ներկայացնել որպես միատարր ամբողջություն: Ավելի չափավոր էին, քան Սահմանադրական ռամկավարները, որովհետև ի տարբերություն ՀՍՌ-Կ-ի, որոնք խնդիր էին դնում անջատել եկեղեցին պետությունից, վերակազմյալները մերժում էին այդ տեսակետը: Եթե ռամկավարներն արևմտահայության ազատագրությունը կապում էին խոշոր տերությունների, այդ թվում Ռուսաստանի հետ, վերակազմյալները շրջանցում էին դա և այլն:

---

579. Դալլաքյան Կ., Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, գիրք առաջին (1921-1940), Երևան, 1999թ., էջ 2:
580. Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 2:
581. ՌԱԿ վավերագրեր, էջ 36:

Եղեռնից հետո վերակազմյալները ևս սթափվեցին և սկսեցին նորովի գնահատել իրականությունը: Արդեն 1918թ. նոյեմբերին Վերակազմյալ հնչակյան կուսակցության ամերիկյան հատվածը որոշում է, որ իրենք այլևս «կը կոչուին Հայ Ազատական Կուսակցութիւն»,[582] իսկ մի ուրիշ փաստաթղթում[583] հայտարարում են. «Վաղը՝ Հայկական ազատութեան օրերուն՝ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը՝ իբր Ազգայնական Ազատական կուսակցութիւն պիտի աշխատի յետայսու»:[584]

«Անշուշտ,- իրավացիորեն գրում է Կ.Դալլաքյանը,- նոր անվանումների որոնումներն արդեն իսկ վկայում են, որ հիշյալ կուսակցությունները (ՀՍՌԿ և Վերակազմյալ հնչակյան - Ս.Ս.) ջանում էին դեն նետել նախկին տարազը»:[585]

Սակայն խնդիրը լոկ անունների մեջ չէր: Առաջացել էին նոր պայմաններ՝ եղեռն, սփյուռք (որպես նոր որակի գաղթաշխարհ), հայոց պետականության վերականգնում և այլն, որոնց զուգահեռ առաջացել էին նոր խնդիրներ: Եվ պատահական չէր, որ թե Հայ Ռամկավար և թե Ազատական կուսակցությունների նորաստեղծ ծրագրերում հիմնական գաղափարը հայության ֆիզիկական գոյության ապահովումն էր, որին ստորադասվում էին մյուս բոլոր ձգտումները:

1921թ. շարունակվող միության բանակցությունները Հայ Ռամկավար և Ազատական կուսակցությունների միջև փետրվարին թևակոխում են ավարտական փուլ՝ նրանք համաձայնության են գալիս միասնական ծրագրի ու կանոնագրի շուրջ: Որոշ բանավեճի տեղիք է տալիս միայն նոր կազմավորվող կուսակցության անվան հարցը: Բանակցություններն ընթանում էին կառուցողական և համերաշխ մթնոլորտում Մ. Սվազլի և Ա. Թերզիպաշյանի փոխնիփոխ ատենապետությամբ: Վերակազմյալ Մ. Գալֆայանն առաջարկեց նոր ստեղծվելիք կուսակցությունն անվանել «Ազատական Ժողովրդապետական»,[586]

---

582. Նույն տեղում, էջ 65:

583. Կ.Ղազարյանը էջ 73-ում գրում է, որ չի կարողացել ստուգել ե՞րբ է լույս տեսել այս «Ծրագիր Վերակազմեալ Հնչակեան (Ազատական-Ազգայնական) կուսակցութեան» փաստաթուղթը: Մեզ հաջողվեց պարզել, որ այն լույս է տեսել առանձին գրքույկով 1919թ. Բոստոնում:

584. ՌԱԿ վավերագրեր, էջ 73:

585. Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 2:

586. ՌԱԿ վավերագրեր, էջ 211:

որը միանշանակ չընդունվեց և երկար վեճերի առիթ դարձավ: Ի վերջո, ռամկավար Ա.Ինճիճյանն առաջարկեց «Ազատական Ռամկավար»[587] անունը: Սակայն կուսակցության անվան հարցը հետաձգվեց մինչև միավորման բանակցություններին Հայ Ժողովրդական կուսակցության մասնակցության խնդրի վերջնական ճշտումը:[588]

1921թ. օգոստոսին ՀԺԿ ներկայացուցիչ Մ.Պապաջանյանը մեկնում է Կ.Պոլիս, հանդիպում ռամկավարների ու վերակազմյալների հետ, որի արդյունքում վերջնականապես պարզվում է, որ ՀԺԿ-ն չի մասնակցելու միությանը:[589]

Միավորման բանակցությունները գրեթե զուգահեռաբար ընթանում էին ռամկավարների ու վերակազմյալների ամերիկյան հատվածների միջև և մշտական կապը պահպանվում էր նրանց ու Կ.Պոլսի կենտրոնների հետ: Երկար քննարկումներից ու բանավեճերից հետո, մասնավորապես միմյանց հասցեին կուսակցական պարբերականներում (ռամկավարական «Ժողովրդի ձայն» և ազատական «Առաւօտ») հնչած ոչ տեղին ու անհարկի փոխադարձ մեղադրանքների խնդիրը հարթելուց հետո 1921թ. սեպտեմբերին միավորման պայմանները վերջնականապես մշակելու և ի մի բերելու համար երկու կուսակցությունների կողմից ընտրվում են հավասար թվով՝ երեքական ներկայացուցիչ: Ռամկավարներից էին՝ Ա. Մալեմեզյանը, Կ. Փափազյանը և Լ. Անանիկյանը, իսկ ազատականներից՝ Հ. Ծովինկյանը, Լ. Կյուլեզյանը և Ա. Տեր-Մարկոսյանը:[590] Բանակցություններն սկզբում ընթանում էին «Պահակի»[591] խմբագրատանը:

Ի վերջո, տարբեր տեղերում մաս-մաս և զուգահեռաբար կառուցողական մթնոլորտում և ցանկացած խոչընդոտ հաղթահարելու նպատակամղումով ընթացող բանակցությունները, տալիս են բաղձալի արդյունք: Ռամկավար և Ազատական կուսակցությունների լիազորները համաձայնում են միության վերջնական պայմաններին և նոր կուսակ-

---

587. Նույն տեղում, էջ 215:
588. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 13:
589. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 49:
590. Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 490:
591. «Պահակը» ազատականների ամերիկյան շրջանակի պաշտոնաթերթն էր և հրատարակվում էր Բոստոնում:

ցության կազմավորմանը, որը պիտի կրեր «Ռամկավար-Ազատական» (Democrat-Liberal) անունը: Այն հռչակվում է Կ.Պոլսում՝ 1921թ. հոկտեմբերի 1-ին: Նոր կուսակցության ստեղծման փաստաթուղթը ստորագրում են ազատականներից՝ կենտրոնական վարչության անդամներ Մ. Սվազլյանը, Հ. Երվանդը, Լ. Գույումջյանը, ռամկավարներից՝ Ա. Թերզիպաշյանը, Ա. Ինճիճյանը, Գ. Պեռզիկյանը:[592]

Հիմնարար փաստաթուղթը, որ կրում էր «Ռամկավար և Ազատական կուսակցութեանց միութեան» վերնագիրը, հայտարարում էր, որ «Ազգայնական երկու կուսակցություններու (ՀՌԿ և ՌԱԿ - Ս.Ս.) միացումին համար յառաջ տարուած բանակցութիւնները յաջողութեամբ վերջացած ըլլալով այսօր կհռչակենք անոնց անպայման և վերջնական միութիւնը՝ Ռամկավար Ազատական կուսակցութիւն անունին տակ»:[593]

Ռամկավար Ազատական նորաստեղծ կուսակցությունը թիվ մեկ շրջաբերականով կուսակցության բոլոր շրջանային վարչություններին ու ակումբներին տեղեկացնում էր միության ակտի մասին և շեշտում, որ այն ինքնանպատակ չէ և բոլորին պարտավորեցնում է այսուհետեւ ավելի համախմբված լծվել հայանպաստ գործունեության:

Նախկին կուսակցությունների բոլոր շրջանակները շտապեցին ողջունել միությունը: 1921թ. հոկտեմբերին ավարտվեցին միավորման գործընթացները: Հոկտեմբերի 10-ին Հայ Ռամկավար կուսակցության Ամերիկայի շրջանային վարչությունը կուսակցության Արևմտյան Եվրոպայի վարչության ատենադպիր Եր. Կարիկյանին ուղղված նամակում հայտնում է. «Ուրախ ենք Ձեզի հաղորդելու, թէ միութիւնը ազատականներու հետ վերջապէս կատարուեցաւ»:[594] Նամակում շեշտվում է, որ եթե որևէ այլ արգելք չպատահի, ապա Ամերիկայի շրջանակի միացյալ թերթերը՝ «Ազգ-Պահակը» և «Նոր կեանք-Արորը», լույս կտեսնեն հոկտեմբերի 17-ին: Նամակում հույս է հայտնվում, որ այդ միությունն էլ ավելի խանդավառությամբ իր ամբողջ ներուժը կօգտագործի նպաստելու հայոց ազատագրության խնդրի լուծմանը:[595]

---

592. ՌԱԿ վավերագրեր, էջ 220: Նաև Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 491:
593. Նույն տեղում:
594. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 57, էջ 1:
595. Նույն տեղում:

Միության հայտարարությունից հետո աշխարհի տարբեր հայաշատ կենտրոններում, որտեղ գոյություն ունեին երկու կուսակցությունների տեղական կազմակերպություններ, միավորման գործընթացը շարունակվում էր: Նույնը կատարվում է նաև ՀՌԿ և ԱԿ պաշտոնաթերթերի հետ. նրանք միանում են և միասնական խմբագրակազմով լույս են տեսնում համատեղ անվամբ, ինչպես, օրինակ՝ «Ազգ» և «Պահակ» օրաթերթերը միացան և սկսեց լույս տեսնել «Ազգ-Պահակ» միասնական անվամբ:

Միության բանակցությունների արդյունքում ստեղծվեց նոր՝ Ռամկավար ազատական (ՌԱԿ) կուսակցություն, որն ուներ իր յուրահատուկ խնդիրները և նոր որակ էր հայ քաղաքական կյանքում: Իսկ դա նշանակում էր, որ այլևս դադարում էր գործել 1908թ. ստեղծված Հայ Սահմանադրական ռամկավար և 1919թ. Հայ Ռամկավար վերանվանված կուսակցությունը:

ՎԵՐՋԱԲԱՆ

1908թ. հոկտեմբերին ձևավորված Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը (ՀՍՌԿ) հանդես եկավ որպես ժողովրդավարական սկզբունքները որդեգրած քաղաքական մի կազմակերպություն, որը հրաժարվելով գաղտնի հեղափոխական գործունեությունից հայտարարեց, թե իր հետագա գործունեությունը ծավալելու է Օսմանյան սահմանադրության շրջանակներում և պայքարելու երկրի դեմոկրատացման և բարեփոխումների ծավալման համար: Դրան զուգահեռ, որպես ազգային կուսակցություն, ՀՍՌԿ-ն հետևողական գործունեություն է իրականացնում Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարության և ազգային մշակույթների յուրահատկությունների պահպանման ու զարգացման համար:

ՀՍՌԿ-ի պատմությունը շարադրելու համար ելակետ են հանդիսացել կուսակցության պատմության այնպիսի շրջադարձային իրադարձություններ, որոնք ՀՍՌԿ-ի համար ունեցել են արմատական և սկզբունքային նշանակություն.

1. Կուսակցության ձևավորման գործընթացը և առաջին ծրագրի ընդունումը.

2. ՀՍՌԿ գործունեությունը 1909-1919 թվականներին.

3. ՀՍՌԿ-ն 1919-1921 թվականներին:

ՀՍՌ կուսակցության ձևավորման բարդ ու խճճված գործընթացը ժամանակին չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա և հաճախ ոչ ճիշտ, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տվել: Մանրամասնորեն շարադրելով կուսակցությունը գոյացնող կազմակերպությունների միավորման գործընթացը, ցույց ենք տվել, որ դրա հիմքում ընկած գաղափարախոսության արմատները մի շարք վերապահումներով սնվում էին արմենականների անդաստանում և ՀՍՌԿ-ն արմենականության ժառանգորդն էր: Այդ եզրակացության համար

հիմք է ծառայել հատկապես մարդկային գործոնը: Անվիճելի է, որ արմենական տեսաբանների գործուն ու ղեկավար անդամների բացարձակ մեծամասնությունը, հատկապես նրանց բնօրրան Վան-Վասպուրականում, ընդգրկվեցին ՀՍՌԿ-ի շարքերում: Ճիշտ է նաև, որ եղել են դեպքեր, երբ որոշ թվով արմենականներ անդամագրվել են այլ կուսակցությունների, հատկապես ՀՅԴ-ին, սակայն դա որոշիչ չի եղել: Հիմնադրման օրվանից ՀՍՌԿ-ի անդամների մեծ մասը, հատկապես ղեկավար կորիզն ու ուղղություն տվող մասը, Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո իրեն համարում էր «օրինական (legal) գետնին վրա գործող» և վերափոխված արմենականներ, նրանց գործի ժառանգորդներ ու շարունակողներ: Դրա համար ապացույցներ փնտրելու հարկ չկա: Հրապարակի վրա եղած հուշագրություններում, ժամանակի և մերօրյա մամուլում հրապարակված բազմաքանակ նյութերում այդ գաղափարը անցնում է կարմիր թելի նման:

Իսկ ինչ վերաբերում է Արմենական-ՀՍՌԿ ժառանգական կապի ընդդիմախոսների այն վկայակոչմանը, թե արմենականների և ՀՍՌԿ-ի ծրագրերը ժառանգորդ կոչվելու համար շատ են տարբերվում միմյանցից, ապա նշենք հետևյալը.

Ակնհայտ է, որ Արմենական կուսակցության ծրագիրը հեղափոխական-ազատագրական էր և խնդիր էր դնում (թեև մշուշապատ) հեղափոխությամբ հասնել Արևմտահայաստանի ազատագրությանը: Իսկ ՀՍՌԿ-ի ծրագիրը նահանջ էր այդ հեղափոխականությունից և Հայաստանի ապագան տեսնում էր սահմանադրական միապետություն դարձած Թուրքիայի կազմում, ուր պայքարը պիտի ընթանար միայն այդ կարգերի բարելավման ուղղությամբ, այն էլ աստիճանական բարեփոխումների ճանապարհով:

1894-1896թթ. ողբերգական դեպքերից հետո արևմտահայությունը հիասթափություն էր ապրում, մի տեսակ վախեցած էր: Մինչ այդ տընտեսական, քաղաքական և մշակութային դաժան ճնշմանն ու շահագործմանը մի կերպ դիմակայող արևմտահայությունը հանկարծակիի եկավ թուրքական ոճրագործություններից: Ջարդերի սև ուրվականն արդեն անընդհատ ուղեկցում էր արևմտահային և դարձնում նրան ավելի զգուշավոր ու հաշվենկատ: Իսկ վրա հասած Օսմանյան սահմա-

նադրությունն էլ ինչպես հաշիշ եկավ բթացնելու նրանց թե զգոնությունը և թե հեղափոխականությունը:

Եթե մենք համեմատության մեջ դիտարկենք Արմենական կուսակցություն-Գաղափարակցական միություն-Միացյալ հայ հեղափոխական միություն-ՀՍՌԿ էվոլյուցիան, ապա կտեսնենք, որ հեղափոխականությունը շարունակաբար հետընթաց զարգացում է ապրել:

Սակայն շատ կարևոր է, որ այդ գաղափարական նահանջը երկար չշարունակվեց: Ադանայի հայտնի դեպքերից սկսած և, հատկապես, Մեծ եղեռնի տարիներին[596] այդ գործընթացը ոչ միայն կանգ առավ, այլև սկսեց զարգանալ հակառակ ուղղությամբ: Նոր իրադրության պայմաններում ՀՍՌԿ-ն իր վրայից նետեց Սահմանադրական ինքնանվանումը (պաշտոնապես դա վավերացվեց ավելի ուշ - Ս.Ս.) և «հիմնական նպատակի խնդրում գրեթե ամբողջովին վերադարձավ Արմենական կուսակցության սկզբունքներին»:[597] Այդ փոփոխությունը ծրագրային տեսքով արձանագրվեց ավելի ուշ՝ 1919 թվականին, սակայն մինչ այդ կուսակցական մամուլը լի էր արմատներին վերադառնալու կոչերով, հատկապես, երիտթուրքական սահմանադրությունը «սին ու պատիր» որակումներով և ծրագրային փոփոխություններ կատարելու ցանկությամբ: Սկսված համաշխարհային պատերազմը, Մեծ եղեռնը և այլ օբյեկտիվ պատճառներ հնարավորություն չէին տալիս ի մի հավաքելու և կուսակցության նոր ծրագիր մշակելու: Կասկածից դուրս է նաև, որ ՀՍՌԿ-ին փոխարինելու եկած ՌԱ կուսակցության ծրագիրը զերծ էր արմենականության հեղափոխական ռոմանտիզմից, եղեռնի դաժան փորձությունից իմաստնացած էր ու առաջ էր քաշում ժամանակի համար բավական իրատեսական պահանջներ:

Միանգամայն իրավացի է Կ.Դալլաքյանը Արմենական-ՀՍՌԿ-ՌԱԿ ժառանգական հոլովույթը նմանեցնելով ծնողների և որդիների հարաբերություններին. «Հայրը կարող էր դավանել մի որոշակի քաղաքական գաղափարախոսության և ընտրել գործողությունների հայտնի ուղղություն, իսկ որդին տրամագծորեն... այլ ուղղության

596 Թեզիսներ, Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի, 1996թ.), Երևան, 1996թ., էջ 7:
597 Նույն տեղում, էջ 8:

գործողությունների հետևող լինել: Դրանից, սակայն, հայրը չի դադարում որդու հայրը լինելուց, իսկ որդին էլ հորից կարող է ժառանգել որոշակի գեներ, արյան բաղադրյալներ, ապագա բնավորության և հոգեբանության նախադրյալներ»:[598]

ՀՍՌ կուսակցությունը թեև կազմավորվեց Հայաստանից դուրս՝ Եգիպտոսում, սակայն ամբողջովին հայկական իրականության ծնունդ էր, հատկապես՝ արևմտահայ իրականության: Կուսակցության ձևավորման գործընթացն ամբողջովին ցույց է տալիս, որ ՀՍՌԿ-ի ծնընդյան օրրանը, ի դեմս արմենականների, «էրգրի» սիրտ Վան-Վասպուրականն էր: Իսկ ՀՍՌԿ-ին միախառնված մյուս կազմակերպությունների ու մինչ այդ անկուսակցական մտավորականների այլ երկրներում բնակվելու (Բուլղարիա, Եգիպտոս և այլն) փաստը ոչինչ չի փոխում, որովհետև նրանք բոլորը ոչ վաղ անցյալում Հայաստանից տարբեր պատճառներով արտագաղթածներ կամ վտարանդիներ էին:

ՀՍՌ կուսակցության գործունեությունը համընկնում է հայ ժողովրդի պատմության ամենահուզումնառատ շրջափուլերից մեկին: Այդ պատճառով մեր աշխատանքի ամենածավալուն բաժինը նվիրված է ՀՌՍ կուսակցության պատմության տվյալ շրջանի հիմնախնդիրներին: Հայոց պատմության ողջ ընթացքում հազիվ թե կարողանանք գտնել պատմականորեն այդքան փոքր ժամանակահատված, որում տեղի ունեցած լինեն այդքան էական ու դարակազմիկ իրադարձություններ:

Այդպիսի բարդ, անկանխատեսելի, անելանելի, նույնիսկ 20-րդ դարում մարդկությանն անծանոթ երևույթ՝ ցեղասպանություն ներառող ժամանակաշրջանում նորաստեղծ, ոչ այնքան մարդաշատ և թույլ ՀՍՌ կուսակցությունը չէր կարող առանձնապես հրաշքներ գործել: Չնայած այս հանգամանքին, անհրաժեշտ համարեցինք ավելի մանրամասն անդրադառնալ կուսակցության այս շրջանի գործունեությանը, որն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դուրս է մնացել մեր պատմագիտության ուշադրությունից:

Կուսակցության պատմության տեսանկյունից կարևոր է հատկապես 1911թ. Կ.Պոլսում գումարված ՀՍՌԿ առաջին ընդհանուր պատգամավորական ժողովը: Սթափվելով Միդհատյան սահմանադրու-

598 Նույն տեղում, էջ 8:

թյան թմբիրից, որին նպաստեցին Ադանայի կոտորածները, ՀՍՌԿ-ն, վերադառնալով արմենականության սկզբունքներին, որդեգրեց ինքնապաշտպանության մարտավարությունը:

Միևնույն ժամանակ, հավատարիմ իրենց համերաշխական ոգուն, արդեն համագումարից անմիջապես հետո (մինչ այդ էլ), ռամկավարներն առաջարկում էին հայ իրականության մեջ գործող մյուս կուսակցություններին միասին գործելու, միասնաբար պայքարելու գաղափարները:

ՀՍՌԿ-ի գործունեությունը նոր որակի մղեց և կուսակցության գաղափարախոսությունը նոր հարթության վրա դիտարկելու հնարավորություն ընձեռեց 1913թ. Կ.Պոլսում տեղի ունեցած կուսակցության 2-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը: Համագումարի ձեռքբերում ենք համարում այն, որ նա կարողացավ հստակ կանխատեսել, թե առաջիկա պատերազմում Թուրքիան կօգտվի ստեղծված խառնաշփոթից և կձգտի մեկընդմիշտ լուծել Հայկական խնդիրը: Դրան ի պատասխան՝ համագումարը որոշեց, որ միակ ելքը գավառներում ինքնապաշտպանությանը նախապատրաստվելն ու կազմակերպելն է: Ցավոք, ռամկավարները ուժեղ չէին, նրանց հնարավորությունները սահմանափակ էին, բայց, ի պատիվ նրանց, պիտի ասենք, որ նրանք գործում էին հիմնականում Վան-Վասպուրականում, որտեղ էլ նրանց թափած ջանքերի և մյուս քաղաքական ուժերի համագործակցության շնորհիվ տեղի հայությունը փրկվեց անխուսափելի ոչնչացումից:

ՀՍՌԿ երկու համագումարները կարևոր նշանակություն ունեցան կուսակցական շինարարության տեսանկյունից:

ՀՍՌ կուսակցության գործունեության բնորոշ գծերից էր այն, որ ստեղծման առաջին իսկ օրվանից նա սատար կանգնեց Հայ Բարեգործական ընդհանուր միությանը, որի ստեղծման ակունքներում կանգնած և գործող անդամներից շատերը ՀՍՌԿ-ի անդամներ էին:

Կարևորագույն հիմնախնդիրներից է նաև ՀՍՌ կուսակցության վերաբերմունքը կամավորական շարժման նկատմամբ: Ռամկավարներն սկզբում, ելնելով այն հանգամանքից, որ Անդրկովկասում ծավալվող կամավորական շարժումը կդժվարացներ երկու թշնամական ճամբարներում գտնվող հայ ժողովրդի վիճակը, մերժում էին այն: Իսկ երբ երիտթուրքերը, օգտագործելով սկսված պատերազմի առի-

թը, սկսեցին իրագործել պետականորեն մշակված հայաջինջ քաղաքականությունը և զանգվածաբար տեղահանել ու կոտորել հայերին, ՀՍՌԿ-ն փոխեց դիրքորոշումը և ոչ միայն պաշտպանեց կամավորական շարժումը, այլև ակտիվորեն մասնակցեց արևմտահայերի ինքնապաշտպանության գործին, որի գագաթնակետը Վանի հերոսամարտն էր: Անհիմն են այն պնդումները, որ ռամկավարներն իբր կրավորական դիրք ունեին և մերժում էին կամավորական շարժումն ընդհանրապես:

Ադանայի կոտորածներից հետո երբեմն, իսկ Եղեռնի տարիներից միանշանակ, ՀՍՌԿ-ն ոչ միայն վերադարձավ արմենականության սկզբունքներին, այլև դեն նետեց «Սահմանադրական» ինքնանվանումը, որը վավերացրեց դրանից հետո հրավիրած առաջին համագումարում:

Առաջին աշխարհամարտի տարիներին, հավատարիմ մնալով ինքնապաշտպանության իր սկզբունքին, ՀՍՌ կուսակցությունը անմիջական և գործուն մասնակցություն ունեցավ հայապահպան մարտերին: Չխորանալով Վանի ինքնապաշտպանական գոյամարտի պատմության մանրամասներում,[599] ներկայացրել ենք հերոսամարտի ղեկավարներին, շեշտել, որ համընդհանուր ղեկավարությունը իրականացնում էր ՀՅԴ նվիրյալներից Արամ Մանուկյանը, իսկ Ռազմական շտաբի պետն էր ՀՍՌԿ-ի գործիչ Արմենակ Եկարյանը: Ուխտի ճիշտ չէ Վանի հերոսամարտի փառքը որևէ կուսակցության վերագրելը. ժողովրդական այդ գոյամարտին մասնակցել են բոլորն իրենց հնարավորությունների ներածին չափով և փառքը բոլորինն է:

ՀՍՌԿ-ն ամենագործուն մասնակցությունն ունեցավ նաև Հայկական լեգեոնի կազմությանը, որն իրեն փառքով պսակեց 1918թ. Արարայի ճակատամարտում: Ռամկավարների խորին համոզմամբ՝ Կիլիկիան, հանուն որի կազմվել էր Հայկական լեգեոնը, պետք է կազմեր ապագա Միացյալ և Անկախ Հայաստանի բաղկացուցիչ մասը, այդ պատճառով նրանք Մուդրոսի զինադադարից հետո Մ. Տամատյանի

599. Հարցը շատ մանրամասնորեն ու գիտական բարեխղճությամբ լուսաբանված է Ռ.Սահակյանի «Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին» մենագրության մեջ, Երևան, 2005:

գլխավորությամբ անձնվիրաբար աշխատեցին Կիլիկիահայության վերածնության ուղղությամբ: Սակայն, երբ ֆրանս-թուրքական բանակցությունների արդյունքում «ասպետական» Ֆրանսիան Կիլիկիան ու Կիլիկիահայությունը որպես մատաղացու նվիրեց Թուրքիային և տեղի հայությունը ուղղակիորեն ենթարկվեց քեմալականների հարձակումներին, ռամկավարները իրենց ողջ ուժերը նվիրաբերեցին Կիլիկիահայության ինքնապաշտպանության գործին:

Հայ քաղաքական ուժերը, որոնց թվում և ռամկավարները, հայտնվել էին անելանելի վիճակում և Կիլիկիայի հանրապետության հռչակումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ վերջին մի ճիգ, մի փորձ կատարված փաստով՝ ազդել խոշոր տերությունների վրա և փրկել Կիլիկիահայության վերջին բեկորները: Դա, իհարկե, չհաջողվեց: Սակայն պատմական հեռվից շատ հեշտ է մեղադրանքներ ներկայացնելը և Կիլիկիայի հանրապետության հռչակումը ի սկզբանե դատապարտված ու սխալ փորձ համարելը, ինչպես արվել է հաճախ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ռամկավար կուսակցության գլխավոր նպատակը դարձավ աշխարհով մեկ սփռված հայ գաղթականության օգնության կազմակերպումը և նրան դեպի Արևելյան Հայաստան վերադարձին օժանդակելը: Այդ նպատակով ստեղծվեց «Հայաստանի Վերաշինաց հանձնաժողովը»: Դրա համար ՀՍՌԿ-ն մաս կազմեց նաև Արևմտահայ խորհրդին և նրան ենթակա Ապահովություն խորհրդին, իր ավանդը ներդնելով Թուրքիայից առժամանակ ազատագրված Արևմտյան Հայաստանի վերաշինության գործին:

Փարիզի խաղաղության կոնֆերանսում ռամկավարները պաշտպանում էին Ազգային պատվիրակության տեսակետը: Հետագայում էլ, 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում և Լոզանում նրանք շարունակեցին աջակցել Պողոս Նուբարի պատվիրակության դիվանագիտական ջանքերին, այն խորին համոզմամբ, որ Միացյալ և Անկախ Հայաստանը պիտի բաղկացած լինի Արևմտյան և Արևելյան Հայաստաններից ու անպայման ելք ունենա դեպի ծով:

Դեռևս աշխարհամարտի տարիներից սկսված համախոհ քաղաքական կուսակցությունների հետ միավորման երկարատև ու դժվարին գործընթացը մտավ վճռական փուլ և իր տրամաբանական ավարտն

ունեցավ, երբ Ազգային պատվիրակության շուրջ համախմբված մտավորականության մեջ շարժում սկսվեց, որի նպատակն էր միավորել ՀՍՌ և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները, և որ միավորման այդ գործընթացը ինքնանպատակ չէր և դրական երևույթ էր:

Քանի որ հայ պատմագիտության մեջ այդ հարցի վերաբերյալ որոշ խառնաշփոթ կա, անդրադարձել ենք Հայ Ժողովրդական, Ազգային ազատական, Ազգային ռամկավար կուսակցությունների ստեղծման և գործունեության պատմությանը, նրանց ուղղակի և անուղղակի առնչություններին ՀՍՌ կուսակցության հետ:

Գործընթացի պատկերն ավելի տեսանելի դարձնելու համար այն ներկայացրել ենք սխեմատիկ գծագրի տեսքով, ինչը անհամեմատ հեշտ ընկալելի է դարձնում այդ փոփոխություններն ու զարգացումները:[600] Փոփոխություններ, որոնց արդյունքում մեր ուսումնասիրության օբյեկտ ՀՍՌ կուսակցությունը (վերջում ՀՌԿ դարձած - Ս.Ս.), միավորվելով վերը թվարկված կուսակցություններին, մաս կազմեց 1921թ. ստեղծված ՌԱԿ-ին և դադարեց գոյություն ունենալ որպես առանձին կուսակցություն:

Ամփոփելով նշենք, որ ՀՍՌ կուսակցության գործունեության և նրա բաղկացուցիչ մասերի պատմությանը նվիրված սույն աշխատությունը առաջինն է և, բնականորեն, զերծ չի կարող լինել թերություններից ու բացթողումներից, որի համար հայցում ենք բոլոր մասնագետների ներողամտությունը և սիրով կընդունենք յուրաքանչյուր կառուցողական դիտողություն:

---

600 Տե՛ս աշխատանքին կից սխեմաները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

Ֆ. 408, g. 1, գ. 162:

Ֆ. 424, g. 1, գ. 5, 13, 43, 45, 47, 49, 50, 55, 59:

Ֆ. 424, g. 2, գ. 116:

Ֆ. 427, g. 1, գ. 1, 8, 15, 46, 66:

Ֆ. 453, g. 1, գ. 198, 211:

Ֆ. 190, բ. 507, գ. 129, թթ. 245-261:

Հայաստանի ազգային պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին Ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28: Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը (մեքենագիր):

Տպագիր սկզբնաղբյուրներ

Հայաստանը Բուրժուական դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991:

Геноцид армян в Османской империи: сб. документов материалов, под ред. М.Нерсисян, 2-ое дополн. издание, Ереван, 1983.

Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), сост. В.Микаелян, Ереван, 1991.

Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Գ. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի խմբագրությամբ, Երևան, 2000:

Ինչ է ռամկավարությունը, ռամկավար մատենաշար, Պոսթըն, 1948, թիվ 2:

Արմենական կազմակերպութիւն, ՌԱԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վաւերագրեր, Պէյրութ, 1988, էջ 13:

Ծրագիր և կանոնագիր Գաղափարակցական միութեան (Արմենօ-միութենական միացեալ կազմակերպութիւն), Լոնտոն, 1907:

Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցութիւն, Պոսթոն, 1909 (նաև Կ.Պոլիս, 1908):

Ծրագիր Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան (Տաճկաստանի համար), Կ.Պոլիս, 1910:
Ծրագիր Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան, Կ.Պոլիս, 1908:
Ծրագիր Վերակազմեալ հնչակեան (Ազատական-Ազգայնական) կուսակցութեան, Պօսթըն, 1919:
Ծրագիր Ազգային ռամկավար կուսակցութեան, Պօստոն, 1919:
Ծրագիր Ազատական կուսակցութեան, Կ.Պոլիս, 1921:
Ծրագիր Հայ ռամկավար կուսակցութեան, Կ.Պոլիս, 1921:
Ծրագիր ՌԱԿ-ի, Կ.Պոլիս, 1922:
ՀՍՌ կուսակցութեան կեդրոնական ակումբ, կոչ հայ ժողովրդին, Կ.Պոլիս, 1909, 28 մարտի:
Ռամկավար-Ազատական կուսակցութեան հիմնական ծրագրեր, վավերագրեր, Վ. Ղազարյանի խմբագրութեամբ, Պէյրութ, 1988:

Գրականություն հայերեն

Ալիխանյան Ս.Տ., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921), Երևան, 1966:
Ալպոյաճեան Ա., Անհետացող դէմքեր, Գրիգոր Զոհրապ (իր կեանքը և գործը), Կ.Պոլիս, 1919:
Ահարոնեան Գ., Մեծ երազին ճամբուն վրայ, Պէյրութ, 1964:
Աղայան Ծ.Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1979:
Անդրէասեան Ա., Պատմութիւն ՌԱԿ-ի Ամերիկային արևմտեան շրջանի, Լոս-Անճելոս, 1981:
Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
Ավետիսյան Հ.Ա., Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թվականի մայիս, Երևան, 1998:
Ավետիսյան Վ.Ա., Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-Լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976:
Ավետյան Մ., Հայ ազգային ազատագրական հիսնամյա (1870-1920) Յուշամատեան և զօրավար Անդրանիկ, Փարիզ, 1954:
Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917թթ., Երևան, 1973:
Բարսեղյան Խ.Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, գիրք երկրորդ, Երևան, 1967, 1975:
Գազանճյան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրականի, Պօսթըն, 1950:
Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերութիւնները 1917-1923թթ., Երևան, 1999:

Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ, 1973:

Գանգրունի Հ., Հայաստան 1920-1921թթ. և միջազգային դիւանագիտութիւնը, Պէյրութ, 1986:

Գասպարյան Ե., Մեծ եղեռնը և Ֆրանսիան (1915-1918թթ.), Երևան, 2000:

Գասպարյան Ռ., Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1999:

Գարամանուկեան Ա., Հայկական լեգէոնը պատմական, իրաւական և քաղաքական հարցերու լոյսի տակ և վաւերագրեր, Պէյրութ, 1974:

Դալլաքյան Կ.Լ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն 1921-1940, գիրք առաջին, Երևան, 1990:

Դալլաքյան Կ.Լ., Արշակ Չոպանյան, Երևան, 1987:

Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947:

Եկարեան Ա., Յուշեր, Պէյրութ, 1985:

Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Աղեքսանդրիա, 1929:

Զոհրաբյան Է.Ա., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:

Զոհրաբյան Է.Ա., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Երևան, 2000:

Թէրզիպաշեան Ա., Արծիւը իր բոյնին մէջ, Փարիզ, 1938:

Թէրզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939:

Իզմիրլեան Ս., Դատումներ մեր հարիւրամեա յեղափոխութեան մասին, անձնական յուշերուս ընդմէջէն, հատ. 1, 2, Պէյրութ, 1962, 1966:

Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս, Պէյրութ, 1964:

Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:

Լեո, Թուրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, Փարիզ, 1934:

Խառատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Երևան, 1958:

Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:

Խուրշուդյան Լ.Ա., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964:

Խուրշուդյան Լ.Ա., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977:

Խուրշուդյան Լ.Ա., Հայկական հարցը, Երևան, 1995:

Կարապետյան Ա., Արմենական կուսակցություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 1995:

Կեօրկիզեան Ա., Վասպուրականի հերոսամարտը 1915 ապրիլ 7- մայիսի 7, Պէյրութ, 1965:

Կէօքճեան Վ., Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (յուշեր և նօթեր), Պօսթըն, 1979:

Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրները (19-րդ դարի 30-ական թթ.-1914թ.), Երևան, 1999:

Կիրակոսյան Ջ.Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 1914-1916թթ., Երևան, 1980:

Կիրակոսյան Ջ.Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965:

Կիրակոսյան Ջ.Ս., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914թ.), Երևան, 1982, գիրք 1-ին:

Կոստանդյան Է.Ա., Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:

Կոստանդյան Է.Ա.,Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005:

Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն (1918-1920թթ.), Երևան, 1992:

Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920թթ.), Երևան, 1998:

Համբարյան Ա.Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965:

Համբարյան Ա.Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979:

Համբարյան Ա.Ս., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990:

Համբարյան Ա.Ս., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Երևան, 1999:

Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.), Է.Ա. Կոստանդյանի խմբագրությամբ, Երևան, 2003թ.:

Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Երևան, 1956:

Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001:

Ղազարեան Վ., Նորագիր ռամկավար ազատականին ուղեցոյցը, Պէյրութ, 1981:

Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւն, Պէյրութ, 1985:

Ղազարեան Վ., Ուղեցոյց և համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրութ, 1978, Երևան, 1991

Ղամբարյան Ա., Հայկական հարցը 1912-1914թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2006:

Ճիզմեճեան Մ.Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնօ, 1930:

Մալեզեան Վ., Ճամբուս ծայրը, հատ. Բ, Փարիզ, 1955:

Մահարի Գ., Այրվող այգեստաններ, Երևան, 1966:

Մյասնիկյան Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924:

Մելիքյան Վ.Հ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997:

Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930:

Մուրադյան Լ.Գ., Արփիար Արփիարյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1991:

Եափուճեան Ա., Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, Գահիրե, 1977:

Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Երևան, 1955:

Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Երևան, 2000 (բարեփոխված և լրացված, Ա.Խառատյանի շահեկան առաջաբանով):

Պահրի Զ., Բանաստեղծ Վ.Մալեզեանի ազգային ու գրական 60-ամեայ գործունէութիւնը, յուշամատեան իր 80-ամեակին առթիւ 1871-1951, Փարիզ, 1951:

Պարսամյան Վ., Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1985:

Պեօզիկեան Գր., «Խսրի տուն», Արծուի Վասպուրականի ամսագիր, 1941, N 4:

Պօղոսեան Յ., Կուսակցական կեանքի յուշերս, Պէյրութ, 1987:

Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հատ. Բ, Երևան, 1990:

Սահակյան Ռ.Գ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970:

Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005:

Սասունի Կ., Թուրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966:

Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, 1964:

Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994:
Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:
Սերոբեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1937:
Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948:
Սիմոնյան Հ.Ռ., Թուրք-Հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
Սիմոնյան Հ.Ռ., Անդրանիկի ժամանակը, գ. 1, 2, Երևան, 1996:
Վարանդեան Մ., ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, հատ. 1-ին, Փարիզ, 1932:
Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1967:
Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993:
Տամատեան Մ., Իմ Յուշերէս, Պէյրութ, 1985:
Տեր-Մկրտչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հատ. Ա, Պօսթըն, 1966:
Տեփոյեան Ա., Հայ ազատագրական շարժման սկզբնաւորութիւնը, Գահիրէ, 1985:
Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան 1863-1946թթ., Պէյրութ, 1964:
Ուզունեան Հ., Արևմտեան ազգային պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ և ՌԱԿ-ը իր 60-ամեակին, Լոս-Անջելըս, 1986:
Փափազեան Վ., Իմ հուշերը, Բոստոն, 1950:
Օշական Յ., Վ. Թէքէան, Պէյրութ, 1985:

Օտարալեզու գրականություն

Акопян С., Армения в политике империалистических держав в период первой мировой войне, Ереван, 1967.
Завриев С., Аданские черные дни, Баку, 1909.
Джемал Паша, Записки 1913-1919, Тифлис, 1923.
Кочар М., Армяно-турецкие Общественно-политические отношения и Армянский вопрос, Ереван, 1988.
Мандельштам А., Младотурецкая держава, Москва, 1915.
Саркисян Е.К., Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XXвв., Ереван, 1972.
Россия в первой мировой войне 1914-1918 (в цифрах), Москва, 1925.

Спирин Л.М., Классы и партии в гражданской войне в России, Москва, 1968.

Dadrian V., The history of the armenian genocide. Ethnic conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995.

Hovannisian R., The Republic of Armenia, v. I, Los-Angeles, 1967.

Hovannisian R., Armenia on the Rood to independence 1918, Los-Angeles, 1967.

Karal E., Armenian questions (1878-1923), Ankara, 1975.

Պարբերական մամուլ

«Ազգ», Բոստոն, 1914, 1915-1916թ., N 13 բացառիկ, 1918թ. փետրվարի 12, 1921թ. հունվարի 21, 27, հուլիսի 16:

«Արարատ», ամսագիր, Էջմիածին, 1914թ. հունիս:

«Արմենիա», Մարսել, 1888թ., հունվարի 24:

«Արծիւ Վասպուրականի», Ֆրէզնօ, 1941թ., N 4:

«Արև», Ալեքսանդրիա, 1916թ. օգոստոսի 4, հոկտեմբերի 11, 1917թ. սեպտեմբերի 17, 1928թ. հոկտեմբերի 27, 28:

«Արևելք», Կ.Պոլիս, 1909թ. դեկտեմբերի 31:

«Ազգ-Պահակ», Պոսթըն, 1922թ. սեպտեմբերի 30:

«Բիւզանդիոն», օրաթերթ, Կ.Պոլիս, 1908, 1909, 1914թթ.:

«Դրօշակ», Ժնև, 1913թ. N 112:

«Եգիպտահայ տարեցոյց», Կահիրե, 1925թ.:

«Զարթօնք», Պէյրութ, 1950թ. հունիսի 2, 1951թ. օգոստոսի 18, 1971թ. դեկտեմբերի 28, 1983թ. ապրիլի 4, 9:

«Հայաստանի ձայն», Երևան, 1919թ.:

«Հայաստան», Փարիզ, 1919թ. օգոստոսի 30:

«Յառաջ», 1920թ. մայիսի 19:

«Հայ ձայն», Հալեպ, 1918, 1919թթ.:

«Ձայն հայրենեաց», 1909թ.:

«Մշակ», 1913թ. նոյեմբեր, 1914թ. մայիս, հունիս:

«Նոր օր», Լոս-Անջելես, 1965թ., հունիսի 23:

«Նոր կեանք», Ֆրեզնո, 1919, 1920, 1921թթ.:

«Պայքար», Բոստոն, 1958թ.:

«Վան-Տոսպ», Վան 1912-1914թթ. և Թիֆլիս, 1915-1918թթ:

Տպագրված հոդվածներ

Ղալլաքյան Կ.Լ., «Արմենականության» և «Սահմանադրականության» հետ ՌԱԿ-ի առնչությունների հարցի շուրջ, հոդված Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի թեզիսներում, Երևան, 1996:

Ղազախեցյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. «Ազատամարտ», Երևան, 1993:

Սարգսյան Ս.Թ., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության կազմավորումը, ԼՀԳ, Երևան, 1992, N 1:

Սարգսյան Ս.Թ., Մեր Սուրբ անտառում նա էլ կաղնի էր. Արմենակ Եկարյան, «Հայրենիքի ձայն», 1991, N 1853 և 1854:

Սարգսյան Ս.Թ., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության ձևավորման հարցի շուրջ, երիտասարդ գիտաշխատողների 23-րդ նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1992:

Սարգսյան Ս.Թ., Արմենակ Եկարյան, Երիտասարդ գիտաշխատողների 25-րդ նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997:

Սարգսյան Ս. Թ., Վերակազմյալ հնչակյան մամուլի պատմությունից «Մարտ», «Նոր կյանք», ԼՀԳ ՀՀ ԳԱԱ, 1995, թիվ 2, էջ 106-114:

Խմբագիր՝ **Է. Ա. Կոստանդյան**
Շարվածքը՝ **հեղինակի**
Համակարգչային ձեւավորումը՝ **Կ. Արզումանյանի**
Սրբագրիչ՝ **Փ. Շահբազյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Հ. Ավետիքյան**

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ

ՀԻՄՆԱՐԿ ՕՐԻՇԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԻՆԱՆՇԱՆԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻՑ



ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԻՆԱՆՇԱՆ



ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ ԳՐՈՒՄԱՆ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏԻՍՅԱՆ-
ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

ՍԵՊՈՒՀ ԵՐՎԱՆԴ
ՔԵՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՆՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ
ԱՐԽԻՎԻ

ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՈՉԻԿՅԱՆ

ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ
1920-ԱԿԱՆ ԹԹ.-ԵՐԻՆ

ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԳ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԱՐԽԻՎ

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆ

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

ՓԱՐԱՄԱԶ (ՄԱԹԵՎՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ)

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՈՅԱՃՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

ՎԱՆԻ 1896 Թ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ

ՎԱՆԻ 1896 Թ.ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ

ՑՈՒՇԵՐ
ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆԻ
ԽՄԲԱԳՐԵՑ Լ. ՇԱՀՄԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐՅԱՆԻ
ՀՈՒՇԵՐԻ 1-ԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՇԱՊԻԿԸ



ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆԻ «ԻՄ ՅՈՒՇԵՐԷՍ» ԳՐՔԻ ՇԱՊԻԿԸ

ՏԱԼԻՈՐԻԿՅԻ ԿՏՐԻՃԸ

ՔԱՅԼԵՔԻ

Տալորիկցի կրարիճ եմ խորմիկ,
Բարբրցու պէս չեմ թարանիրմ.
Սարի գաւակ, քարի որդի,
Հին քաջ Հայոց եմ մնացորդ.

Տալորիկի զաւակ եմ քաջ,
Զեմ խոնարհիր Թուրքին առաջ,
Բարաւ լերանց ես ապատ լոճ),
Զեմ ահսեր ո՛չ արար ո՛չ ճոճ.

ՑՈՐԴՈՐԱԿ

Հա՛յ ազգրրարիք, վա՜յ ազգրրարիք,
Տալորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրոն համար
Եկէք գէպ ինձ, յառաջ, յառաջ.

Երբ իմ ասիր բացի յաչխարհ
Ազատ ապրայ մեր ապր ու քար.
Մինչև փակեմ աչքս ի խաւար
Պիտ չի կոխէ հաս ոտք ոտար.

«ՏԱԼԿՈՐԻԿՅԻ ԿՏՐԻՃԸ» ՏԱՐԱԾՎԱԾ ՈՒ ՇԱՏԵՐԻՆ
ՀԱՅՏՆԻ ԵՐԳԻ ԲԱՌԵՐԸ,
ՀԵՂԻՆԱԿ՝ ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏՅԱՆ

ՍԽԵՄԱ N 1

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ՈՒՍԿԱՎՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ



ՍԽԵՄԱ N 2

1885-1921թթ. ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ



[2000 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0365350

Ա 100952

ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1954թ. հունիսի 10-ին: Միջնակարգ կրթությունն ստացել է ՀԽՍՀ Մարտունու շրջանի Չոլաքարի թիվ մեկ դպրոցում: 1983թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Գերազանցությամբ ավարտելով համալսարանը 1988թ. ընդունվել և 1991թ. ավարտել է ՀՀ ԳԱ ասպիրանտուրան:

1991-ից աշխատում է ԳԱ Պատմության ինստիտուտում՝ սկզբում կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող: Հեղինակ է մի շարք գիտական հրապարակումների:

Միևնույն ժամանակ, հիմնադրման օրվանից «Հայ պարբերական մամուլի պատմություն», «Հայ քաղաքական մտքի պատմություն», «Հայոց պատմության հիմնահարցեր» և այլ դասընթացներ է կարդում Երևանի «Գլաձոր» համալսարանում:

Պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ: Համահեղինակ է «Հայ պարբերական մամուլի պատմություն», «Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914թթ./» բարդարժեք աշխատությունների, ընդգրկված է ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակության փուլում գտնվող «Հայ ժողովրդի պատմություն» հիմնարար աշխատության հեղինակային կոլեկտիվին:

Ամուսնացած է, ունի երկու զավակ և մեկ դուստր: